



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



2-17.25
23-0

Օ Ր Ա Մ Ո Ւ Տ Ի Ն

ի. Ա. Տուրգենևի

I

Բարձրահասակ լօրենու շուաքում, Մոսկուա գետի ափին,
 կունցօվից ոչ այնքան հեռու, 1853 թուականի ամենատապ
 ամառնային մի օր խոտի վրայ պառկած էին երկու երիտա-
 սարդներ: Մէկը, տեսքով մօտ քսան երեք տարեկան, բարձր
 հասակի տէր, թխաղէմ, սուր և փոքր ինչ ծուռ քթով, բարձր
 ճակատով, զապուած ժպիտը լայն շրթունքներին, ընկած էր
 մէջքի վրայ և մտախոհ նայում էր գէպի հեռուն, փոքր ինչ
 կլոցելով իր փոքրիկ գորշ աչքերը. միւսը ընկած էր կրծքի վրայ,
 առել էր իր գանգուր շիկահեր գլուխը երկու ձեռքի մէջ և
 նոյնպէս նայում էր հեռուն, մի ինչ որ կէտի Նա երեք տարով
 մնեց էր իր ընկերից, բայց աւելի ջահէլ էր երառում. Նրա բե-
 խերը նոր էին ծլում, իսկ ծնօտի վրայ ոլորւում էր քնքոյշ
 աղուամազը: Մի ինչ որ սիրուն, ինչ որ գրաւիչ պերճութիւն
 կար նրա թարմ, կլորիկ գէմքի փոքրիկ գծերի մէջ, նրա քաղ-
 կաք նրա թարմ, կլորիկ գէմքի մէջ, գեղեցիկ, ուսուցիկ շրթունք-
 ցըր, շագանակագոյն աչքերի մէջ, գեղեցիկ, ուսուցիկ շրթունք-
 ների և սպիտակ ու փոքրիկ ձեռքերի մէջ: Առողջ, բախտաւոր
 և ուրախ երիտասարդութեան բոլոր նշաններն էին երկում նրա
 մէջ. դա մի անհոգ, ինքնավստահ, բախտից երես առած, ջա-
 հէլութեան չքնաղութիւնը վայելող մարդ էր: Նա աչքերը գէս
 ու դէն էր տանում, և ժպտում էր, և զլուխը դնում էր ձեռ-
 քերի վրայ, ինչպէս այդ անում են երեխանները, որոնք զիտեն
 թէ իրանց սիրով են նայում: Նա հազած ունէր բլուզայի նման
 լայնարձակ սպիտակ վերարկու. կապոյտ թաշկինակը բռնած էր
 նրա բարակ պարանոցը, ճիշտուած յարդէ զլիարկը ընկած էր
 խոտի մէջ, նրա կողքին:

Ընկերը, նրա հետ համեմատած, ձեր էր երկում և նայելով

— 2 —

նրա մոռւթին, ոչ ոք չէր կարծի, թէ նա էլ այդ բոպէին լաւ է զգում իրան, վայելում է քաղցրութիւն, նա պառկած էր անձոռնի կերպով. նրա մեծ զլուխը, որ վերևից լայն էր, իսկ ներքեց սրածայր, անչորհք կերպով էր նստած երկար պարանոցի վրայ. անչորհքութիւն էր արտայայտում և այն գրութիւնը, որի մէջ գտնւում էին նրա ձեռքերը, նրա իրանը, որի վրայ պինդ նուած էր կարճիկ, սև սիւրտուկը, նրա երկար ոտները, որոնց ծնկները բարձր ցցուած էին՝ ձպուռի ետեի ոտների նման: Բայց և այդպէս չէր կարելի շնդունել, որ դա լաւ կրթուած մարդ է. «օրինաւորութեան» կնիքը նկատելի էր նրա ամբողջ ծանր ու անձոռնի էութեան վրայ. և նրա դէմքը, որ գեղեցիկ չէր և մինչև անգամ քիչ ծիծաղելի էր, արտայայտում էր մտածելու սովորութիւն և բարութիւն: Նրան կոչում էին Անդրէյ Պետրօվիչ Բերսենեվ. նրա ընկերը, խարտեաշերիտասարդը, կոչում էր Պաւել Եակովիչ Շուրին:

—ինչու դու էլ չես ինձ նման պառկում կրծքի վրայ, սկսեց Շուրին:

—Այսպէս աւելի լաւ է: Մանաւանդ երբ բարձրացնում ես ոտներդ և միմեանց ես խփում կրունկներդ—ահա այսպէս: Քթիդ տակ է խոտը. երբ կը ձանձրանաս բնութեան տեսարանները դիտելուց—նայիր մի որ և է տոզիկ բզէզին, տես ինչպէս է նա սողում ծզօտի վրայ, կամ թէ ինչպէս մրջիւնը ուզ ու ձեռք է ընկել: Հաւատացիր, այսպէս լաւ է: Թէ չէ դու այժմ ընդունել ես մի ինչ որ կեղծ-կլասիկական դիրք, ձիշտ այնպէս, ինչպէս բալէտում պարող գերասանուհի, երբ նա յենում է կարտօնից շինած ժայռին: Միադ բեր, որ դու այժմ հանգստանալու կատարեալ իրաւունք ունիս: Հանաք բան է, վերջացնող կանդիդատների մէջ երրորդը լինել: Հանգստացէք, սըր. հերիք է, որքան լարուել էք, այժմ տարածեցէք ձեր անդամները:

Շուրին այս ճառը արտասանեց քթի մէջ, կիսով չափ ծոյլ: Կիսով չափ հանաքի կերպով (երես առած երեխաները այսպէս են խօսում տան բարեկամների հետ, որոնք շաքարեղին են բերում նրանց համար) և, չը սպասելով պատասխանի, շարունակեց:

—Ամենից շատ ինձ ապշեցնում է մրջիւների, բզէզների և այլ պարոն միջատների զարմանալի լրջութիւնը. յետ ու առաջ են վազում և նրանց կերպարանքը այնքան վիճ է, կարծես թէ նրանց կեանքն էլ մի բան է: Շնորհ արէք, մարդը, արարածների թագաւորը, բարձր մի էակ, նայում է նրանց, իսկ նրանք գործ չունեն մարդու հետու: Դու ով գիտէ, մի մոծակ կը

— 3 —

նստի արարածների թագաւորի քթին և նրան իր կերակուրը կը դարձնէ: Սա վիրաւորական է: Իսկ միւս կողմից, նրանց կեանքը ինչով է վատ մեր կեանքից: Եւ ինչու նրանք չը պիտի յոխորտան, եթէ մենք թոյլ ենք տալիս մեզ յոխորտալ: Հապա, փիլիսոփայ, բացատրիր ինձ այս խնդիրը: Ի՞նչ ես լոռում, հը:

—ի՞նչ... խօսեց, սթափուելով, Բերսենեվ:

—ի՞նչ, կրկնեց Շուրին:—Գո բարեկամը քո առաջ խոր մաքեր է արծարծում, իսկ դու նրան չես լսում:

—Ես զմայլում էի այս տեսարանով: Տես ինչպէս այս գաշտերը չերմ կերպով վայլում են արեգակի տակ (Բերսենեվ փոքր ինչ սուլելով էր խօսում):

—Օ՛, մեծ բան ես գտել, ասաց Շուրին: Մի խօսքով, բնութիւն...

Բերսենեվ գլուխը թափահարեց:

—Պէտք էր որ դու ինձանից աւելի շատ զմայլուէիր այս բոլորը տեսնելով: Դա քո մասնագիտութիւնն է: Դու արտիստ ես:

—Ո՛չ, սա իմ մասը չէ, պատասխանեց Շուրին, և զլխարկը դրեց իր ծոծրակին:—Ես մասգործ եմ: իմ գործը—մին է, միս կոլուել, ծեփել, կպցնել ուսեր, ուսներ, ձեռքեր. իսկ այտեղ ձեւ չը կայ, վերջացրած սահմանագիծ չը կայ, ամեն ինչ այս ու այն կողմ է փախչում... Գնա, բռնիր:

—Բայց այստեղ էլ գեղեցկութիւն կայ, նկատեց Բերսենեվ:—Ի գեպ, վերջացրիր քո բարեկեֆը:

—Ո՛՛ը:

—Երեխան այծի հետ:

—Կորչի, կորչի, բացականչեց Շուրին:—Տեսայ իսկական ստեղծագործութիւններ, հներին, և փշեցի իմ անհեթեթ գործը Դու ինձ ցոյց ես տալիս բնութիւնը և ասում ես. «Այստեղ էլ կայ գեղեցկութիւն», ի հարկէ, գեղեցկութիւն ամեն բանի մէջ կայ, մինչև անգամ քո քթի մէջ էլ, բայց ամեն տեսակ գեղեցկութեան ետեից չեն վազում: Արուեստագէտները չէին էլ վազում գեղեցկութեան ետեից, գեղեցկութիւնն ինքն էր մտնում նրանց ստեղծագործութիւնների մէջ: իսկ թէ որտեղից էր մտնում, Աստուած գիտէ, երկնքից, թէ որտեղից: Նրանց պատկանում էր ամբողջ աշխարհը. իսկ մենք այդքան լայն տարածուել չենք կարող, մեր ձեռքերը կարծ են: Մենք կարթ ենք գցում մի փոքրիկ կէտի վրայ և կանգնում հսկում ենք. եթէ մի բան կը բռնի, շատ լաւ, եթէ չի բռնի...

Շուրին դուրս հանեց իր լեզուն:

—Սպասիր, սպասիր, ասաց Բերսենեվ: Դա իրականութեան հակասող կարծիք է: Եթէ դու չես համակրի գեղեցկու-

թեանը, չես սիրի նրան ամեն տեղ, ուր որ համոդիպում ես նրան, նա քեզ մատչելի չի լինի քո արուեստի մէջ։ Եթէ գեցիկ տեսարանը, գեղեցիկ կրաֆշտութիւնը ոչինչ չեն ասում քո հոգուն, ոս ուզում եմ ասել, եթէ դու նրանց չես համակրում...

—Ահ դու, համակր... առաջ Շուրին և ինքն էլ ծիծաղեց այդ խօսքի վրայ, իսկ Բերսենեվ մտածութեան մէջ ընկաւ։ —Ոչ, եղբայր, շարունակեց Շուրին, դու խելօք ես, փիլիսոփայ ես, Մոսկուայի համալսարանի երրորդ կանդիդատն ես, սարսափելի բան է քեզ հետ վիճելը, մանաւանդ ինձ համար, որ ուսումը կիսատ թողած մի ուսանող եմ. բայց ահա թէ ինչ կասեմ քեզ, բացի իմ արուեստից, գեղեցկութիւնը ես սիրում եմ միայն կանանց մէջ... աղջիկների մէջ, այն էլ մի քանի ժամանակից ի վեր...

Նա շուռ եկաւ մէջքի վրայ և ձեռքերը դրեց գլխատակին։ Մի քանի վայրկեաններ անցան անխօսութեան մէջ, Միջօրէի տօթի լոռութիւնը բռնացած էր փայլող և քնած երկրի վրայ։

—Ի գէպ—կանանց մասին, նորից խօսեց Շուրին։ —Ինչ ոչ ոք իր ձեռքը չէ առնում Ստախովին։ Դու տեսել ես նրան Մոսկուայում։

—Ոչ։

—Ծերուկը բոլորովին գտուել է։ Ամրող օրերով նստում է իր Աւգուստինա Խրիստիանովայի մօտ, սարսափելի կերպով տաղականում է, բայց էլի նստում է։ Միմեանց մտիլ են անում. որքան յիմարութիւն... Մինչև իսկ զզուելի է նայել։ Արի ու հասկացիր։ Աստուած մարդուն ինչ ընտանիք է չնորհել. չէ, տուր նրան Աւգուստինա Խրիստիանովային ես այդ բաղի կերպարանքից աւելի զզուելի բան չեմ ճանաչում։ Այս քանի օրերը ես շինեցի նրա ծաղրանկարը Դանտոսի ոճով^{*)}։ Վատ չէ դուրս եկել. ես ցոյց կը տամ քեզ։

—Իսկ ելենա Նիկոլաեվսայի կիսարձանը, —հարցրեց Բերսենեվ, —առաջ է վնում։

—Ոչ, եղբայր, առաջ չէ գնում։ Այդ գէմքից կարելի է յուսահատուել Նայում ես. գծերը մաքուր են, խիստ, ուղիղ. կարծում ես, դժուար չէ ըմբռնել նմանութիւնը։ Բայց չէ... Անկարելի է ըմբռնել։ Դու նկատել ես, ինչպէս է նա լսում։ Դէմք ոչ մի գիծը չէ շարժում, միայն հայեացքի արտայայտու-

^{*)} Դանտոսին՝ ֆրանսիական քանդակագործ, որ հաջակուց մանաւանդ իր փոքրիկ անդրիներով, որոնք ներկայացնում էին նրա ժամանակից լալտնի մարդկանց ծաղրանկարը։

թիւնն է անդադար փոխւում, իսկ դրանից փոխւում է ամբողջ կերպարանքը։ Ի՞նչ անի այդ գէպքում քանդակագործը, այն էլ վատ քանդակագործը։ Զարմանալի էակ... զարմանալի էակ, աւելացրեց նրա կարծատն լուսութիւնից յետոյ։

—Այն, նա զարմանալի աղջիկ է, կրկնեց նրա ետեից Բերսենեվ։

—Բայց Նիկոլայ Արտեմեվիչ Ստախովի աղջիկն է։ Դրանից յետոյ արի ու դատողութիւններ արա արեան, ցեղի մասին։ Եւ զուարձակին այն է, որ Ելենան ճիշտ որ նրա աղջիկն է, նման է նրան, և մօրը, Աննա Վասիլեվսային էլ նման է։ Ես Աննա Վասիլեվսային յարգում եմ ամբողջ սրտով, չէ որ նա իմ բարերարն է. բայց նա մի հաւ է, Ո՞րաեղից Ելենան ստացաւ այդ հոգին։ Ո՞վ վառեց այդ կրակը։ Ահա կրկն մի հարց քեզ համար, ով փիլիսոփայ։

Բայց «փիլիսոփան» առաջուայ պէս ոչինչ չը պատասխանեց, Բերսենեվ, առհասարակ, շատախօսութեան մեղքը չունէր, և երբ խօսում էր, արտայայտում էր իր միագք անյարմար կերպով, յաճախ գէմ ընկնելով, շարժելով իր ձեռքերը և այն ժամանակի, երբ հարկ չը կար. իսկ այս անգամ մի առանձին խաղաղութիւն իջաւ նրա հոգու վրայ, մի խաղաղութիւն, որ նման էր յոգնածութեան և վշտի։ Նա նոր էր բնակութիւն հաստատել քաղաքից դուրս, հէնց որ վերջացրել էր երկար և դժուար աշխատանքը, որ օրեկան մի քանի ժամ էր խլում նրանից։ Անգործութիւնը, օդի մաքրութիւնը և գուրգուրանքը, իրագործուած նպատակի գիտակցութիւնը, քմահաճ և անփոյթ խօսակցութիւնը բարեկամի հետ, սիրուն էակի յանկարծ դուրս քաշուած պատկերը, այս բոլոր զանազանակերպ և մի և նոյն ժամանակ ինչ որ պատճառով միմեանց նման տպաւորութիւնները ձուլուեցան նրա մէջ և դարձան մի ընդհանուր զգացմունք, որ նրան թէ հանգստացնում էր, թէ յուզում, թէ ուժաթափ անում։ Նա մի շատ ջղային երիտասարդ էր։

Լօրենու տակը զով էր և հանդերը և մեղուները, որոնք թոշում մտնում էին նրա շուաքի շրջանը, կարծես, աւելի մեղմ կերպով էին բզզում. զմրուխտի գոյն ունեցող և ուկեցոյն ցողքերից զուրկ մաքուր և մանր խոտը չէր շարժուած, բարձր ցողուները կանգնած էին անշարժ, հիացածի նման. հիացածի, մեռածի նման էին կախուած գեղին ծաղիկների շարանները լօրենու ցածրի ճիւղերից։ Քաղցր հոտը ամեն մի չնշառութեան հետ ներս էր խցկւում կրծքի խորքը, բայց կուրծքը յօժարութեամբ էր ընդհանուր այդ հոտը։ Հեռում, գետի հտեսում, մինչև հորիզոնը ամեն ինչ փայլում էր,

ամեն ինչ այրում էր. երբեմն այստեղ վագում էր թեթև քամին և կտրատում էր ու սաստկանում այդ փայլերը. երկրի վըրայ տատանում էր մի ճառագայթաւոր գոլորշի: Թոշունների ձայն չէր լսում. նրանք չոք ժամերին չեն երգում. բայց ծըղրիդները ցրթչրթում էին ամենուրեք, և ախորժելի էր զով տեղ նստած հանգիստ լսել կեանքի այդ կրակոտ ձայնը. նա քուն էր բերում և զարթեցնում էր ցնորդները:

—Դու նկատել ես, յանկարծ սկսեց թերսենեվ, ձեռքերի շարժողութիւնները իր ճառի օգնութեան հրաւիրելով,—թէ ինչ օտարոտի զգացմունք է յարուցանում բնութիւնը մեր մէջ: Ամեն ինչ բնութեան մէջ այնպէս կատարեալ է, այնպէս պարզ է, ես ուզում եմ ասել՝ այնպէս բաւական է ինքն իրանով, և մենք այս հասկանում ենք և զմայլում ենք, և մի և նոյն ժամանակ բնութիւնը, գոնէ իմ մէջ, միշտ զարթեցնում է իմ մէջ ինչ որ անհանգստութիւն, ինչ որ շփոթութիւն, մինչև իսկ վիշտ ի՞նչ է դա նշանակում: Արդեօք աւելի զօրեկ կերպով ենք զգում նրա առաջ, նրա դէմքի առաջ, մեր ամբողջ անկատարելութիւնը, մեր ազօտութիւնը, թէ մեզ համար քիչ է այն բաւարարութիւնը, որով նա բաւականանում է, իսկ միւս բանը, այսինքն ես ուզում եմ ասել՝ այն բանը, ինչ որ մեզ հարկաւոր է, նա չունի:

—Հըմ, պատասխանեց Շուրբին,—ես քեզ կ'ասեմ, Անդրէյ Պետրովիչ, թէ ինչից է այդ ամենը առաջանում: Դու նկարագրեցիր մենակ մարդու զգացմունքները, այն մարդու, որ չէ ապրում, այլ մրայն նայում է և ընդարմանում է: Ինչու նայել: Ինքդ էլ ապրիր և տղամարդ կը լինեա: Որքան և բազինես բնութեան դուռը, նա հասկանալի խօսքով պատասխան չի տայ, որովհետեւ նա համր է: Նա ձայն կը համի, կը զնդնչայ, ինչպէս լար, իսկ երգ նրանից մի սպասիր, կենդանի հոգին—ահա նա կը պատասխանէ և այդ էլ առաւելապէս ինո՞ հոգին: Ուստի, իմ ազնիւ բարեկամ, քեզ խորհուրդ եմ տալիս սրտի բարեկամուհի ձեռք բերել և քո բոլոր տիրագին զգացմունքները իսկոյն կ'ոչնչանան: Ահա թէ ինչ է մեզ «հարկաւոր», ինչպէս դու ես ասում: Զի՞ որ այդ անհանգստութիւնը, այդ վիշտը, պարզապէս մի տեսակի սով է: Տնուր ստամպսին իրական կերակուր, և իսկոյն ամեն ինչ կարգի կը գայ, Բռնիր քո անզը տարածութեան մէջ, մարմին եղիր, եղբայր: Եւ ինչ է, ինչացու է քնութիւնը: Դու ինքդ լսիր. սէր... որպիսի ուժեղ, հրաշունչ խօսք: Բնութիւն... որպիսի ցուրտ, դպրոցական արտայայտութիւն: Ուրեմն (Շուրբին երգեց). «կեցցէ Մարիա Պետրովինա», կամ չէ, աւելացրեց նա, ոչ թէ Մարիա Պետրովի-

նան... Բայց մի և նոյն է ով լինի... Վու մը քոմպրենէ (գուք ինձ հասկանում էք):

Բերսենեվ քիչ բարձրացաւ և իր ծնօտով յենուեց միմեանց վրայ դարսած ձեռքերին:

—Ինչու հեգնութիւն, ասաց նա, չը նայելով իր ընկերին, ինչու ծաղր անել: Այս, դու ձշմարիտ ես. սէր—դա մեծ խօսք է, մեծ զգացմունք է... Բայց որ սէրի մասին ես դու խօսում: Շուրբին նոյնպէս քիչ բարձրացաւ:

—Ո՞ր սիրոյ մասին: Որը և ուզես, միայն թէ առձեռն լինի: Խոստովանում եմ, ըստ իս, բոլորովին չը կան սիրոյ զանգան տեսակիներ: Եթէ դու սիրում ես...

—Ամբողջ հոգով—ընդհատեց թերսենեվ:

—Այս, այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է. հոգին խընձոր չէ, նրան չես կարող բաժանել: Եթէ դու սիրեցիր, դու, ուրիմն, արդար ես: Իսկ ես չէի ուզում ծաղրել: Իմ սրտի մէջ այժմ այնքան քնչցութիւն կայ, իմ սիրաը այնքան փափկացել է... Ես միայն ուզում էի բացատրել թէ ինչու բնութիւնը, ինչպէս ասում ես, մեզ վրայ այդպէս է աղջում: Այն պատճառով, որ նա մեր մէջ զարթեցնում է սիրոյ կարիք և ոյժ չունի բաւարարութիւն տալ այդ կարիքին: Նա մեզ հեզիկ փախցնում է դէպի ուրիշ, կենդանի գիրկ, իսկ մենք նրան չենք հասկանում: Կու հէնց նրանից մի ինչ որ բան ենք սպասում: Ախ, Անդրէյ, Անդրէյ, գեղեցիկ է այս արեգակը, այս երկինքը, ամեն ինչ, ամեն ինչ մեր շուրջը գեղեցիկ է. իսկ դու տիրում ես. բայց եթէ այս վայկեանին դու բաներիր քո ձեռքի մէջ սիրած կնոջ ձեռքը, եթէ այդ ձեռքը և այդ ամբողջ կինը քոնը լինէին, եթէ նոյն իսկ դու նայէիր այդ կնոջ աշքերով, զգայիր ոչ թէ միայնակ, այլ նրա զգացմունքով,—տիրութիւն, Անդրէյ, անքո, միայնակ, այլ նրա զգացմունքով, որիները, որովհետեւ դու նրա կերպէր, նա ինքը կը կրկնէր քո օրհներզը, որովհետեւ դու նրա մէջ, այդ համր բնութեան մէջ, այն ժամանակ լիզու կը զնէիր:

Շուրբին թառւ, ոսքի կանգնեց, մի երկու անգամ յետ ու առաջ գնաց, իսկ թերսենեվ կախ գցեց իր գլուխը և նրա դէմքը ձածկուեց մի թոյլ գոյնով:

—Ես ոչ բոլորովին համաձայն եմ քեզ հետ, սկսեց նա: Միշտ չէ բնութիւնը մեզ ակնարկում... սիրոյ մասին (նա միանգամից չարասանեց այս խօսքը): Նա նոյնպէս սպասում էլ է մեզ, յիշեցնում է սարսափելի... այս, անհասանելի զաղանիքները: Միթէ նա չը պիտի մեզ կլանէ, միթէ նա անդադար չէ

կլանում մեզ: Բնութեան մէջ է և կեանքը, և մահը. և մահը
նրա մէջ նոյնպէս բարձր է խօսում, ինչպէս և կեանքը:

— Սիրոյ մէջ էլ է կեանք և մահ, ընդհատեց Շուրին:

— Եւ ապա, շարունակեց Բերսենեվ,—երբ ես, օրինակ,
կանգնում եմ դարնանը ծմակում, կանաչ թաւուտի մէջ, երբ
թւում է թէ լսում եմ Օբէրօնի եղջիւրի բօմանտիական ձայ-
ները (Բերսենեվ քիչ ամօթ զգաց, երբ արտասանեց այս խօս-
քերը) —միթէ դա էլ...

— Սիրոյ ծարաւ, երջանկութեան ծարաւ է, որիշ ոչինչ,
ասաց Շուրին.—ճանաչում եմ և ես այդ ձայները, ճանաչում
եմ և ես այդ յոդնածութիւնը և սպասողութիւնը, որոնք իջնում
են հօգու վրայ ծմակի հովանու տակ, նրա խորքերում. կամ
երեկոները, աղատ դաշտերում, երբ արեգակը մայր է մտնում
և գետը ծխում է թփերի ետեռում: Բայց թէ ծմակից, թէ գե-
տից, թէ երկրից և թէ երկնքից, իւրաքանչիւր ամպիկից, իւրա-
քանչիւր խոտից սպասում եմ, ես ուզում եմ երջանկութիւն,
ես ամեն մի բանի մէջ զգում եմ երջանկութեան մօտենալը,
լսում եմ նրա կոչը: «Իմ աստուածը—լուսատու և ուրախ աս-
տուած է»: Ես այսպէս էի ուզում սկսել մի բանաստեղծութիւն.
խոստովանիր, առաջին ոտք փառաւոր է, բայց երկրորդը ոչ մի
կերպ չը կարողացայ գտնել: Երջանկութիւն, երջանկութիւն,
քանի որ կեանքը չէ անցնլ, քանի որ մեր բոլոր անդամները
մեր իշխանութեան տակ են, քանի որ մենք սարից չենք իջ-
նում, այլ գնում ենք գէպի սարը: Սատանան տանի, շարունա-
կեց Շուրին մի յանկարծակի աւիւնով,—մենք երիտասարդ ենք,
այլանդակ չենք, յիմար չենք. մենք երջանկութիւն կը նուա-
ճնք համար:

Նա թափահարեց իր գանգուրները, համարեա թէ մէկին
պաքարի կանչելով՝ նայեց բարձր, գէպի երկինք, Բերսենեվ
բարձրացրեց իր աչքերը և նայեց նրան:

— Կարծես երջանկութիւնից բարձր բան չը կայ, ասաց
նա ցած ձայնով:

— Օրինակ, հարցրեց Շուրին և կանգ առաւ:

— Օրինակ, ես և դու, ինչպէս ինքդ ես ասում, երիտա-
սարդ ենք, մենք, գնենք թէ, մարդիկ ենք, ամեն մէկս իր հա-
մար երջանկութիւն է ուզում... Բայց այս խօսքը—«երջանկու-
թիւն», այնպիսի խօսք է, որ միացնէր, հրդեհէր մեզ երկուախս,
հարկադրէր մեզ ձեռք տալ միմեանց: Ես ուզում եմ ասել, ար-
դիօք ետական չէ, անջատող չէ այդ խօսքը:

— Իսկ դու գիտես այնպիսի խօսքեր, որոնք միացնում են:

— Այս. և քիչ չեն այդպիսի խօսքեր. դու էլ գիտես նրանց:
— Հապա, ասա, ինչ խօսքեր են դրանք:

— Վերցրու հէնց արուեստը—որովհետեւ դու էլ գեղա-
րուեստագէտ ես,—հայրենիք, գիտութիւն, ազատութիւն, ճշ-
մարտութիւն:

— Իսկ սէրը, հարցրեց Շուրին:

— Սէրն էլ միայնող խօսք է, բայց ոչ այն սէրը, որին
դու այժմ ծարաւ ես. ոչ թէ սէր-վայելչութիւնը, այլ սէր-զոհը:
Շուրին յօնքերը կիտեց:

— Դա գերմանացիների համար է լաւ. ուզում եմ սիրել
ինձ համար. ես ուզում եմ առաջին համարը լինել:

— Առաջին համարը, կրկնեց Բերսենեվ—իսկ ինձ թւում է,
որ ինքն իրան երկրորդ համար դարձնելը—մեր կեանքի ամբողջ
նշանակութիւնն է:

— Եթէ ամենքը այդպէս վարուեն, ինչպէս դու խոր-
հուրդ տալիս, ասաց Շուրին մի խղճալի գիմածութիւն անե-
լով,—աշխարհումս այլ ես ոչ չի ուտի անանաս. ամեն մէկը
ուրիշին կը մատուցանէ նրան:

— Եշանակում է որ անանասը հարկաւոր չէ. սակայն մի
վախիր, միշտ կը գտնուեն մինչև իսկ հացը ուրիշի բերանից
խլելու սիրահարներ:

Երկու բարեկամները առժամանակ լռեցին:

— Այս քանի օրը ես կրկն հանդիպեցի ինսարովին, սկսեց
Բերսենեվ.—ես նրան ինձ մօտ հրաւիրեցի. անպատճառ ուզում
եմ ծանօթացնել նրան քեզ հետ... և Ստախովների հետ:

— Այդ ինչ ինսարով չէ: Հա, այն սերբիացին թէ բողջարը,
որի մասին դու պատմել ես ինձ: Այն ազգասէրը: Հօ նա չէ
ներշնչել քո մէջ այդ փիլիսոփայական մաքերը:

— Գուցէ:

— Նա արտասովոր մէկն է, չէ:

— Այս:

— Խելօք է: Շնորհալի է:

— Խելօք... այսու Շնորհալի... չը գիտեմ, չեմ կարծում:

— Զէ: Էլ ինչ նշանաւոր բան կայ նրա մէջ:

— Ահա կը տեսնես: Իսկ այժմ, կարծում եմ, գնալու ժա-
մանակ է: Անսա վասիլեվնան, երեխ, մեղ սպասում է: Ժամի
քանիսն է:

— Երեքը: Գնանք: Որքան տօթ է: Այս խօսակցութիւնը
կրակ տուեց արիւնա: Քո առաջ էլ եղել է բոպէ... իզուր չեմ
ես արտիստ... ես ամեն ինչ նկատող եմ: Խոստովանիր, քեզ
գրաւում է կինը:

Շուրբին ուզեց նայել Բերսենեվի դէմքին, բայց նա երեսը շուռ տուեց և գուրս եկաւ լորենու տակից: Շուրբին ճանապարհ ընկաւ նրա ետեից, չորհալի անփութութեամբ փոխելով իր փոքրիկ ոտները, Բերսենեվ գնում էր ծանրաշարժ, քայլելիս բարձրացնում էր ուսերը, ձգում էր պարանոցը. բայց էլի նա աւելի օրինաւոր մարդ էր երեւում, քան Շուրբինը, աւելի ջենալին էր, կ'ասէինք մենք, եթէ այս բառը մեզ մօտ այնքան անարդ դարձած չը լինէր:

II

Երիտասարդները իջան Մոսկուա գետի վրայ և գնացին նրա ափօվ: Գետից բուրում էր թարմութիւն, և փոքրիկ ալիքների ծփծփոցը գգում էր լսողութիւնը:

—Ես նորից կը լողանայի, խօսեց Շուրբին,—բայց վախում եմ թէ կուշանանք: Նայիր գետին. Նա կարծես մեզ կանչում է: Հին յոյները նրա մէջ յաւերժահարս կը գտնէին: Բայց մենք յոյներ չենք, ով յաւերժահարս. մենք հաստամորթ սկիւթացիներ ենք:

—Մենք էլ ունենք ալքեր, նկատեց Բերսենեվ:

—Գնա դու էլ քո ալքերի հետ: Ինձ, քանդակագործիս, ինչ պէսք են վախեցած, ցուրտ երևակայութեան այդ ծնունդները, այդ պատկերները, որոնք ծնուել են խրճիթ հեղձուկ օդի մէջ, ձմեռնային գիշերների խուարի մէջ: Ինձ լոյս է հարկաւոր, լայնարձակութիւն է հարկաւոր: Ախ երբ, Աստուած իմ, կը գնամ ես իտալիա: Ե՞րբ...

—Այսինքն դու ուզում ես ասել, Մօլորօսսիա:

—Ամօթ է, Անդրէյ Պետրովիչ, յանդիմանել ինձ այն չը նախամտացած յիմարութեանս համար, որ առանց այդ էլ ինձ դառն ապաշխարանք է պատճառել: Այն, ես յիմարի պէս վարուեցայ, ամինարարի Աննա Վասիլիկվան ինձ փող տուեց իտալիա գնալու համար, իսկ ես ճանապարհ ընկայ խօսիների երկիրը, այնանդ կարկանդակներ ուտելու ե...

—Մի վերջացնիր, իննդրում եմ, ընդհատեց Բերսենեվ:

—Այսուամենայնիւ ես կ'ասեմ, որ այդ փողերը զուր չեն վատնուած: Ես այնտեղ տեսայ այնպիսի տիպեր, մանաւանդ կանացի... ի հարկէ, ես գիտեմ. իտալիաից դուրս փրկութիւն չը կայ:

—Դու կը գնաս իտալիա, ասաց Բերսենեվ, երեսը չը դարձնելով դէպի նրան, —և ոչինչ չես անի Միայն թերդ թափ կը տաս և չես թռչի: Ճանաչում ենք ձեզ:

—Իսկ Ստավասսէրը թռաւ, չէ... Եւ մինակ նա չէր: Իսկ եթէ ես չեմ թռչի, կը նշանակի որ ես ծովային խոզ եմ, առանց թեերի: Այստեղ ինձ համար խեղդուկ է օդը, իտալիա գնալ եմ ուզում, շարունակեց Շուրբին, —այնտեղ է արեգակը, այնտեղ գեղեցիկութիւնը...

Մի երիտասարդ աղջիկ, որ ծածկած ունէր յարդէ լայն գլխարկ և ուսին գրած էր վարդագոյն հովանոց, այդ ակնթարթում երեաց նոյն շաւիղի վրայ, որով գնում էին բարեկամները:

—Այս ինչ եմ տեսնում: Այստեղ էլ մեր առաջն է գալիս գեղեցկութիւնը, Ողջոյն խոնարհ գեղարուեստագէտից հմայիչ Զօեային, յանկարծ կանչեց Շուրբին, թատրոնական ձեռվ շարժելով իր գլխարկը:

Երիտասարդ աղջիկը, որին վերաբերում էր այս բաղականչութիւնը, կանգ առաւ, մատը թափ տուեց Շուրբինի վրայ և սպասելով որ երկու բարեկամները մօտենան իրան, ասաց հաչուն փոքրիկ ձայնով ու քիչ թլուատելով:

—Ինչու, պարոններ, չէք գալիս ճաշելու: Սեղանը պատրաստ է:

—Ի՞նչ եմ լսում, ասայ, ձեռքերը տարածելով Շուրբին: Միթէ դուք, չքնաղ Զօեա, այսպիսի տօթին վճռեցիք գալ մեզ որոնելու: Այսպէս չը պիտի ես հասկանամ ձեր խօսքերի միտքը: Ասացէք, միթէ... Կամ չէ, աւելի լաւ այդ բառը մի արտասանէք. մի ակնթարթում զջումը կը սպանէ ինձ:

—Ա՛յ, բաւական է, Պաւել Եակովիչ, պատասխանեց աղջիկը ոչ առանց բարկութեան. ինչու դուք երբէք չէք խօսում ինձ հետ լրջօրէն: Ես կը բարկանամ, աւելացրեց աղջիկը մի հաճոյական շարժումով և փայրեց իր շրթունքները:

—Դուք մի բարկանաք ինձ վրայ, իդէալական Զօեա Նիկարիչնա, դուք չէք ուզի ինձ զլորել կատաղի յուսահատութեան մոայլ անդունդը: Իսկ լրջօրէն խօսել ես չը զիտեմ, որովհետեւ ես լուրջ մարդ չեմ:

Աղջիկը վեր քաշեց ուսերը և դարձաւ Բերսենեվին:

—Ահա նա միշտ այդպէս է. Ինձ հետ վարւում է ինչպէս մի երեխայի հետ. իսկ ես արդէն անցել եմ տասն ութ տարին: Ես արդէն մեծ եմ:

—Օ՛հ, Աստուած, հեծեծաց Շուրբին և աչքերը մուալեցրեց, իսկ Բերսենեվ լուռ ծիծաղեց:

Աղջիկը ուր գետնին խիեց:

—Պաւել Եակովիչ, ես կը բարկանամ: Հէլէնը գալիս էր ինձ հետ, շարունակեց նա—բայց մնաց այգում: Նրան տօթը վախեցրեց, բայց ես տօթից չեմ վախում: Գնանք:

Նա առաջ գնաց շաւիլով, թեթև կերպով օրօրելով իր բարակ իրանը ամեն մի քայլ փոխելիս և երեսից քաշելով կահուզ ու երկար խոպողները իր գեղեցիկ փոքրիկ ձեռքով, որի վրայ հագցրած էր ու ձեռնոց:

Բարեկամները գնացին նրա ետեից (Շուրբին կամ անիոս սեղմում էր ձեռքերը սրտին, կամ բարձրացնում նրանց գլխից վերի) և մի քանի վայրինեանից յետոյ հասան կունցօվն շրջապատող բազմաթիւ ամարանոցներից մէկին: Մի փոքրիկ փայտէ տուն, որին կպած էր վերնայարկ և ներկուած էր փարզի գոյնով, կանդնած էր այլու մէջ և մի կերպ միամտաբար նայում էր ծառերի կանաչների ետեից: Զօեան առաջինը բաց արաւ դուռը, ներս վագեց այգին և կանչեց. «Թափառականներին բերայ»: Մի ջանել աղջիկ գունատ և արտայայտիչ դէմքով, վեր կացաւ ճանապարհի կողքին դրած նստարանից, իսկ տան շէմքում երեաց մի տիկին, որ հագած էր շուշանագոյն մետաքսէ զդեստ. սա, բարձրացնելով իր վլխից վերև ասեղնագործ թաշկինակը՝ արևից պաշտպանուելու համար, ժպտայ թոյլ և մեղկ կերպով:

III

Աննա Վասիլեվնա Ստախովա, ծնեալ Շուրբինա, հօթը տարեկան հասակում մնաց անոք որբ և ժառանգ բաւական նշանաւոր կալուածքի: Նա ունէր շատ հարուստ և շատ աղքատ աղքականներ. աղքատները հօր կողմից էին, հարուստները մօր կողմից, այն է սենատօր Վոլգին, Չիկուրասով իշխանները: Իշխան Արդալիօն Չիկուրասով, որ խնամակալ էր նշանակուած, տուեց Աննային Մուկուայի մի լաւ գրչերօթիկ դպրոց, իսկ երբ դուրս եկաւ գպրոցից, վերցրեց նրան և պահեց իր տանը: Նա լաւ էր ապրում և ձմեռը բալեր էր տալիս: Աննա Վասիլեվնայի ապագայ ամուսինը, Նիկոլայ Արտեմեվիչ Ստախով, նուածեց նրան այդ բալերից մէկի ժամանակ, ուր նա հագած էր չքնազ վարգագոյն զգեստ, որ ունէր կուածիւր փոքրիկ վարդերից: Աննա Վասիլեվնան պահում էր այդ կուածիւրան... Նիկոլայ Արտեմեվիչ Ստախով, որդի պաշտօնաթող կապիտանի, որ վիրաւորուած էր տասներկու թուին և ստացել էր արդիւնաւոր պաշտօն Պետերբուրգում, տասն և վեց տարեկան հասակում մտաւ զինուորական դպրոց և դուրս գալով, մտաւ զվարդիայի մէջ: Նա գեղեցիկ էր, լաւ կազմուած և համարեա ամենից լաւ կավալերն էր համարում միջին դասակարգի երեկոյթներում. այդ տեսակ երեկոյթներն էր նա զիսաւորապէս

այցելում. բարձր դասակարգ մանելու ճանապարհ չունէր նա: Երիտասարդութիւնից երկու միավ էր նրան պաշարել. դառնալ կայսերական աղիւտանտ և ձեռնտու կերպով ամուսնանալ: Առաջին ցնորքը նա շուտով թողեց, բայց դրա փոխարէն աւելի պինդ կպաւ երկրորդին: Այդ պատճառով էլ ամեն ձմեռ Մոսկուա էր գնում Նիկոլայ Արտեմեվիչը բաւական լաւ խօսում էր Փրանսերէն և համարում էր փիլիսոփայ, որովհետեւ քէֆնը չէր անում: Դեռ պրապօրչիկի աստիճանում նա սիրում էր յամառ վէճեր անել, օրինակ, այն մասին՝ կարող է մարդը իւ ամբողջ կեանքի ընթացքում երկրագնամի շուրջը ճանապարհորդել, կարող է մարդը իմանալ թէ ինչ տեղի ունի ծովի յատակում—և միշտ այն կարծիքին էր թէ չէ կարող:

Քան և հինգ տարին լրացրել էր Նիկոլայ Արտեմեվիչը, երբ «Ճանկեց» Աննա Վասիլեվնային. Նա թողեց ծառայութիւնը և գնաց գիւղ՝ տնտեսութեամբ պարապելու: Գիւղական կեանքը շուտով ձանձրացրեց նրան, իսկ կալուածը վարձով տուած կալուած էր. Նա բնակուեց Մոսկուայում, իր կնոջ տանը: Երիտասարդութեան ժամանակ նա չէր խաղում ոչ մի խաղ, իսկ այժմ տաքացաւ լոտոի վրայ, իսկ երբ լոտօն արգելեցին,—երալաշի վրայ: Տանը տաղտեկանում էր. կապ հաստատեց գերմանական ծագում ունեցող մի այրու հետ և նրա մօտ էր անցկացնում համարեա ամբողջ ժամանակը: 53 թուականի ամառը նա կունցօվով չը տեղափոխուեց, մնաց Մոսկուայում իրը թէ նրա համար, որ հանքային ջրերով օգտուի: իսկապէս, նա չուզեց բաժանուել այրուց: Սակայն նա այրու հետ էլ քիչ էր խօսում, նոյնպէս և շատ զիճում էր այն մասին՝ կարելի է գուշակել եղանակը և այն: Մի անգամ մէկը նրան անուանեց ֆրուեւր. գա շատ զիւր եկաւ նրան: «Այս», մտածում էր նա, ինքնաբաւական կերպով վայր թողելով իր շրթունքների անկիւնները և օրօրուելով, «հեշտ չէ ինձ բաւարութիւն տալ. ինձ խարել չէ կարելի: Նիկոլայ Արտեմեվիչի ֆրուեւր-ութիւնը այն էր, որ նա դիցուք լսում է մի բառ՝ ջղեր, և ասում է. «Բայց ինչ է ջղեր», կամ թէ մէկը նրա մօտ կը լիշէ աստղաբաշխութեան աջողութիւնների մասին, իսկ երբ կամէ. «Իսկ դուք հաւատում էք աստղաբաշխութեան», իսկ երբ նա ուզում էր վերջնականապէս յաղթեակարել հակառակորդին տառը էր. «Այդ բոլորը միայն ֆրազներ են»: Պէտք է խօսավանել, որ շատ մարդկանց այդպիսի ընդդիմախօսութիւնները թւում էին (և այժմ էլ թւում են) անհերքելի. բայց Նիկոլայ Արտեմեվիչը ոչ մի կերպ չէր ենթադրում որ Աւգուստինա Խրիստիանովան իր կուզինա թէորովինդա Պետերզիլիուսին գրած նամակներում անուանում էր նրան Mein Pinselchen.

Նիկոլայ Արտեմեվիչի ամուսինը, Աննա Վասիլեվսան, մի փոքրիկ և նիհար կին էր դէմքի բարակ գծերով, մի կին, որ տրամադիր էր յուզուելու և տիրելու Գիշերօթիկ դպրոցում նա պարապում էր նուագածութեամբ և կարգում էր վէպեր, բայց յետոյ թողեց այդ բոլորը սկսեց զուգուել և այդ էլ թողեց, սկսեց պարապել իր աղջկայ կրթութեամբ, այդտեղ էլ թուլացաւ և տուեց աղջկան դաստիարակչունու ձեռքը. վերջացաւ այդ բոլորը նրանով, որ նա միայն այն էր անում, որ տիրում էր և հանգարտ յուզուում: Ելենա Նիկոլաեվսայի ծնունդը քայլայեց նրա առողջութիւնը, և նա այլ ևս երեխայ ունենալ չէր կարող. Նիկոլայ Արտեմեվիչը ակնարկում էր այս հանգամանքի վրայ, արդարացնելով իր ծանօթութիւնը Աւգուստինա Խրիստիանովնայի հետ: Ամուսնու անհաւատարմութիւնը շատ վշտացնում էր Աննա Վասիլիեվսային, մանաւանդ ցաւ էր նրա համար այս, որ ամուսինը մի անգամ խարէւթեամբ բախչեց իր գերմանունուն մի զոյգ մոխրագոյն ձիաներ Աննա Վասիլիեվսայի սեփական երամակից: Դէմ առ դէմ նա երբէք չէր յանդիմանել իր ամուսնուն, բայց ծածուկ գանգատներ էր անում նրա մասին տամը ամենքի մօտ, մինչև իսկ իր աղջկայ մօտ: Աննա Վասիլիեվսան տանից դուրս գալ չէր սիրում. և գոհ էր լինում, երբ նրա մօտ նստում էր հիւրը և որ և է բան էր պատմում. մենակութեան մէջ նա իսկոյն տկարանում էր, և առ ունէր սիրող և փափուկ սիրտ, կեանքը նրան շուտ էր :

Պաւել Եակովեվիչ Շուբին նրա մօտիկ աղջկականն էր: Նրա հայրը ծառայում էր Մոսկուայում: Եղբայրները մտան զինուորական գիմնազիա: Պաւելը ամենից փոքրն էր և մօր սիրելին, ունէր մարմնի քնքոյց կազմուածք. այդ պատճառով էլ մնաց տանը: Նրան նշանակել էին համալսարանի համար և զըժուարութեամբ էին պահում գիմնազիայում: Փոքր հասակից նա հակումն ցոյց տուեց դէպի քանդակագործութիւն: Ծանրակշիռ սենատօր Վոլգին մի անգամ տեսաւ նրա մի փոքրիկ արձանը մօրաքրոջ մօտ (այդ ժամանակ Պաւել տասն և վեց տարեկան էր) և յայտնեց, որ մտադիր է երիտասարդ տաղանդի հովանաւորը դառնալ: Շուբինի հօր յանկարծական մահը քիչ էր մնում որ փոփոխէ երիտասարդի մարտոյց ապագան: Սենատօրը, տաղանդների հովանաւորը, ընծայեց նրան Հոմերոսի անդրին—և ուրիշ ոչինչ: Բայց Աննա Վասիլիեվսան օգնում էր նրան փող տալով, իսկ նա, մի կերպ մտաւ համալսարանի բժշկական ֆակուլտէտը, երբ տամսինն տարեկան էր: Պաւելը ոչինչ հակումն չունէր դէպի բժշկականութիւնը, բայց այն ժամանակ համալսարանում գոյութիւն ունէր յայտնի շտատ և ու-

րիշ Փակուլտէտ մտնել անկարելի էր. բայցի դրանից նա յոյս ունէր սովորել մարդակազմութիւն: Բայց չը սովորեց. երկրորդ կուրսը նա չանցաւ և, սպասելով մինչի քննութիւնը, դուրս եւկաւ համալսարանից այն մաքով, որ բայցառապէս իր կոչման նուբրուիր նա աշխատում էր ջանասիրութեամբ, բայց ընդհատումներով, թափառում էր Մոսկուայի շրջակայքում, կաւից շինում էր գիւղական աղջիկների պատկերները, ծանօթանում էր զանազան մարդկանց հետ, թէ երիտասարդ և թէ ծեր, թէ բարձր և թէ ցած թոփչքի մարդկանց հետ, իտալացի կաղապարագործների հետ և ուսւ գեղարուհատպէտների հետ, ակադեմիայի անունը չէր էլ ուզում լսել և չէր ընդունում որ և է սպրօֆեսօր: Նա ունէր գրական տաղանդ. Մոսկուայում սկսել էին նրան ձանաչել: Նրա մայրը, ծագումով Պարիզից, լաւ ընտանիքից, բարի և խելօք մի կին, սովորեցրեց նրան ֆրանսերէն լեզու, որ ու գիշեր հոգ էր տանում նրա մասին, աշխատում էր, հպարտանում էր նրանով և զեռ երիտասարդ հասակում մեռնելով թոքախտից, ինդրեց Աննա Վասիլիեվսային նրան իր ձեռքն առնել: Պաւելը այդ ժամանակ քսան և մէկ տարեկան էր: Աննա Վասիլիեվսան կատարեց մօր վերջին ցանկութիւնը. երիտասարդը բռնել էր մի փոքրիկ սենեակ ամառանոցի տան մէջ:

IV

— Գնանք ձաշելու, գնանք, ասաց տանտիկինը մի խղճալի ձայնով և ամենքը գնացին սեղանատուն: — Նստեցէք ինձ մօտ, Զօէ, շարունակեց Աննա Վասիլիեվսան, իսկ դու, Էլենո, մեր հիւրին զբաղեցրու, իսկ դու, Paul, ինդրեմ շարութիւն մի արա և մի գրգոր Զօէ-ին: Այսօր իմ գլուխը ցաւում է:

Շուբին նորից բարձրացրեց իր աշքերը դէպի երկինք. Զօէ-ն պատասխանեց նրան կիսատ ժափտով: Այս Զօէ-ն կամ աւելի ծիշան ասելով—Զօէս Նիկիտիշու Միւլեր, մի սիրունիկ, քիչ շիլ ուսւագերմանուհի էր, որ ունէր ծիւղաւորուած վերջաւորութեամբ քիթ և կարմիր ու շատ փոքրիկ շրթունքներ, չէկ էր և փափլիկ: Նա շատ լաւ երգում էր ուսւաց րօմանաներ, ինաւելով ածում էր դաշնամուրի վրայ զանազան թէ ուրախ թէ զգայնական բաներ, նա հագնուում էր ճաշակով, բայց մի կերպ մանկական կերպով և արդէն չափազանց մաքուր: Աննա Վասիլիեվսան նրան իր աղջկայ ընկերուհի էր ընդունել և համարեա միշտ իր մօտ էր պահում նրան: Ելենան այդ բանի վրայ չէր զանգատուած: Նա բոլորովին չը գիտէր թէ ինչի մասին խօսէ

Զօեայի հետ, երբ պատահում էր միակ լինել նրա հետ:
Ճաշը բաւական երկար տևեց. Բերսենեվ խօսում էր Ելե-
նայի հետ համալսարանական կեանքի մասին, իր դիտաւորու-
թիւնների ու յոյսների մասին. Շուրբին ականջ էր դուռմ, լուռ
էր, ուտում էր չափազանցուած ագահութեամբ, մի-մի ծաղրա-
կան տաղտուկ հայեացքներ զցելով Զօեայի վրայ, որ նրան միշտ
պատասխանում էր իր ֆլեգմատիական ժպիտով: Ճաշից յետոյ
Ելենան Բերսենեվի և Շուրբինի հետ գնաց այգին. Զօեան նայեց
նրանց ետեից և թեթև կերպով վեր քաշելով իր ուսը, նստեց
դաշնամուրի առաջ, Աննա Վասիլեվնան ասաց. «Ինչո՞ւ դուք
էլ չեք գնում զրօնելու», բայց չը սպասելով պատասխանին,
աւելացրեց. «Ինձ համար մի տիրապին բան նուագեցէք»:

—La dernière pensée de Weber?, հարցրեց Զօեան:

—Ախ, Վերերը, այն, ասաց Աննա Վասիլեվնան, նստեց
թիկնաթոռի վրայ և արտասունքի կաթիլը կախ ընկաւ նրա
թերթերունքներից:

Այն ինչ Ելենան երկու բարեկմներին տարաւ ակացիանե-
րի հովանոցը, ուր մէջ տեղ դրած էր փայտի փոքրիկ սեղան և
նրա շուրջը նստարաններ: Շուրբին մտիկ արաւ իր չորս կողմը,
մի քանի անգամ ցատկեց և շնչալով՝ «սպասեցէք», վաղեց
իր սենեակը, բերեց մի կտոր կաւ և սկսեց շինել Զօեայի
պատկերը, գլուխը թափահարելով, մոմուալով և ծիծաղե-
լով:

—Էլի վաղեմի հանաքներ, արտասանեց Ելենան, նայելով
նրա գործին և ապա դարձաւ Բերսենեվին, որի հետ շարունա-
կում էր ճաշի ժամանակ սկսած խօսակցութիւնը:

—Վաղեմի հանաքներ, կրկնեց Շուրբին: —Նիւթը չափա-
զանց անսպառ է: Այսօր մանաւանդ նա համբերութիւնից
դուրս է բերում ինձ:

—Ինչո՞ւ, հարցրեց Ելենան: —Կարծել կարելի է, թէ դուք
խօսում եք մի որ և է չար, անհաճելի պառաւի մասին: Նա սի
սիրուն, ջահէլ աղջիկ է:

—Ի հարկէ, ընդհատեց Շուրբին: —Նա սիրուն է, շատ սի-
րուն: ևս համոզուած եմ որ ամեն մի անցորդ, նայելով նրան,
անպատճառ պիտի մտածէ. ահա թէ ում հետ լու կը լինի...
պօլկա պարել. ևս համոզուած եմ նոյնպէս, որ նա զիտէ այդ
բանը և այդ շատ ախորժելի է նրա համար... Ել ինչա-
ցու ևն այդ ամօթխած շարժողութիւնները, այդ համեստու-
թիւնը: Բայց ձեզ յայտնի է թէ ինչ եմ ուզում ես ասել, աւե-
լացրեց նա ատամների միջով: —Սակայն դուք այժմ ուրիշով
էք զբաղուած:

Եւ կոտրելով Զօեայի կաւեայ անդրին, Շուրբին սկսեց շաս-
պով և կարծես դժկամութեամբ կպցնել կաւը և արսորել:
—Եւ այդպէս գուք ուզում էք պրօֆէսօր դառնալ, հարց-
րեց Ելենան Բերսենեվին:

—Այն, պատասխանեց նա, սեղմելով իր ծնկների մէջ իր
կարմիր ձեռքերը: —Դա իմ սիրած տենչանքն է: Ի հարկէ, ևս
շատ լաւ զիտեմ թէ ինչն է ինձ պակասում, որպէս զի ար-
ժանանամ այդպիսի մի բարձր... ևս ուզում եմ ասել, որ ես
չափազանց քիչ եմ պատրաստուած, բայց յոյս ունեմ թոյլաւու-
թիւն ստանալ արտասահման գնալու, այստեղ կը մնամ երկը-
չորս տարի, եթէ հարկաւոր է, և այն ժամանակ...

Նա կանգ առաւ, բութ կերպարանք ստացաւ, յետոյ արա-
գութեամբ բարձրացրեց աչքերը և, ատրօրինակ կերպով ժըպ-
տալով, ուզզեց իր մազերը: Երբ Բերսենեվ խօսում էր ինո՞ն
հետ, նրա խօսքը աւելի դաշղաղ էր զանում և նա աւելի էր
շուացնում խօսելու ժամանակ:

—Դուք ուզում էք զանուալ պատմութեան պրօֆէսօր,
հարցրեց Ելենան:

—Այն, կամ թէ փիլիսոփայութեան, աւելացրեց նա, ցած-
րացնելով իր ձայնը, —եթէ այդ հարկաւոր կը լինի:

—Նա այժմ էլ ստամայի պէս ուժեղ է փիլիսոփայու-
թեան մէջ, նկատեց Շուրբին, եղունգով խոր զծեր տանելով
կաւի վրայ: —Բնչ պէտք ունի արտասահման գնալու:

—Եւ դուք ձեր զրութեամբ բաւական կը լինէք, հարցրեց
Ելենան, յենուելով արմունկի վրայ և ուղիղ նրա գէմքին նայե-
լով:

—Կատարելապէս, Ելենա Նիկոլաևնա, կատարելապէս: Ել
ինչ աւելի լու կոչում կարող է լինել: Մի մտածեցէք, գնալ
Տիրօֆէյ Նիկոլաեվիշի հետքերով... Ալդափիսի գործունէութեան
մի միտքն անգամ լցնում է իմ մէջ ուրախութեամբ և շփոթու-
թեամբ, այն... շփոթութեամբ, որին... որը գոյանում է այն
զիտակցութիւնից, որ իմ մէջ էլ կան փոքրիկ ոյժեր: Իմ հան-
գուցեալ հայրը օրհնել է ինձ այս զործին գնալու համար... Ես
երբէք չեմ մոռանայ նրա վերջին խօսքերը:

—Չեր հայրը մեռաւ այս անցած ձմեռը:

—Այն, Ելենա Նիկոլաևնա, փետրուարին:

—Ասում են, շարունակեց Ելենան, —նա թողել է մի նշա-
նաւոր ձեռագիր հեղինակութիւն: ճշմարիտ է այդ:

—Այն, թողել է: Նա հիանալի մարդ էր: Դուք նրան կը
սիրէիք, Ելենա Նիկոլաևնա:

— Ես զրա մէջ համողուած եմ: Իսկ այդ հեղինակութիւնը ինչ բովանդակութիւն ունի:

— Հեղինակութեան բովանդակութիւնը, Ելենա Նիկոլաեցիա, մի քանի խօսքերով քիչ գժուար է ձեզ բացատրել: Իմ հայրը շատ գիտուն մարդ էր, Շելլինգական, նա միշտ հասկանալի նախադասութիւններ չէր գործ ածում...

— Անդրէյ Պետրովիչ, Շնչեատեց Ելենան, — ներեցէք իմ անդիտութեանը, ինչ է նշանակում Շելլինգական:

Բերսենեվ թեթև կերպով ժպտաց:

— Շելլինգական, դա նշանակում է գերմանացի փիլիսոփայ Շելլինգին հետեւդ, իսկ թէ ինչ էր Շելլինգի վարդապետութիւնը...

— Անդրէյ Պետրովիչ, յանկարծ բացականչեց Շուրին. — Ի սէր Աստուծու. Իօ չես ուզում դու Ելենա Նիկոլաեցի համար դասախոսութիւն կարդալ Շելլինգի մասին: Խնայիր...

— Ոչ թէ դասախոսութիւն, թոթովեց Բերսենեվ և կարմըրեց, — ես ուզում էի...

— Ինչու և ոչ իսկ դասախոսութիւն, շարունակեց Ելենան, — ինձ և քեզ, Պաւալ Եակօվլեվիչ, դասախոսութիւնները շատ ևն հարկաւոր:

Շուրին իր աչքերը յառեց Ելենայի վրայ և յանկարծ ծիծաղեց:

— Ինչու էք ծիծաղում, հարցրեց Ելենան սառն և համարեա կարուկ եղանակով:

Շուրին լոեց:

— Դէն, բաւական է, մի բարկանաք, ասաց նա քիչ ժամանակից յետոյ: — Ես մեղաւոր եմ: Բայց իսկապէս այդ ինչ ցանկութիւն է, այժմ, այսպիսի եղանակին, ծառերի տակ, խօսել փիլիսոփայութեան մասին: Աւելի լաւ է սկսենք խօսել սոխակների, վարդերի մասին, երիտասարդ աչքերի և ժպիտների մասին:

— Այն, նոյնպէս և Փրանսիական վէպերի, կանանց փալամերի մասին, շարունակեց Ելենան:

— Ինչու չէ, կարելի է և փալամերի մասին, եթէ նրանք գեղեցիկ են, պատասխանեց Շուրին:

— Կարելի է, Բայց եթէ մենք չենք ուզում խօսել փալամերի մասին: — Դուք ձեզ անուանում էք ազատ գեղարուեստագէտ, ինչու էք ուրիշների ազատութեան դէմ զնում: Եւ թոյլ տուէք հարցնել ձեզ, ունենալով այդպիսի մաքեր, ինչու էք յարձակւում Զօնայի վրայ: Մանաւանդ նրա հետ յարմար է խօսել թէ փալամերի և թէ վարդերի մասին:

Շուրին յանկարծ բորբոքուեց և բարձրացաւ նստարանից:

— Այդպէս, ակսեց նա մի անհաստատ ձայնով: — Ես հասկանում եմ ձեր ակնարկը. դուք ինձ Զօնայի մօտ էք ուզարկում, Ելենա Նիկոլաեցւա: Ուրիշ խօսքերով, ես այստեղ աւելորդ եմ:

— Ես չեմ ուզում ձեզ հեռացնել այստեղից:

— Դուք ուզում էք ասել, շարունակեց Շուրին բարկացկոտ ձայնով: — Որ ես մի այլ հասարակութեան չարժեմ, որ ես Զօնայի զոյգն եմ, որ ես էլ նոյնպէս դատարկ և ցնորական և մանր բան եմ, ինչպէս այդ քաղցրահամ գերմանուհին: Այդպէս չէ:

Ելենան կիսեց յօնքերը: — Դուք միշտ այդպէս չէիք վկայում նրան մասին, Պաւել Եակօվլեվիչ, նկատեց նա:

— Ա՛, յանդիմանութիւն, այժմ յանդիմանութիւն, բայց կանչեց Շուրին: — Այն, ես չեմ ծածկում, եղալ է րոպէ, միայն մի բոպէ, երբ այդ թարմ, լպիրը թշիկները... Բայց եթէ ես ուզեի ձեզ հատուցում տալ նոյնպէս յանդիմանութեամբ և յիշեցնել ձեզ... Մնացէք բարով, աւելացրեց նա յանկարծ, — ես պատրաստ եմ ստեր էլ խօսել...

Եւ ձեռքը զարնելով գլխի ձև տուած կաւին, նա դուրս վազեց հովանոցից և գնաց իր սենեակը:

— Երեխայ, արտասանեց Ելենան նրա ետեից:

— Գեղարուեստագէտ, ասաց Բերսենեվ մի մեղմ ժպիտով: — Բոլոր գեղարուեստագէտներն են այդպէս: Պէսք է ներել նրանց քմահաճութիւնները: Դա նրանց իրաւունքն է:

— Այն, պատասխանեց Ելենան, — բայց Պաւել մինչև այժմ դեռ ոչ մի բանով չէ հաստատել այդ իրաւունքը իր վրայ: Ի՞նչ է արել նա մինչև այժմ: Տուէք ինձ ձեռքը և գնանք ծառուղիով: Նա մեզ խանգարեց: Մենք խօսում էինք ձեր հօր շարադրութեան մասին:

Բերսենեվ բռնեց Ելենայի ձեռքը և գնաց նրա հետ այգու մէջ, բայց սկսած խօսակցութիւնը, որ չափազանց շուտ էր ընդհատուել, չը նորոգուեց. Բերսենեվ նորից սկսեց բացատրել թէ ինչ հայեացքներ ունի պրօֆէսօրական կոչման, իր ապագայ գործունէութեան վրայ: Նա հանդարտ շարժում էր Ելենայի հետ մի շարքում, ծանր, անյարմար քայլուածքով, անյարմար կերպով բռնած էր նրա ձեռքը, երբեմն-երբեմն դիպչում էր նրան իր ուսով և ոչ մի անգամ չը նայեց նրան. բայց նրա խօսքը հոսում էր հեշտութեամբ. թէն ոչ բոլորովին ազատ, նա արտայայտում էր իր մաքերը հասարակ և ուղիղ կերպով և նրա հայեացքի մէջ, որ հանդարտ թափառում էր ծառերի բուների, ծառուղու աւազի, խոտերի վրայով, ցոլում էր աղնիւ զգաց-մունքների մեղմ հրճուանքը, իսկ հանգստացած ձայնի մէջ լըս-

ւում էր մի մարդու ուրախութիւնը, որ ունի այն գիտակցութիւնը, թէ իրան աջողում է բաց անել իր մտքերը մի ուրիշ, նրա համար թանկագին մարդու առաջ: Ելնան նրան լսում էր ուշադրութեամբ, և կիսով չափ թեքուելով դէպի նրա կողմը, չէր հեռացնում իր հայեացը նրա թեթիւ կերպով գունատուած դէմքից, նրա աչքերից, որոնք բարեացակամ էին և հեզ, թէ և խռափում էին իր աչքերի հետ հանդիպելուց: Ելնայի հոգին բացուեց, և մի ինչ որ քնքոյց, արդար, լաւ բան թւում էր թէ թափուում էր նրա սրտի մէջ, թէ աճում էր այդ սրտի մէջ:

V

Շուրին մինչև գիշեր գուրս չեկաւ իր սենեակից: Արդէն բոլորովին մինել էր, կիսալուսինը բարձրացել էր երկնքում, յարդգովի ձանապարհը սպիտակին էր տալիս և աստղերը փալփռում էին, երբ Յերսենեվ, հրաժեշտ տալով Աննա Վասիլեվնային, Ելնային և Զօնային, մօտեցաւ իր բարեկամի դռանը: Նա տեսաւ որ գուռը փակուած է, թխթխկացրեց:

—Ո՞վ է, տարածուեց Շուրինի ձայնը:

—Ես եմ, պատասխանեց Յերսենեվ:

—Ի՞նչ ես ուզում:

—Եկը թողիր ինձ, Պաւել, բաւական է որքան քմահածութիւններ արիր. չես հաւատում:

—Ես քմահածութիւններ չեմ անում, ես քնած եմ և երազում տեսնում եմ Զօնային:

—Թաղ, խնդրեմ: Դու երեխայ չես: Բաց արա գուռը: Ես ուզում եմ քեզ հետ խօսել:

—Դու միթէ չես կշացել Ելնայի հետ խօսելուց:

—Բաւական է, բաւական. Ներս թողիր ինձ:

Շուրին պատասխանեց մի կեղծած խրխռուով, Յերսենեվ ուսերը թօթուեց ու գնաց տուն:

Գիշերը տաք էր և կարծես մի առանձին կերպով անխօս, կ'ասես թէ չորս կողմում ամեն ինչ ականջ էր գնում և հսկում: և Յերսենեվ, շրջապատուած մի անշարժ մթութեամբ, ակամայ կանգ առաւ և նոյնպէս ականջ էր գնում ու հսկում էր: Մեղմիկ շրշիւնը, որ նման էր կանացի զգեստի խշխոցին, երբեմն երբեմն բարձրանում էր մօտիկ ծառերի գագաթների վրայ և զրուում էր Յերսենեվի մէջ մի քաղցր և վախեցնող զգացմունք, կէս վախի զգացմունք: Մժղուկներն էին վազում նրա թշերով, աչքերը ցրտանում էին յանկարծական արտասուքից: Նա ուզում էր առաջ գնալ բոլորովին անլսելի կերպով, թագ-

նունել, ծածկուել: Սուր հողմիկը յարձակուեց նրա վրայ կողքից, նա հազիւ նկատելի կերպով ցնցուեց և սառաւ տեղն ու տեղը, մի քնաթաթախ բզէզ ընկաւ ճիւղից և թրիւկաց ձանապահին: Յերսենեվ մեղմ կերպով բացականչեց՝ ա, և նորից կանգ առաւ: Բայց նա սկսեց մտածել Ելնայի մասին և այս բոլոր արագաթուիչ զգացմունքները միանդամից անյայտացան: մնաց միայն գիշերային թարմութիւն և գիշերային զրօսանքի կենսատու տպաւորութիւնը. նրա ամբողջ հոգին գրաւեց երիտասարդ աղջկայ պատկերը: Յերսենեվ գնում էր գլուխը կախ յիշում էր Ելնայի խօսքերը, հարցերը: Նրան թուաց թէ ետեւից արագ քայլերի ձայն է լսում: Նա լարեց լսելիքը. մի ինչ որ բան վազում էր, ինչ որ մարդ հասնում էր նրան. լսուեց ընդհատուող չնչառութիւն, և յանկարծ նրա առաջ, մեծ ծառից ընկած շրաքի սև շրջանից, առանց զլխարկի, խճճուած մազերով, լուսնի լոյսի տակ բոլորովին գունատուած՝ գուրս եկաւ Շուրին:

—Ես ուրախ եմ, որ դու այս ձանապարհով գնացիր, խօսեց նա գժուարութեամբ.—Ես ամբողջ գիշերը չէի քնի, եթէ չը հասնէի քո ետևից: Տնը ինձ ձեռդզ: Զէ որ դու տան ես զնում:

—Տուն:

—Ես քեզ ձանապարհ կը դնեմ:

—Բայց ինչպէս գու կը զնաս առանց զլխարկի:

—Ոչինչ, Ես փողպատու էլ վերցրել եմ Այժմ տաք է: Բարեկամները մի քանի քայլ փոխեցին:

—Ճշմարիտ չէ, այսօր ես շատ յիմար էի, յանկարծ հարցրեց Շուրին:

—Անկեղծ խօսելով, այս Ես քեզ հասկանալ չը կարողացայ: Ես քեզ երբեք չեմ տեսել այդպէս: Եւ չնորհ արա, ինչու բարկացար, ինչ գատարկ բանի համար:

—Հըմ, մոնչաց Շուրին:—Ահա թէ ինչ բառեր նս գործ ածում, իսկ ես գատարկ բաների հետ գործ չունեմ: Գիտես, աւելացրեց նա, —ես պիտի նկատեմ, որ ես... որ... ինչ ուզում ես՝ մտածիր իմ մասին, ես... այն, ես սիրահարուած եմ Ելնայի վրայ:

—Դու սիրահարուած ես Ելնայի վրայ, կրկնեց Յերսենեվ և կանգ առաւ:

—Այս, —մի բոնազրուիկ անփութութեամբ շարունակեց Շուրին:—Դա քեզ զարմացնում է: Կ'ասեմ քեզ աւելին: Մինչեւ այս երեկոյ ես կարող էի յոյս ունենալ, որ նա էլ ժամանակով

կը սիրէ ինձ: Բայց այսօր ես համոզուեցայ, որ իզուր է յոյսը:

Նա սիրեց ուրիշին:

—Ուրիշին: Ո՞ւմ:

—Ո՞ւմ: Քեզ, բացականչեց Շուրին և խփեց Բերսենեվի

ուսին:

—Ի՞նձ:

—Քեզ, կրկնեց Շուրին:

Բերսենեվ մի քայլ յետ գնաց և անշարժացաւ: Շուրին

սուր հայեացք զցեց նրա վրայ:

—Այս էլ քեզ զարմացնում է: Դու համեստ պատանի ես:

Բայց Ելենան քեզ սիրում է: Այս կողմից կարող ես հանդիսա

լինել:

—Ի՞նչ գատարկ բաներ ես դուրս տալիս, վերջապէս մի

լայրացկոտութեամբ արտասանեց Բերսենեվ:

—Ոչ, գատարկ բաներ չեն: Սակայն, ինչու ենք մենք կանգնած: Առաջ գնանք: Գնալիս հեշտ է խօսելը: Ես Ելենային վաղուց եմ ճանաչում: Սիսլուել ես չեմ կարող: Դու նրա սրտի ուզածն ես: Ժամանակ կար, ես էլ դուր էի գալիս նըրան: բայց նախ, ոս նրա համար չափազանց թեթեամիտ երիտասարդ եմ, իսկ դու մի լուրջ արարած ես, դու բարոյապէս և Փիզիկապէս մաքուր անձնաւորութիւն ես, դու... սպասիր, ես չեմ վերջացրել, դու բարեխիղճ, չափաւոր էնտուզիաստ ես, ճշմարիտ, իսկական ներկայացուցիչ զիտութեան այն քուրմերի, որոնցով այնքան արդարացի հպարտանում է ոսւս միջին ազնուականութեան դասակարգը: Իսկ երկրորդ, Ելենան այս քանի օրը տեսաւ ինձ՝ Զօնայի ձեռքերը համբուրելիս:

—Զօնայի:

—Այն, Զօնայի: Ի՞նչ արած: Այդ աղջկայ ուսերը այնքան լաւ են:

—Ուսերը:

—Այն, հէնց ուսերը, կամ ձեռքերը, միենոյն չէ: Ելենան ինձ տեսաւ այս ազատ զբաղմունքների մէջ ճաշից յետոյ, իսկ ճաշից առաջ ես նրա ներկայութեամբ հայհոյել էի Զօնային: Ելենան, դժբախտաբար, չէ հասկանում որ այսպիսի հակասութիւնները բնական են: Յետոյ դու լոյս ընկար, հաւատում ես... ինչին ես հաւատում... դու կարմրում ես, շփոթւում ես, ճառում ես Շիլլերի, Շելլինդի մասին (իսկ Ելենան միշտ նշանաւոր մարդկանց է որոնում), ահա դու յաղթեցիր, ես, թշուառ, աշխատում եմ հանապներ անել ե... ե... սակայն...

Շուրին յանկարծ լաց եղաւ, քիչ հեռու գնաց, նստեց գետնի վրայ և բռնեց իր մազերից:

Բերսենեվ մօտեցաւ նրան:

—Պաւել, սկսեց նա, —այդ ինչ երեխայութիւն է: Շնորհ արա: Այսօր ինչ է պատահել քեզ: Աստուած գիտէ թէ ինչ իւմարութիւն է մտել քո զլուկիր, և դու լաց ես լինում: Ինձ, ձիշտն ասած, թւում է թէ դու ձեացնում ես:

Շուրին բարձրացրեց զլուկիր: Արտասունքները լուսնի շողերի տակ փայլեցին նրա թշերի վրայ, բայց նրա դէմքը ժըպտում էր:

—Անդրէյ Պետրօվիչ, խօսեց նա, —դու կարող ես մտածել իմ մասին ինչ որ ուզում ես: Ես մինչև անգամ պատրաստ եմ համաձայնուել, որ ինձ հետ այժմ խտերիկա է պատահել, բայց ես, Աստուած է վկայ, սիրահարուած եմ Ելենայի վրայ, և Ելենան քեզ է սիրում: Սակայն ես խոստացայ ճանապարհ գնել քեզ մինչև տուն, և խոստում կը կատարեմ:

Եա վեր կացաւ:

—Ի՞նչ գիշեր է, արծոթափայլ, մութ, երիտասարդ: Ինչքան լաւ է այժմ նրանց համար, որոնց սիրում են: Որքան ուրախալի է նրանց համար չը քնել: Դու կը քնես, Անդրէյ Պետրօվիչ:

Բերսենեվ ոչինչ չէր պատասխանում եւ փուխացրեց իր քայլերը:

—Ո՞ւր ես շտապում, շարունակեց Շուրին: —Հաւատա իմ խօսքերին, այսպիսի զիշեր քո կեանքի մէջ մէկ էլ չի կրկնուելու, իսկ տանը քեզ սպասում է Շելլինգ: Ճիշտ է, նա այսօր քեզ լաւ ծառայութիւն արաւ. բայց և այնպէս, միշտապիր: Երգիր, եթէ երգել զիտես՝ երգիր աւելի բարձր, եթէ չը գիտես—վերցրու զիխարկդ, բարձրացրու զլուխդ եւ ժպտա աստղերին: Բոլոր աստղերը քեզ են նայում, միայն քեզ, նրանք միայն այն են անում, որ նայում են սիրահարուած մարդկանց,—դրանից է որ նրանք այնքան սքանչելի են: Հօ դու սիրահարուած ես, Անդրէյ Պետրօվիչ: Դու ինձ չես պատասխանում... ինչու չես պատասխանում, նորից խօսեց Շուրին: —Օ՛, եթէ դու զգում ես քեզ երջանիկ, լոիր, լոիր: Ես շատախօսում եմ, որովհետեւ ես վշտահար եմ, ես սիրուած չեմ, ես ձեռնածու եմ, արտիստ եմ, գիրգեար եմ. բայց որպիսի անխօս պանչացումներ կը խթէի ես այս զիշերային շիթերից, այս աստղերի տակ, այս ալմաստների տակ, եթէ իմանայի, որ ինձ սիրում են... Բերսենեվ, դու երջանիկ ես:

Բերսենեվ առաջուայ պէս լուս էր և արագ գնում էր հարթ ճանապարհով: Առջնում, ծառերի մէջ, պսպղացին այն զիւղի կրակները, ուր նա էր ապրում. նա ամբողջովին բաղ-

կացած էր մի տասնեակ փոքրիկ ամարանոցներից։ Գիւղի սկզբում, ճանապարհի աջ կողքին, երկու լայն տարածուած կէշների տակ, գտնուում էր մանրավաճառի խանութը, նրա բոլոր պատուհանները արդէն փակուած էին, բայց լոյսի մի լայն շերտ բաց դռնով հովհարի ձեռով ընկած էր կոխկուած խոտի վրայ և խփում էր գլուխ բարձր ծառերի վրայով, պարզ լուսաւորելով միապաղաղ տերեների աստառը։ Մի աղջիկ, ըստ երեւոյթին աղախին, կանգնած էր խանութում մէջքը դէպի շէմքը գարձրած և առևտուր էր անում խանութպանի հետ։ Կարմիր թաշկինակի տակից, որը նա գցել էր իր զիլին և բռնել էր ծնօտի տակ մերկ թեռով, հազիւ էր երեւում նրա կլորիկ թուշը և պարանոցը։ Երիտասարդները մասն լոյսի շերտի մէջ։ Շուրբին նայեց խանութի ներսը, կանգ առաւ և կանչեց։ «Անուշկա»։ Աղջիկը արագ յետ գարձաւ։ Երեաց սիրունիկ, մի քիչ լայն, բայց թարմ գէմքը ուրախ շականակագոյն աշքերով և թուխ յօնքերով։ «Անուշկա», կրկնեց Շուրբին։ Աղջիկը նայեց նրան, վախեց—և, չը վերջացնելով առևտուրը, ցած իջաւ սրահից, միր անցաւ մօտիկուց և հազիւ հաղ համարձակուելով նայել, անցաւ ճանապարհը, գնաց դէպի ձախ։ Խանութպանը, մի թխլիկ մարդ, որ անտարբեր էր դէպի աշխարհի ամեն մի բան, ինչպէս բոլոր մանրավաճառները, որոնք առևտուր են անում քաղաքից գուրս, աղջկայ և տեսից ձայնեց և յօրանջեց, իսկ Շուրբին դարձաւ ներսենելին և ասաց։ «Սա... սա, զիտեղ ես ունեմ մի ճանօթ ընտանիք... սա նրանց մօտ է լինում, գու չը կարծես»... և, չը վերջացնելով խօսքը, վազեց հեռացող աղջկայ ետեից։

Գոնէ սրբիր արտասունքդ, կանչեց նրա ետեից ներսենեվ և չը կարողացաւ պահել իր ծիծաղը։ Բայց երբ վերադարձաւ տուն, նրա գէմքի վրայ չը կար ուրախ արտայայտութիւն։ Նա այլ ևս չէր ծիծաղում։ Նա մի մայրկեան անգամ չը հաւատաց Շուրբինի ասածներին, բայց նրա արտասանուծ խօսքը ներսենելի հոգու խորբն ընկաւ։ «Պաւելը ինձ յիմարացնում էր, մտածում էր նա... բայց ելենան երբ և իցէ կը սիրէ... Ո՞ւմ կը սիրէ նա»։

Յերսենելի սենեակում դրած էր դաշնամուր, որ մեծ չէր, ոչ էլ նոր, բայց ունէր մեզմ ու ախորժելի, թէն ոչ բոլորովին մաքուր տօն։ Յերսենեվ նստեց նրա առաջ և սկսեց ակիորդներ վերցնել։ Ինչպէս բոլոր ուրս ազնուականները, նա պատանեկութեան ժամանակ սովորել էր երաժշտութիւն, և, ինչպէս համարեա բոլոր ուրս ազնուականները, ածում էր շատ վատ։ բայց նա սաստիկ սիրում էր երաժշտութիւնը։ Իս-

կապէս, երաժշտութեան մէջ նա սիրում էր ոչ թէ արուեստը, ոչ թէ այն ձեերը, որոնց մէջ արտայայտում է նա (սիմֆոնիաները և սօնատաները, նոյն իսկ օպերաները նրան վատութիւն էին ազգում), այլ երաժշտութեան հոգին էր սիրում։ սիրում էր այն անորոշ ու քաղցր, անառարկայ և ամեն ինչ գրկող զգացումները, որոնք յարուցանուում են հոգու մէջ ձայների ներգանակութեամբ և ելնէջներով։ Մի ժամկց աւել նա չէր հեռանում դաշնամուրից, շատ անգամ կրկնելով մի և նոյն ակկորդները, անաջող որոնելով նորերը, կանգ առնելով նուազացրած սեպատիմների վրայ։ Միրաք նրա մէջ մրմիջում էր և աչքերը մի քանի անգամ լցուեցան արտասունքներով։ Նա չէր ամաչում այդ արտասունքներից, որովհետև թափում էր մթութեան մէջ։ «Ճշմարիտ է Պաւելը, մտածում էր նա, ևս զգում եմ. այս երեկոն այլ ևս չի կրկնուի»։ Վերջապէս նա վեր կացաւ, վասեց մոմք, խալաթը վրան գցեց, դարակից վերցրեց թառմերի՝ Հօնեւսառաֆեների պատմութեան երկրորդ հատորը—և, մի երկու անգամ հոգոց հանելավ, ջանասիրութեամբ գրացուեց ընթերցանութեամբ։

VI

Մինչ այս, մինչ այն, ելենան վերագարձաւ իր սենեակը, նստեց բաց պատուհանի առաջ և գլուխը գրեց ձեռքերի վրայ։ Ամեն երեկոյ մի քառորդ ժամ ժամանակ անցկացնել իր սենեակի պատուհանի առաջ նրա սովորութիւնն էր դառել։ Նա այդ ժամանակ խօսում էր ինքն իր հետ, անցած օրուայ հաշիւն էր տալիս իրան։ Մօտ ժամանակները լրացել էր նրա քսան տարին։ Հասակով նա բալձր էր, ունէր գունատ և թուխ դէմք, մեծ, գորշ աչքեր կոլոր յօնքերի տակ, որոնք շրջապատուած էին շատ մանր մուսներով, ճակատն ու քիթը բոլորովին ուղիղ, սեղմած բերան եւ բաւական սուր ծնօտ։ Նրա մոյզ ծամք ցած էր ընկնում բարակ պարանոցի վրայ։ Երա ամբողջ գոյութեան մէջ, ուշազիր և մի փոքր վախկոտ գէմքի արտայայտութեան մէջ, պարզ, բայց փոփոխական հայեացքի մէջ, նրա ժպիտի մէջ, որ կարծես լարուած էր, մեղմ ու անհաւասար ձայնի մէջ կար մի ինչ որ ջզային, ելեքտրական բան, ինչ որ յորձանուտ և շատպողական բան, մի խօսքով, մի ինչ որ բան, որ չէր կարող ամենքին հաճելի թուալ, որ նոյն իսկ որ ինչ էր հրում մի քանիսներին։ Նրա ձեռքերը նեղ էին, վարդէն էր հրում մի քանիսներին։ Երա ձեռքերը նեղ էին նոյնպէս և ոտները. նա գնում էր արագ, համարեա սրբնթաց, քիչ գէպի առաջ

թերուած։ Նա շատ տարօրինակ կերպով էր մեծացել. առաջ աստուածացնում էր իր հօրը, յետոյ ջերմ կերպով կպաւ մօրը, և սառաւ երկուսից էլ, մանաւանդ հօրից։ Վերջին ժամանակ իր մօր հետ վարւում էր, ինչպէս հիւանդ տափի հետ. իսկ հայրը, որ հպարտանում էր նրանով, երբ նա գեռ համարւում էր մի արտասովոր մանուկ, սկսեց վախենալ նրանից, երբ նա մեծացաւ և ասում էր թէ նա մի ինչ որ յափշտակուած հանրապետական է, Աստուած գիտէ թէ ում նման։ Թուլութիւնը վրդովեցնում էր Ելենային, յիմարութիւնը զայրացնում էր, ստութիւնը նա չէր ներում «յաւիտեանս յաւիտենից»։ Նրա պահանջները ոչ մի բանի առաջ կանդ չէին առնում, նոյն իսկ աղօթքները յաճախ խառնում էին յանդիմանութիւնների հետ։ Բաւական էր որ մի մարդ կորցնէր նրա յարգսնքը, —իսկ դատավճուը նա կայացնում էր չուտ, յաճախ չափաղանց չուտ, —և այդպիսի մարդը այլ ևս գոյութիւն չունէր նրա համար։ Բոլոր տպաւորութիւնները խոր ազգում էին նրա հոգու վրայ. կեանքը նրան հեշտ չէր հպատակւում։

Դաստիարակչուհին, որին Աննա Վասիլեևան յանձնել էր վերջացնել իր աղջկայ կրթութեան գործը, —մի կրթութիւն, նկատենք փակագերի մէջ, որը չէր սկսել տաղտկացող տիկիւնը, —ուսւ էր, մի մանակացած կաշոռակերի աղջիկ, ինստիտուտ վերջացրած, շատ զգայուն, բարի և կեղծ արարած էր. նա մի գլուխ սիրահարւում էր և վերջացրեց նրանով, որ յիսուն տարեկան հասակում (երբ Ելենան լրացրել էր տասնեօթ տարին) ամուսնացաւ մի ինչ որ օֆիցէրի հետ, որ իսկոյն թողեց նրան։ Սյօ դաստիարակչուհին շատ էր սիրում գրականութիւնը և ինքն էլ ոտանաւորներ էր գրում. նա զարթեցրեց Ելենայի մէջ սէր գէպի ընթերցանութիւնը, բայց լոկ ընթերցանութիւնը նրան բաւարարութիւն չէր տալիս։ Ելենան երեխայութիւնից ծարաւ էր գործունէութեան, գործնական բարութեան. աղքատները, քաղցածները, հիւանդները նրան զբաղեցնում էին, շփոթում էին, տանջում էին. Ելենան տեսնում էր նրանց երազի մէջ, նրանց մասին հարց ու փորձ էր անում իր բոլոր ծանօթներին. ողորմութիւն նա տալիս էր ինամբով, մի ակամոց հանդիսաւորութեամբ, համարեա շփոթուած։ Բոլոր ճշնշուած կենդանիները, նիհար գոնապահ չները, մահուան դատապարտուած կատու ձագերը, բոյնից թափուած ծտերը, մինչև իսկ միջատնաերն ու զեռուները Ելենայի հովանաւորութիւնը և պաշտպանութիւնն էին գտնում. նա ինքը կերակրում էր նրանց, չէր զգում։ Մայրը չէր խանգարում նրան. բայց հայրը շատ էր զայրանում իր աղջկայ վրայ, նրա, ինչպէս ինքն էր ա-

սում, փծուն քնքութեան համար և հաւատացնում էր որ չների և կատուների ձեռքից տանը շարժուելու տեղ չը կայ։ «Ենոչ կա, կանչում էր նա երբեմն, շուտ եկ, սարդը մի ձանձ է ծծում, ազատիր թշուափին»։ Եւ կենօչկան, ամբողջովին յուզուած, վազում էր, ազատում էր ձանձը, նրա թաթիկները ազատում էր։ «Հն, հիմա թող որ սարդը քեզ իւածնի, եթէ դու այդքան բարի ես», հեգնաբար նկատում էր հայրը. բայց աղջիկը չէր լսում նրան։ Տամն տարեկան հասակում Ելենան ծանօթացաւ մի մուրացիկ աղջկայ հետ, որի անունը Կատիա էր և ծածուկ գնում էր նրա հետ տեսակցելու այգում, քաղցրաւենիք էր տալիս նրան, պարգեում էր նրան թաշկինակներ, տամն կոպէկանոցներ, —Կատիան խաղալիքներ չէր սիրում։ Ելենան նրա հետ նստում էր չոր գետնի վրայ, մի խուլ անկիւնում, բանջարի թփերի ետևում. մի ուրախարար հեգութեան զգացմունքով ուտում էր մուրացիկի հին հայը, լսում էր նրա պատմութիւնները։ Կատիան ունէր մի մօրաքոյր, որ մի չար պառաւ էր և յաճախ ծեծում էր նրան. Կատիան ատում էր պառաւին և միշտ այն էր ասում, թէ ինչպէս ինքը կը վախչէ նրանից, ինչպէս կ'ապրի Աստուծու ազատ աշխարհում. մի գաղտնի յարգանքով ու երկիւզով ականջ էր գնում Ելենան այս անձանօթ, նոր խօսքերին, ուշադրութեամբ նայում էր Կատիային և նրան թւում էր թէ ամեն ինչ այդ աղջկայ մէջ, ամեն ինչ—սի, արագավազ, համարեա զազանային աշքերը, արեւից այրուած ձեռքերը, խուլ ձայնը, մինչև իսկ նրա պատառտած զգեստը, մի առանձին, համարեա թէ սրբազն բաներ եւ Ելենան վերադառնում էր առան և երկար մտածում էր մուրացիանների մասին, Աստուծու ազատութեան մասին. մտածում էր այն մասին, թէ ինչպէս ընկուգենուց կը կարէ իր համար ձեռնափայտ, քսակը ճիթը կցէ և կը վախչէ Կատիայի հետ և ինչպէս կը թափառէ ձանապարհներին, կրելով իր վրայ կապոյտ ծաղկիներից կազմած պսակը. նա միանգամ տեսել էր Կատիայի վրայ այդպիսի պսակ։ Եթէ այդպիսի ժամանակ աղքականներից մէկը սենեակ էր մտնում, Ելենան քաշւում էր։ Մի անգամ Ելենան անձրեւ ժամանակ վազում էր Կատիայի հետ տեսնուելու և յեխոտեց իր զգեստը. հայրը տեսաւ նրան և անուանեց կեղտուա, գեղջկուհի։ Ելենան բորբոքուեց, —և նրա սիրած սարսափ զգաց։ Կատիան յաճախ երգում էր մի ինչ որ կէս-վալրենի, զինուորական երգ. Ելենան սովորեց այդ երգը... Աննա Վասիլեվսան լսեց այդ երգը և զայրացաւ։

— Արտեղից ես դու վերցրել այդ զգուելի բանը, հարցրեց
նա իր աղջկան։

Ելենան միայն նայեց իր մօրը և մի խօսք անդամ չասաց։
Նա զգաց, որ աւելի հեշտ է թոյլ տալ որ իրան մաս-մաս
ծուատեն, քան թէ յայտնել իր գաղտնիքը, և նորից նա իր
սրտում մի ինչ որ սարսափել և քաղցր բան զգաց։ Սական
նրա ծանօթութիւնը կատիացի հետ երկար չը տեսց. խեղճ աղ-
ջիկը ջերմախտից բռնուեց և մի քանի օրից յետոյ մեռաւ։

Ելենան շատ տիրեց, և երկար ժամանակ գիշերները քնել
չէր կարողանում, երբ իմացաւ կատիացի մահը, Մուրացիկ
աղջկայ վերջին խօսքերը անդադար հնչում էր նրա ականջնե-
րում և նրան թւում էր թէ իրան կանչում են...

Իսկ տարիներց զնում էին ու զնում, արտագ ու անշուկ,
ինչպէս ջուրը ձիւների տակ, անցաւ Ելենայի երիտասարդու-
թիւնը մի արտաքին սնդործութեան մէջ և ներքին կոռու ու
յուզունքների մէջ: Բարեկամուհիներ նա չունէր. Ստախօվի
տանը այցելող բոլոր աղջիկների և ոչ մէկի հետ չը մտերմացաւ:
Ծնողական իշխանութիւնը երբէք չէր ծանրացած Ելենայի վը-
րայ, իսկ տասն և վեց տարեկան հասակից նա համարեա բոլո-
րովին անկախ էր, նա ակսեց վարել իր սեփական, առանձին
կեանքը: Նրա հոգին վառւում էր և հանգչում էր առանձնու-
թեան մէջ, նա թրպրտում էր ինչպէս թռչունը վանդակում,
իսկ վանդակի չը կար. ոչ ոք չէր ճնշում նրան, ոչ ոք չէր բռո-
նած նրան, իսկ նա ձգտում էր դուրս թռչել և տանջւում
էր: Երբեմն նա ինքն իրան չէր հասկանում, մինչեւ իսկ վախում
էր ինքն իրանից: Այն ամենը, ինչ շրջապատում էր նրան, թը-
ւում էր նրան թէ անմիտ և թէ անհասկանալի: «Ի՞նչպէս ապ-
րել առանց սէրի, իսկ չը կայ մէկը, որին սիրես», մտածում
էր նա. այդ մոքերը, այդ զգացումները սարսափ էին պատ-
ճառում նրան: Տասն և ուն տարեկան հասակում նա քիչ էր
մնում որ մեռնէր մի վատ ջերմախտից. նրա ամբողջ կազմուած-
քը, ի ընէ առողջ և պինդ, հիմնովին քայքայուել էր և երկար
ժամանակ չէր կարողանում կազզուրուել. հիւանդութեան վեր-
ջին հետքերը վերջապէս կորան, բայց Ելենա նիկոլաևնայի
հայրը գեռ էլի առանց բարկութեան չէր կարողանում խօսել
նրա ջղերի մասին: Մի-մի Ելենայի զլուխն էր մանում, որ ին-
քը մի բան ուզում է, որի նմանը ոչ ոք չէ ուզում, որի մասին
ոչ ոք չէ մտածում ամբողջ Ռուսաստանում: Յետոյ նա հան-
գարտում էր, մինչև իսկ ծիծազում էր իր վրայ, անհոգ կեր-
պով անց էր կացնում որ օրի ետեից, բայց յանկարծ մի ինչ որ
հզօր, անանուն բան, որին յաղթահարել չէր կարողանում նա,

կոռում էր նրա մէջ, ուզում էր դուրս ժայթքել: Փոթորիկն
անցնում էր, ցած էլին ընկնում յոդնած, չը բարձրացած վարժ
թերը, բայց այս զրգիները անօգուտ չէին անցնում: Որքան
և աշխատում էր նա չարտայալտել այն, ինչ որ կար իր մէջ,
կոծկուած հոգու վիշտը յայտնագործուում էր նրա արտաքին հան-
գրստութեան մէջ, և նրա ազգականները յաձախ իրաւունք ու-
նէին վեր քաշել իրանց ուսերը, և չը հասկանալ նրա օտարու-
տի» ձեերը:

Այն օրը, երբ սկսուեց մեր պատմութիւնը, Ելենան սովո-
րականից երկար ժամանակ չէր հեռանում պատուհանից: Նա
շատ էր մտածում Բերսենելի մասին, այն խօսակցութեան մա-
սին, որ ունեցել էր նրա հետ: Երիտասարդը դուր էր գալիս
նրան, նա հաւատում էր Բերսենելի զգացմունքների ջերմու-
թեան, զիաւորութիւնների մաքրութեան: Երբէք նա իր հետ
չէր խօսել այնպէս, ինչպէս այդ երեկոյ: Ելենան մտարեց
նրա հեղ աչքերի արտայալութիւնը, նրա ժպիտները—և ինքն
էլ գոտաց ու մտածութեան մէջ ընկաւ, բայց մտածում էր ոչ
թէ Բերսենելի մասին: Նա սկսեց նայել «Գիշերին» բաց պա-
տուհանի միջով: Երկար նա նայում էր մութ, ցած կախուած
երկնքին. ապա վեր կացաւ, զիմի շարժմամբ երեսից հեռացրեց
մազերը և ինքն էլ չիմանալով թէ ինչու, տարածեց գէպի նրան
գէպի այդ երկնքը, իր հոլմնի ու սառած ձեռքերը. յետոյ նա
ցած զցեց թեերը, ծունկ չոքեց իր անկողնի առաջ, երեսը սեղ-
մեց բարձի վրայ և չը նայելով որ շատ ջանք էր անում չը հը-
պատակուել իրան գերած զգացմունքին, բաց եղաւ, թափեց
ինչ որ օտարուի, անհասկանալի, բայց այրող արտասունքներ:

VII

Միւս օրը, ժամի մօտ տասներկուսին, Բերսենելի Մուկուա
դնաց մի յետ գարճող կառքով: Նրան հարկաւոր էր փող սատ-
նալ պօստից, մի քանի զրեկը գնել և ի գէպ, ուզում էր տես-
նուել ինսարօվի հետ և խօսել: Բերսենելի, Շուբինի հետ ունե-
ցած վերջին խօսակցութեան միջոցին միտք յղացաւ հրաւիրել
ինսարօվին իր մօտ ամբանոց: Բայց նա շուտ չը գտաւ ին-
սարօվին, իր վերջին բնակարանից սա տեղափոխուել էր ու-
րիշ բնակարան, որին համնելը այնքան էլ հեշտ չէր. այդ բնա-
կարանը զտնուում էր մի անճունի քարաշէն տան յետին բա-
րպարան: այդ տունը Պետերբուրգի ձեռվ շինուած էր Արբատի և
Պօվարսկայեա փողոցի մէջ: Բերսենելի ազարդիւն կերպով գը-
նաց մի կեզտուա պատշգամբից միւսը, ի դուր կանչեց գոնա-

պանին կամ որ և իցէ մէկին: Դռնապանները Պետքբուրգում էլ աշխատում են խոյս տալ այցելուների հայեացքից, իսկ Մոսկուայում հօ միշտ այդպէս է: Ոչ ոք չը պատասխանեց Բերսենեվին, միայն մի հարցաւէր գերձակ, որ միայն ժիշտ ունէր հագին, իսկ ուսի վրայ զցած էր գորշ թելի մի վիլա, լուսամտի բարձր օդանցքից պուրս հանեց իր աղօտ և չածիլած դէմքը, որի մի աշքը ուռած էր, իսկ սե, եղջիւրներից զրկուած այծը, որ բարձրացել էր աղբակոյտի վրայ, յետ նայեց, ցաւալի ձայնով մկիաց և սկսեց աւելի եռանդով որոճալ: Մի ինչ որ կիւնարմատ, որ հագած էր հին սալօտ և հնամաշ կօշիկներ, վերջապէս, խզաց Բերսենեվին և ցոյց տուեց Ինսարօվի բնակարանը: Բերսենեվ նրան գտաւ տանը: Ինսարօվ սենեակ էր վարձել այն իսկ դերձակից, որ այնքան անտարբեր կերպով նայում էր օդանցքից մոլորուած մարդու դէս ու դէն ընկնելուն. զա մի մեծ, համարեա գտատրկ սենեակ էր մութ կանաչ պատերով, երեք քառակուսի պատուհաններով, մի անկիւնում զրած էր մի շատ փոքրիկ մահճակալ, միւս անկիւնում մի կաշեայ բազմոց, իսկ առաստաղից կախ ընկած էր մի հանգին վանդակ. այդ վանդակում մի ժամանակ ապրել էր մի սոխակ, Ինսարօվը գնաց Բերսենեվի առաջ, հէնց որ սա չէմքն անցաւ, բայց չը բացականչեց, «ա, դուք էք» կամ թէ «այդ որ խաչից է», մինչեւ անգամ բարե չասաց, այլ պարզապէս սեղմեց նրա ձեռքը և մօտեցրեց նրան սենեակում գտնուող միակ աթոռին:

— Նստեցէք, ասաց նա, իսկ ինքը նստեց սեղանի ծայրին: — Ինձ մօտ, տեսնում էք, գեւ անկարգութիւն է տիրում, աւելացրեց Ինսարօվ, ցոյց տալով յատակի վրայ թափուած զրերի և թղթերի կոյտը. — զեռ կարգի չեմ բերել, ինչպէս հարկն է: Ժամանակ չունեի:

Ինսարօվ խօսում էր ոռւսերէն բոլորովին կանոնաւոր, իւրաքանչիւր բառը արտասանելով ամուր և մաքուր. բայց նրա կոկորդային, բայց և այդպէս՝ ախորժելի ձայնը մի ինչ որ ոչ ոռւսական շեշտ ունէր: Ինսարօվի օտար ծագումը (նա ազգով բոլգար էր) էլ աւելի պարզ արտայայտում էր նրա արտաքինի մէջ, զա մօտ քսան և հինգ տարեկան մի երիտասարդ էր, նիհար և ջզատ, ներս ընկած կրծքով, ծուռ ձեռքերով. նրա դէմքի զծերը խիստ էին, քիթը սապատ ունէր, կապտագոյն տուող սե, ուղիղ մազեր, փոքրիկ ճակատ, փոքրիկ յառած, խորասուզուած աչքեր, թաւ յօնքեր. երբ նա ժպտում էր, մի ակնթարթում գեղեցիկ սպիտակ ատամները երեւում էին բարակ, կոշտ, չափազանց որոշ գծագրուած շրթունքների տակից: Նա հագած էր հին, բայց մաքուր սիւրտուկ, որ կոճկուած էր մինչեւ վեր:

— Ինչու տեղափոխուեցաք ձեր նախկին բնակարանից, հարցրեց նրան Բերսենեվ:

— Աս էժան է, համալսարանն էլ մօտ է:

— Բայց հիմա արձակուրդ է... Եւ ինչ հաճոյք է ամառը ապրել քաղաքում: Կը վարձէիք ամարտնոց, քանի որ վճռել էիք տեղափոխուել:

Ինսարօվ ոչինչ չը պատասխանեց այս նկատողութեան և առաջարկեց Բերսենեվին չիբուխ, տաելով. «Ներեցնէք, պապիրոս և սիգար չունեմ»:

Բերսենեվ ծինց չիբուխ:

— Ես, շարունակեց նա, վարձել եմ մի տնակ կունցօվօփ մօտ: Շատ էժան է և շատ յարմար: Մինչև իսկ մի աւելորդ սենեակ կայ վերհում:

Ինսարօվ դարձեալ ոչինչ չէր պատասխանում:

Բերսենեվ ձգեց չիբուխը:

— Ես մինչև անգամ մաածում էի, ասաց նա նորից, բաց թողնելով ծուխը բարակ շերտերով, — որ եթէ, օրինակ, մէկը գտնուէր, օրինակ, հէնց գուշ, ես մտածում էի, որ եթէ կամենար... եթէ համաձայնուէր բնակուել վերեի սենեակում... որքն լաւ կը լինէր: Ի՞նչ էք կարծում, Դմիտրիյ Նիկանօրիչ:

Ինսարօվ նրա վրայ դարձեց իր փոքրիկ աչքերը: — Դուք առաջարկում էք որ ես ապրեմ ձեր ամարանոցում:

— Այո, ինձ մօտ, վերեւում, մի աւելորդ սենեակ կայ:

— Շատ չնորհակալ եմ, Անդրէյ Պետրովիչ, բայց ես կարծում եմ, որ իմ միջոցները չեն ների այդ բանն անել:

— Այսինքն ինչպէս չեն ներում:

— Չեն թոյլ տալիս ապրել ամարանոցում: Ես չեմ կարող երկու բնակարան պահել:

— Զէ որ ես... սկսեց Բերսենեվ և կանգ առաւ: — Դրանից ձեղ համար աւելորդ ծախս չէր լինի, շարունակեց նա: — Այստեղի բնակարանը գնենք թէ ձեղ վրայ կը մնար. բայց այնտեղ ամեն ինչ շատ էժան է. կարելի է նոյն իսկ այնպէս յարմարուել, որ մենք ճաշենք միասին:

Ինսարօվ լուռ էր: Բերսենեվ զգաց մի անյարմար դրութիւն:

— Գոռնէ, երբ և իցէ այցելեցէք ինձ, սկսեց նա, քիչ սպասելուց յետոց: Ինձանից երկու քայլ հեռու ապրում է մի ընտանիք, որի հետ ես շատ ուղում եմ ծանօթացնել ձեզ: Այստեղ էնչ մի հրաշալի աղջիկ կայ, եթէ իմանայիք, Ինսարօվ: Այստեղ էլ ապրում է իմ մի մօտիկ ծանօթը, մի մարդ, որ մեծ տաղանդի տէր է, ես համոզուած եմ, որ դուք նրա հետ կը

մտերմանաք։ (Ուսև մարդը սիրում է հիւրասիրել, եթէ մի ուրիշ բան չը կայ, գոնէ իր ծանօթներով)։ Ճշմարիտ, եկէք։ իսկ աւելի լաւն է, տեղափոխուեցէք մեզ մօռ, ճշմարիտ։ Մենք կարող էինք միասին աշխատել, կարդալ... ես, ինչպէս զիտէք, պարապում եմ պատմութեամբ, փիլիսոփայութեամբ։ Այս բոլորը ձեզ հետաքրքրում է, ես շատ զրքեր էլ ունեմ։

Ինսարօվ վեր կացաւ և ման եկաւ սենեակում։ — Թոյլ տուէք իմանալ, հարցրեց նա վերջապէս։ — Բնչ վարձ էք տալիս ձեր ամարանոցի համար։

— Հարիւր ոուբլի։

— Իսկ քանի սենեակ կայ այնտեղ։

— Հինգ։

— Ուրեմն հաշւով գալիս է մի սենեակը քսան ոուբլի։

— Հաշուով... Բայց չնորհ արէք, սենեակը ինձ բոլորովին հարկաւոր չէ։ Դատարկ մնում է։

— Շատ կարելի է. բայց լսեցէք, աւելացրեց ինսարօվ գլխի մի կարուել և միենոյն ժամանակ բարեհոգի շարժում դործելով։ — Ես միայն այն ժամանակ կարող եմ օգտուել ձեր առաջարկութիւնից, եթէ դուք կը համաձայնուէք վերցնել ինձնից փող, որքան էլ գայ հաշուով։ Քան ոուբլի տալու ոյժ ունեմ, մանաւանդ որ, ինչպէս ասում էք, ես այնտեղ միւս ծախքերի մէջ խնայողութիւն կ'անեմ։

— Ի հարկէ. բայց ճշմարիտ, ես խղճահարւում եմ։

— Ուրիշ կերպ անկարելի է, Անդրէյ Պետրօվիչ։

— Դէհ, ինչպէս ուզում էք. միայն ինչքան յամառ էք։

Ինսարօվ գարձնալ ոչինչ չը պատասխանաց։

Երիտասարդները պայմանաւորուեցին թէ որ օր պիտի տեղափոխուի ինսարօվ։ Կանչեցին բնակարանի տիրոջը. բայց նա նախ ուղարկեց իր աղջկան, որ եօթը տարեկան մի երեխայ էր և զլիին զցած ունէր մի ահագին խայտարդէտ թաշկին։ Աղջիկը ուշի ուշով, համարեա սարսափով, լսեց այն ամենը, ինչ ասաց ինսարօվը և լուռ հեռացաւ. յետոյ երեաց նրա մայրը, մի յղի կին, որ նոյնպէս թաշկինակ ունէր զցած, բայց մի շատ փորբիկ թաշկինակ։ Ինսարօվ բացատրեց, որ ինքը տեղափոխուում է ամարանոց կունցօվօի մօտ, բայց բնակարանը թողում էր իր վրայ և նրան, այդ կնոջն, է յանձնում իր իրերը. գերձակի կինն էլ կարծես թէ զախեց և հեռացաւ։ Վերջապէս եկաւ ինքը, գերձակը, ոս սկզբից կարծես հասկացաւ ամեն բան և միայն մտքի մէջ խորասուզուած ասաց, «Կունցօվօի մօտ», իսկ յետոյ յանկարծ բայց արաւ զուոը և կանչեց. «Փոկ բնակարանը ձեզ վրայ է մնում, չէ»։ Ինսարօվ միա-

մտացրեց նրան։ «Պէտք է իմանալ», կրկնեց գերձակը խիստ ոճով և հեռացաւ։

Բերսենեվ իր գործին գնաց և շատ բաւական էր որ իր առաջարկութիւնը այդպիսի հետեանք ունեցաւ։ Ինսարօվ ճանապարհ դրեց նրան մինչև գուաը մի սիրալիր քաղաքավարութեամբ, որ Ռուսաստանում քիչ գործածական է. և մնալով մենակ, ինամբով հանեց սիրտուկը և զբաղուեց իր թղթերը դարսելով։

VIII

Նոյն օրը երեկոյեան Աննա Վասիլեվսան նստած էր իր հիւրասինեակում և պատրաստում էր լաց լինել։ Բացի նրանից սենեակում գանւում էր նրա ամուսինը և մի ոմն Ուվար իւանօվիչ Ստաֆիօվ, Նիկոլայ Արտեմեվիչի ազգականը, պաշտօնաթող մի կօրնէտ մօտ վաթսուն տարեկան, մի մարդ, որ չաղութիւնից անշարժութեան աստիճանին էր հասել, ունէք քնատ գեղին մանր աչքեր և անգոյն հաստ շրթունքներ՝ գեղին ուռուցիկ գէմքի վրայ։ Նա պաշտօնը թողնելու օրից մշտապէս ապրում էր Մոսկուայում այն փոքրիկ դրամազլիսի տոկոսներով, որ մնացել էր նրա կնոջից. կինը վաճառական դասակարգից էր։ Նա ոչինչ չէր անում և հազիւ թէ մտածելիս լիներ, իսկ եթէ մտածում էլ էր, իր մտքերը պահում էր իր մօտ։ Իր կեանքում միայն մի անգամ նա յուզուեց և գործունէութիւն ցոյց տուեց. Նա կարդաց լրագիրներում Լօնդօնի համախարհային ցուցահանդէսում դրած մի նոր գործիքի մասին, որ կոչւում էր «Կօնարօբօմբարդօն» և ուզեց բերել տալ այդ գործիքը, մինչև անգամ հարց ու փորձ արաւ թէ ուր պէսք է ուղարկել փողերը և որ գրասինեակի միջոցով։ Ուվար իւանօվիչը կրում էր ծխախոտի գոյնի լայնարձակ սիրտուկ և սպիտակ թաշկինակ պարանոցի վրայ։ Ուտում էր յաճախ և շատ, և միայն գժուար գէպքերում, այսինքն ամեն անգամ, երբ նրան հարձաւոր էր որ և է կարծիք յայտնել, գողալով շարժում էր աջ ձեռքի մատները օդի մէջ, նախ թթամատից գէպի ձկոյթը, ապա ձկոյթից գէպի բթամատը, գժուարութեամբ արտասանելով. «Պէտք էր... մի կերպ... իբր»...

Ուվար իւանօվիչը նստած էր բազկաթուում պատուհանի մօտ և չնչում էր գժուարութեամբ։ Նիկոլայ Արտեմեվիչը խոշոր քայլերով անցուղարձ էր անում սենեակում, ձեռքերը գրաններում դրած, նրա գէմքը անբաւականութիւն էր արտայացում։

Նա վերջապէս կանգ առաւ և շարժեց իր գլուխը:—Այս,
սկսեց նա, մեր ժամանակ երիտասարդները ուրիշ կերպ էին
կրթուած: Երիտասարդները իրանց թոյլ չէին տալիս արհամար-
հել մեծերին: Իսկ այժմ ես միայն նայում եմ և զարմանում:
Գուցէ անարդարը ես եմ, իսկ նրանք արդարացի: այդ կարելի
է: Բայց և այսպէս հս ունեմ սեփական հայեացք իրերի վրայ.
ես յիմար չեմ ծնուած: Ի՞նչ էք կարծում այս մասին, Ուզար
իվանօվիչ:

Ուզար Խւանօվիչը միայն նայեց նրան և խաղացրեց իր
մատները:

—Ելենա Նիկոլաելիսային, օրինակ, շարունակեց Նիկոլայ
Արտեմեվիչը:—Ելենա Նիկոլաելիսային ես չեմ հասկանում, այդ
ճշմարիտ է: Նրա համար ես բաւականաշափ բարձր չեմ: Նրա
սիրու այնքան լայնարձակ է, որ ընդգրկում է ամբողջ բնու-
թիւնը մինչև ամենափոքրիկ հայրիպիտին կամ գորտը, մի
խօսքով ամեն ինչ, բացի իր հարազատ հօրից: Շատ լաւ, այդ
գիտեմ և չեմ խառնում: Որովհետեւ այդուղի կան և ջղեր, և
գիտսականութիւն, և թռիչք դէպի երկինք, այս բոլորը մեր
մասնագիտութիւնը չէ, Բայց պ, Շուրբին... նա զարմանալի ան-
սովոր արտիստ է, ես այդ մասին չեմ էլ վիճում. սակայն ար-
համարհել մեծին, մի մարդու, որին նա, որքան էլ լինի, կա-
րելի է ասել, շատ բաներ է պարտական,—այդ, խոստովանում
եմ, dans mon gros bon sens, թոյլատրել չեմ կարող: Ի բնէ ես
խստապահանջ չեմ, չէ. բայց ամեն ինչ չափ ունի:

Աննա Վասիլեվսան շփոթուած զանգահարեց: Ներս մտաւ
սպասաւոր տղան:

—Ի՞նչո՞ւ Պաւել Եակովլերիչը չէ գալիս, ասաց նա:—Ի՞նչ է
այս, չեմ կարողանում բերել տալ նրան:

Նիկոլայ Արտեմեվիչը թօթուեց իր ուսերը:—Ի՞նչ հարկ
կայ, ասացէք խնդրեմ, բերել տալ նրան ես բոլորովին չեմ պա-
հանջում այդ բանը, մինչև իսկ չեմ ցանկանում:

—Ի՞նչպէս թէ ինչ հարկ կայ, Նիկոլայ Արտեմեվիչ: Նա
ձեզ անհանգիստ է արել. գուցէ խանգարել է ձեր բժշկութեան
ընթացքը: Ես ուզում եմ բացատրութիւն ստանալ նրանից: Ես
ուզում եմ իմանալ թէ ինչով է նա ձեզ բարկացրել:

—Ես կրկնում եմ, որ այդ բանը ես չեմ պահանջում: Եւ
ինչ հաճոյք է... դեյտ les domestiques...

Աննա Վասիլեվսան թեթև կերպով կարմրեց:—Իզուր էք
այդպէս ասում, Նիկոլայ Արտեմեվիչ: Երբէք ես... դեյտ... les
domestiques... գնա, Ֆէղբւշկա, և նայիր տես որ իսկոյն այս
տեղ բերես Պաւել Եակովլեվիչին:

Սպասաւորը դուրս գնաց:

—Եւ բոլորովին հարկաւոր չէ այդ բոլորը, ասաց Նիկոլայ
Արտեմեվիչը ատամների արանքով և նորից սկսեց քայլել սե-
նեակում:

—Բոլորովին այդ միաքը չունէի սկսելով իմ խօսքը:
—Ի՞նչ էք ասում, Պավ-ը պիտի ներողութիւն ինդրէ
ձեզնից:

—Է՞ն, ինչիս է նրա ներողութիւնը: Եւ ի՞նչ բան է նե-
րողութիւնը: Միայն ֆրազա:

—Ի՞նչպէս թէ... նրան պէտք է խրատել:
—Խրատեցէք դուք ինքներդ: Նա ձեզ շուտ կը լսի: Իսկ
ես նրանից դժգոն չեմ:

—Ոչ, Նիկոլայ Արտեմեվիչ, դուք այսօր գալուց յետոյ քէֆ
չունիք: Մինչև անգամ դուք վերջին ժամանակ ինձ նիհարացած
էք երեսում: Վախում եմ, թէ մի գուցէ բժշկութիւնը ձեզ չէ
օգնում:

—Բժշկութիւնը ինձ հարկաւոր է, նկատեց Նիկոլայ Ար-
տեմեվիչը:—Իմ փայծաղը կարգին չէ:

Այդ վայրկեանին ներս մտաւ Շուրբին: Նա յոդնած էր ե-
րեսում: Մի թեթև, հազիւ հազ նկատելի հեգնական ժպիտ խա-
ղում էր նրա շրթունքների վրայ:

—Դուք ինձ էիք ուզում, Աննա Վասիլեվսան, ասաց նա:

—Այն, ի հարկէ, ուզում էի: Ի՞նչ է սա, Paul, դա սար-
սափելի է: Ես շատ անբաւական եմ քեզանից: Ի՞նչպէս դու
կարող ես արհամարհել Նիկոլայ Արտեմեվիչին:

—Նիկոլայ Արտեմեվիչը զանգատուել է ձեզ իմ մասին,
հարցրեց Շուրբին և նոյն հեգնութիւնը պահպանելով շրթունք-
ների վրայ, նայեց Ստախովին: Սա երեսը դարձեց, շուր հեկա-
և աչքերը ցած զցեց:

—Այն, զանգատուել է: Ես չը գիտեմ թէ ինչով ես զու-
մեղաւոր նրա առաջ, բայց դու իսկոյն պիտի ներողութիւն
խնդրես, որովհետեւ նրա առողջութիւնը այժմ շատ քայլացուած
է, և վերջապէս մենք ամենքս երիտասարդ տարիներում պար-
տաւոր ենք յարգել մեր բարերարներին:

«Ե՞ն, սա էլ լոգիկա է», մտածեց Շուրբին և զարձաւ դէպի
Ստախովը:—Ես պատրաստ եմ ներողութիւն խնդրել, Նիկոլայ
Արտեմեվիչ, ասաց նա քաղաքավարի կնքանով կիսով չափ գլուխ
տալով:—Կթէ ես իսկապէս ձեզ վիրաւորել եմ մի բանով:

—Ես բոլորովին... այդ մաքով չեմ, պատասխանեց Նիկո-
լայ Արտեմեվիչը, առաջուայ պէս խոյս տալով Շուրբինի հայեաց-

ըից:—Սակայն ես յօժարութեամբ ներում եմ ձեզ, որովհետեւ գիտէք դուք, ես խատապահանջ մարդ չեմ:

—Օ՛, այդ բանը ոչ մի կասկածի ենթակայ չէ, ասաց Շուրին:—Բայց թոյլ տուէք հետաքրքրուել, արդեօք յայտնի է Աննա Վասիլեվսային այն, թէ որն է իմ մեղը:

—Ոչ, ես ոչինչ չը գիտեմ, Կատեց Աննա Վասիլեվսան և վիզը երկարացրեց:

—Օ՛հ, Աստուած, շտապով բացականչեց Նիկոլայ Արտեմեվիչը, —քանի անգամ խնդրեցի, աղաչեցի, քանի անգամ ասացի, որքան ինձ տեսլի են այս բոլոր բացատրութիւնները և տեսարանները: Մի-մի գալիս ես տուն, ուզում ես հանգստանալ, —ասում են. ընտանեկան շրջան, ինտերիուր, եղիք տնարար, —իսկ այստեղ տեսարաններ, անախաղիքութիւններ: Հանգստութեան մի բոպէ էլ չը կայ: Ակամայ կը գնաս կլուք կամ... կամ մի որ և է տեղ: Մարդը կենդանի է, նա ունի ֆիզիկա իր յատուկ պահանջներով, իսկ այստեղ...

Եւ չը վերջացնելով սկսած խօսքը, Նիկոլայ Արտեմեվիչը արագ դուրս գնաց և թրիսկացրեց դուռը: Աննա Վասիլեվսան նայեց նրա ետեից:—Կլուք, գառնութեամբ շշնջաց նա:—Դու կլուք չես գնում, թեթեսոլիկ մարդ: Կլուքում չը կայ այնպիսին, որին պարզենա սեփական երամակի ձիաները, այն էլ մոխրագոյնը: Իմ սիրած գնյանը: Այս, այս, թեթեամիտ մարդ, աւելացրեց նա, բարձրացնելով իր ձայնը, —կլուք չէք գնում: Իսկ դու, Պայլ, շարունակեց նա տեղից վերկենալով:—չես ամաչում: Կարծեմ երեխայ չես: Ահա այժմ իմ գլուխը ցաւեց: Ո՞ւր է Զօեան, չը գիտես:

—Կարծեմ իր սենեակումն է, վերեռում: Այդ բանիմաց աշուէսը այսպիսի եղանակին միշտ ծածկւում է իր որջի մէջ:

—Դէ, բաւական է, բաւական:—Աննա Վասիլեվսան ուրոնեց իր շուրջը:—Իմ բաժակը, որի մէջ կայ քերուած խրէն, դու չես տեսել: Պայլ, խնդրեմ, այսուհետև ինձ մի բարկացնի:

—Ե՞ն, ինչպէս ես կը բարկացնեմ ձեզ, մօրաքոյր: Տուէք ինձ համրուրել ձեր ձեռքը: Իսկ ձեր խրէնը ես տեսայ առանձնասինեակում, սեղանի վրայ:

—Դարեան միշտ նրան մոռանում է, թողնում մի տեղ, ասաց Աննա Վասիլեվսան և հեռացաւ խշչացնելով իր մետաքսեայ զգեստը:

Շուրին ուզեց գնալ նրա ետեից, բայց կանգ առաւ, լսելով իր ետեում Ուվար իվանովիչի դանդաղկոտ ձայնը:

—Այդպէս չը պէտք էք քեզ, կաթնակերիդ... ասում էք պաշտօնաթող կօրնէտը ընդհատումներով:

Շուրին մօտեցաւ նրան:—Իսկ ինչու այդպէս չը պէտք էք ինձ, յարգոյապատիւ Ուվար իվանօվիչ:

—Ինչու: Դու ջահէլ ես, և յարգիր: Այո:

—Ում:

—Ում: Յայտնի է թէ ում: Ատամներդ ցոյց առւր:

Շուրին ձեռքերը խաչեց կրծքի վրայ:

—Ահ, դուք, խմբական սկզբունքի ներկայացուցիչ, բացականչեց նա, —արգաւանդ ոյժ, հասարակական շէնքի հիմք:

Ուվար իվանօվիչը խաղացրեց իր մատները:—Բաւական է, եղբայր, ինձ փորձանքի մէջ մի գցիր:

—Այ ձեզ, շարունակեց Շուրին, ջահէլ չէ, ադնուական է կ'ասես, բայց նրա մէջ որքան երջանիկ, մանկական հաւատ կայ թագնուած: Յարգել: Բայց գիտէք դուք, տարերական մարդ, ինչ պատճառով է Նիկոլայ Արտեմեվիչը բարկանում ինձ վրայ: Զէ որ ես այսօր ամբողջ առաւտը անցկացրի նրա զերմանուհու մօտ. չէ որ այսօր մենք երեքս երգում էինք՝ «մի հեռանար ինձանից», այ թէ դուք լսէիք: Կարծեմ այս բանը ձեզ հասկանալի է: Երգեցինք մենք, իմ պարոն, երգեցինք,—և ես ձանձրացայ. տեսնում եմ բանը լաւ չէ, քնքութիւն շատ կայ: Ես էլ սկսեցի երկուսին չարացնել: Լաւ աջողուեց: Գերմանուհին նախ բարկացաւ ինձ վրայ, յետոյ նրա վրայ. ապա Նիկոլայ Արտեմեվիչը բարկացաւ նրա վրայ և ասաց թէ ինքը միան տանն է երջանիկ և թէ տունը մի գրախատ է: Իսկ գերմանուհին ասաց որ նա բարոյականութիւն չունի. Իսկ ես ասացի զերմանուհուն. Այի, գերմաներէն, Նիկոլայ Արտեմեվիչը զնաց, իսկ ես մնացի. Նա եկաւ այստեղ, այսինքն զրախտը, իսկ զրախտում նա զգւում է: Ահա և նա սկսեց մրթմրթալ: Դէ հրմա ով է, ձեր կարծիքով, մեղաւորը:

—Ի հարկէ դու, պատասխանեց Ուվար իվանօվիչը:

Շուրին յասեց իր աչքերը նրա վրայ:—Համաձակում եմ հարցնել ձեզանից, յարգելի ասպետ, սկսեց նա մի շողոքորթ ձայնով:—այդ համելուկային խօսքերը դուք հաճեցիք արտասանել ձեր մտածողական ընդունակութեան որ և է ըմբռնողութեան չնորհիւ, թէ ունենալով մի վայրկենական ցանկութիւն առաջացնել օդի մէջ մի ցնցում, որ ձայն է անուանուում:

—Փորձանքի մէջ մի գցիր, ասում եմ, հեծեծաց Ուվար իվանօվիչը...

Շուրինը ծիծաղեց և դուրս վագեց:

— էյ, կանչեց, քառորդ ժամ անցած, Ուվար իվանօվիչը.
իքը... մի բաժակ արաղ...

Ծառան բերեց արաղ և ուտելիք մատուցարանի վրայ:
Ուվար իվանօվիչը հանդարտ վերցրեց բաժակը մատուցարանից
և երկար, լարուած ուշադրութեամբ նայում էր նրան, կար-
ծես լաւ չէր հասկանում թէ ինչ է բռնած իր ձեռքում: Ապա
նայեց ծառային և հարցրեց՝ արդեօք Վասկա չէ նրա անունը:
Ապա նա վշտալից կերպարանք ընդունեց, խմեց արաղը, վրան
մի բան կերաւ և ձեռքը տարաւ որ գրպանից թաշկինակ համէ:
Բայց ծառան վազուց տարել էր մատուցարանն ու շիշը, և
կերել էր տառեխի մնացորդը, նոյն իսկ կարողացաւ քիչ քնել,
քիթը դնելով աղայի վերարկուի մէջ, իսկ Ուվար իվանօվիչը
դեռ բռնած էր թաշկինակը իր առաջ միմնանցից հեռացրած
մատներով և նոյն լարուած ուշադրութեամբ նայում էր կամ
պատուհանին, կամ յատակին և պատերին:

IX

Շուրբինը վերպարձաւ իր սենեակը և բաց էր արել մի
գիրք: Նիկոլայ Արտեմեվիչի սենեկապանը զգուշութեամբ ներս
մտաւ և տուեց նրա մի փոքրիկ, եռանկիւնի տոմսակ, որ կըն-
քուած էր խոշոր զինանշան կրող կնքով: «Ես յոյս ունեմ, գրը-
ուած էր այդ տոմսակի մէջ, որ դուք, ինչպէս աղնիւ մարդ,
թոյլ չէք տայ ձեզ նոյն իսկ մի հատ խօսքով ակնարկել մի
մուրհակի մասին, որի վերաբերմամբ խօսք եղաւ այսօր առա-
ւոտեան: Ձեզ յայտնի են իմ յարաբերութիւնները և իմ կանոն-
ները, գումարի ոչնչութիւնը և ուրիշ հանգամանքներ, վերջա-
պէս կան ընտանեկան գաղանիքներ, որոնց պէտք է յարգել, և
ընտանեկան անդրբութիւնը այսպիսի մի սրբութիւն է, որը
միայն էրտես sans coeur-երն են մերժում: իսկ ես պատճառ
չունեմ ձեզ այդպիսիների թւում դասելու (Այս տոմսակը վե-
րադարձրէք): Ն. Ս.»

Շուրբինը ներքեռում մատիտով աւելացրեց. «Մի անհան-
գլստանաք, ես առ այժմ գրպաններից թաշկինակներ չեմ գո-
ղանում: Վերադարձրեց տոմսակը սենեկապանին և նորից
ձեռքն առաւ գիրքը: Բայց գիրքը շուտով դուրս սողաց նրա
ձեռքերից: Նա նայեց շառադունած երկնքին, երկու ջահէլ ու-
ժեղ սօծիներին, որոնք միւս ծառերից առանձնակի էին կանգ-
նած, մտածեց. «Երեկեկը սօծիները կապտագոյն են լինում, իսկ
երեկոները նրպիսի փառահեղ կանչութիւն են ստանում» և
ուղնորուեց գէպի այգին, ունենալով գաղանի յոյս թէ այնտեղ

կը հանդիպի Ելենային: Նա խաբուած չէր: Առջեռում, թփերի
մէջ անցնող ձանապարհի վրայ, երեաց Ելենայի զգեստը: Շու-
րինը հասաւ նրա ետեից և գնալով նրա հետ մի շարքում, ա-
սաց.

— Դէպի իմ կողմը մի նայէք, ես արժանի չեմ:

Ելենան հարևանցի նայեց նրան, հարևանցի ժպտաց և
շարունակեց ձանապարհը, գնաց այգու խորքը: Շուրբինը քայլեց
նրա ետեից:

— Ես ձեզ խնդրում եմ չը նայել ինձ, սկսեց նա—և խօս-
քի եմ բռնւում ձեզ հետ. հակասութիւնը բացարձակ է: Բայց
դա միենոյն է. առաջին անգամը չէ, որ ես այսպէս եմ: Ես այս
բողեին յիշեցի, որ դեռ ձեզանից ինչպէս հարկն է ներողու-
թիւն չեմ խնդրել երէկուայ իմ յիմար վարմունքի համար: Դուք
ինձ վրայ չէք բարկանում, Ելենա Նիկոլաևինա:

Օրիորդը կանգ առաւ և իսկոյն չը պատասխանեց,—ոչ թէ
այն պատճառով որ նա բարկացած էր, այլ որովհետեւ նրա մըտ-
քերը հեռու էին գնացել:

— Ոչ ասաց նա վերջապէս,—ես բոլորովին չեմ բարկա-
նում:

Շուրբինը կծեց շրթունքը:

— Ո՛րպիսի բազմահոգ... և որպիսի անտարբեր դէմք,
թնթվնթաց նա:—Ելենա Նիկոլաևինա, շարունակեց նա, բար-
ձրացնելով ձայնը.—Թոյլ տուեք ինձ պատմել ձեզ մի փոքրիկ
անեկդոտ: Ես մի բարեկամ ունէի, իսկ այդ բարեկամն էլ մի
բարեկամ ունէր, որ սկզբում պահում էր իրան ինչպէս վայել
է օրինաւոր մարդուն, բայց յետոյ սկսեց խմել: Եւ ահա մի
անգամ, վազ առաւօտեան, իմ բարեկամը հանդիպում է նրան
փողոցում (նկատեցէք, որ նրանք արդէն այլ ես ծանօթ չէին
միմեանց), հանգիպում է և աեմնում, որ նա հարբած է: Իմ
բարեկամը ուղղակի երես է զարձնում նրանից: իսկ նա մօ-
տենում է և ասում: «Ես չէի բարկանայ, եթէ դուք չը բարեէիք,
բայց ինչո՞ւ երես դարձնել: Գուցէ ես վշտից եմ խմում: Հան-
գիստ իմ ուկորներին»:

Շուրբինը լսեց:

— Եւ ուրիշ ոչինչ, հարցրեց Ելենան:

— Ոչինչ:

— Ես չեմ հասկանում: Ի՞ո՞չ էք գուք ակնարկում: Այս բո-
պէին ասացիք ինձ որ ես չը նայեմ դէպի ձեր կողմը:

— Այս, իսկ հիմա ես ձեզ պատմեցի թէ ինչպէս վատ է
երես դարձնել:

— Միթէ ես... սկսեց Ելենան:

—Բայց միթէ ոչ:
Ելենան թեթև կերպով կարմրեց և ձեռքը մեկնեց Շուբին։ Սա պիստ սեղմեց այդ ձեռքը։

—Թւում է ձեզ թէ ինձ բռնեցիք մի վատ զգացմունքի մէջ—ասաց Ելենան—բայց ձեզ կասկածը անարդար է; իմ մըտքով անգամ չէր անցնում խորթանալ ձեզնից։

—Դիցուք թէ այդպէս է; Բայց խոստովանեցէք, որ ձեր գլխում այս բովէին հաղարաւոր մտքեր կան, որոնցից մէկն էլ ինձ չէք հաւատայ; Ի՞նչ է, միթէ ես ճիշտ չասացի։

—Գուցէ։

—Ինչիցն է այդ, ինչից։

—Իմ մտքերը պարզ չեն նոյն իսկ ինձ համար, ասաց Ելենան։

—Հէնց այդ պատճառով էլ պէտք է հաւատալ նրանց ուրիշներին, վրայ բերեց Շուբին։ Բայց ես կ'ասեմ թէ բանը ինչումն է; Դուք վատ կարծիք ունիք իմ մասին։

—Ե՞ս։

—Եյն, դուք; Դուք երեակայում եք թէ իմ մէջ ամեն ինչ կիսով չափ կեղծուած է, որովհետի ես գեղարուեստագէտ եմ. թէ ես անընդունակ չեմ ոչ միայն որ և է գործի—այդ բանի մէջ դուք երեի, ծշմարիտ էք—այլ և ոչ մի իսկական, խոր զգացմունքի. թէ ես անկեղծ կերպով լաց լինել էլ չեմ կարող. թէ ես շատախօս և բամբասող եմ—և այդ բոլորը այն պատճառով, որ ես գեղարուեստագէտ եմ: Եւ ինչ դժբախտ, Աստուծուց սպանուած մարդիկ ենք: Դուք, օրինակ, ես պատրաստ եմ երդուել, չէք հաւատում իմ զզջման։

—Ոչ, Պաւել Եակօվլեվիչ, ես հաւատում եմ ձեր զզջման, ձեր արտասունըներին էլ հաւատում եմ: Բայց ինձ թւում է, որ ձեր զզջումը ձեզ զուարձացնում է, նոյնպէս և արտասունըները։

Շուբինը ցնցուեց։

—Է՛, ես տեսնում եմ որ դա, ինչպէս ասում են բժիշկները, անբուժելի կազուս է, casus incurabilis: Այդտեղ մնում է միայն գլուխը շարժել և հնաղանդուել: Բայց, Տէր Աստուած, միթէ դա ծշմարիտ է, միթէ ես միայն ինձանով եմ զբաղուած, երբ իմ կողքին ապրում է այսպիսի հոգի: Եւ հասկանալ որ երբէք չես մտնի այդ հոգու մէջ, երբէք չես ըմբռնի թէ ինչու է նա թախծալից, ինչից է նա ուրախանում, ինչ է թափառում նրա մէջ, ինչ է նա ուզում, ուր է գնում... Ասացէք, արտասանեց նա փոքր ինչ լուելուց յետոյ.—Դուք երբէք, ոչ մի կերպ ոչ մի դէպքում չէիք սիրի գեղարուեստագէտին։

Ելենան ուղիղ նայեց նրա աչքերին։

—Զեմ կարծում, Պաւել Եակօվլեվիչ, ոչ։

—Հէնց այդ էլ պէտք էր ապացուցանել, ասաց Շուբինը մի ծիծաղաշարժ վհատութեամբ:—Այսուհետեւ, ես կարծում եմ ինձ համար աւելի քաղաքավարի բան կը լինի չը խանդարել ձեր մենաւոր զրուանքը: Պրօֆէսօրը կը հարցնէր ձեզ. ինչ հիմքերի վրայ դուք ասացիք՝ ոչ Բայց ես պրօֆէսօր չեմ, ես երեխայ եմ, ձեր հասկացողութեամբ. սակայն երեխաներից երես չեն դարձնում, յիշեցէք այս բանը: Մնացէք բարով: Հանգիստ իմ ուկորներին։

Ելենան ուզում էր կանգնեցնել նրան, բայց մտածեց և նոյնպէս ասաց։

—Մնացէք բարով։

Շուբինը դուրս եկաւ բակից: Ստախօվների ամարանոցից քիչ հեռացած նա հանդիպեց Բերսենեվին։ Սա զալիս էր աշխոյժ քայլերով, գլուխը կախ արած և գլխարկը բաշած դէպի շլինքը։

—Անդրէյ Պետրօվիչ, կանչեց Շուբինը։

Նա կանգնեց։

—Գնա, զնա, շարունակեց Շուբինը.—Ես հէնց այնպէս ձայն տուի, ես քեզ չեմ պահում—և ուղիղ մտիր այգին. այնտեղ դու կը գտնես Ելենային: Նա, կարծեմ, քեզ է սպասում... յամենայն դէպս մէկին նա սպասում է... Հասկանում ես դու այս խօսքերի ոյժը. Նա սպասում է: Բայց գիտես, եղբայր, ինչ զարմանալի հանգամանք կայ: Երեակայիր, ահա երկու տարի է, ինչ ես ապրում եմ Ելենայի հետ մի տան մէջ, սիրահարուած եմ նրա վրայ, և միայն այժմ, այս բովէին ոչ թէ հասկացայ նրան, այլ տեսայ: Տեսայ և զարմացայ: Մի նայիր ինձ, ինզրեմ, այդ կեղծ-խայթաւոր հեղնութեամբ, որ չէ գալիս քո լրջամիտ գծերին: Այն, հասկանում եմ, դու ուզում ես ինձ յիշեցնել Աննուշկայի մասին: Եւ ինչ: Ես չեմ հրաժարում: Մեզ պէս մարդկանց Աննուշկաներն են մատչելի: Ուրեմն կիցցեն Աննուշկաներն ու Զօնաները, նոյն իսկ Աւգուստինա Խրիստիանովները: Դու այժմ զնա Ելենայի մօտ, իսկ ես կը զնամ... կարծում ես Աննուշկայի մօտ: Ոչ, եղբայր, աւելի վատ տեղ—իշխան Զիկուրասօվի մօտ: Կայ մի այսպիսի մեկենաս Ղաղանի թաթարներից, Վոլգինի նման: Տեսնում ես այս հրաւէրը, այս ատոները. R. S. V. P.^{*)} Գիւղումն էլ ինձ համար հանգստութիւն չը կայ: Addio!

*) «Բարեհաճեցէք պատասխանել» խօսքերի սկզբնատառերը Փրանսերէն լեզուով։

Բերսենեվը լսեց Շուրինի ճառը լուռ և կարծես մի քիչ ամաչելով նրա տեղ. յետոյ նա մտաւ Ստախօվի ամարանոցի բակը: Իսկ Շուրինը ճիշտ որ գնաց իշխան Զիկուրասօվի մօտ և նրան ամենասիրալիք կերպով շատ կծու համարձակ խօսքեր առաց: Ղազանի թաթարներից դուրս եկած մեկնասը քրքջում էր, մեկնասի հիւրեր ծիծաղում էին, բայց ոչ ոք ուրախ չէր, և երբ ամենքը հրաժեշտ տուին միմեանց, ամենքը չարացած էին: Այսպէս երկու միմեանց քիչ ծանօթ պարոններ, հանդիպելով Նեվսկի պրօվեկտում, յանկարծ միմեանց առաջ բաց են անում ատամները, քաղցրմեղցր կերպով կծկում են աչքերը, քիթը և այտերը և իսկոյն, բաժանուլով միմեանցից, ընդունում են իրանց նախկին, անտարբեր կամ տիսուր արտայայտութիւնը:

X

Ելնան բարեկամաբար ընդունեց Բերսենեվին, բայց ոչ թէ այգում, այլ հիւրասենեակում, և իսկոյն, համարեա անհամբերութեամբ, վերանորոգեց երեկուայ խօսակցութիւնը: Նա մանակ էր. Նիկոլայ Արտեմիվիչը կամացուկ թագնուել էր մի ինչ որ տեղ, Աննա Վասիլեվսան պառկած էր վերեսում և զլուխը կապել էր թաց շորով: Զօեան նստած էր նրա մօտ, սարքին կարգին դրստելով իւրեկան և ձեռքերը դարսելով ծնկների վրայ. Ուվար իվանօվիչը ննջում էր վերնայարկի մի սենեակում, լայն և յարմար դիւանի վրայ, որ ստացել էր «ինքնանինջ» անունը: Բերսենեվը նորից յիշատակեց իր հօրը. նա սրբութեամբ պաշտում էր նրա յիշատակը: Մենք էլ մի քանի խօսք ասենք նրա մասին:

Ութսուն երկու ճորտերի տէր, որոնց նա աղատեց իր մահից առաջ, իլլիւմինատ, *) Գեօտափնդենի հին ուսանող, հեղինակ ձեռագիր աշխատութեան «Ոգու յեղարջութիւնները կամ նախակերպութիւնները աշխարհի մեջ». մի աշխատութիւն, որի մէջ Շելլինգանութիւնը, Սվետինբորգականութիւնը և հանրապետականութիւնը խառնուած էին ամենատարօրինակ կերպով— Բերսենեվի հայրը բերեց նրան Մոսկուա, նրա մօր մահուանից յետոյ, երբ նա գեռ երեխայ էր և ինքը զբաղուեց նրա կրթութեամբ: Հայրը պատրաստում էր իւրաքանչիւր դասի համար, աշխատում էր անսովոր բարեխզնութեամբ և կատարելապէս ապարդիւն կերպով. նա մտազբաղ էր, գրքի մարդ, միսափկ, խօսում էր դէմ ընկնելով, մի խուլ ձայնով, միտք էր արտայատում մութ կերպով, պաճուածուած ոճով, աւելի խորթ էր նոյն իսկ իր

*) Այս անունով լայտնի էր մի դադանի ընկերութիւն:

որդուն, որին սաստիկ սիրում էր: Զարմանալի չէ, որ որդին միայն բաց ու խուփ էր անում աչքերը նրա դասերի ժամանակ և մաղի չափ առաջադիմութիւն չէր ցոյց տալիս: Ծերունին (նա մօտ յիսուն տարեկան էր, ամուսնացել էր շատ ուշ) հաւկացաւ վերջապէս, որ բանը լաւ չէ զնում և տուեց իր Անդրիւշյին դիշերօթիկ դպրոց: Անդրիւշյն սկսեց սովորել, բայց ծնողական հսկողութեան տակ էր. հայրը այցելում էր նրան անդադար, ձանձրացնում էր դպրոցի տիրոջը իր խրամներով և զրոյցներով. վերակացուները նոյնպէս նեղանում էին անկոչ հիւրից. Նա բերում էր նրանց համար ինչ-որ, նրանց ասելով, խիստ խրթին զբքեր կրթութեան մասին: Մինչև իսկ դպրոցական աշակերտաներն էլ քաշւում էին, տեսնելով ծերունու մոայլ և ծաղկատար գէմքը, նրա վտիտ կազմուածքը, որ միշտ պատած ունէր ինչ-որ սուր փէշերաւոր մոխրագոյն ֆրակով: Աշակերտաները այն ժամանակ չը գիտէին որ այդ նօթերը կիտած, երբէք չը ժպտող պարոնը, որ կոռնկի քայլուածք ունէր և երկար քիթ—սրտանց ցաւում էր ամեն մէկի համար, համարեա այնպէս, ինչպէս մտածում էր իր սեփական որդու մասին: Նա մի անդամ ուզեց խօսել երեխաների հետ Վաշինգտոնի մասին. «Պատանի սաներ», սկսեց նա, բայց նրա օտարոտի ձայնի առաջին հնչիւններից բոլոր պատանի սաները փախան: Ազնիւ գեօտափնդենացին վարդերի վրայ չէր ապրում. նա միշտ ձընշուած էր պատմութեան ընթացքի տակ, զանազան հարցերի և խորհրդածութիւնների տակ: Երբ երիտասարդ Բերսենեվը մտաւ համալսարան, հայրը նրա հետ զնում էր դասախոսութիւնների, բայց առողջութիւնը սկսել էր դաւաճանել նրան: 48 թուականի դէպքերը *) ցնցեցին նրան հիմնաւորապէս (պէտք էր փոփոխել ամբողջ գիրքը) և նա մնուալ 53 թուականի ձմեռը, չը սպասելով իր որդու համալսարանից դուրս զալուն, բայց վազորօք չորհաւորելով նրա կանդիտատութիւնը և օրհնելով նրան ծառայելու գիտութեան: «Տալիս եմ քեզ ջահը»—ասում էր նա մահից երկու ժամ առաջ, «Ես կրում էի նրան, որքան կարողացայ, գու էլ ձեռքից չը տաս այս ջահը մինչև վերջ»:

Բերսենեվը երկար խօսում էր Ելենայի հետ իր հօր մասին: Այն անյարմարութիւնը, որ նա զգում էր օրիորդի ներկայութեանը, չքացաւ, և խօսելիս նա այժմ այնքան սաստիկ չէր սկսացնում: Խօսակցութիւնն անցաւ համալսարանին:

—Ասացէք, հարցորեց նրան Ելենան—ձեր ընկերների մէջ կային նշանաւոր մարդիկ:

*) Յեղափոխութիւնները արևմտեան նորուալում:

Բերսենեվը յիշեց Շուրբինի խօսքերը:

—Ո՞չ, Ելենա Նիկոլաևնա, ճիշտն ասած, մեր մէջ մի հատ նշանաւոր մարդ չը կար: Եւ որտեղից Եղել է, ասում են, մի ժամանակ Մոսկովյաի համալսարանում: Բայց ոչ այժմ: Այժմ դա դպրոց է, ոչ թէ համալսարան: Ինձ համար ծանր էր իմ ընկերների մէջ, աւելացրեց նա, ցածացնելով իր ձայնը:

—Ծանր էր... շնչաց Ելենան:

—Սակայն, շարունակեց Բերսենեվ, —ես պէտք է մի բան աւելացնեմ: Ես ճանաչում եմ մի ուսանողի—նա իմ կուրսից չէ. դա, ճիշտ որ, նշանաւոր մարդ է:

—Ի՞նչպէս է նրա անունը, աշխոյժ կերպով հարցրեց Ելենան:

—Ինսարօվ, Դիմիտրի Նիկանօրօվիչ: Նա բօլղար է:

—Ռուս չէ:

—Ո՞չ, ռուս չէ:

—Ինչո՞ւ է նա Մոսկովյում ապրում:

—Եկել է ուսում անելու: Եւ գիտէք ինչ նպատակով է ուսում ստանում: Նա մի միտք ունի. իր հայրենիքի տղատութիւնը: Եւ նրա ճակատագիրն էլ անսովոր է: Նրա հայրը բաւական հարուստ վաճառական էր, Տիրնովից: Տիրնով այժմ փոքրիկ քաղաք է, իսկ հին ժամանակները դա Բոլգարիայի մայրաքաղաքն էր, երբ Բոլգարիան անկախ թագաւորութիւն էր: Հայրը առետուր էր անում Սօֆիայում, յարաբերութիւններ ունէր Ռուսաստանի հետ. Նրա քոյրը, Ինսարօվի հարազատ հօրաքոյրը, մինչև այժմ ապրում է Կիևում, ամուսնացած է այն տեղի գիմնազիայի՝ պատմութեան աւագ ուսուցչի հետ: 1835 թուին, ուրեմն տասնութը տարի սրանից առաջ, տեղի ունեցաւ մի սարսափելի եղեննագործութիւն. Ինսարօվի մայրը յանկարծ անհետ կորաւ. մի շաբթից յետոյ նրան դատն մորթուած:

Ելենան ցնցուեց: Բերսենեվը կանգ առաւ:

—Շարունակեց, շարունակեց, ասաց օրիորդը:

—Լուրեր էին պտտում, թէ մօրը առեանգել և սպանել էր թիւքը աղան. Նրա ամուսինը, Ինսարօվի հայրը, իմացաւ ճշմարտութիւնը, ուղեց վրէժ հանել, բայց խէնչարով միայն վիրաւորեց աղային: Նրան հրացանի բռնեցին:

—Հրացանի բռնեցին: Առանց դատաստանի:

—Այո: Ինսարօվը այն ժամանակ մտել էր ութ տարեկան հասակը: Նա մնաց հարսանների ձեռքին: Քոյրը իմացաւ իր եղբօր ընտանիքի վիճակը և կամեցաւ իր մօտ ունենալ եղբօր որոշն: Ինսարօվին հասցրին Օղեսսա, իսկ այնտեղից կիեվ:

վում նա ամբողջ տասներկու տարի ապրեց: Դրանից է որ նա այնպէս լաւ է խօսում, ուսուերէն:

—Եա խօսում է ուսուերէն:

—Ի՞նչպէս մենք հետ: Երբ լրացաւ նրա քսան տարին (դա 48 թուականի սկզբումն էր), նա ուղեց վերադառնալ հայրենիք: Եղաւ Սօֆիայում և Տիրնօվում: Հրջեց ամբողջ Բոլգարիան աջ ու ձախ, երկու տարի մնաց այսուհեղ, նորից սովորեց իր մայրենի լեզուն: Թիւքքաց կառավարութիւնը հալածում էր նրան և նա, երեխ, այդ երկու տարին մեծ վտանգների էր ենթարկուած. ես մի անգամ տեսայ նրա զգի վրայ մի լայն սպի, պէտք է որ վէրքի հետք լինի. բայց նա այդ մասին խօսել չէ սիրում: Նա էլ իր տեսակի մի լուսկեց է: Ես փորձեցի նրան հարց ու փորձ անել ամեն ինչի մասին—բայց չեղաւ: Պատասխանում է ընդհանուր Փրազներով: Նա սարսափելի յամա մարդ է: 50 թուականին նորից եկաւ Ռուսաստան, Մոսկուա, ունենալով նպատակ լիակատար կրթութիւն ստանալ, մօտենալ ուռաներին, իսկ յետոյ, երբ գուրս կը գայ համալսարանից...

—Ի՞նչ կ'անէ այն ժամանակ, ընդհատեց Ելենան:

—Ինչ որ Աստուած կը տայ: Հեշտ չէ առաջուց գուշակել: Ելենան երկար ժամանակ իր աչքերը չէր հեռացնում Բերսենեվից:

—Դուք ինձ շատ հետաքրքրեցիք ձեր պատմութեամբ, ասաց նա: Ի՞նչպիսի տեպ ունի ձեր այդ, ինչպէս անուանեցիք... Ինսարօվը:

—Ինչ ասեմ. իմ կարծիքով, տգեղ չէ: Բայց ահա դուք ինքներդ նրան կը տեսնէք:

—Ի՞նչպէս:

—Ես նրան կը բերեմ այստեղ, ձեղ մօտ: Վաղը չէ, միւս օրը նա կը տեղափոխուի մեր գիւղը և կ'ապրէ ինձ հետ մի բնակարանում:

—Միթէ: Բայց կ'ուզենայ մեղ մօտ գալ:

—Ի՞նչպէս չէ: Նա շատ ուրախ կը լինի:

—Եա հպարտ չէ:

—Եա: Ամենեին: Այսինքն եթէ կամենում էք՝ նա հպարտ է, բայց ոչ թէ այն մտքով, ինչպէս գուք էք հասկանում: Օրինակ, նա փող պարտք չի վերցնի ոչ մէկից:

—Իսկ նա աղքատ է:

—Այն, հարուստ չէ: Գնալով Բոլգարիա, նա հաւաքել է մի քանի վշշանքներ, որոնք մնացել էին հայրական կարողութիւնից, և հօրաքոյրն էլ նրան օգնում է. բայց այս բոլորը չնչին բաներ են:

—Նա, երկիր, ուժեղ բնաւորութիւն ունի, նկատեց Ե-
լենան:

—Այս: Դա երկաթի մարդ է: Եւ մի և նոյն ժամանակ, դուք կը տեսնէք, նրա մէջ կայ ինչ որ մանկական, անկեղծ բան, չը նայած իր մտախոհութեան և նոյն իսկ ծածկամտութեան: Ճշմարիտ! Հայուակաղութիւնը մեր անպէտք անկեղծութիւնը չէ, այն մարդկանց անկեղծութիւնը, որոնք ծածկելու ոչ մի բան չունեն... Ահա ես կը բերեմ նրան, սպասեցէք:

—Եւ ամօթխած էլ չէ, նորից հարցընեց Ելենան:

— Այս, ամօթիսած չէ։ Միայն ինքնասէր մարդիկ են ամօթիսած լինում։

—Բայց միթէ դուք ինքնասէր էք:

Բերսենեվը շփոթուեց և ձեռքերը լայն բացեց:

—Դուք զրդում էք իմ հետաքրքրութիւնը, շարունակեց
Ելենան:—Ասացէք, նա վրէժ չէ հանել այդ թիւք աղայից:

ԲԵՐԱԵՆԵՎՐ ԺԱՊԱԿՅԱ

—Վրէժ հանում են միայն վէպերի մէջ, Ելմնա Նիկօլաեկ-
նա. բացի գրանից տասներկու տարուայ մէջ այդ աղան կարող
էր մնանել:

—Բայց սակայն պարոն ինսարօվը ձեզ այդ մասին ոչինչ
չէ ասել:

— ८५६ —

—ինչու էր նա գնացել Սօֆիա:

—Այստեղ էր ապրում նրա հայրը:

Ելենան մտածմունքի մէջ ընկաւ:

—Ազատել իր հայրենիքը—ասաց նաւ—Այս խօսքերը արտասահման անգամ սարսափելի է, այնքան նրանք մեծ են...

Այդ վայրկեանին սենեակը մտաւ Աննա Վասիլեվսան, և
խօսակցութիւնը վերջացաւ:

Օտարոտի զգացմունքներ էին յուղում ჩերսենելին, երբ
նա տուն էր վերադառնում նոյն երեկոյեան: Նա չէր փոշմա-
նում որ զիտաւրութիւն ունէր ծանօթացնել Ելենային ինսա-
րօվի հետ, նա շատ բնական էր համարում այն խոր տպաւո-
րութիւնը, որ զործեցին օրիորդի վրայ իր պատմութիւնները
երիտասարդ բոլգարի մասին... միթէ ինքը չէր, որ աշխատում
էր ուժեղացնել այդ տպաւորութիւնը: Բայց մի գաղտնի և մութ
զգացմունք գաղտագովի բայն էր դնում նրա սրտի մէջ. Նրան
մի վատ թախիծ էր զրկում: Բայց այդ թախիծը չարգելեց նրան
վերցնել «Հօհէնչտառքէնների Պատմութիւնը» և նա սկսեց կար-
գալ նոյն էջից, որի վրայ կանգ էր առել նախընթաց օրը:

XI

Երկու օրից յետոյ ինսարօվը, ինչպէս խոստացել էր, եկաւ Բերսենելի մօտ իր ծանրոցքով։ Մառայ նա չունէր, բայց առանց մէկի օգնութեան կարգի բերեց իր սենեակը։ շարեց կահ-կարասիքը, սրբեց փոշին և լուացաւ յատակը։ Մանաւանդ շատ քաշքշեց նա իր գրասեղանը, որ ոչ մի կերպ չէր ուղղում տեղաւորուել Շահնակուած անկիւնում։ բայց ինսարօվը, իրան յատուկ լուս հաստատակամութեամբ իրանն արաւ։ Կարգի բերելով ամեն ինչ, նա խնդրեց Բերսենելին վերցնել իրանից տասը ոռոքի այս գլխից և, զինուելով մի հաստ մահակով, զնաց տեսնելու իր նոր բնակարանի ըրջակայքը։ Նա վերադարձաւ մօտ երեք ժամից յետոյ։ Բերսենելը հրաւիրեց նրան ընկերանալ իր ճաշին և նա ասաց որ չի հրաժարուի ճաշել նրա հետ այսօր, բայց արդէն խօսել է տանտիկնոջ հետ և ալուհետեւ նրանից պիտի ստանայ իր կերակուրը։

—ի՞նչ եք ասում, պատասխանեց Բեսենեվը. —ձեզ շատ
գատ կը կերակրեն. այդ կինը բոլորովին չը գիտէ պատրաս-
տել: Ինչու չեք ուզում ճաշել ինձ հետ. մենք ծախսը կէս կա-
նէինք:

—իմ միջոցները չեն ներում ճաշկես, ինչպէս դուք էք ճաշում, պատախանեղ ինսարօվք մի հանդարտ ժպիտով:

Սցդ ժամփաթի մէջ կար մի բան, որ չէր թոյլ տալիս սահմանը պեղ. Բերսեննեվը մի խօսք էլ չաւելացրեց: Ճաշից յետոյ նա առաջարկեց Ինսարօվին տանել նրան Ստախօվմերի մօտ. բայց նա պատասխանեց, որ ուզում է նուիրել ամբողջ երևկոն իր բօլոգարներին նամակներ գրելուն, ուստի խնդրում է յետաձգել Ստախօվմերին այցելելը մինչև միւս օրը: Ինսարօվի անյօդդողդ կամքը առաջնուց յայտնի էր Բերսեննեվին. բայց միայն այժմ, գտնուելով նրա հետ մի յարկի տակ, նա կարողացաւ վերջնականապէս համոզուել, որ Ինսարօվը երբեք չէր յետաձգում տուած խոստաման կատարումը: Բերսեննեվին, ինչպէս մի բուն ոռւս մարդուն, այս աւելի քան գերմանական ճշտապահութիւնը սկզբում թւում էր վայրենի, նոյն իսկ մի քիչ ծիծաղելիք. բայց նա չուտով սովորեց այդ ճշտապահութեան և վերջապէս համարում էր նրան եթէ ոչ յարգելի, գոնէ շատ յարմար բան:

իր տեղափոխութեան երկրորդ օրը ինսարօվը վեր կացաւ առաւօտեան ժամի չորսին, համարեա ամբողջ Կունցօվօն ծայրէ ծայր ման եկաւ, լողացաւ գետում, խմեց մէկ բաժակ պաղ

կաթ և գործի կպաւ. իսկ գործ նա քիչ չունէր. նա սովորում էր և ոռւսաց պատմութիւն, և իրաւագիտութիւն, և քաղաքական տնտեսութիւն, թարգմանում էր բօլգարական երգերը և ապրեգրութիւնները, հաւաքում էր նիւթեր արենեան հարցի մասին, յօրինում էր ոռւսաց քերականութիւն բօլգարների համար, բօլգարական քերականութիւն ոռւսների համար. Յերսենեվը մտաւ նրա մօտ և խօսք սկսեց Ֆէյերբախի մասին. Ինսարօվը լսում էր նրան ուշադրութեամբ, պատասխանում էր սակաւ, բայց իւելացի կերպով. նրա պատասխաններից երևում էր, որ նա աշխատում է ինքն իրան հաշիւ տալ թէ արժէ արդեօք զբաղուել Ֆէյերբախով, թէ կարելի է առանց նրան էլ եօլայ գնալ. Յերսենեվը յետոյ խօսք սկսեց նրա պարապմունքների մասին և հարցրեց. արդեօք նա ցոյց չի տայ մի բան. Ինսարօվը կարդաց երկու թէ երեք բօլգարական երգերի իր կատարած թարգմանութիւնը և կամեցաւ իմանալ նրա կարծիքը. Յերսենեվը գտաւ թարգմանութիւնը կանոնաւոր, բայց ոչ բաւականափ կենդանի. Ինսարօվը ընդունեց այդ նկատողութիւնը. Երգերից Յերսենեվը անցաւ Բօլգարիայի այժմեան դրութեան և այդտեղ նա առաջին անգամ նկատեց թէ ինչ փոփոխութիւն կատարեց Ինսարօվի մէջ նրա հայրենիքի մի հատ յիշատակութիւնը. ոչ թէ նրա դէմքը բռնկուեց կամ ձայնը բարձր հնչեց —ոչ. բայց նրա ամբողջ գոյութիւնը կարծես պնդանում էր և առաջ էր սլանում, շրթունքների գծագրութիւնը աւելի խիստ և անողոք էր նշանաւում, իսկ աչքերի խորքում վառուում էր ինչ որ խուլ, անշէջ կրակ. Ինսարօվը չէր սիրում երկար խօսել հայրենիքում կատարած իր ճանապարհորդութեան մասին, բայց Բօլգարիայի մասին առհասարակ յօժարութեամբ էր խօսում ամեն մէկի հետ. Նա խօսում էր, չը շտապելով, թիւրքերի, նրանց ձնշումների մասին, իր հայրենակիցների վշտի և գժբախտութիւնների, նրանց յոյսերի մասին. նրա իւրաքանչիւր խօսքի մէջ լսում էր նրա մշտական մտածողութեան նիւթ դարձած վաղեմի մի կիրքը:

«Ո՞վ գիտէ, —մտածում էր Յերսենեվը — թիւրք աղան, երեխ, սրա ձեռքով կեանքից զրկուեց հօր և մօր սպանութեան համար»: Ինսարօվը դեռ չէր լուել, երբ դուռը բացուեց և շէմքում երեաց Շուրբինը:

Նա անենեակը մտաւ արձակ-համարձակ, բարեհոգ տեսքով. Յերսենեվը, որ նրան լաւ էր ճանաչում, իսկոյն հասկացաւ որ նրան մի ինչ-որ բան նեղում է:

— Յանձնարարւում եմ առանց արարողութիւնների, սկսեց նա դէմքի-մի պայծառ և բաց արտայայտութեամբ. — իմ ազգա-

նունը Շուրբին է. ես այս երիտասարդի բարեկամն եմ (նա ցոյց տուեց Յերսենեվին): Դուք պարոն ինսարօվն էք, այնպէս չէ: — Ես ինսարօվն եմ:

— Ուրեմն տուէք ձեր ձեռքը և ծանօթանանք: Զը զիտեմ, արդեօք Յերսենեվը խօսել է իմ մասին, բայց ինձ նա շատ բան է ասել ձեր մասին: Դուք այստեղ բնակութիւն հաստատեցիք: Շատ լաւ: Մի բարկանաք ինձ վրայ, որ ես այսքան ուշադրութեամբ եմ ձեզ նայում: Արհեստով ևս քանդակագործ եմ և նախատեսնում եմ, որ շուտով կը խնդրեմ թոյլ տաք որ ձեր գլխի արձանը պատրաստեմ:

— Իմ գլուխը պատրաստ է ձեզ ծառայելու, ասաց Ինսարօվը:

— Այսօր ինչ ենք անում մենք, հը, խօսեց Շուրբինը, յանկարծ նստելով ցածրիկ աթոռի վրայ և երկու ձեռով յենուելով միմիանցից հեռացրած ձնկների վրայ: — Անդրէյ Պետրօվիչ, ձեր աղնութիւնը որեէ ծրագիր ունի այսօրուայ համար: Եղանակը հիանալի է. չոր խոտերի և չոր մորենու հոտը այնպէս է փչում... Կարծես կուրծք կակղացնող չայ ես խմում: Պէտք է մի որեէ հնարք գտնել: Ցոյց տանք կունցօվօի նոր բնակչին այստեղի բազմաթիւ գեղեցկութիւնները (բայց նա կարծես փշերի վրայ լինի նստած, շարունակում էր ինքն իրան մտածել Յերսենեվը): Հը, ինչ ես լսել, իմ բարեկամ Հօրացիօ: Բաց արա քո պատգամախոս շրթունքները: Մի հնարք կը գտնենք մենք թէ ոչ:

— Ես չը գիտեմ, նկատեց Յերսենեվը. — ինչպէս ուզում է Ինսարօվը: Եա, կարծեմ, ուզում է աշխատել:

Շուրբինը շուռ եկաւ աթոռի վրայ:

— Դուք ուզում էք աշխատել, հարցրեց նա քթի մէջ:

— Ոչ, պատասխանեց նա. — այսօրուայ օրը կարող եմ նուրբեր զրօնանքի:

— Ա՛, արտասանեց Շուրբինը: — Շատ գեղեցիկ: Գնացէք, իմ բարեկամ Անդրէյ Պետրօվիչ, ծածկեցէք ձեր իմաստուն գլուխը զլիարքով և զնանք, ուր մեր աչքերն են տեսնում: Մեր աչքերը ջանէլ են — հեռուն են տեսնում: Ես գիտեմ մի ամենավատ պանդոկ, ուր մեզ կը տան ամենաանպէտ ճաշ, բայց մենք շատ ուրախ կը լինենք: Գնանք:

Կէս ժամ անցած՝ նրանք երեքով զնում էին Մոռկուա գետի եղերքով: Ինսարօվը մի բաւական օտարուի, ականջաւոր գտակ ունէր, որը Շուրբինին ոչ բոլորովին բնական մի հրճուանք էր պատճառում, Ինսարօվը քայլում էր չը շտապելով, նայում էր, շնչում էր, խօսում և ժպտում հանգիստ կերպով, նա այդ օրը

Նուիրել էր զուարճութեան և կատարելապէս լիանում էր: «Խեցի երեխաները այսպէս են զրօնում կիրակի օրերը», շնչաց Շուբինը թերսենեվի ականջին: Իսքը Շուբինը շատ գժութիւններ էր անում: առաջ էր վազում, յայտնի արձանների դիրքն էր ընդունում, թաւալում էր խոտի վրայ: Ինսարօվի հանգստութիւնը ոչ թէ գրգռում էր նրան, այլ հարկադրում էր կոտրատուել: «Ի՞նչ ես այդպէս ծոմուռում, ով Փրանսիացի», մի երկու անգամ նկատողութիւն արաւ սրան թերսենեվը: «Այս, ես Փրանսիացի եմ, կէս-Փրանսիացի», պատասխանեց Շուբինը: «Իսկ զու հանարի և լրջութեան մէջտեղը կանգնիր», ինչպէս մի հանգտում ինձ ասում էր պանդոկի մի ծառայ: Երիտասարդները հեռացան գետից և գնացին մի նեղ ու խոր հեղեղատով, ոսկեգոյն, բարձրահասակ հաճարի երկու պատերի միջով: կապտանման ստուեր էր գցում նրանց վրայ այս պատկերից մէկը: ճաճանչաւոր արեգակը թւում էր թէ սահում է հասկերի ծայրերով, արշաւոր արեգակը թւում էր լորերը կանչում էին, ամեն տեղ կանատոյաները երգում էին, լորերը կանչում էին, ամեն տեղ կանատոյաները կանչում էին պարոնները: տաք հողմիկը շարժում և բարձրացնում էր նրանց չում խոտերը: տաք հողմիկը շարժում և բարձրացնում էր նրանց շարժերը, օրօրում էր ծաղիկների գլուխները: Երկար թաթերթիւնները, կանգստանալուց, շատախօսութիւններից յետոյ փառումներից, կանգստանալուց, շատախօսութիւններից (Շուբինը փորձեց մինչև անգամ չշախարդա խաղալ մի անցորդ անատամ դիւղացու հետ, որը շարունակ ծիծաղում էր, ինչ էլ անատամ էին պարոնները)՝ երիտասարդները հասան «ամենարան ասում էին պարոնները»: Ծառան քիչ էր մնում որ նրանցից նավատ» պանդոկին: Ծառան քիչ էր մնում որ կերակեց նրանց շատ իւրաքանչիւրին վայր գցէ և ճիշտ որ կերակեց նրանց շատ վաշով, որի հետ կար և ինչ որ անդրբալկանեան գինի: — վատ ճաշով, որի հետ կար և ինչ որ անդրբալկանեան գինի: — վատ ճաշով, որի հետ կար և ինչ որ անդրբալկանեան գինի: — ինսերորդ դարում, ուղղեց ինսարօվը:

— ինսերորդ դարում, բացականչեց Շուբինը: — Օ՛, ինչ երջանկութիւն:

Բերսենեվը նկատում էր, որ իր բոլոր «օյխների», հասաքների մէջ Շուբինը շարունակ կարծես թէ հարցաքնում էր ինսարօվին, կարծես թէ շօշափում էր նրան և ներքուս յուղը ուում էր, — իսկ ինսարօվը առաջուայ պէս մնում էր հանգիստ և պարզ:

Վերջապէս, նրանք տուն վերադարձան, փոխեցին իրանց շորերը և առաւօտեանից բռնած ուղղութիւնից դուրս չը գա-

դու համար՝ վճռեցին նոյն երեկոյեան գնալ Ստախօվների մօտ: Շուբինը առաջ վագեց, որ իմաց տայ նրանց գալու մասին:

XII

— Հերոս ինսարօվը այս բոպէին չնորհ կը բերէ այստեղ, հանդիսաւոր եղանակով բացականչեց նա, մանելավ Ստախօվների հիւրասենեակը, ուր այդ բոպէին գտնուում էին միայն եւլենան և Զօեան:

— Ո՞ր? զերմաներէն հարցրեց Զօեան: Յանկարծակիի եւ կած միջոցին նա միշտ մայրենի լեզուով էր խօսում: Ելենան ուղղուեց: Շուբինը նայեց մի չարաձճի ժպիտով: Ելենայի համար դա վիրաւորական էր: բայց նա ոչինչ չասաց:

— Դուք լսեցիք, կրկնեց Շուբինը: — պարոն ինսարօվը գալիս է այստեղ:

— Լսեցի, պատասխանեց օրիորդը, և լսեցի թէ ինչ անուն տուիք նրան: Զարմանում եմ ձեզ վրայ, ճշմարիտ: Պարոն ինսարօվը գեռ այստեղ ոտ չէ դրել, և դուք արդէն հարկաւոր էք համարում կոտրատուել:

Շուբինը յանկարծ կոտրուեց:

— Դուք ճշմարիտ էք, դուք միշտ ճշմարիտ էք, Ելենա Նիկոլաևնա, վնթիմթաց նա: — բայց ես, Աստուած վկայ է, հէնց այնպէս էի ասում: Մենք ամբողջ օրը զբօնում էինք միասին և նա, հաւատացնում եմ ձեզ, շատ լաւ մարդ է:

— Ես այդ մասին ձեզ չէի հարցնում, խօսեց Ելենան և վերկացաւ:

— Պարոն ինսարօվը ջաճէլ է, հարցրեց Զօեան:

— Ես հարիւր քառասուն չորս տարեկան է, պատասխանեց Շուբինը վշտացած:

Ծառան յայտնեց երկու բարեկամների գալուստը: Նրանք ներս մտան: Բերսենեվը ներկայացրեց ինսարօվին: Ելենան խնդրեց նրանց նստել և ինքն էլ նստեց, իսկ Զօեան գնաց վերի, պէտք էր իմաց տալ Աննա Վասիլիվնային: Սկսուեց մի անշան խօսակցութիւն, ինչպէս լինում են բոլոր առաջին խօսակցութիւնները: Շուբինը լսելեայն դիտում էր անկիւնից, բայց դիտելու բան չը կար: Ելենայի մէջ նա նկատում էր մի գոպուած սրտնեղութեան հետքեր իր, Շուբինի դէմ—ե ուրիշ ոչինչ: Նա նայում էր Բերսենեվին և ինսարօվին և, ինչպէս քանդակագործ համեմատում էր նրանց դէմքերը: Երկուսն էլ, մտածում էր նա, գեղեցիկ չեն, բոլգարը ունի բնորոշ, քանդակագործացին դէմքը: ահա այժմ նա լու լուսաւորուեց: իսկ վելիկոուսի դէմքը

աւելի նկարչութեան է գալիս. գծեր չը կամ, կերպարանք կայշ
բայց մէկի և միւսի վրայ սիրահարուել կարելի է: Ելենան դեռ
չէ սիրում, բայց կը սիրէ Բերսենելին, վճռեց նա ինքն իր մէջ,
—Աննա Վասիլիին վան եկաւ հիւրասենեակ և խօսակցութիւնը
ընդունեց բոլորովին ամսանոցային կերպարանք, ճիշտ ամա-
րանոցային և ոչ գիւղական: Դա շատ բազմակողմանի խօսակ-
ցութիւն էր քննուաղ առարկաների առատութեան կողմից. բայց
կարձիկ, բաւական ճանձրացուցիչ դադարները ընդհատում էին
նրան համարեա իւրաքանչիւր երեք բոպէն մի անգամ: Այդպի-
սի մի լուսթեան ժամանակ, Աննա Վասիլիին վարձաւ դէպի
Զօնան: Շուրբինը հասկացաւ նրա անխօս ակնարկը և թթուա-
ցրեց իր գէմքը, իսկ Զօնան նստեց դաշնամուրի առաջ, ածեց
և երգեց իր իմացած բոլոր կտորները: Աւկար Իվանովիչը երե-
ւաց գուն ետեից, բայց շարժեց մատները և մէկ էլ յետ գնաց:
Յետոյ թէյ բերին, յետոյ ամենքը պտոյտ արին այգում... Դըր-
սում մութը կոխեց, և հիւրերը հեռացան:

Ինսարօվը իսկ որ քիչ տպաւորութիւն գործեց Ելենայի
վրայ, քան Ելենան էր սպասում կամ, աւելի ճիշտն ասած, նա
այն տպաւորութիւնը չը գործեց, ինչ սպասում էր Ելենան:
Նրան դուր եկաւ Ինսարօվի շիտակութիւնը և ազատ պահուելը,
գէմքն էլ նրան դուր եկաւ. բայց Ինսարօվի ամբողջ էութիւնը,
հանդարտ, ամուր և սովորականի պէս հասարակ, չէր ներդաշ-
նակւում այն պատկերի հետ, որ կազմուել էր օրիորդի գլխում
Բերսենելի պատմութիւնից: Ելենան, անդիտակցար սպա-
սում էր աւելի ճակատագրական բանի: Բայց, մտածում էր նա,
այսօր Ինսարօվը շատ քիչ խօսեց, մեղաւորը ես ինքս եմ. ես
հարց ու փորձ չէի անում նրանից, սպասենք մինչեւ միւս ան-
գամ... բայց նրա աչքերը արտայատիչ են, ազնիւ են: Նա
զգում էր որ ինքը խոնարհուել չէր ուզում Ինսարօվի առաջ,
այլ բարեկամաբար ձեռք տալ նրան. և նա տարակուսանքի մէջ
էր. այսպէս չէր նա երեսակայում Ինսարօվի նման մարդկանց,
«հերոսներին»: Այս վերջին խօսքը յիշեցնում էր Շուրբինին, և Ե-
լենան, որ արդէն պառկել էր անկողնում, տաքացաւ և բար-
կացաւ:

—Ի՞նչպէս հաւանեցիք ձեր նոր ծանօթներին, հարցրեց
վերադարձին Բերսենելիը Ինսարօվից:

—Նրանք ինձ շատ դուր եկան, պատասխանեց Ինսարօ-
վը, —մանաւանդ աղջիկը: Երեխ հիանալի աղջիկ է: Նա յուզ-
ում է, բայց նրա մէջ դա լաւ յուզմունք է:

—Պէտք է նրանց մօտ յաճախակի գնալ, նկատեց Բերսե-
նելիը:

—Այն, պէտք է, ասաց Ինսարօվը և ուրիշ մի խօսք չար-
տասանեց մինչեւ տուն հանելը: Նա իսկոյն փակուեց իր սե-
նեակում, բայց կրակը նրա մօտ այրուում էր կէս զիշերից շատ
անցած:

Բերսենելիը դեռ չէր կարողացել մի էջ կարդալ Բառումե-
րից, երբ զրսից չպրած մի բուռ աւազը թրիսկաց նրա պա-
տուհանի ապակիներին: Նա ակամայ ցնցուեց, բաց արաւ պա-
տուհանը և տեսաւ Շուրբինին, որ գունատ էր կտաւի նման:

—Ի՞նչ անհանգիստն ես եղել, կատարեալ զիշերային թի-
թեսնիկ, սկսեց Բերսենելիը:

—Սուս, ընդհատեց Շուրբինը. ես ծածուկ եկայ քեզ մօտ,
ինչպէս Մաքսը Ագաթայի մօտ: Ինձ անպատճառ հարկաւոր է
առանձին երկու խօսքը ասել քեզ:

—Դէ մտիր սենեակը:

—Ոչ, հարկաւոր չէ, պատասխանեց Շուրբինը և արմունկ-
ներով յենուեց պատուհանին.—այսպէս աւելի ուրախալի է,
աւելի Սպանիային է նման: Նախ և առաջ, չնորհաւորում եմ
քեզ. քո արժէթղթերը բարձրացան: Քո գոված, անսովոր մար-
դը խորտակուեց: Այս մասին ես կարող եմ երաշխաւոր լինել:
Իսկ որպէս զի ապացուցանեմ իմ անկողմնապահութիւնը, լսիր.
ահա պարոն Ինսարօվի «ցուցակ ծառայութեանը». ոչ մի տա-
զանդ, պօչզիս չը կայ, աշխատելու ընդունակութիւն անվերջ,
մեծ յիշողութիւն ունի, խելքը բազմակողմանի չէ և ոչ էլ խոր-
բայց առողջ, վառվուն է. չորութիւն և ոյժ, նոյն իսկ խօսկու-
ընդունակութիւն, երբ բանը գալիս է իր, մար մէջ ասած, ա-
մենատաղտկալի Բօլգարիայի մասին: Ի՞նչ. դու կ'ասես թէ ևս
անարդար եմ էլլի մի նկատողութիւն. դու երբէք նրա հետ
դուռով չես խօսի, և ոչ ոք նրա հետ դուռով չէ խօսել. ես, որ-
պէս արտիստ, նրան ատելի եմ, որով և հպարտանում եմ: Զո-
րութիւն, չորութիւն, և մեզ ամենքիս կարող է փոշի դարձնել:
Նա կապուած է իր հողի հետ, ոչ այնպէս, ինչպէս մեր գա-
տարկ ամանները, որոնք քսմաւում են ժողովրդին և ասում են.
թափուիր մեր մէջ, կենդանի ջուր: Սակայն նրա գործն էլ
հեշտ է, աւելի հեշտ հասկանալի. պէտք է միայն թիւրքերին
վոնտել, մէծ բան է, էլլի: Բայց այդ բոլոր յատկութիւնները,
փառք Աստուծու, կանանց չեն դուր գալիս: Հմայք չը կայ. ու-
րիշ բան ենք ես և դու:

—Ի՞նձ ինչու խառնեցիր, վնթինթաց Բերսենելիը:—Մնա-
ցածների մէջ էլ դու անարդար ես. դու բոլորովին նրան ատե-
լի չես, և իր հայրենակիցների հետ նա դուռով է խօսում... ես
այդ գիտեմ:

—Դա ուրիշ բան է: Հայրենակիցների համար նա հերոս է, բայց ես, խոստովանում եմ, ուրիշ կերպ եմ երեակայում հերոսներին. հերոսը չը պիտի իմանայ խօսել. հերոսը բառաշում է ինչպէս եղ. բայց եթէ եղջիւրը շարժէ, պատերը կը թափուեն: Նա ինքն էլ չը պիտի իմանայ թէ ինչու է եղջիւրը շարժում, բայց շարժում է: Բայց գուցէ մեր ժամանակներում պահանջւում են ուրիշ չափի հերոսներ:

—Այդ ինչու է ինսարօվը քեզ այդքան հետաքրքրում հարցրեց Բերսենեվը: —Միթէ դու հէնց նրա համար ես վազել այստեղ, որ նկարագրես նրա բնաւորութիւնը:

—Ես եկայ այստեղ, սկսեց Շուբինը, —որովհետեւ տանը շատ տիսուր էի:

—Հա: Հօ էլ չեմ ուզում լաց լինել:

—Ծաղրիր. ես եկայ այստեղ, որովհետեւ պատրաստ եմ իմ արմունկները կրծել, որովհետեւ յուսահատութիւնը ինձ կրծում է, վիշտը, խանդուութիւնը...

—Խանդուութիւնը. դէպի ոււմ:

—Դէպի քեզ, դէպի նրան, դէպի ամենքը: Ինձ կեղեքում է այն միտքը, որ եթէ ես Ելենային առաջուց հասկանայի, եթէ ես լաւ գործին կպչէի... Բայց ինչ խօսել, Բանը նրանով կը վերջանայ, որ ես միշտ կը ծիծաղեմ, յիմարութիւններ կ'անեմ, կը կոտրատուեմ, ինչպէս Ելենան է ասում, և տպա վեր կ'առնեմ ու կը խեղդուեմ:

—Խեղդուելը ասենք չես խեղդուի, նկատեց Բերսենեվը:

—Այսպիսի գիշերը ի հարկէ ոչ, բայց թող համենք աշնան: Այսպիսի գիշերը մարդիկ նոյնպէս մեռնում են, բայց միայն երջանկութիւնից: Ախ, երջանկութիւն, Իւրաքանչիւր ծառի ստուեր, որ ճանապարհի վրայով երկարացած է, կարծես այժմ շնջում է. «Գիտեմ ես թէ ուր է երջանկութիւնը... Ուզում ես ասեմ»: Ես քեզ կը կանչէի ման գալու, բայց դու այժմ պրօզայի ազգեցութեան տակ ես: Քնիր, և թող մաթեմատիկական ձեւը երեան քեզ քնում: Իսկ իմ մէջ հոգիս պատառ-պատառ է զառնում: Դուք, պարոններ, տեսնում էք որ մարդը ծիծաղում է, ուրեմն, ձեր կարծիքով, նա դարդ չունի: Դուք կարող եք ապացուցանել, որ նա ինքն իրան հակասում է, ուրեմն և չէ տանջւում: Տէրը ձեզ հետ:

Շուբինը արագ քայլերով հեռացաւ պատուհանից: «Աննուշ-կա», ուզում էր կանչել Բերսենեվը նրա ետեից, բայց պահեց իրան. Շուբինը, ծիշտ որ, սաստիկ այլայլուած էր: Երկու րոպէ անցած, Բերսենեվին թուաց թէ լսում է հեծեանքներ. Նա պիտի կացաւ, բայց արեցաւ պատուհանը:

միայն հեռուում մի ինչ որ տեղ մի, երեի, ձանապարորդ գիւղացի, երգում էր «Մօզգոկի դաշտավայրը»:

XIII

Կունցօվօի մօտ տեղափոխուելուց առաջին երկու շաբաթների ընթացքում ինսարօվը չորս թէ հինգ անգամից աւել չէր այցելել Ստաօխվներին, Բերսենեվը զնում էր նրանց մօտ օրամէջ: Ելենան միշտ ուրախանում էր նրանով. միշտ երկուսի մէջ սկսում էր աշխոյժ և հետաքրքրական խօսակցութիւն, բայց գարձեալ Բերսենեվը վերադառնում էր առն յաճախ տիսուր դէմքով. Շուբինը համարեա չէր երիւում. նա տենդային եռանդով պարապում էր իր արուեստով. կամ նստում էր իր վակ սենեակում և դուրս էր վազում այնտեղից բլուզայի մէջ, ամբողջովին կաւոտ գառած, կամ օրեր էր անցնում Մոսկուայում. այնտեղ ունէր արհեստանոց, ուր գալիս էին իտալացի կաղապարագործները, նրա ծանօթները և ուսուցիչները: Ելենան ոչ մի անդամ խօսք չը սկսեց ինսարօվի հետ այնպէս, ինչպէս ինքն էր ուզում. քանի երիտասարդը բացակայ էր, Ելենան պատրաստում էր հարց ու փորձ անել շատ բանի մասին, բայց երբ ինսարօվը գալիս էր, նա ամաչում էր իր պատրաստութիւններից: Ինսարօվի հանգստութիւնը շփոթեցնում էր նրան. Նրան թւում էր թէ իրաւոնք չունի: Հարկադրել երիտասարդն խօսել, և վճռեց դեռ սպասել. այնուամենայնիւ, նա զգում էր, որ երիտասարդի իւրաքանչիւր այցելութեան ժամանակ, որքան էլ աննշան լինէին նրանց մէջ փոխանակուած խօսքերը, ինսարօվը աւելի և աւելի զրաւում էր նրան. բայց դէպի չը պատահնց, որ Ելենան նրա հետ առնանանայ, իսկ մի մարդուն մօտենալու համար հարկաւոր է գոնէ մի անգամ խօսել նրա հետ երես առ երես: Ելենան շատ էր խօսում Բերսենեվի հետ նրա մասին: Բերսենեվը հասկանում էր որ Ելենայի երեակայութիւնը յափշտակել է Ինսարօվը և ուրախ էր որ իր բարեկամը չէ խորտակուել, ինչպէս հաստատում էր Շուբինը. Նա կրակ կտրած, ամենափոքր մանրամասնութիւններով, պատում էր Ելենային այն ամենը, ինչ զիտէր ինսարօվի մասին (մենք յաճախ, երբ ինքներս ուզում ենք դուր գալ մի ուրիշ մարդուն, սաստիկ գովում ենք նրա հետ խօսելիս մեր բարեկամներին, համարեա երբէք չը կասկածելով, որ զրանով մենք մեզ ենք գովում): Եւ երբեմն, երբ Ելենայի գունատթշերը թեթև կերպով կարմրում էին, իսկ աչքերը փայլում և

լայնանում էին, այն վատ թախիծը, որ արդէն յայտնի էր Բերսենեվին, սեղմում էր նրա սիրտը:

Մի անգամ Բերսենեվը եկաւ Ստախօվների մօտ ոչ սովորական ժամանակին, առաւտեան ժամի տասնեմէկին մօտ: Ելենան գնաց նրա մօտ դահլիճը:

—Երեւակայեցէք, սկսեր Բերսենեվը մի բռնազբօսիկ ժըպիտով—որը Խսարօվը կորել է:

—Ի՞նչպէս թէ կորել է, ասաց Ելենան:

—Կորել է: Անցեալ օրը երեկոյեան գնացել է մի ինչ որ տեղ և մինչեւ այժմ չը կայ:

—Նա ձեզ չասաց թէ ուր է գնում:

—Ո՞չ:

Ելենան նստեց աթոռի վրայ:

—Նա, երեւի, Մոսկուա է գնացել, ասաց նա, աշխատուլով անտարեր երեւալ և մինչոյն ժամանակ ինքն էլ զարմանալով որ աշխատում է անտարեր երեւալ:

—Չեմ կարծում, պատասխանեց Բերսենեվը:—Նա մենակ չէր:

—Ո՞ւմ հետ էր:

—Անցեալ օրը ձաշից առաջ, նրա մօտ եկան ինչ որ երկու մարդիկ, երեւի նրա հայրենակիցները:

—Բոլդարներ. ինչո՞ւ էք այդպէս կարծում:

—Այն պատճառով, որ որքան ևս կարողացայ լսել, նրանք խօսում էին նրա հետ մի լեզուով, որ ինձ անծանօթ էր, բայց ուստի անական... Այ դուք, Ելենա Նիկոլաեցա, շարունակ ասում էք թէ Խսարօվի մէջ խորհրդաւոր բան քիչ կայ. այս այցելութիւնից աւել ինչ խորհրդաւոր բան: Երեւակայեցէք. մտան նրա մօտ—և սկսեցին աղաղակել ու վիճել և այնպէս վայրենի, կատաղի կերպով... Նա էլ էր աղաղակում:

—Նա էլ:

—Նա էլ: Բզաւում էր նրանց վրայ: Նրանք կարծես գանգատում էին միմեանցից: Եւ եթէ դուք նայէիք այդ այցելուներին: Թուխ, լայն այտոսկրաւոր գէմքեր, բութ, բազէի քթերով, ամեն մէկը քառասուն տարեկանից աւել կը լինէր, հազնուած են վատ, փոշու, քրտինքի մէջ են: Արտաքին տեսքով արհեստաւորներ են և արհեստաւորներ չեն, ոչ էլ պարոններ... Աստուած գիտէ, թէ ինչ մարդիկ են:

—Եւ նա գնաց դրանց հետ:

—Դրանց հետ կերակրեց, ապա դուրս գնաց դրանց հետ: Տաշտիկին ինձ տառմ էր—երկուսով մի ամբողջ ահագին կը

ճուճ կաշա կերան: Այնպէս միմեանց ետևից կուլ էին տալիս, կարծես գայլեր լինեն:

Ելենան թոյլ կերպով ծիծաղեց:

—Դուք կը տեսնէք, ասաց նա.—այս բոլորը կը վերջանայ մի շատ պրօզափի բանով:

—Աստուած տայ: Բայց դուք զուր զործ ածեցիք այդ բառը: Խսարօվի մէջ պրօզափի բան չը կայ, թէ Շուբինը հաւատացնում է...

—Շուբինը, ընդհատեց Ելենան և թոթուեց ուսերը:—Բայց խստովանեցէք, այդ երկու պարոնները, որոնք կլանում են կաշան...

—Թեմիստոկլէսն էլ Սալամինեան պատերազմի նախընթաց օրը ուտում էր, ժպտալով նկատեց Բերսենեվը:

—Այդպէս է. բայց միւս օրն էլ պատերազմ կար:—Բայց դուք էլի ինձ իմաց տուէք, երբ նա կը վերադառնայ, աւելացրեց Ելենան և փորձեց փոխել խօսակցութիւնը, սակայն խօսակցութիւնը չէր կապւում: Երեւաց Զօեան և սկսեց ման գալ անհեակում ոսների մատների վրայ, իմաց տալով դրանով, թէ Աննա Վասիլեցան դեռ քնից չէ զարթներ:

Երեսենեվը գնաց:

Նոյն օրը երեկոյեան բերան նրա մի առմասկը Ելենային: Վկերադառնաւ, զրում էր նա.—արեւակէզ, փոշիի մէջ թաթիւստած մինչեւ յօնքերը. բայց ինչո՞ւ և ուր էր գնացել: Ճիւտեմ: արդեօք չէք իմանայ դուք»:

—Չէք իմանայ դուք, ՀՀՆՀաց Ելենան:—Միթէ նա խօսում է ինձ հետ:

XIV

Միւս օրը, ժամի մօտ երկուսին, Ելենան կանգնած էր այգում մի փոքրիկ բոյնի առաջ, ուր նա կրթում էր գամփափ երկու լակուսներ (Այգեպանը գտել էր նրանց ցանկապատի տակ զցած և բերել էր օրիորդին, որի մասին նրան ասել էին լուացարանները, թէ նա ամեն գազաններին և անասուններին սիրում է: Նա չը սիալուեց. Ելենան նրան 25 կոպէկ տուեց): Ելենան նայեց բոյնին, համոզուեց որ լակուսները ողջ և առողջ են և նրանց առաջ թարմ, չոր յարդ են փոել, շուռ եկաւ և քիչ մնաց որ աղաղակէ. ուղիղ գէպի նրան, ծառուղիով, գալիս էր Խսարօվը մենակ:

—Բարե ձեզ, ասաց նա, մօտենալով օրիորդին և վերցնելով գգակը: Ելենան նկատեց որ ճիշտ է, վերջին երեւ օրերում

Նրա դէմքը արեակէզ է դարձել:—Ես ուզում էի գալ այստեղ Անդրէյ Պետրօվիչի հետ, բայց նա ուշացաւ: Եւ ահա եկայ առանց նրան: Զեր տանը ոչ ոք չը կայ. ամենքը քնած են կամ զրօնում են, ուստի ես եկայ այստեղ:

—Դուք, կարծես, ներողութիւն էք խնդրում, պատասխանեց Ելենան: Այդ բոլորովին հարկաւոր չէ: Մենք շատ ուրախ ենք ձեզ տեսնել... Նստենք այս նստարանի վրայ, շուաքում:

Նա նստեց: Ինսարօվը տեղաւորուեց նրա կողքին:

—Դուք կարծեօք տանը չէիք այս վերջին օրերը, սկսեց Ելենան:

—Այս, պատասխանեց նա.—Ես գնացել էի... Զեզ Անդրէյ Պետրօվիչն ասաց, չէ:

Ինսարօվը նայեց օրիորդին, ժպտաց և սկսեց իսպացնել դգակը: Ժպտալով, նա արագ ճպճպում էր և շրթունքները առաջ էր ձգում և այս բանը նրան շատ բարեհոգի կերպարանք էր տալիս:

—Անդրէյ Պետրօվիչը, երեխ, ձեզ նոյնպէս ասաց որ ես գնացի ինչ որ... անճոռնի մարդկանց հետ, ասաց նա, շարունակելով ժպտալ:

Ելենան փոքր ինչ շփոթուեց, բայց իսկոյն զգաց, որ Ինսարօվին միշտ ճշմարիտը պէտք է ասել:

—Այս, ասաց նա վճռական ձեռվ:

—Իսկ դուք ինչ մտածեցիք իմ մասին, հարցրեց նա յանկարծ:

Ելենան բարձրացրեց աչքերը, նրան նայեց:

—Ես մտածում էի, ասաց նա... ես մտածում էի, որ դուք միշտ զիտէք թէ ինչ էք անում և որ դուք որ և է վատ բան անելու ընդունակ չէք:

—Շնորհակալ եմ ձեզնից զրա համար: Գիտէք, Ելենա Նիկոլաեվնա, սկսեց նա մի առանձին, կարծես, վստահ կերպով մօտ նստելով նրան:—մերոնցից այստեղ մի փոքրիկ ընտանիք կայ. կան նրանց մէջ քիչ կրթուած մարդիկ. բայց ամենքը թունդ նուիրուած են ընդհանուր գործին: Դժբախտաբար, առանց վէճերի, կոիւների չէ լինում, իսկ ինձ ամենքն են ճանաչում, ինձ հաւատում են. ահա ինձ կանչեցին որ մի այդպիսի կոռու վերահասու լինեմ: Ես գնացի:

—Հեռու այստեղից:

—Ես վաթսուն վերստից աւել գնացի, Տրօիցի պօսադը Այնտեղ, վանքում, նոյնպէս կան մերոնցից: Գոնէ աշխատանքս դուք չը կորաւ. գործը շտկեցի:

—Դա դժուար էր ձեզ համար:

—Դժուար էր: Մէկը շարունակ յամառում էր: Փողը չէր տալիս:

—Ինչպէս: Կոիւը փողի համար էր:

—Այո, և փողն էլ մեծ փող չէր: Իսկ դուք ինչ էիք ենթադրում:

—Եւ դուք այդպիսի դատարկ բաների համար վաթսուն վերստ ճանապարհ գնացիք. երեք օր կորցրիք:

—Դատարկ բան չէ, Ելենա Նիկոլաեվնա կիցներդ են խառնուած: Այդ դէպքում մերժելը մեղք է: Դուք, ահա տեսնում եմ, նոյն իսկ լակուներին չէք մերժում ձեր օգնութիւնը, և ես ձեզ գովում եմ զրա համար: Բայց թէ ես ժամանակ կորցրի, դա ցաւ չէ, ես յետոյ էլի կ'անեմ: Մեր ժամանակը մեղք չէ պատկանում:

—Իսկ ում է պատկանում:

—Ամենքին, որոնք կարօտ են մեր օգնութեան: Այս ամենը ես ձեզ պատմեցի վայրիվերոյ, որովհետեւ ինձ համար թանգ է ձեր կարծիքը: Ես երեակայում եմ թէ Անդրէյ Պետրօվիչը ինչպէս կը լինի ձեզ զարմացրած:

—Զեզ համար թանգ է իմ կարծիքը, ասաց Ելենան կիսատ ձայնով:—Ինչու:

—Որովհետեւ դուք լաւ օրիորդ էք, արիստօկրատուհի չէք... ահա և ամենը:

Փոքրիկ լուսութիւն տիրեց:

—Դիմիտրի Նիկանօրօվիչ, ասաց Ելենան.—զիտէք դուք որ առաջին անգամն էք ինձ հետ այդքան սրտաբաց:

—Ո՞սց թէ: Ինձ թւում է, թէ միշտ եմ ձեզ ասել այն, ինչ մտածում եմ:

—Ոչ, սա առաջին անգամն է, և ես զրանով շատ ուրախ եմ,—ես էլ ուզում եմ ձեզ հետ սրտաբաց լինել: Կարելի է:

Ինսարօվը ծիծաղեց և ասաց.

—Կարելի է:

—Նախազգուշացնում եմ ձեզ, որ ես շատ հետաքրքրուողն եմ:

—Ոչինչ, ասացէք:

—Անդրէյ Պետրօվիչը ինձ շատ բան է պատմել ձեր կեանքից, ձեր երիտասարդութիւնից: Ինձ յայտնի է մի հանգամանք,

մի սարսափելի հանգամանք... Ես գիտեմ որ դուք յետոյ գնացել էք ձեր հայրենիքը... Մի պատասխանէք ինձ, ի սէր Աստուծու, եթէ իմ հարցը ձեզ անհամեստ կը թուայ, բայց ինձ տանջում է մի միտք... Ասացէք, դուք հանդիպեցիք այն մարդուն...

Ելենայի չնչառութիւնը կանգ առաւ։ Նա թէ ամաչեց և թէ սարսափեց իր համարձակութիւնից, ինսանօվը յառել էր նրա վրայ իր կիսախուփ աչքերը և մատներով իր ծնօան էր շօշափում։

—Ելենա նիկոլաևիլսա, սկսեց նա վերջապէս, և նրա ձայնը սովորականից էլ հանդարտ էր, որ և համարեա վախեցրեց Ելենային։ —Ես հասկանում եմ թէ ինչ մարդու մասին յիշատակեցիք այս բոպէին։ Ոչ, ես նրան չը հանդիպեցի, և փառք Աստուծու։ Ես նրան չէի որոնում ոչ թէ այն պատճառով, որ իրաւունք չէի համարում սպանել նրան—ես շատ հանդիսա կերպով կը սպանի նրան—այլ այն պատճառով, որ այնտեղ մասնաւոր վրէժի բան չէ կարող լինել, ուր ժողովրդի, ընդհանուրի վրէժի գործ կայ... ոչ, այս խօսքը անպէտք է... երբ մի ժողովուրդ ազատելու գործ կայ։ Մէկը միւսին կը խանգարէր։ Ժամանակին այն մարդն էլ չի պրծնի... Նա էլ չի պրծնի, կրկնեց նա և շարժեց գլուխը։

Ելենան նրան նայեց կողքից։

—Դուք շատ էք սիրում ձեր հայրենիքը, արտասանեց նա հեղութեամբ։

—Այդ գեռ յայտնի չէ, պատասխանեց նա։ —Ահա երբ մեզանից մէկը կը մեռնէ հայրենիքի համար, այն ժամանակ կարելի կը լինի ասել թէ նա սիրում է հայրենիքը։

—Այնպէս որ եթէ ձեզ զրկէին Բօլգարիա վերադառնալու կարսղութիւնից, շարունակեց Ելենան—ձեզ համար շատ ծանր կը լինէր Ռուսաստանում։

Ինսարօվը զլուխ կախ արաւ։

—Ինձ թւում է, որ ես չէի կարող տանել այդ բանը, առաց նա։

—Ասացէք, նորից սկսեց Ելենան—դժուար է բօլգարական լեզուն սովորելը։

—Ամենավախ Ռուսի համար ամօթ է բօլգարերէն չիմանալը։ Ռուսը պիտի իմանայ բոլոր սլաւօնական բարբառները, կամենում էք, ես ձեզ համար բօլգարական գրքեր կը բերեմ։ Դուք կը տեսնէք թէ որքան հեշտ է։ Ռուսի երգեր ունենք մենք, սերբիականներից վատ չեն։ Սպասեցէք, ես հիմա ձեզ համար թարգմանեմ զրանցից մէկը։ Բայց դուք գոնէ քիչ ծանօթ էք մեր պատմութեան։

—Ոչ, ես բոլորովին ծանօթ չեմ, պատասխանեց Ելենան։

—Սպասեցէք, ես կը բերեմ ձեզ մի զիրք։ Դուք նրանից գէթ զլիսաւոր փաստերը կ'իմանաք։ Ուրեմն լսեցէք երգը... Բայց աւելի լաւ է, ես կը բերեմ գրած թարգմանութիւնը։ Համոզ-

ուած եմ, որ դուք կը սիրէք մեզ. դուք բոլոր ճնշուածներին էք սիրում։ Եթէ դուք իմանաք, ինչ օրէնուած երկիր է մեր երկիրը, Եւ սակայն նրան կոխկոտում են, նրան ծուատում են, աւելացրեց նա ձեռքի մի ակամայ շարժմունքով և նրա դէմքը մթագնեց—մեղնից խլեցին ամեն ինչ, ամեն ինչ. մեր եկեղեցիները, մեր իրաւունքները, մեր հոգերը, նախրի պէս են մեզ քշում անիծուած թիւքերը, մեզ մորթում են...

—Դմիտրի նիկանօրովից, բացականչեց Ելենան։

Ինսարօվը կանգ առաւ։

—Եերեցէք ինձ Ես չեմ կարող այդ մասին խօսել սառնասրտութեամբ։ Բայց դուք այս բոպէին հարցնում էիք ինձ՝ սիրում իմ ես իմ հայրենիքը։ Ել ուրիշ բնչ բան կարելի է սիրել աշխարհում։ Ի՞նչն է միակ անփոփոխը, ի՞նչն է բոլոր կառկածներից բարձրը, ի՞նչն է, որին չէ կարելի չը հաւատալ Աստուծուց յետոյ։ Եւ երբ այդ հայրենիքը կարօտ է քեզ... Նկատեցէք, բօլգարիայի վերջին զիւղացին, վերջին մուրացկանը և ես—մենք մի և նոյն բանն ենք ցանկանում։ Մենք ամենքս մի նապատակ ունենք։ Հասկացէք թէ դա ինչ վստահութիւն և ոյժ է տալիս։

Ինսարօվը մի վայրկեան լսեց, և նորից էլի խօսեց Բօլգարիայի մասին։ Ելենան լսում էր նրան մի լափող, խոր և տխուր ուշազրութեամբ։ Երբ Ինսարօվը վերջացրեց, նա մի անգամ էլ հարցրեց նրան։

—Ռուսին գուք ոչ մի կերպ չէիք մնայ Ռուսաստանում։ Իսկ երբ Ինսարօվը գնաց, նա երկար նայում էր նրա եամբից։ Բօլգարը այդ օրը նրա համար ուրիշ մարդ գարձաւ։ Երկու ժամ առաջ նա այնպէս չէր զիմաւորում երիտասարդին, ինչպէս այժմ ճանապարհ էր գնում։

Այդ օրից Ինսարօվը սկսեց աւելի և աւելի յաճախ գալ։ Իսկ Բերսենեվը աւելի և աւելի սակաւ։ Երկու բարեկամների մէջ մի ինչ որ օտարութիւն ունէր, որը երկուսը մի էին զգում, բայց անուանել չէին կարողանում, իսկ բացարել վախենում էին։ Այսպէս անցաւ մի ամիս։

Անսա վասիլեվսան սիրում էր տանը նստել, ինչպէս յայտնի է ընթերցողին։ Բայց երբեմն, բոլորովին անսպասելի կերպով, նրա մէջ երեւան էր զալիս մի ինչ որ անսովոր բանի, մի որ և է զարմանալի partie de plaisir-ի ցանկութիւն։ և որքան գժուար էր այս partie de plaisir-ը, որքան շատ պատրաստու-

թիւմներ էր նա պահանջում, այնքան աւելի շատ էր յուզւում ինքը, Աննա Վասիլեվսան, այնքան այդ բոլորը ախորժելի էր նրա համար, Եթէ այդ «քամին» ձմեռն էր գալիս նրա վրայ—նա հրամայում էր երկու երեք օթեակներ վարձել միմեանց կողքին, հաւաքում էր իր բոլոր ծանօթներին և գնում էր թատրոն կամ նոյն իսկ դիմական հայութ։ Եթէ ամառն էր գալիս—գնում էր քաղաքից դուրս, մի որ և է հեռու տեղ։ Միւս օրը նա գանգատում էր թէ իր գլուխը ցաւում է, անքում էր, անկողնից չէր դուրս գալիս, իսկ մի երկու ամսից յետոյ նրա մէջ էլի սկսում էր «անսովոր բանի» ցանկութիւնը։ Նոյնը պատահեց և այժմ։ Մէկը խօսեց նրա մօտ Յարիցինօի գնղեցկութիւնների մասին, և Աննա Վասիլեվսան յանկարծ յայտարարեց, որ նա էգուց չէ միւս օրը մտադիր է գնալ Յարիցինօ։ Տան մէջ իրարանցում սկսուեց, յատուկ սուրհանդակ գնաց Նիկոլայ Արտեմիվիչի ետեկից, Մոսկուա։ Նրա հետ գնաց և վերակացուն զինիներ, պաշտետ և այլ ուտելեղէններ գնելու. հրաման արձակուեց Շուրբինին վարձել մի կառք ևս (կար մի հատք, բայց բաւական չէր) և պատրաստել ձիեր ճանապարհին փոխելու համար. ծառան երկու անգամ վազեց Բերսեննելի և Ինսարօվի մօտ և տարաւ երկու հրաւիրաթուղթ նրանց անունով, որուք գրուած էին Զօեայի ձեռքով նախ ոուսներէն, յետոյ ֆրանսերէն։ Ինքը Աննա Վասիլեվսան հոգ էր տանում օրիորդների ճանապարհորդական զգեստի մասին։ Մինչ այդ՝ partie de plaisir-ը քիչ էր մնում որ իրանգարուի. Նիկոլայ Արտեմիվիչը եկաւ Մոսկուայից թթուած և տհաճ, կուռելու տրամադիր։ (Նա փրուած էր Աւգուստինա Խրիստիանովսայի վրայ) և, իմանալով թէ ինչու են իրան կանչել, վճռականապէս յայտարարեց թէ ինքը չի գնայ, թէ արշաւել կունցօվից Մոսկուա, Մոսկուայից Յարիցինօ, իսկ Յարիցինօից դարձեալ Մոսկուա և Մոսկուայից դարձեալ Կունցօվո—անհեթեթութիւն է, —և վերջապէս, աւելացրեց նա, թող նախ և առաջ ապացուցաննեն թէ երկրագնդի մի կէտում կարելի է աւելի ուրախ լինել, քան մի այլ կէտում, այն ժամանակ ևս կ'երթամ։ Այդ բանը, ի հարկէ, ոչ ոք չէր կարող ապացուցանել, և Աննա Վասիլեվսան, լուրջ կավալեր չունենալու պատճառով, արդէն պատրաստ էր հրաժարուել partie de plaisir-ից, բայց յիշեց Ուվար Իվանօվիչին և անճարութիւնից մարդ ուղարկեց նրա ետեկից, ասելով. «Իսեղ դուռը յարդից էլ է բռնում», Ուվար Իվանօվիչին զարթեցրին։ Նա ցած իշաւ, լուռ լսեց Աննա Վասիլեվսայի առաջարկութիւնը, խաղացրեց մատները և ի գարմանս ամենքի համաձայնուեց։ Աննա Վասիլեվսան համբուրեց նրա թուշը, անուանեց նրան

սիրելի. Նիկոլայ Արտեմիվիչը ատելութեամբ ժպտաց և ասաց. Quelle եօւրծե! (նա սիրում էր տեղը եկած ժամանակ գործ տածել ֆրանսիական շիկ» բառեր) —իսկ միւս առաւոտը երկու կառքերը բոլորովին բեռնաւորուած գուրս գնացին Ստախօվների ամարանոցի բակից։ Տնային կառքում նստած էին կանաք, աղախսինը և Բերսեննելը, Ինսարօվը տեղաւորուեց կառապանի մօտ. իսկ միւս, վարձովի կառքում գտնւում էին Ուվար Իվանօվիչը և Շուրբինը։ Ուվար Իվանօվիչը ինքն էր որ մատի շարժումով կանչեց. Շուրբինին իր մօտ. թէն զիտէր որ նա ճանապարհին մի զլուխ պիտի իրան ջրացնէ, բայց «արգաւանդ ոյժի» և երիասարդ գեղարուեստագէտի մէջ զոյութիւն ունէր մի տարօրինակ կատ և բերան-պատռածների սրտաբացութիւն։ Պէտք է ասել, որ այս անդամ Շուրբինը իր հաստ բարեկամին հանգիստ թողեց. նա լուռ էր, ցրուած և կակուղ։

Արեգակը արդէն բարձր կանգնած էր անամպ երկնակամարի վրայ, երբ կառքերը մօտեցան Յարիցինօի ամրոցի աւելացիներին, որոնք մուայլ ու ահաւոր են նոյն իսկ կէսօրին։ Ամենքը ցած իշան և իսկոյն դիմեցին այգին։ Առջեից գնում էին Ելենան և Զօեան ինսարօվի հետ, նրանց ետեկից կատարեալ երջանկութիւն արտայայտող զէմքով շարժուած էր Աննա Վասիլեվսան Ուվար Իվանօվիչի հետ թեանցուկ։ Վերջինս տքում էր և օօրուելով էր քայլում, յարդէ նոր զիսարկը կտրում էր նրա ճակատը, իսկ ոտները այրուած էին կօշիկների մէջ, բայց նա իրան լսւ էր զգում և Բերսեննելը գնում էին ամենից յետոյ։ «Մէնք, եղբայր, պահեստի մէջ կը լինենք, որպէս վետերաններ», չնչաց Շուրբինը Բերսեննելի ականջին։ «Այստեղ այժմ Բօլգարիա է», աւելացրեց նա, յօնքերով ցոյց տալով Ելենային։

Եղանակը հրաշալի էր։ Շուրջը ամեն ինչ ծաղկում էր, բզզում էր, երգում. հեռուում փայլում էին լճակների ջրերը։ Տօնական պայծառ զգացմունքը յափշտակում էր մարդու հոգին։ —Ախ, ինչ լսւ է, ինչ լսւ, անդադար կրկնում էր Աննա Վասիլեվսան։ Ուվար Իվանօվիչը ի նշան հաւանութեան թափ էր տալիս իր զլուխը, իբրև պատասխան այդ պահնչական բացականչութիւններին և մի անդամ նոյն իսկ արտասանեց։ —Ի՞նչ ասել կ'ուզի։ Ելենան և Ինսարօվը մի-մի խօսում էին իրար հետ։ Զօեան երկու մատներով պահում էր լայն զիսարկի եղերը, կօկէտ կերպով գուրս էր հանում իր վարդադոյն շրջազեստի առաջից փոքրիկ ոսները, որոնց վրայ հագած էր բաց-մոխրագոյն կօշիկներ՝ բութ քթերով։ Նա նայում էր կամ դէպի

Կողքը կամ դէպի ետեւ—իհէ, յանկարծ կիսաձայն բացականչեց Շուրինը.—չը լինի Զօնա Նիկիտիշնան յետ-յետ է նայում. եկ գնամ նրա մօտ: Ելենա Նիկոլաևնան հիմա ինձ արհամարհում, իսկ քեզ, Անդրէյ Պետրովիչ, յարդում է, որ միւնոյնն է դուրս դալիս: Է՞հ, գնամ, բաւական է որքան թթուեցի. իսկ քեզ, բարեկամ, խորհուրդ եմ տալիս բուսաբանել. քո զրութեան մէջ դա ամենալաւն է, ինչ կարող ես հնարել: Եւ այդ գիտական անապէտից էլ օդտակար: Մնաս բարով: Շուրինը վազելով մօտեցաւ Զօնային, թե՛ը կեռացրած տուեց նրան և ասաց. «Ihre Hand, Madame»: Վեր առաւ նրան և առաջ անցաւ: Ելենան կանգ առաւ, իր մօտ կանչեց Յերսենեվին և նոյնպէս վերցրեց նրա թեր, բայց շարունակում էր խօսել ինսարօվի հետ: Նա հարցնում էր վերջինից, ինչպէս է նրա լեզուով հովիտների շուշանը, թխկին, կաղնին, լորենին... («Բօլգարիա», մասեց իւղդ Անդրէյ Պետրովիչը):

Յանկարծ առջեւից լսուեց մի ճիչ: Ամենքը բարձրացրին գլուխները: Շուրինի սիգարամանը թռչում էր դէպի թփերը, շպրտուած լինելով Զօնայի ձեռքով: «Սպասէք, ես այդ բանը այդպէս չեմ թողնի», բացականչեց Շուրինը, մտաւ թփի մէջ, գտաւ այնտեղ սիգարամանը և նոր էր վերադարձել Զօնայի մօտ, բայց դէպ չէր կարողացել մօտենալ նրան, երբ էլի նորից սիգարամանը թռչում էր ճանապարհի վրայով: Չորս-հինգ անգամ կրկնուեց այդ բանը: Շուրինը շարունակ քրքջում էր և սպառնում, իսկ Զօնան միայն կամացուկ ժպտում էր և կատարի նման ծոմուում: Վերջապէս Շուրինը բռնեց նրա մատները և այնպէս սեղմեց, որ նա ծուաց և յետոյ երկար փչում էր մատներին, այնպէս ցոյց տալով թէ բարեկացած է, իսկ Շուրինը այդ ժամանակ ինչ որ բան էր երգում նրա ականջում:

— Զարաձճիներ... ջահէլ-ջհուլիներ են, ուրախուրախ նկատնց Աննա Վասիլեվնան Ուվար Իվանովիչին:

Նա խաղացրեց մատները:

— Տես ինչպիսին է եղել Զօնա Նիկիտիշնան, ասաց թերս սենեվը Ելենային:

— իսկ Շուրինը, պատասխանեց նա:

Մինչ այս մինչ այն՝ ամբողջ խումբը մօտեցաւ հովանոցին, որ յայտնի էր «Միլօվիդօվայի հովանոց». անունով և կանգ առաւ որ զմայլուի, զիտելով Ցարիցինեան լճակների տեսարանը: Այդ լճակները ընկած էին մէկը միւսի ետեւից մի քանի վերստ ասարածութեան վրայ: Միապաղաղ անտառները մթին էին տալիս նրանց ետեւից:

Խոտը, որ ծածկում էր բլուրի լանջը մինչև գլխաւոր լիճը, տալիս էր ջրին մի անսովոր փայլուն, զմրուխտի գոյն: Ոչ մի տեղ, նոյն իսկ ափի մօտ, մի ալիք չէր կազմւում, փրփուր չէր սպիտակին տալիս. նոյն իսկ մի թեթեւ երերում էլ չէր անցնում ջրերի հարթութեան վրայով: Թւում էր թէ ապակիի պաղած զանդուածն է, ծանր ու փայլուն, լցուել մի ահագին աւազանի մէջ և երկինքը մտել է նրա յատակը, իսկ խուճուճ ծառերը անշարժ նայում էին իրանց նրա թափանցիկ գըրկում: Ամենքը երկար և լուռ զմայլում էին այդ տեսարանով. նոյն իսկ Շուրինը հանդարտուել էր, նոյն իսկ Զօնան մտածմունքների մէջ էր ընկել: Վերջապէս ամենքը միարան կամեցան զրունել ջրի վրայ: Շուրինը, ինսարօվը և Յերսենեվը խոտերի միջով դէպի ցած վազեցին, աշխատելով իրար ետեւից համեմել: Նրանք գտան մի մնծ, ներկած նաւակ, ճարեցին երկու թիավարներ և կանչեցին կանանց: Կանայք իջան նրանց մօտ. Ուվար Իվանովիչը զգուշութեամբ իջաւ կանանց ետեւից: Մինչև նա կը մտնէր նաւակը, մինչեւ կը նստէր, շատ ծիծառ եղաւ: «Տես, աղա, մեզ ջրի տակը չածես, նկատեց թիավարներից մէկը, մի ջահէլ պաճոյ երիտասարդ, որ հազար ունէր ալէքսանդրիական շապիկ:—Հը, հը, հերիք քրքրուես, արտասանեց Ուվար Իվանովիչը:

Նաւակը հեռացաւ ափից: Երիտասարդները ուղում էին վերցնել թիաները, բայց նրանցից միայն Ինսարօվը գիտէր թիավարել: Շուրինը առաջարկեց խմբովին ոռուսական մի որ և է երգ երգել և ինքը սկսեց «Բնիք ու մատուցք» երգը... Յերսենեվը, Զօնան և նոյն իսկ Աննա Վասիլեվնան ձայնակցեցին (ինսարօվը չը գիտէր երգել), բայց ձայների շփոթութիւն գուրս եկաւ. երրորդ տունը երգելիս երգիները շփոթուեցին և միայն Յերսենեվը փորձում էր շարունակել բասով «Անպես Յա Յունակ»: Բայց շուտով նոյնպէս շփոթուեց: Թիավարները միմնանց աչքով էին անում և լուռ իրանց ատամներն էին մերկացնում:—Ի՞նչ է, դիմեց նրանց Շուրինը, աղաները երգել չը գիտէն, հա:—Ալէքսանդրիական շապիկ հազար երիտասարդը միայն շարժեց զլուխը:—Որ այդպէս է, սպասիր, պաճոյ, ասաց Շուրինը, մինք քեզ ցոյց կը տանք: Զօնա Նիկիտիշնա, երգեցէք մեզ համար Նիկերմէյերի «Լե լաչ»-ը. մի թիավարէք, էյ գուք:—Թաց թիաները բարձրացան օղի մէջ, ինչպէս թեւեր և այդպէս էլ սառան, վայր թափելով կաթիւներ, որոնք ծձլում էին ջրի վրայ. նաւակը մի քիչ էլ լողաց և կանգնեց, հազիւ նկատելի կերպով պտուելով ջրի վրայ, ինչպէս կարապ: Զօնան նազ էր անում, կոտրատում էր... Ա-

llons! կազմաքանօրով ասաց Աննա Վասիլեվսան... Զօնան դէն գցեց զիսարկը և երգեց. «O lac, l'année à peine a fini sa carrière. .»

Նրա փոքրիկ, բայց մաքուր ձայնիկը հէնց կ'ասես թռաւ
լճակի, հայելու վրայով. հեռու անտառներում արձագանք էր
տալիս իւրաքանչիւր խօսքը. թւում էր թէ այնտեղ էլ մէկը
երգում էր պարզ և խորհրդական, բայց ոչ մարդկային, ոչ եր-
կրային ձայնով: Երբ Զօյեան վերջացրեց, առեղերեայ հովանոց-
ների մէջից լսուեց բարձրաձայն պրավօ» և այնտեղից գուրս
վաղեցին մի քանի կարմրերես գերմանացիներ, որոնք եկել էին
ծարիցինո քէֆ անելու: Նրանցից մի քանիսը առանց սիւր-
տուկի էին, առանց փողպատի, նոյն իսկ առանց ժիշտի և
այնքան աղմկալի կերպով էին «ԵՇԱ» կանչում, որ Սննա Վա-
սիլեվսան հրամայեց շուտով նաւակը ուղղել դէպի լճակի միւս
ծայրը: Բայց նախ քան նաւակը մօտեցել էր ափին, Ուկար Ի-
վանովիչին մի անդամ էլ աջողուեց զարմացնել իր ծանօթնե-
րին. Նկատելով, որ անտառի մի կողմում արձագանքը մի ա-
ռանձին պարզութեամբ էր կրկնում իւրաքանչիւր ձայնը, նա-
յանկարծ սկսեց լորի պէս կանչել: Սկզբում ամենքը վեր թը-
ռան, բայց իսկոյն զգացին մի ճշմարիտ բաւականութիւն, մա-
սաւանդ որ Ուկար Իվանովիչը ճիշտ լորի պէս էր կանչում:
Այդ բանը նրան խրախուսեց և նա փորձեց մլաւել. բայց մլա-
ւոցը այնքան լաւ չէր գուրս գալիս. նա մի անդամ էլ լորի
պէս կանչեց, նայեց ամենքին և լսեց: Շուրբինը վրայ ընկաւ որ
համբուրէ սրան, նա դէն հրեց Շուրբինին: Այդ բոպէին նաւա-
կը մօտեցաւ ափին և ամբողջ ընկերութիւնը ափ իջաւ:

Մինչ այս մինչ այս կառապանը լաքէի և աղախնու հետ
բերան կողովները կառքից և ճաշ պատրաստեցին խոտի վրայ,
հինաւուրց լորենիների տակ: Ամենքը նստեցին տարածած ուժ-
ուոցի շուրջը և սկսեցին ուտել պաշտեաը և ուրիշ խորտիկները:
Ամենքը շատ լաւ ախորժակ ունեին, իսկ Աննա Վասիլեվնան
մի գլուխ հիւրասիրում էր և թափանձում էր իր հիւրերին, որ
աւելի շատ ուտեն. նա հաւատացնում էր, որ բաց օգում զա
շատ առողջարար է: Այս տեսակ խօսքերով նա դիմեց և Ուվար
Խվանօվիչին: «Միամիտ մնացէք», փնթփնթաց նա լցրած բերա-
նով: «Ի՞նչ հիանալի օր է տուել Աստուած», կրկնում էր ան-
դադար Աննա Վասիլեվնան: Նրան ճանաչել չէր կարելի. նա
կարծես քսան տարով ջահելացել էր: Բերսենեվը այդ բանը
յայտնեց նրան: «Այն, այո, պատասխանեց նա. ես էլ, մի ժա-
մանակ, այնպէս էի որ... տանից ինձ չէին դուրս գցի»: Շու-
բինը ընկերացաւ Զօեալին և անդադար գինի էր ածում նրա

համար, Զօեան հրաժարւում էր, Շուրբինը նրան հիւրասիրում էր և վերջացնում էր նրանով, որ ինքն էր խմում բաժակը և յետոյ էլի հիւրասիրում էր Զօեային, նա նոյնպէս հաւատացնում էր Զօյեային թէ կամենում է խոնարհեցնել իր զլուխը նրա ծնկների վրայ. Զօեան ոչ մի կերպ չէր ուղում թոյլ տալ նրան «այդքան մեծ ազատութիւն», Ելինան ամենքից լուրջ էր երեսում, բայց նրա սրտում մի այնպիսի հրաշալի հանգստութիւն էր տիրում, որի նմանը նա վաղուց չէր զգացել: Նա իրան զգում էր անսահման բարի, և ցանկանում էր ունենալ իր մօտ ոչ միայն ինսարօվին, այլ և Բիրսենելիքին... Անդրէյ Պետրօվիչը աղոտ կերպով հասկանում էր թէ ինչ է զա նշանակում և ծածուկ հառաչում էր:

Ժամերը թռչում էին. երեկոն մօտենում էր: Անսա Վա-
սիլեվիսան յանկարծ սկսեց անհանդատանալ: «Ա՚ի, Աստուած,
ոքան ուշ է այժմ», ասաց նա: «Կերանք, խմեցինք ժամանակ
և վերջացնել»: Նա գէս ու դէն ընկաւ, և ամենքն էլ գէս ու
գէն ընկան, վեր կացան ու գնացին գէպի ամրոցը, ուր գտն-
ուում էին կառքերը: Անցնելով ճակների մօտով, ամենքը կանդ
տուան, որ վերջին անդամ զմայլուեն Յարիցինօի տեսքով: Ամեն
տեղ այրուում էին իրիկնապահի պայծառ զոյները: Երկին-
քը կարմրած, ոսկի տերեները ծփալով փալլում էին, յուզուած,
վեր կացած քամուց. հեռաւոր ջրերը հալրւած ոսկու պէս էին
հոսում, ծառերի մութ կանաչներից խիստ կերպով զանազան-
ուում էին կարմրագոյն աշտարակները և հովանոցները, որոնք
այդու այս ու այն կողմերում էին ցրուած: «Մնաս բարե, Յա-
րիցինօ, չե՛ք մոռանայ մենք այսօրուայ ճանապարհորդութիւ-
նը», արտասանեց Անսա Վասիլեվիսան... Բայց այդ վայրկեանին,
կարծես թէ վերջին խօսքերը հաստատելու համար, տեղի ու-
նեցաւ մի օտարութի պատահար, որը ճիշտ որ այնքան հեշտ չէր
լինի մոռանալ:

Ահա ինչ էր դա. զեռ չէր վերջացրել Աննա Վասիլիկան
իր հրամեցափ ողջոյնը, որ ուղարկում էր Ցարիցինոխն, եթ
յանկարծ, մի քանի քայլ հեռու նրանից, սիրիզի բարձր թփի ե-
տեռւմ, լսուեցին անկարգ բացականչութիւններ, քըրքից և
աղաղակիներ—և զզզզուած տղամարդկանց մի ամբողջ խումբ,
երգի այն իսկ սիրողների խումբը, որոնք այնքան աշխոյժով
ծափահարել էին Զօհային, դուրս թափուեց ճանապարհը: Պա-
րոն սիրողները խմիչքից սաստիկ տաքացած էին երեռւմ: Տես-
նելով կանանց, նրանք կանգ առան, բայց նրանցից մէկը, որ
ունէր տհաղին հասակ, եղան պարանոց և եղան բորբոքուած
աչքեր, բաժանուեց ընկերներից և անջորը կերպով գլուխ տա-

լով ու քայլելիս երերալով, մօտեցաւ երկիւղից քարացած Աննա Վասիլեվսային:

—Բօնժուր, մադամ, խօսեց նա խոպոտ ձայնով,—ինչպէս է ձեր առողջութիւնը:

Աննա Վասիլեվսան յետ ու յետ գնաց:

—Ինչո՞ւ դուք, շարունակեց վիթխարին մի վատ ոռուսերէնով,—չը կտմեցաք երգել ես, երբ մեր ընկերները կանչում էին ես, բրավօ, ֆօրօ...

—Այն, այն, ինչո՞ւ չէիք երգում, լսուեց նրա ընկերների շարքում:

Ինսարօվը ուզեց առաջ քայլել, բայց Շուրինը կանգնեց նրան և ինքը կանգնեց գերմանացու և Աննա Վասիլեվնայի մէջ տեղը:

—Թոյլ տուէք, սկսնց նա,—յարգելի անծանօթ, արտայայտել ձեզ այն անկեղծ զարմանքը, որի մէջ դուք գցում էք մեզ ամենքիս ձեր արարմունքներով: Դուք, որքան ես կարող եմ դատել, պատկանում էք կովկասեան ցեղի սպասնական ճիւղին. հետևաբար մենք պէտք է ենթագրենք որ դուք ծանօթ էք աշխարհիկ օրինաւորութեան, և սակայն խօսում էք մի տիկնոջ հետ, որին դուք չէք եղել ներկայացրուած: Հաւատացէք, մի ուրիշ ժամանակ ես, մանաւանդ, շատ ուրախ կը լինէի մօտենալ ձեզ, որովհետև նկատում եմ ձեր մէջ մսանների այնպիսի գերբնական զարգացում եւչերս, triceps և deltoïdaeus, որ, ինչպէս քանդակագործ, մի խսկական երջանկութիւն կը համարէի ընդօրինակել ձեզ. բայց այս անգամ մեզ հանգիստ թողէք:

«Յարգելի անծանօթը» լսեց Շուրինի ամբողջ ճառը, արհամարհանքով գլուխը դէպի մի կողմը թեքած և ձեռքերը կողքերին դրած:

—Ես ոչինչ չեմ հասկանում թէ ինչ էք դուք ասում, խօսեց նա վերջապէս: Դուք գուցէ կարծում էք թէ ես կօշկակար եմ կամ ժամագործ: Է... Ես օֆիցեր եմ, ես աստիճանաւոր եմ, համ:

—Ես չեմ էլ կասկածում այդ մասին, սկսել էր Շուրինը...

—Իսկ ես ահա ինչ եմ ասում, շարունակեց անծանօթը, հեռացնելով նրան իր ուժեղ ձեռքով, ինչպէս մի ճիւղ, ճանապարհից.—Ես ասում եմ. ինչո՞ւ դուք չերգեցիք ես, երբ մենք կանչեցինք ես: Իսկ այժմ ես այս ժամին, այս բոպէին կը հեռանամ, միայն հարկաւոր է, որ այս օրիորդը, ոչ թէ այս տիկինը, ոչ, սա հարկաւոր չէ, այլ սա կամ սա (նա ցոյց տուեց ելենային և Զօնային) տայ ինձ ետք Kuss, ինչպէս մենք ասում ենք գերմաներէն, պաշիկ, այն, ինչ կայ, դա ոչինչ բան է:

—Ոչինչ է, einen Kuss, դա ոչինչ է, նորից լսուեց ընկերների շարքում:—Jh! der Sakramenter! ասաց, ծիծաղից խեղդուելով, մի արդէն բոլորովին վիշնած գերմանացի:

Զօնան բոնեց ինսարօվի ձեռքից, բայց նա դուրս պրծաւ նրա ձեռքից և ուղիղ կանգնեց բարձրահասակ լրբի դիմաց:

—Հաճեցէք հեռանալ այստեղից, ասաց նա նրան մի ցած, բայց խիստ ձայնով:

Գերմանացին ծանր կերպով քրքջաց:—Ի՞նչպէս հեռանար Այ, ես միրում եմ այս: Մթէն ես էլ չեմ կարող քէֆ անել: Ի՞նչպէս թէ հեռանալ, ինչո՞ւ հեռանալ:

—Այն պատճառով, որ դուք յանդկնեցիք անհանգստացնել տիկնոջը, ասաց ինսարօվը և յանկարծ սփրինեց:—այն պատճառով որ դուք հարբած էք:

—Ի՞նչպէս, ես հարբած եմ: Լսում էք: Hören Sie das Herr Provvisor? Ես օֆիցեր եմ, իսկ նա համարձակում է... Այժմ ես պահանջում եմ Satisfaction! Einen Kuss will ich! (Ես ուզում եմ մի պաշ):

—Եթէ դուք էլի մի քայլ կ'անէք, սկսեց ինսարօվ...

—Հա: Յետոյ ինչ:

—Ես ձեզ ջուրը կը գցեմ:

—Զուրբ: Herr Je! Միայն այդ: Էյ, տեսնենք, շատ հետաքրքրական է, թէ ինչպէս ջուրը կը գցէք...

Պարոն օֆիցէրը բարձրացրեց ձեռքերը և գէպի առաջ թեքուեց, բայց յանկարծ մի անսովոր բան տեղի ունեցաւ. Նա տնքաց, նրա ահագին իրանը երերաց, բարձրացաւ գետնից, ոտները շարժուեցին օդի մէջ և գեռ կանաքը չէին կարողացել ճալ, գեռ ոչ ոք չէր հասկացել թէ ինչպէս պատահեց այդ բանը, պարոն օֆիցերը իր ամբողջ մարմնով, մի ծանր ճղփիւնով թրըմփաց լճակի մէջ և իսկոյն անյատացաւ ալեկոծուած ջրի տակ:

—Այ, միաբան ճշացին կանայք:

—Mein Gott!—լսուեց միւս կողմից:

Անցաւ մի բոպէ... և կոլոր զլուխը, որին ամեն կողմից կպել էին թաց մազերը, երեւան եկաւ ջրի վրայ. նա, այդ զլուխը, պղպջակներ էր արձակում, երկու ձեռքեր ջղածպարա շարժուում էին նրա շրթունքների մօտ...

—Նա կը խեղդուի, աղատեցէք նրան, աղատեցէք, կանչեց Աննա Վասիլեվսան ինսարօվին, որ կանգնած էր ափին, ոտները միմեանցից հեռու զրած և խոր չնչում էր:

—Դուրս կը գայ, խօսեց նա մի արհամարհական և անխիղճ անփութութեամբ:—Գնանք, աւելացրեց նա, բռնկով Աննա Վասիլեվսայի ձեռքը,—գնանք, Ուկար իվանովիչ, Ելենա

Նիկոլաելիսա:—Ա... ա... օ... օ..., լսուեց այդ վայրկեանին դժբախտ գերմանացու հեծեծանքը. նա արդէն կարողացել էր բռնել ափում բռնած եղէցնից:

Ամենքը գնացին ինսարօվի ետեից և ամենքը պիտի անցնէին քէֆ անողների ընկերութեան մօտով: Բայց զրկուելով իրանց գլխից, քէֆ անողները հանդարաւուել էին և մի խօսք անգամ չառացրն. միայն մէկը, նրանցից ամենաքաջը, փնփընթաց, թափահարելով զլուխը. «Բայց այդ... այդ Աստուած զիտէ թէ... դրանից յետոյ». իսկ միւսը մինչև իսկ վերցրեց զըլիսրկը: Ինսարօվը նրանց շատ ահարկու էր երեւում. և դա առանց պատճառի չէր. մի ինչ որ չար, ինչ որ վտանգաւոր բան էր երեւան եկել նրա դէմքի վրայ: Գերմանացիները շտապեցին դուրս հանել ջրից իրանց ընկերին և նա, հէնց որ կանգնեց պինդ հողի վրայ, սկսեց արտասուալից հայհոյել և բղաւել այդ ռոռուս սրիկաներից ետեւից, թէ ինքը պիտի գանդառուի, թէ կը գնայ նոյն իսկ նորին գերազանցութիւն կռմս Փօն-Կիզերիցի մօա...

Բայց «ռոռուս սրիկաները» ուշագրութիւն չէին դարձնում նրա աղաղակների վրայ և որքան կարելի է շտապով գնում էին դէպի ամրոցը. Ամենքը լուռ էին, քանի որ այգու մէջ էին գնում, միայն Աննա Վասիլելիսան թիթիւ կրպով ախ էր քաշում: Բայց ահա նրանք մօտեցան կառքերին, կանգ առան. և մի անգուսպ, անընդհատ ծիծաղ բարձրացաւ նրանց մէջ, ինչպէս Հոմերոսի երկնաբնակների մէջ: Առաջինը խելազարի պէս սուր կերպով ծիծաղել սկսեց Շուրբինը, նրա հետեւեց թերսենեվը, յետոյ Զօեան կչկչաց. Աննա Վասիլելիսան էլ յանկարծ ծիծաղից թուլացաւ, նոյն իսկ Ելենան էլ չը կարողացաւ չը ժպտալ: Նոյն իսկ Ինսարօվն էլ ի վերջոյ չը գիմացաւ: Բայց ամենից բարձր, ամենից երկար և ամենից թունդ քրքզում էր Ուվար իվանօվիչը. նա քրքզում էր այնքան, որ կողերը ծակում էին, որ փոշտում էր, մինչև խեղդուելու աստիճանին էր հասնում: Փոքր ինչ հանդարաւում էր, բայց էլի սկսում էր արտասուածների միջով. «Ես էլ... ասում եմ... այս ինչ թրիսկաց... իսկ դա... նա էր... տափակած»: Եւ այս վերջին, ջղաձգաբար դուրս մղուած, խօսքի հետ քրքզոցի մի նոր պայմթիւն ցնցում էր նրա ամրող կազմուածքը: Զօեան աւելի ևս զրգուում էր նրան: «Ես, ասում էր նա, տեսնում եմ, ոտները օդի մէջ»...—Այն, այն, նրա խօսքը խից Ուվար իվանօվիչը,—ոտները, ոտները... մէկ էլ թրը՝ մի... տափակած:—Եւ ինչպէս պարոնը արաւ այդ բանը, չը որ գերմանացին նրանից երեք անգամ մեծ էր», հարցըց Զօեան:—Ես ձեզ կը զեկուցանեմ, պատասխանեց,

աչքերը սրբելով Ուվար իվանօվիչը,—ևս տեսայ. մի ձեռքով բռնեց նրա գոտկատեղից, ոտը գէմ տուեց և այնպէս թրմիացրեց: Ես էլ լսում եմ. ինչ բան է սա... իսկ այդ նա է... տափակած...

Կառքերը վազուց արդէն գնում էին, Յարիցինօի ամրոցը ձածկուել էր հեռուում, իսկ Ուվար իվանօվիչը չէր կարողանու հանգստանալ: Շուրբինը, որ էլի նրա հետ էր նստած կառքի մէջ, վերջապէս ամաչացրեց նրան:

Իսկ Ինսարօվը ամաչում էր: Նա նստած էր կառքի մէջ Ելենայի գիմաց (կատապանի մօտ նստել էր Տերսենեվը) և լուս էր. Ելենան էլ լուռ էր: Ինսարօվը կարծում էր թէ Ելենան նըրան դատապարտում է. բայց Ելենան չէր զատապարտում նրան: Առաջին րոպէին նա շտա վախեց. յետոյ նրան ապէեցրեց Ինսարօվի գէմքի արտայայտութիւնը. իսկ զրանից յետոյ նա շարունակ խորհրդածութիւններ էր անում: Բոլորովին պարզ չէր նրա համար թէ ինչի մասին էին իր խորհրդածութիւնները: Օրուայ ընթացքում նրա մէջ կազմուած զգացմունքը անյատացել էր. այդ նա հասկանում էր. բայց այդ զգացմունքը փոխուել էր մի ուրիշ զգացմունքի, և այս բանը նա այժմ չէր հասկանում: Partie de plaisir-ը չափազանց երկար շարունակուեց. երեկոն աննկատելի կերպով գիշեր դարձաւ: Կառքը արագ գնում էր կամ հասունացող արտերի արանքով, ուր օղը հեղձուկ էր և հոտաւէտ, հացի հոտն էր բերում, կամ թէ լայն մարգագետինների երկարութեամբ, սրանց թարմութիւնը թեթև ալիքների պէս խփում էր գէմքին: Երկնքի ծայրերը կարծես ծխում էին: Վերջապէս գուրս եկաւ ազօտ և կարմիր լուսինը: Աննա Վասիլելիսան ննջում էր. Զօեան գլուխը հանեց պատուհանից և նայում էր ճանապարհին: Ելենան վերջապէս լիչեց որ մի ժամկից աւել է ինչ չէ խօսել Ինսարօվի հետ: Նա մի տննչան հարց տուեց նրան, Ինսարօվը իսկոյն ուրախաւթեամբ պատասխանեց նրան: Օգի մէջ սկսեցին տարածուել ինչոր անորոշ հնչիւններ, կարծես, հեռուում խօսում էին հազարաւոր ձայներ. Մուկուան էր, որ գալիս էր նրանց առաջը: Առջեռմ պսպացին փոքրիկ երակներ. դրանց թիւը գնալով աւելանում էր. վերջապէս, անիւնների տակ ձայն հանեցին քարերը: Աննա Վասիլելիսան զարթնեց. ամենքը խօսեցին կառքի մէջ, թէն ոչ ոք այլ ևս չէր կարող լսել թէ խօսքը ինչի մասին է, այնքան սաստիկ էր որոտում փողոցի սալայատակը երկու կառքերի և ձիաների երեսուն երկու ոտների տակ: Երկար և տաղտկալի թուաց ճանապարհորդութիւնը Մուկուայից կունցօփ. ամենքը քնած էին կամ լուռ, սեղմելով իրանց գլուխները զանազան

անկիւնների. միայն Ելենան չէր փակում աչքերը. նա չէր հեռացնում իր հայեացը Ինսարօվի մութ պատկերից, Շուբինի վրայ թափիծ էր իջնլ. թեթև քամին փչում էր նրա աչքերին և զրգում էր նրան. նա փաթաթուեց վերարկուի օձիքի մէջ և քիչ էր մնում որ լաց լինի: Ուվար իվանօվիչը շէնքով շնորհքով խոռմիացնում էր, աջ ու ձախ օրօրուելով: Կառքերը կանգ առան վերջապէս: Երկու լաքէներ հանեցին Աննա Վասիլիվային կառքից. տիկինը բոլորովին քայլայուել էր և հրաժաշտի ողջոյն տալով իր ուղեկիցներին, յայտարարեց թէ ինքը ողջ չէ, մեռած է. ուղեկիցները սկսեցին շնորհակալութիւն յայտնել նրան, իսկ նա միայն կրկնեց. «ողջ չեմ, մեռած եմ»: Ելենան առաջին անգամ սեղմեց Ինսարօվի ձեռքը և երկար ժամանակ նստած էր պատուհանի տակ, շորերը չէր հանում: իսկ Շուբինը ժամանակ գտաւ շնչալու գնացող Բերսենեվի ականջում:

— Ի՞նչպէս ասես թէ հերոս չէ. հարբած գերմանացիներին ջուրն է գցում...»

— Իսկ դու այդ էլ չարիր, պատասխանեց Բերսենեվը և զնաց տուն Ինսարօվի հետ:

Արշալոյսը արդէն բացւում էր, երբ երկու բարեկամները վերադարձան իրանց բնակարանը: Սրեգակը գեռ չէր երեւում, բայց արդէն առաւտուեան ցուրտը եկաւ անցաւ, ալեոր ցողը ծածկեց խոտերը և առաջին արտուատիկները հնչեցնում էին իրանց ճայնը բարձր, բարձր մի տեղ, օդային կիսամութ մի անդունդի մէջ, որտեղից, միայնակ աչքի պէս, նայում էր խոշոր, վերջին աստղը:

XVI

Ինսարօվի հետ ծանօթանալուց շատ չանցած՝ Ելենան սկսեց (հինգերորդ թէ վեցերորդ անգամը) իր յիշատակարանը: Ահա կտորներ այդ յիշատակարանից.

Յունիսի..., Անդրէյ Պետրօվիչը ինձ համար գրեն է բերում, բայց ես նրանց կարդալ չեմ կարողանում: Խոստովանակ նրան այս բանը—խղճահարւում եմ. վերադարձնել գրքերը, սուտ խօսել, ասել թէ կարգացել եմ—չեմ ուղում: Ինձ թւում է թէ այս բանը նրան կը վշտացնէ: Նա ինձ հսկում է ամեն բանի մէջ: Նա, կարծեմ, ինձ շատ մօտ է: Շատ լաւ մարդ է Անդրէյ Պետրօվիչը:

... Ի՞նչ եմ ես ուղում: Ինչից է որ իմ սրակի մէջ այնպիսի ծանրութիւն, թափիծ եմ գցում: Ինչու ես նախանձով եմ

նայում թոչող թևաւորներին: Թւում է թէ ես էլ կը թաշէի նրանց հետ, կը թաշէի—ուր, չը գիտեմ, միայն հեռու այստեղից եւ միթէ մեղք չէ այս ցանկութիւնը: Ես այստեղ մայր, հայր, ընտանիք ունեմ: Միթէ ես նրանց չեմ սիրում: Ոչ, ես չեմ սիրում նրանց այնպէս, ինչպէս կ'ուղէի սերել: Ինձ համար սարսափելի է արտասանել այս բանը, բայց սա ճշմարտութիւն է: Գուցէ ես շատ մեղաւոր եմ: գուցէ հենց դրանից է որ ինձ համար հանգստութիւն չը կայ: Մի ինչ որ ձեռք ընկած է ինձ վրայ և ճնշում է ինձ: Կ'ասես թէ բանտում եմ ես և ահա իսկոյն ինձ վրայ կը թափուեն պատերը: Ինչու ուրիշները այս մի և նոյնը չեն զգում: Ուրիշ ում պիտի սիրեմ ես, եթէ սառն եմ դէպի մերոնց: Երեխ, հայրիկը ճշմարիտ է. նա յանդիմանում է ինձ թէ ես միայն շներին և կատուներին եմ սիրում: Պէտք է այս մասին մտածել: Ես քիչ եմ աղօթում: պէտք է աղօթել... Եւ օակայն, թւում է թէ ես կարող էի սիրել:

... Ես էլի քաշւում եմ, երբ պարոն ինսարօվի հետ եմ լինում: Զը գիտեմ ինչից է սա. ես, կարծեմ, շատ ջանէլ չեմ, իսկ նա այնքան պարզ և բարի մարդ է: Երբեմն նրա դէմքը շատ լուրջ է լինում: Երեսում է որ նրա բանն ու գործը մենք չենք: Ես այս զգում եմ, և ինձ համար կարծես թէ ամօթ է խլել նրա ժամանակը: Անդրէյ Պետրօվիչը—ուրիշ բան է: Ես պատրաստ եմ շատախօսել նրա հետ թէկուզ մի ամբողջ օր: Բայց նա էլ ինձ հետ մի գլուխ ինսարօվի մասին է խօսում: Եւ ինչ սարսափելի մանրամասնութիւններ: Ես այս զիշեր երազում տեսայ նրան խէնջարը ձեռքին: Եւ որպէս թէ նա ասում էր ինձ: «Ես քեզ էլ կը սպանեմ, ինձ էլ»: Ի՞նչ յիմարութիւններ:

... Օհ, եթէ մէկն ինձ ասէր թէ ահա ինչ պիտի անես զու: Լինել բարի—սա քիչ է. անել բարութիւն... այս սա զըլ խաւորն է կեանքի մէջ: Բայց ինչպէս բարութիւն անել: Ա՛հ, եթէ ես կարողանայի իմ տէրը լինել Չեմ հասկանում թէ ինչու ես այսքան յաճախ եմ մտածում պարոն ինսարօվի մասին: Երբ նա զալիս է, նստաւմ է և լսում է ուշադրութեամբ, իսկ ինքը ջանք չէ անում, գէս ու գէն չէ ընկնում, ես նայում եմ նրան և ինձ համար այդ ախորժելի է—բայց այսքանը միայն, իսկ երբ նա գնում է, ես շարունակ յիշում եմ նրա խօսքերը, նեղանում եմ ինձ վրայ և նոյն իսկ յուղում եմ... ինքս էլ չը դիտեմ թէ ինչու: (Նա վատ է խօսում ֆրանսերէն, բայց այդ բանից չէ ամաչում—սա ինձ դուր է գալիս): Սակայն կայ այն բանը, որ ես միշտ շատ եմ մտածում նոր անձերի մասին: Նրա հետ խօսելիս ես յանկարծ յիշելի մնի մառանապետ Վասիլիին,

որ մի այրուող խրճիթից դուրս հանեց ոտներից զուրկ մի ծերունու, իսկ ինքը քիչ մնաց որ զոհուի հրդեհն։ Հայրիկս նրան կտրիմ անուանեց, մայրիկս հիմք ոռոբլի տուեց նրան, իսկ ես ուղում էի նրա ոտներն ընկնեմ։ Նա էլ պարզ, նոյն իսկ յիմար դէմք ունէր, և յետոյ հարբեցող դարձաւ։

... Ես այսօր մի ուրու ունի մի մուրացիկ կնոջ, իսկ նա ինձ ասաց, ինչու դու այդքան ախուր ես։ Ես իսկի չէի ել կարծում թէ իմ տեսքը տիրալի է, կարծում եմ որ դա նրան նից է, որ ես մենակ եմ, միշտ մենակ իմ ամբողջ բարութեան, իմ ամբողջ չարութեան հետ։ Զը կայ մէկը, որին ձեռք մեկնես։ Ով մօտենում է ինձ, նա հարկաւոր չէ, իսկ ում ես եմ ուղում, նա անցնում է իմ մօտով։

... Ես գիտեմ, ինչ է եկել ինձ այսօր, իմ գլուխը շփոթւում է, ես պատրաստ եմ ծունկ չոքել և խնզրել, աղաչել, որ ինձ ինայեն Զը գիտեմ ով է և ինչպէս, բայց ինձ կարծես սպանում են և ես իմ մէջ աղաղակում եմ և վրդովում։ Ես լալիս եմ և չեմ կարող լոել... Տէր Աստուած, Տէր Աստուած։ Դապիր իմ մէջ այս բուռն ձգտումները։ Դու միայն կարող ես այդ, մնացած անզօր է, ոչ իմ չնշին ողորմութիւնները, ոչ զրաղմունքները, ոչինչ, ոչինչ չէ կարող ինձ օգնել։ Աղախին կը մտնէի մի տեղ, ճշմարիտ։ այդպէս թեթեւութիւն կը զզայի։

Ինչի՞ս է ջահէլութիւնը, ինչու եմ ապրում, ինչու հոգի ունեմ, այս բոլորը ինչու համար է։

... Ինսարօվը, պարոն Ինսարօվը,—ես, ճշմարիտ, չը գիտեմ ինչպէս զրեմ, —շարունակում է զրաւել ինձ։ Ես ուղում իմ իմանալ թէ ինչ կայ նրա հոգու մէջ։ Նա, կարծեմ, այն եմ իմանալ թէ ինչ կայ նրա հոգու մէջ։ Նա, կարծեմ, այն բաց է, այնքան մատչելի, իսկ ես ոչինչ չեմ տեսնում։ Բայց է, այնքան մատչելի, իսկ ես ոչինչ չեմ տեսնում։ Թէ երեմն նա նայում է ինձ մի տեսակ փորձիչ հայեացքով... թէ սա միայն իմ երեւակայութիւնն է։ Պօլը ինձ շարունակ ջըգրացնում է—ես բարկացած եմ Պօլի վրայ։ Ինչ է նրան հարկաւոր նա սիրահարուած է ինձ վրայ... բայց ինձ հարկաւոր չէ նրա սէրը, նա Զօեպի վրայ էլ է սիրահարուած։ Ես անսարք եմ նրա վերաբերմամբ, նա ինձ երէկ ասաց թէ ես չեմ դար եմ նրա պատարերմամբ, նա ինձ ասաց թէ ես է սա ճիշտ չէ։ Սա կարողանում լինել անարդար կիսով չափ... սա ճիշտ չէ։ Սա շատ վատ է։

Ա՛հ, ես զգում եմ, որ մարդուն հարկաւոր է անբախտութիւն, կամ աղքատութիւն կամ հիւանդութիւն, թէ չէ հպարտութեամբ կը մոռանաս չափ ու սահման։

... Ինչու Անդրէյ Պետրօվիչը պատմեց ինձ այսօր այդ երկու բոլգարների մասին։ Նա կարծես գիտմամբ պատմեց ինձ։

Ի՞նչ բան ունեմ ես պարոն Ինսարօվի հետ։ Ես բարկացած եմ Անդրէյ Պետրօվիչի վրայ։

... Գրիչ եմ վերցնում և չը գիտեմ ինչպէս սկսել։ Որքան անսպասելի կերպով նա այսօր խօսք սկսեց ինձ հետ այգում։ Որքան նա քաղցր էր և գիւրավստահ։ Ի՞նչպէս այս բանը չուտ կատարուեց, կարծես մենք հին, հին բարեկամներ ենք և միայն այժմ ճանաչեցինք իրար։ Ի՞նչպէս էր որ ես մինչև այսօր չը կարողացայ ճանաչել նրան։ Որքան նա այժմ մօտ է ինձ։ Եւ ահա ինչն է զարմանալին։ Ես այժմ անհամեմատ ճանգիստ գարձայ։ Ծիծաղելի է։ Երէկ ես բարկանում էի Անդրէյ Պետրօվիչի վրայ, նրա վրայ, ես նոյն իսկ անուաննեցի նրան պարունակով, իսկ այսօր... Ահա, վերջապէս, ճշմարտախօս մարդը։ ահա ում կարելի է վստահանալ, Սա սուտ չէ խօսում։ առաջին մարդն է, որին ես հանդիպում եմ, որ սուտ չէ խօսում։ բոլոր մնացածները սուտ են խօսում, ամեն ինչ ստախօս է, Անդրէյ Պետրօվիչ, սիրելի, բարի, ինչու համար եմ ես ձեզ վիրաւորում։ Ոչ։ Անդրէյ Պետրօվիչը, գուցէ, աւելի գիտուն է նրանից, գուցէ նոյն իսկ աւելի խելօք է... Բայց, ես չը գիտեմ, նա նրա առաջ այնքան փոքրիկ է։ Երբ այն մեկը խօսում է իր հայրենիքի մասին, նա մեծանում է, մեծանում, և նրա դէմքը սիրունանում է, և նրա ձայնը պղղվատի պէս է և չը կայ, կարծեմ, աշխարհում մի այնպիսի մարդ, որի առաջ նա խոնարհեցնէր իր աշեերը։ Եւ նա միայն չէ խօսում—նա գործել է և սլիմի գործէ։ Ես նրան հարց ու փորձ կ'անեմ... Ի՞նչպէս նա յանկարծ շուռ եկաւ գէպի ինձ։ և ժպտաց իմ երեսին... Միայն եղբայրներն են այսպէս ժպտում։ Ա՛հ, որքան ես գոհ եմ։ Երբ նա առաջին անգամ եկաւ մեզ մօտ, ես բոլորովին չէի կարող կարծել թէ մենք այսպէս շատ կը մօտենանք գալուց իսկ այժմ ինձ մինչև անգամ գուր է գալիս, որ ես առաջին անգամ անտարբեր մնացի... Անտարբեր։ Միթէ ես այժմ անտարբեր չեմ։

... Վաղուց ես չեմ զգացել այսպիսի ներքին հանգստութիւն։ Իմ մէջ մի այնպիսի հանդարտութիւն է, այնպիսի հանդարտութիւն։ Գրելու բան էլ չունեմ։ Ես նրան յածախ եմ տեսնում, այսքանը բաւական է։ Էլ ինչ զրեմ։

... Պօլը փակուել է։ Անդրէյ Պետրօվիչը սկսել է քիչ գալ... խեղճ, ինձ թւում է թէ նա... Բայց այդ չէ կարող իենել։ Ես սիրում եմ խօսել Անդրէյ Պետրօվիչի հետ, երբէք մի խօսք չէ լինում իմ մասին, միշտ խօսում ենք մի որ և է խելօք, օգտակար բանի մասին։ Շուրբինի պէս չէ նա։ Շուրբինը պիտի անուած է ինչպէս թիթեռնիկ և զմայլուում է իր պիտի պով։

թիթեանիկները այսպիսի բան չեն անում: Սակայն Շուքինն էլ, Անդրէյ Պետրօվիչն էլ... ևս գիտեմ թէ ինչ եմ ուզում ասել:

... Նրա համար ախորժելի է մեզ մօտ գալը, ևս այդ տեսնում եմ: Բայց ինչու. ի՞նչ է գտել նա իմ մէջ: Ճիշտ է, մեր ճաշակները նման են իրար. թէ նա, թէ ես, երկուսս էլ ոտանաւորներ չենք սիրում. երկուսս էլ հասկացողութիւն չունենք գեղարուեստի ո՞չ Բայց որքան նա լաւ է ինձանից: Նա հանդարտ է, իսկ ես մշտնջենական յուզմունքի մէջ եմ. նա ունի ճանապարհ, ունի նպատակ—իսկ Բայց ուր եմ ես գնում, ուր է իմ բոյնը: Նա հանդարտ է, բայց նրա բոլոր մաքերը հեռու են: Կը գայ ժամանակ և նա ընդ միշտ կը թողնէ մեզ, կը զնայ իր տունը, այնտեղ, ծովի միւս կողմում: Ի՞նչ անենք: Աստուած տայ նրան: Իսկ ես, այնուամենայնիւ, ուրախ կը լինեմ որ ճանաչեցի նրան, երբ նա այստեղ էր:

Ինչու նա ուսւ չէ: Ոչ, նա չէր կարող ուսւ լինել:

Մայրիկն էլ սիրում է նրան. ասում է. համեստ մարդ է, Բարի մայրիկ, Նա չէ հասկանում նրան: Պօլը լուսւմ է. Նա գլխի է ընկել, որ ինձ նրա ակնարկները դուր չեն գալիս, բայց նա խանդոտում է նրան: Չար երեխայ: Եւ ինչ իրաւունքով: Միթէ ես երբ և իցէ...

Այս բոլորը դատարկ բաներ են: Եւ ինչու այս բոլորը իմ միտն են գալիս:

... Բայց այնուամենայնիւ, օտարոտի է, որ ես մինչե այսօր, մինչի քսան տարին, ոչ ոքին չեմ սիրել: Ինձ թւում է թէ Դ.-ի (նրան կ'անուանեմ Դ., ինձ դուր է գալիս այս անունը—Դմիտրի) հոգին այնքան պայծառ է այն պատճառով, որ նա ամբողջովին նուիրուել է իր դործին, իր իղձին: Ինչու համար պիտի նա յուզուի: Ով նուիրուել է ամբողջովին... ամբողջովին... ամբողջովին... Նա քիչ գարդ կ'ունենայ, նա այլ ես ոչ մի բանի համար պատասխանատու չէ: Ուզողը ես չեմ. այն է ուզում: Ի դէպ, նա էլ, ես էլ մի տեսակ ծաղիկներ ենք սիրում: Ես այսօր կտրնցի մի վարդ: Մի թերթիկը ընկաւ, նա նրան վերցրեց... ես նրան տուի ամբողջ վարդը:

... Դ.-ի յաճախ է գալիս մեզ մօտ: Երէկ նա ամբողջ երեկոն անցկացրեց մեզ մօտ: Նա ուզում է սովորեցնել ինձ բոլգարերէն: Նրա հետ ես ինձ լաւ եմ զգում, ինչպէս տանը: Աւելի էլ լաւ, քան տանը:

... Օրերը թոշում են... Ես լաւութիւն եմ զգում, մի և նոյն ժամանակ մի ինչոր պատճառով վախիսում եմ. ուզում եմ Աստուծուն չնորհակալութիւն յայտնել, բայց արտասուր սերս էլ հեռու չեն:

... Առաջուայ պէս ես թեթեւութիւն եմ զգում, միայն երբեմն քիչ թախիծ է դալիս վրաս: Ես երջանիկ եմ: Արդեօք երջանիկ եմ ես:

... Երկար չեմ մոռանայ ես երեկուայ ճանապարհորդութիւնը: Ի՞նչ օտարութիւն, նոր, սարսափելի տպաւորութիւններ: Երբ նա յանկարծ բռնեց այն վիթխարին և խաղաղնդակի պէս շարտեց ջուրը, ես չը վախեցայ: Բայց նա ինձ վախեցրեց: Եւ յետոյ—որպիսի չարագուշակ, համարեա անգութ դէմք: Ի՞նչ պէս նա ասաց՝ «ղուրս կը լողայ»: Դա ինձ տակն ու վրայ արաւ: Ուրեմն, ես նրան չէի հասկանում: Եւ յետոյ, երբ ամննքը ծիծաղում էին, երբ ես ծիծաղում էի, որքան ես ցաւում էի նրա տեղ: Նա ամաչում էր, ես այդ զգում էի, նա ինձանից էր ամաչում: Այդ բանը նա ինձ ասաց յետոյ, կառքում մթութեան մէջ, երբ ես աշխատում էի լաւ դիտել նրան և վախենում էի նրանից: Այն, հանաք անել նրա հետ չէ կարելի, նա պաշտպան հանդիսանալ էլ զիտէ: Բայց ինչու այդ չարակամութիւնը, այդ զողգոջուն շրթունքները, այդ թոյնը աչքերի մէջ: Թէ գուցէ ուրիշ կերպ կարելի էլ չէ: Զէ կարելի լինել տղամարդ, մարտնչող և մնալ հեղ ու փափուկ: Կեանքը կոպիտ բանէ, ասաց նա ինձ նորերում: Ես այս խօսքը կրկնեցի Անդրէյ Պետրօվիչի մօտ. նա չը համաձայնուեց Դ.-ի հետ Ո՞վ է նրանցից ճշմարիտը: Իսկ ինչպէս սկսուեց այդ օրը: Ո՞րքան լաւ էր ինձ համար զնալ նրա միասին, նոյն իսկ լուռ ու մունջ... Բայց ես ուրախ եմ որ այդ պատահմունքը եղաւ: Երեխ այդպէս էր հարկաւոր:

... Նորից անհանգստութիւն... Ես բոլորովին առողջ չեմ:

... Այս քանի օրերը ես ոչինչ չը գրեցի այս տետրակի մէջ, որովհետև զրելու ցանկութիւն չունէի: Ես զգում էի որ ինչ էլ զրելու լինեմ, այն չի լինի, ինչ հոգուս մէջ է... Իսկ հոգուս մէջ ինչ կայ: Ես մի մեծ խօսակցութիւն ունեցայ Դ.-ի հետ, որ ինձ համար շատ բան բաց արաւ: Նա պատմեց ինձ իր ծրագիրները (ի դէպ, ես այժմ զիտեմ թէ ինչու նա վէրը ունի վզի վրայ... Աստուած իմ, երբ ես մտածում եմ, որ նա արդէն մահուան էր գատապարտուած, որ նա հազիւ ազատուեց, որ նրան վիրաւորեցին)... Նա զգում է որ պատերազմ կը լինի և ուրախ է զրա համար: Եւ այսուամենայնիւ, ես երբէք չեմ տեսել Դ.-ին այդքան տխուր: Ի՞նչ պատճառով նա... Նա... կարող է տխուր լինել: Հայրիկը վերադարձաւ քաղաքից, երկուսիս մի տեղ տեսալ օտարոտի կերպով նայեց եկաւ Անդրէյ Պետրօվիչը. ես նկատեցի որ նա շատ նիւնիք: Եկաւ Անդրէյ Պետրօվիչը. ես ինձ յանդիմանեց, որպէս թէ հարացել է և գունատուել: Նա ինձ յանդիմանեց, որպէս թէ

ևս չափազանց սառն և անփոյթ կերպով եմ վարւում Շուբինի
հետ: Իսկ ես բոլորովին մոռացել եմ Պօլին: Կը տեսնեմ նրան,
կ'աշխատեմ մեղքը քաւել: Այժմ իմ բանն ու գործը նա չէ... և
ոչ ոք էլ չէ այս աշխարհում: Անդրէյ Պետրօվիչը խօսում էր ինձ
հետ մի տեսակ աշխասանքով: Ի՞նչ է նշանակում այս բոլորը:
Ինչու այսքան մոլթ է իմ շուրջը և իմ մէջ: Ինձ թւում է, թէ
շուրջս և իմ մէջ մի լուս ոք խորհրդաւոր բան է կատարւում,
թէ պէտք է մի խօսք դանել...

... Ես չը քննեցի գիշերը, զլուխս ցաւում է: Ինչո՞ւ զրել:
Նա այսօր այնքան չուտ զնաց, իսկ ես ուզում էի խօսել նրա
հետ... Նա կարծես խուսափում է ինձանից: Այն, նա խոյս է
տայիս ինձանից:

... Խօսքը գտնուած է, լոյսը լուսաւորեց ինձ: Աստուած
խղճա ինձ... Ես սիրահարուած եմ...

XVII

Այս իսկ օրը, երբ Ելենան զրում էր այս վերջին, ճակատագրական խօսքը իր յիշատակարանի մէջ, Ինսարօվը նստած էր թերսենելի մօտ սենեակում, իսկ թերսենելի կանգնած էր նրա առջև և իր դէմքը վրայ արտայայտում էր մի տարակուսանք: Ինսարօվը նոր էր յայտնել նրան թէ մտադիր է միւս օրը տեղափոխուել Մուկուա:

— Ի՞նչ էք ասում, — բացականչեց Բերսենեվը. — այժմ ա-
մենասիրուն ժամանակն է զալիս: Ի՞նչ պիտի անէք դուք
Մոսկուայում: Այդ ի՞նչ յանկարծակի վճիռ է: Գուցէ դուք որեւէ
տեղեկութիւն եք ստացել:

—Ես ոչինչ տեղեկութիւն չեմ ստացել, պատասխանեց
ինսարօվը —բայց մի քանի հանգամանքներ կշռադատելով, ևս
չեմ կարող մնալ այստեղ:

—Այսը ինչպէս կարելի է այդ...

—Անդրէյ Պետրօվիչ, ասաց Խնսարօվը, —բարի եղէք, մի
ստիպէք, ինդրում եմ: Ինձ համար էլ ծանր է ձեզանից հե-
ռանաւու, բայց ուրիշ, կերպ անել չէ կարելի:

— Գիտեմ, խօսեց նա վերջապէս, — ձեզ համոզել չկ լինի:

—Կատարեալսէս

մեր կազմաւ և հեռացաւ:

Բերսինեվը ման եկաւ սենեակում, վերցրեց զլսարկը և
պնաց Ստախովների մօտ:

— Դուք ինձ մի բան ունիք հաղորդելու, ասաց նրան Ե-
լինան, եթե նրանք մենակ մնացին:

—Այս բայց ինչպէս զլիսի ընկալք։

—Այդ մեխանոյն է: Ասացէք, ի՞նչ կայ: Բերսենենվը յայտնեց նրան ինսարօվի վճիռը: Ելենան գունատուեց:

—ի՞նչ է դա ոշանակում, արտասանեց նա դժուարութեամբ:

— Դուք զիտէք, ասաց Յերսևնեվը, — որ Դմիտրի օրգա
նօրովիշը չէ սիրում հաջիւ տալ իր վարժուազների մասին,
Բայց ևս կարծում եմ... Նստենք, Ելենա Նիկոլաևնա, դուք
բոլորովին առողջ չէք երեսում... Ես կարծնմ կարող եմ զիսի
ընկնել թէ իսկապէս ինչն է այդ յանկարծակի հեռանալու
պատճառը:

—ի՞նչ, ինչ սլատմառ է, կրկնեց Ելուսա, պղուր լով, ինքն էլ այդ չը նկատելով, Բերսինեվի ձեռքը իր սառած ձհորի մէջ:

—Այ ասեմ ձեզ, սկսեց Բերսենեվը մի թալոսալլ ողի
տով,—ինչպէս կարելի է այդ բացատրել։ Ինձ սէտք է վերա-
դառնալ այս տարուայ գարնան, այն ժամանակին, երբ ես մօ-
տիկ ծանօթացայ ինսարօվի հետ Ես այն ժամանակ պատա-
հեցի նրա հետ մի ազգականի տանը. այդ ազգականը ունէր
մի շատ սիրունատես աղջիկ։ Ինձ թուաց թէ ինսարօվը ան-
տարրեր չէ գէտի աղջիկը, և ես այս բանը յայտնեցի ինսա-
րօվին։ Նա ծիծաղեց և պատասխանեց ինձ թէ ես սիրու-
ում եմ, թէ իր սիրու չէ տանջուել, բայց իսկոյն կը գնար, կը
հեռանար, եթէ այդպիսի մի բան պատահէր իրան, որովհետե-
նա չէ ուզում—սրանք նրա սեփական խօսքերն էին—իր անձ-
նական զգացմունքին բաւարարութիւն տալու համար դաւա-
ճանել իր գործին և իր պարտականութեան։ Ես բոլգար եմ
և ինձ ուսական սէր չէ հարկաւոր»...

— Հա... և այժմ... գուք ինչ... չննջաց Ելենան, ակասայ զլուխը մի կողմ թեքելով ինչպէս հարուածի սպասող մարդ՝ բայց էլի բաց չը թողնելով Բերսենելի պինդ բռնած ձեռքը:

— Ես կարծում եմ, խօսեց թերթահնեղը ո բաքա ու բազուցած աշադրացրեց իր ձայնը, — Ես կարծում եմ, որ այժմ կատարուեց այն, ինչ ես խօսուր հնիթաղբում էի այն ժամանակ։

—Այսինքն... զուք կարծում էք... ինձ մի տանջեք, յանկարծ զուբս թռան այս խօսքերը Ելինացի բերանից:

—Ես կարծում եմ, շտապով շարունակեց բերսենելը:

որ Ինսարօվը այժմ սիրեց մի ոռւս աղջկան և, համաձայն իր խոստման, վճռել է փախչել:

Ելենան էլ աւելի պինդ սեղմաց նրա ձեռքը և էլ ցած թեքեց գլուխը, կարծես կամնալով թագցնել օտարի հայեացքից ամօթի կարմրութիւնը, որ մի յանկարծակի բոցով ողողեց նրա ամբողջ դէմքն ու փեռու:

— Անդրէյ Պետրօվիչ, դուք բարի էք հրեշտակի նման, ասաց նա, — բայց չի որ նա կը դայ մնաք բարե ասելու:

— Այն, ես կարծում եմ, նա անշուշտ կը դայ, որովհետեւ չի ուզի գնալ...

— Ասացէք նրան, ասացէք...

Բայց այստեղ խեղճ աղջիկը չը դիմացաւ. արտասունքները դուրս թափուեցան նրա աչքերից, և նա սենեակից դուրս վազեց:

«Ահա ինչպէս է նա սիրում Ինսարօվին», մտածում էր Բերսենեվը, դանդաղ կերպով տուն վերադառնալիս: Ես այդ չէի սպասում. ես չէի սպասում թէ այդքան սաստիկ կը մնի այդ բանը: Ես բարի եմ, ասում է նա, շարունակում էր Բերսենեվը իր խորհրդածութիւնները... Ո՞վ կ'ասէ թէ ինչ զգացմունքներին և Քլումներին տեղի տալով ես հաղորդեցի այդ բոլոր Ելենային: Բայց բարութիւնից չէր դա, բարութիւնից չէր: Միշտ անիծուած յանկութիւնն համոզուելու թէ ճիշտ որ խէնց ջարը նստած է վերքի մէջ: Ես ոլէտք է բաւական լինեմ—նրանք սիրում են իրար, և ես նրանց օգնեցի... «Ապագայ միջնորդ գիտութեան և ոռւս հասարակութեան մէջ», այսպէս է անուանում ինձ Շուրբինը. երեի իմ ճակատին գրուած է միջնորդ վնել: Բայց եթէ ես սխալուած եմ: Ո՛չ, ես չեմ սխալուած...»

Սնդրէյ Պետրօվիչը մի դաշնութիւն էր զգում, և Բառմէրը նրա միստքը չէր դալիս:

Միւս օրը, ժամի մօտ երկուսին, Ինսարօվը Ստախօվների մօտ մտաւ, կարծես գիտմամբ, այդ իսկ ժամանակ Սննա Վասիլեվայի հիւրասենեակում նստած էր մի հիւր. — Հարեան իրիցակինը, մի շատ լաւ և յարգելի կին, որ սական մի փոքրիկ անախորժութիւն էր ունեցել ոստիկանութեան հետ այն պատճառով, որ օրուայ ամենատաք ժամին ուզեցել էր լողանալ լճակի մէջ, այն ճանապարհի մօտ, որով յաճախ անցնում էր մի ինչ-որ մեծամարդ գեներալի ընտանիք: Կողմնակի մարզու մի ինչ-որ մեծամարդ գեներալի ընտանիք: Կողմնակի մարզու ներկայութիւնը սկզբում նոյն իսկ ախորժելի էր Ելենայի համար, որի դէմքը բոլորովին սիրթնեց, հէնց որ նա լսեց ինսարօվի քայլերի ձայնը. բայց նրա սիրաը կանդ առաւ, երբ սարօվի քայլերի ձայնը. բայց նրա սիրաը կանդ առաւ, երբ սարօվի քայլերի ձայնը... Ահա ինչ մտքեր էին որ չէին թողնում նրան. իսկապէս որ չէին թողնում.

լով իր հետ առանձնակի: Իսկ ինսարօվը շփոթուած էր երեւում և խուսափում էր Ելենայի հայեացքից: «Միթէ նա հէնց իսկոյն կը սկսէ մնաք բարե ասելը», մտածում էր Ելենան: Եւ իրաւ, Ինսարօվը սկսել էր իր խօսքը ուղղել Աննա Վասիլեվային. Ելենան շատպով վեր կացաւ և կանչեց նրան դէպի մի կողմ, դէպի պատուհանը: Երիցակինը զարմացաւ և փորձեց շուռ գալ դէպի այն կողմը. բայց նա այնքան պինդ էր կապել կօրսեալը, որ վերջինս ճռձում էր ամեն անդամ, երբ նա շարժողութիւն էր գործում: Երիցակինը մնաց անշարժ:

— Լսեցէք շտապով ասաց Ելենան, — ես գիտեմ, թէ ինչու էք գուք եկել. Անդրէյ Պետրօվիչը ինձ հաղորդել է ձեր գիտաւորութիւնը, բայց ես ձեզ խնդրում եմ, ես ձեզ աղաչում եմ հրաժեշտի ողջոյն չը առ մեզ այսօր, այլ գալ այստեղ վաղը սրանից մի քիչ չուտ, ժամի մօտ տամն և մէկին: Ես պիտի երկու խօսք ասեմ ձեզ:

Ինսարօվը լուռ թեքեց գլուխը:

— Ես ձեզ չեմ պահի... Խոսաննում էք ինձ:

Ինսարօվը նորից գլուխ տուեց, բայց ոչինչ չասաց:

— Լէնօչկա, արի այստեղ, ասաց Աննա Վասիլեվնան, աես թէ Երիցակինը ինչ հիանալի բիդիկիւ ունի:

— Ինքս եմ գործել, նկատեց Երիցակինը:

Ելենան հեռացաւ պատուհանից:

Ինսարօվը քառորդ ժամից աւել չը մնաց Ստախօվների մօտ: Ելենան գիտում էր նրան գաղտուկը Ինսարօվը կանգնած տեղը դադար չունէր, առաջուայ պէս չէր իմանում թէ ուր դարձնէ աչքերը և զնաց ինչ որ օտարութիւն կերպով, յանկարծակի կ'ասես անյատացաւ:

Դանդաղ անցաւ այդ օրը Ելենայի համար. աւելի դանդաղ էր անցնում երկար, երկար գիշերը: Ելենան կամ նստում էր մահճակալի վրայ, զրկելով ծնկները և զնելով նրանց վրայ գլուխը, կամ մօտենում էր պատուհանին, և մտածում էր, մտածում, ուժաթափուելու չափ միշտ մի և նոյնն էր մտածում: Նրա սիրաը կ'ասես թէ քարացել էր, կ'ասես թէ չքացել էր կրծքից. նա չէր զգում թէ սիրա ունի, բայց զլիս մէջ ծանր խփում էին երանեները և այրում էին նրա մազերը, և շրթունքները չորանում էին: «Նա կը դայ... նա մնաք բարե շասաց մայրիկին... նա չի խարի... Միթէ Անդրէյ Պետրօվիչը ճիշտ էր ասում: Անկարելի է... Նա խօսքերով չը խոսացաւ զալ... Միթէ ես ընդ միշտ բաժանուած եմ նրանից... Ահա ինչ մտքեր էին որ չէին թողնում նրան. իսկապէս որ չէին թողնում.

նրանք, այդ մտքերը, չէին գալիս, չէին վերադառնում, այլ անդադար տակն ու վրայ էին դառնում նրա մէջ. ինչ պէս մշուշ: «Նա ինձ սիրում է», յանկարծ բռնկւում էր այդ միտքը նրա ամբողջ էութեան մէջ, և նա ուշի ուշով նայում էր իւաւարին. ոչ ոք չէր տեսնում այն դադանի ժպիտը, որ բաց էր անում նույն շուրջները... Բայց նա իսկոյն թափառաց էր պլուխը, տանում էր գէպի պարանոցը ձեռքերի ծահարում էր գլուխը, տանում էր գէպի պարանոցը ձեռքերի ծալած մատները և նորից, ինչպէս մշուշ, տակն ու վրայ էին դառնում նրա մէջ նախկին մտքերը: Առաւօտից առաջ նա հանեց իր շորերը և պառկեց անկողնում, բայց քննել չը կարողացաւ: Արեգակի առաջին հրային ճառագայթները խփեցին նրա սենեակին... «Օ՛, եթէ նա ինձ սիրում է», բացականչեց նա յանկարծ, և չամաչելով իր վրայ ընկած լոյսից, բաց արեց իր գիրկը...

Նա վեր կացաւ, հագնուեց, ցած իջաւ: Տանը ոչ ոք չէր զարթնել: Նա գնաց այգին. բայց այգում այնպիսի հանդարտութիւն էր, այնպիսի կանաչ կար, այնպիսի թարմութիւն, թըռչունները այնքան ընտանեբար էին ճշճում, ծաղիկները այնպւնեց այնքան նայում, որ նա մի տեսակ երկիւղ զգաց: «Օ՛, պէս ուրախ էին նայում, որ նա մի տեսակ երկիւղ զգաց: «Օ՛, մտածեց նա, եթէ սա ճիշտ է, չը կայ մի հատ խոտ, որ բախտաւոր լինէր ինձանից, բայց ճիշտ է այս»: Նա վերադարձաւ իր սենեակը և ժամանակը մի կերպ սպանելու համար, սկսեց իր սենեակը և ժամանակը մի կերպ սպանելու համար, սկսեց վոխել հագուստը: Բայց ամեն ինչ ընկնում և սահում էր նրա ժոխել հագուստը: Եթէ սա ճիշտ է այս»: Նա ցած գնաց, մայրը առաջ, երբ նրան կանչեցին չայ խմել: Նա ցած գնաց, մայրը նկատեց նրա գունատութիւնը, բայց միայն ասաց: «այսօր ինչ նկատեց նրա գունատութիւնը, բայց միայն ասաց. «այսօր ինչ նկատեց նրա գունագուստը չափելով չափելով նրան, աւելացրեց. հետաքրքրական ես», և, հայեացքով չափելով նրան, աւելացրեց. «Այդ շորը քեզ շատ լաւ է գալիս. դու նրան հագիր ամեն ժամանակ, երբ կամենում ես մէկին դուր գալ»: Ելենան ոչինչ չը պատասխանեց և նստեց անկիւնում: Մինչ այս մինչ այն խփեց մինչ տասն և մէկը գեռ երկու ժամ կար: Ելենան ինն ժամը. մինչ տասն և մէկը գեռ երկու ժամ կար:

Եթէ նաքանակ առաջ կարք, յետոյ կարք, յետոյ էլ կրկին գիրքը. յեծեքն առաւ մի գիրք, յետոյ կարք, յետոյ էլ կրկին գիրքը. յետոյ նա խօսք տուեց իրան հարիւր անգամ անցնել մի ծառուղիով, և անցաւ հարիւր անգամ. յետոյ նա երկար մտիկ էր տալիս թէ ինչպէս Աննա Վասիլեվսան պասեանս էր գարսում խաղաթթերից... ու նայեց ժամացոյցին. գեռ տասը չը կար: Շուրբինը եկաւ հիւրասենեակը: Ելենան փորձեց խօսք բաց առ շուրբինը եկաւ հիւրասենեակը: Ելենան փորձեց խօսք բաց առ անքեր էր պահանջում նրանից, բայց նրա մէջ մի ինչ որ օ՛ջանքեր էր պահանջում նրանից,

տարսուի շուարում էր զարթեցնում: Շուրբինը խոնարհուեց գէպի նրան: Ելենան ծաղրի էր սպասում, աչքերը բարձրացրեց, և տեսաւ, իր առջև մի տիսուր և բարեկամական դէմք... նա ժպտաց այդ գէպին: Շուրբինը նոյնպէս ժպտաց լուռ և հանդարտ քայլերով գուրս գնաց: Ելենան կամենում էր նրան կանգնեցնել, բայց խկոյն չը լիշեց թէ ինչպէս կանչէ նրան: Վերջապէս խփեց տասն և մէկերորդ ժամը: Նա սկսեց սպասել, սպասել, սպասել և ականջ զնել: Նա այլ ես ոչինչ չէր կարողանում անել. նա մինչև իսկ դադարեց մտածելուց: Նրա սիրով կենդանացաւ և սկսեց աւելի պինդ և պինդ խփել և օտարոտի բան, ժամանակը կարծես սկսեց աւելի արագ թոչել: Անցաւ քառորդ ժամ, անցաւ կէս ժամ, անցաւ էլի մի քանի րոպէներ, Ելենայի կարծեքով, և յանկարծ նա ցնցուեց. խփեց ոչ թէ տասներկու ժամը, այլ մէկը: «Նա չի գայ, նա կը գնայ, մնաք բարև չասելով»... Այս միտքը, արիւնի հետ միասին, խփեց նրա գլխին: Նա զգաց որ շունչը արգելում է, որ նա պատրաստ է հեկեկալ... Նա վագեց իր սենեակը և երեսնիվայր ընկաւ անկողնի վրայ, գէմքը զնելով իր ձեռքերի վրայ:

Կէս ժամ պատկած էր նա անշարժ. նրա ժամաների արանքով արտասունքները թափւում էին բարձի վրայ: Նա յանկարծ վեր կացաւ եւ նստեց. մի ինչ որ օտարոտի բան էր կատարւում նրա մէջ, նրա գէմքը փոխուեց, թաց աչքերը իրանք իրանց չորացան և փայլեցին, յօնքերը ցած իջան, շրթունքները սեղմուեցան: Անցաւ էլի կէս ժամ: Ելենան վերջին անգամ զրեց. արդեօք չի հասնի նրան ծանօթ ձայնը: Վեր կացաւ զրեց զվարկը, հաղաւ ձեռնոցները, թիկնոցը, զցեց ուսերին և աննկատելի կերպով դուրս գալով տանից, աշխոյժքայլերով վնաց այն ճանապարհով, որ տանում էր գէպի Բերսենելի բնակարանը:

XVIII

Ելենան գնում էր գլուխը կորացրած և անշարժ հայեացքով առջեին մտիկ տալով: Նա ոչնչից չէր վախենում, նա ոչ մի բան չէր կշռադատում: Նա ուզում էր մի անգամ էլ տեսնուել ինսարօվի հետ: Գնում էր նա, չը նկատելով, որ արեգակը վազուց է ծածկուել ծանր սի թուխտերի տակ, որ քամին կամ սաստկանալով կամ թուլանալով աղմկում էր ծառերի մէջ և շարժում էր նրա չորերը, որ փոշին յանկարծ բարձրանում

Եր և սիւնի պէս ոլանում էր ձանապարհով... Խոշոր անձրես կաթկաթեց, նա այդ էլ չէր նկատում. բայց անձրես սկսեց աւելի սաստկանալ, փայլատակեց կայծակը, որութ զղբզաց: Ելենան կանգ առաւ, չորս կողմը նայեց... Նրա բախտից, քիչ հետու այնտեղից, ուր վրայ էր հասել փոթորիկը, գտնւում էր մի հին անտէր մնացած մատուռիկ, որ շինուած էր քանդուած ջրհորի վրայ: Ելենան մասեց գէպի այնտեղ և մտաւ ցածրիկ ծանկի տակ: Անձրես առուի պէս էր թափւում. երկինքը ամբողջապէս ծածկուած էր ամպերով: Մի համք յուսահատութեամբ Ելենան նայում էր արագ թափուող կաթիների խիտ ցմնցին: Ինսարօվին տեսնելու վերջին յոյսը կորաւ: Մուրացիկ պառաւ կինը մտաւ մատուռի մէջ, թափ տուեց շորերը, զլուխ տալով ասաց. «անձրեց, աղջիկ պարոն», և տնքանքալով ու ախ քաշելով, նստեց ջրհորի մօտ, պատի բեկորի վրայ: Ելենան ձեռքը տարաւ գրապանը. պառաւը նկատեց այդ շարժողութիւնը և նրա կնճռոտ ու գեղին դէմքը, որ մի ժամանակ գեղեցիկ էր եղել, կենդանացաւ: «Ենորհակալ եմ քեզանից, սիրելիս», սկսեց նա: Ելենան գրապանում չը գտաւ իր քսակը, իսկ պառաւը արգէն մեկնել էր ձեռքը...

—Փող չը կաց մօտս, տատիկ, ասաց Ելենեան, —բայց ահա վերցրու, մի բւհի պէտք կը գայ:

Նա տուեց պառաւին իր թաշկինակը:

—Օ-օն, սիրունիկս, ասաց մուրացկանուհին, ինչիս է քո թաշկինակը: Բայց կարելի է թոռսնս պարզեց, երբ նա մարդու կը գնայ: Աստուած քո բարութեան փոխարէնը տայ:

Տարածուեց որոտի հարուածը:

—Տէր Յիսուս Քրիստոս, մրմնջաց մուրացկանուհին և երեք անգամ խաչակնքեց:—Հէնց կ'ասես ես քեզ տեսել եմ, աւելացրեց նա, քիչ սպասելուց յետոյ:—Դու չէիր որ ինձ Քրիստոսի ողորմութիւնը տուիր:

Ելենան ուշի ուշով նայեց պառաւին և ճանաչեց նրան:

—Այն, տատիկ, պատասխանեց նա:—Դու զե՞ռ հարցրիր ինձանից թէ ինչո՞ւ այնքան տխուր եմ ես:

—Այդպէս է, աղօւնակս, այդպէս է: Ասում էի որ դու նա ես: Եւ դու կարծես այժմ էլ գարդուտ ես: Ահա քո թաշկինակն էլ թաց է, երեխ արտասունքներից: Օ՛հ, դուք, ջահէներ, ձեզ բոլորիդ համար միայն դարդ կայ, միայն մեծ վիշտ:

—Ի՞նչ վիշտ, տատիկ:

—Ի՞նչ վիշտ: Է՛հ, սիրուն աղջիկ, դու մի խարիր ինձ, պառաւիս, Գիտեմ ես թէ քո դարդը ինչ է. դա որբի վիշտ չէ:

Զէ որ ես էլ եմ եղել ջահէլ, սիրելիս. այդ բոլոր անցքերը իմ զլիսովս էլ են անցել: Այս քեզ, քո բարութեան փոխարէն, ահա ինչ կ'ասեմ, եթէ քեզ հանդիպել է լաւ մարդ, ոչ թէ մի ցանցաւը, պինդ բանիր: Եթէ կը լինի, կը լինի, եթէ չի լինի, երկի Աստուածուն այդպէս էր հաճելի: Այն, ինչ ես զարմացել ինձ վրայ. ես նոյն կախարդն եմ: Ուզում ես, ես կը ատանեմ քո թաշկինակի հետ քո ամբողջ վիշտը: Կը տանեմ, և կը պրծնի: Տեսնում ես, հիմա անձրես բարակեց. դու զե՞ռ սպասիր, իսկ ես կը գնամ: Անձրես ինձ հօ առաջին անգամը չը պիտի թրջէ: Միտդ պահիր, սիրելիս, կար ախրութիւն, կորաւ տխրութիւնը, անունն էլ չը մնաց: Տէր Աստուած, դու օդնես:

Մուրականուհին վերկացու տեղից, գուրս գնաց մատուուից և գնաց իր ձանապարհով: Ելենան ապշած նայում էր նրա ետնից: «Ի՞նչ է սա նշանակում, ակամաց շնչաց նա:

Անձրես գնալով բարականում էր, մի ակնթարթ եղաւ, երբ արեգակը փայլեց: Ելենան արդէն պատրաստում էր թողնել իր ապաստանը... Յանկարծ, մատուուից մի տասը քայլ հեռու, նա տեսաւ ինսարօվին: Վերարկուի մէջ փաթաթուած՝ նա դալիս էր նոյն ձանապարհով, որով և կել էր Ելենան, թւում էր թէ նա տուն է շատպում:

Ելենան ձեռքով յինուեց փոքրիկ գսափկոնի հին վանդակին, ուղեց կանչել նրան, բայց ձայնը դաշնը դաւաճանեց... Ինսարօվը արդէն անցնում էր մօտով, չը բարձրացնելով զլուխը...

—Դմիտրի Նիկանօրօվիչ, արտասանեց նա վերջապէս: Ինսարօվը յանկարծակի կանգ առաւ, նայեց... Առաջին բոպէում նա չը ճանաչեց Ելենային, բայց իսկոյն մօտեցաւ նրան:

—Դուք, դուք այսուեղ, բացականչեց նա:

Ելենան լուռ յետ ու յետ գնաց մատուուր: Ինսարօվը հետեւեց նրան:—Դուք այստեղ, կրկնեց նա:

Ելենան շարունակում էր լոռութիւն պահպանել և միայն նայում էր նրան մի երկար, փափուկ հայեացքով: Ինսարօվը աչքերը ցած գցեց:

—Դուք մեր տանիցն էիք զալիս, հարցրեց Ելենան:

—Ո՞չ... ձեր տանից չեմ դալիս:

—Ո՞չ, կրկնեց Ելենան և աշխատեց ժպտալ:—Այդպէս եք դուք կատարում ձեր խոստումները: Ես ձեզ սպասում էի առաւօտից:

—Ես երէկ, յիշեցէք, Ելենա Նիկոլաեվսա, ոչինչ չը խոստացայ:

Ելենան նորից հազիւ հաղ ժպտեց և ձեռքը անցկացրեց

գէմքի վրայով։ Դէմքն էլ, ձեռքն էլ շատ գունատ էին։—Դուք,
ուրիմն, կամենում էիք գնալ, մնաք բարև չասելով մեզ։

—Ան, կոշտ ու խուլ կերպով արտասանեց ինսարօվը։

—Ինչպէս։ Մեր ծանօթութիւնից յետոյ, այդ խօսակցութիւններից, այդ բոլորից յետոյ... Ուրիմն, եթէ ես այստեղ ձեզ
չը հանդիպէի պատահաբար (կենայի ձայնը սուր հնչեց և նա
մի ակնթարթ լուց) ... դուք կը գնայիք և վերջին անգամ
չէիք էլ սեղմի իմ ձեռքը, և դուք չէիք էլ ափսոսայ։

ինսարօվը յետ դարձաւ։—Եւնա նիկոլաեմնա, խնդրում
եմ այդպէս մի խօսէք։ Ես առանց այդ էլ ուրախ չեմ։ Հաւա-
տացէք, իմ վճիռը ես կայացրել եմ մեծ ջանքեր գործ դնելով։
Եթէ դուք իմանայիք...»

—Ես էլ չեմ ուզում իմանալ, վախեցած ընդհատեց նրան
Ելենան, —թէ ինչու գուք գնում էք... Երեւի այդպէս է հար-
կաւոր։ Երեւի մենք պիտի բաժանուենք։ Դուք առանց պատ-
ճառի չէիք կամենայ վշտայնել ձեր բարեկամներին։ Բայց միթէ
այդպէս են բաժանում բարեկամները։ Մենք բարեկամներ ենք,
այնպէս չէ։

—Ոչ, ասաց ինսարօվը։

—Ի՞նչ... ասաց Ելենան։ Նրա թշերը ծածկուեցին թեթեւ
կարմրութեամբ։

—Ես հէնց այդ պատճառով էլ գնում եմ, որ մենք բարե-
կամներ չենք։ Մի հարկադրէք ինձ ասել այն, ինչ ես չեմ ու-
զում ասել, ինչ չեմ ասի։

—Դուք առաջ ինձ հետ անկեղծ էիք, մի թեթեւ յանդի-
մանութեամբ արտասանեց Ելենան։—Յիշում էք։

—Այն ժամանակ ես կարող էի լինել անկեղծ, այն ժա-
մանակ ես թագդնելու բան չունեի. իսկ այժմ...»

—Իսկ այժմ, հարցրեց Ելենան։

—Իսկ այժմ... իսկ այժմ ես պիտի հեռանամ։ Մնաք
բարեւ։

Եթէ այդ վայրկեանին ինսարօվը բարձրացներ աչքերը,
նայէր Ելենային, կը նկատէր, որ նրա գէմքը աւելի պայծա-
ռանում էր, որքան ինքը վրայ էր տալիս յօնքերը և մթնանում։
բայց նա յամառութեամբ նայում էր յատակին։

—Դէն, մնաք բարեւ, Դմիտրի Նիկանօրօվիչ, սկսեց Ելե-
նան։ Բայց որովհետեւ մենք արդէն հանդիպել ենք իրար, գոնէ
տուէք ինձ այժմ ձեր ձեռքը։

ինսարօվը մեկնում էր ձեռքը։—Ոչ, ես այս էլ չեմ կարող,
ասաց նա և նորից յետ դարձաւ։

—Չէք կարող։

—Զիմ կարող։ Մնացէք բարեւ։ Եւ նա գնաց գէպի մա-
տուոփ գուռը։

—Քիչ էլ սպասեցէք, ասաց Ելենան։—Դուք կարծես վա-
խնում էք ինձանից։ Իսկ ես ձեզնից քաջ եմ, աւելացրեց նա
մի յանկարծակի թեթեւ գողոցով, որ տարածուեց նրա ամբողջ
մարմնի մէջ։—Ես կարող եմ ձեզ ասել... կամենում էք... թէ
ինչու գուք այստեղ հանդիպեցիք ինձ։ Գիտէք ուր էի ես գը-
նում։

ինսարօվը զարմացած նայում էր Ելենային։

—Ես գնում էի ձեզ մօտ։

—Ինձ մօտ։

Ելենան ծածկեց դէմքը։—Դուք կամենում էիք ինձ հար-
կարգել որ ես ասեմ թէ ձեզ սիրում եմ, շնչաց նա. —ահա...
ես ասացի։

—Ելենա, զոչեց ինսարօվը։

Ելենան ընդունեց նրա ձեռքերը, նայեց նրան և ընկաւ
նրա կրծքին։

ինսարօվը պինդ գրկեց նրան և լուռ էր։ Հարկաւոր չէր
որ նա ասէր թէ սիրում է Ելենային։ Միայն նրա բացական-
չութիւնից, մարդու այդ վայրկենական կերպարանափոխութիւ-
նից, միայն նրանից թէ ինչպէս բարձրանում և շածրանում էր
այդ կուրծքը, որին նա այնպիսի հաւատով կպել էր, միայն
նրանից թէ ինչպէս նրա մատների ծայրերը զիպան իր մազե-
րին, Ելենան կարող էր հասկանալ, որ ինքը սիրուած է։ Ին-
սարօվը լուռ էր, բայց Ելենային էլ հարկաւոր չէին խօսքեր։
«Ես այստեղ է, նա սիրում է... էլ ինչ պիտի լինի»։ Երջան-
կութեան խաղաղութիւնը, անլրդով նաւահանգստի, հասած
նպատակի խաղաղութիւնը, այն երկնային խաղաղութիւնը,
որ նոյն իսկ մահին էլ տալիս է թէ միաք և թէ գեղեցկութիւն,
լցրել էր Ելենայի ներսը իր աստուածային յորձանքով։ Ելենան
ոչինչ չէր ուզում, որովհետեւ տիրացել էր ամեն ինչի։ «Օ՛, իմ
եղբայր, իմ բարեկամ, իմ սիրելի...» շնչում էին նրա շըր-
թունքները և նա չը գիտէր թէ այդ ում սիրոն էր, նրանը ար-
գեօք թէ իրը, որ այդպէս քաղցր խփում և հալւում էր իր կրծքի
մէջ։

իսկ ինսարօվը կանգնած էր անշարժ, նա իր պինդ գրկա-
խառնութեամբ ըրջապատել էր այդ երիտասարդ, նրան անձնա-
տուր եղած կետնքը, նա կրծքի վրայ շօշափում էր այդ նոր,
անվերջ թանկագին լուծը. հիացմունքի, անբացարեկի շնոր-
հակալութեան զգացմունքը ջարդել, փոշի էր զարձրել նրա ա-

մուր հողին, և դեռ երբէք չը տեսած արտասունքները երեւացին նրա աչքերում...

Իսկ Ելենան չէր արտասուռմ. նա միայն կրկնում էր.

«Օ՛հ, իմ բարեկամ, օհ, իմ եղբայր»:

—Ուրեմն դու կը զնա՞ս ինձ հետ ամեն տեղ, ասում էր Ինսարօվը նրան, քառորդ ժամ անցած, առաջուայ պէս պահելով նրան իր գրկի մէջ:

—Ամեն տեղ, աշխարհի վերջը: Ուր դու կը լինես, այս-տեղ էլ ես կը լինեմ:

—Եւ դու չեմ խարում, դու զիտես, որ քո ծնողները եր-բէք չեն համաձայնուի մեր ամուսնութեան:

—Ես ինձ չեմ խարում. ես այդ զիտեմ:

—Դու զիտես, որ ես աղքատ եմ, համարեա մուրացկան:

—Գիտեմ:

—Որ ես ոռւս չեմ, որ ինձ վիճակուած չէ ապրել Ռու-ստանում, որ քեզ հարկաւոր կը լինի կտրել քո բոլոր կա-պերը հայրենիքի, ազգականների հետ:

—Գիտեմ, զիտեմ:

—Դու զիտես նոյնպէս, որ ես ինձ նուիրել եմ մի դժուար, անհնորհակալ գործի, որ ինձ... մեղ պէտք կը լինի ենթարկուել ոչ միայն վտանգների, այլ և զրկանքների, գույշ ստորացման:

—Գիտեմ, ամեն ինչ զիտեմ... Ես քեզ սիրում եմ:

—Որ դու պիտի յետ մնաս քո բոլոր սովորութիւններից, որ այնտեղ, մենակ, օտարների մէջ, դու, գույշ, հարկադր-ուած կը լինես գործել...

Ելենան ձեռքը զրեց նրա շրթունքների վրայ:—Ես սի-րում եմ քեզ, սիրելիս:

Ինսարօվը սկսեց ջերմ համբուրել նրա նեղլիկ, վարդա-գոյն ձեռքը: Ելենան չէր հեռացնում ձեռքը նրա շրթունքներից և մի ինչ որ մանկական ուրախութեամբ մի ծիծաղող հետաքրքրութեամբ նայում էր թէ ինչպէս նա ծածկում էր համ-բոյրներով կամ իր ձեռքը, կամ մատները...

Յանկարծ նա կարմրեց և թագցրեց իր դէմքը նրա կրծքի վրայ:

Ինսարօվը քնքշութեամբ բարձրացրեց նրա գլուխը և ու-չի ուշով նայեց նրա աչքերին:—Ուրեմն, կեցցես, ասաց նա նրան, իմ կինը մարդկանց և Աստուծու առաջ...

XIX

Մի ժամ անցած, Ելենան գլխարկը մի ձեռքում, ձաձկուր միւսում, հանդարտ մանում էր ամարանոցի հիւրասենեակը: Նրա մազերը թեթեւ կերպով ցրուել էին, իւրաքանչիւր թշի վրայ երեւում էր փոքրիկ վարդագոյն բժիք, մազիար չէր ուզում իջնել նրա շրթունքներից, աչքերը փակւում էին և կիսա-խուփ նոյնպէս ժամում էին: Նա հազիւ էր քայլում յոզնա-ծութիւնից, և նրան ախորժելի էր այդ յոզնածութիւնը. և ա-մեն ինչ ախորժելի էր նրան: Ամեն ինչ նրան սիրելի և փա-զաքելի էր թւում: Ուվար իվանօվիչը նստած էր պատուհանի զարքելի էր թւում: Ուվար իվանօվիչից նրա ուսին, քիչ աւակ. Ելենան մօտեցաւ նրան, զրեց իր ձեռքը նրա ուսին, քիչ ձգուեց և մի կերպ ակամայ ծիծաղեց:

—Ինչին, հարցրեց նա, զարմանալով:

Ելենան չը զիտէր թէ ինչ ասէ: Նա ուզում էր համբու-րել Ուվար իվանօվիչին:

—Տափակած... արտասանեց նա վերջապէս:

Բայց Ուվար իվանօվիչը յօնքն անդամ չը շարժեց և շա-րունակ զարմացած նայում էր Ելենային: Սա վայր զցեց իր ծածկոցն ու զիստրկը, որոնք ընկան Ուվար իվանօվիչի վրայ:

—Սիրելի Ուվար իվանօվիչ, ասաց Ելենան,—ես քնել եմ ուզում, —ես յոզնել եմ.—և նա ևս ծիծաղեց և ընկաւ նրա կողքին դրած բաղկաթոոը:

—Հըմ, արտասանեց Ուվար իվանօվիչը և խաղացրեց մատները:—իքը... պէտք է, հա...

Իսկ Ելենան նայում էր իր շուրջը և մատում էր. ՇԱՅ-ԲՈՂՐԻՑ ես շուտով պիտի բաժանուեմ... օտարութիւն բան, ինձա-նում ոչ երկիւղ կայ, ոչ կասկած, ոչ ախոսանք... Ոչ, իւրղ-ճում եմ մայրիկին: Յետոյ էլի բուսաւ նրա առաջ մատուոը, նորից հնչեց նրա ձայնը, նա զգաց իր շուրջը ինսարօվի ձեռ-քերը: Նրա սիրտը ուրախութափ, բայց թոյլ կերպով շարժուեց. Երջանկութեան յոզնածութիւնը նրա վրայ էլ էր ընկած: Յի-շեց նա մուրացկան պառաւին: Ճիսկ որ, նա տարաւ իմ վիշտը, մտածում էր նա: Օ՛հ, նրբան երջանիկ եմ ես, որքան շուտ, որքան անարժան եմ այդ երջանկութեան: Մնում էր, որ նա մի ամենափոքրիկ կամք ցոյց տար, և կը թափուէին նրա աչ-քերից քաղցր, անվերջ արտասունքներ նա պահում էր այդ արտասունքները միայն նրանով, որ ծիծաղում էր: Ինչ դիրք էլ ընդունում էր նա, թւում էր, թէ աւելի լաւ և յարմար չէր

կարելի, կարծես նրան օրորում էին: Նրա բոլոր շարժողութիւնները գանդալ էին և փափուկ. ուր էր կորել նրա փութելուութիւնը, նրա գանդաղկուսութիւնը: Մտաւ Զօհան, Ելենան վճռեց, որ աւելի չքնաղ դէմք ինքը չէ տեսել: Մտաւ Աննա Վասիլեվսան. մի ինչ որ բան ծակեց Ելենային, բայց որպիսի քնքութեամբ նա զրկեց իր բարի մօրը և համբուրեց նրա ճակատը, արդէն թեթեւ կերպով սպիտակած մազերի մօտ: Յետոյ նա զնաց իր սենեակը. ինչպէս այնտեղ ամեն ինչ ժպտում էր նրան: Մի ամօթխած հանդիսաւորութեան և խաղաղութեան որպիսի զգացմունքով նստեց նա իր մահճակալի վրայ, այն իսկ մահճակալի, ուր երեք ժամ առաջ նա այնքան դառն վայրկեաններ էր անցկացրել: «Բայց ես հօ այն ժամանակ գիտէի, որ նա ինձ սիրում է, մտածեց Ելենան, — նոյն իսկ առաջ էլ... Ահ, ոչ, ոչ, սա մեղք է. «Դու իմ կինն ես...», չընջաց նա, երեսը ծածկնելով ձեռքերով, և ծունկ չոքեց:

Երեկոյեան դէմ նա աւելի մտախոհ դարձաւ: Տիրութիւն պատեց նրան, երբ մտածեց թէ գեռ շուտ չի տեսնուի Ինսաւովի հետ: Ինսարօվը չէր կարող, կասկածներ չը յարուցանելով, մնալ Ելեռսենեվի մօտ, ուստի ահա ինչ էին վճռել նա և Ելենան. Ինսարօվը պիտի վերադառնար Մոսկուա և մինչև աշունը մի երկու անգամ հիւր զնար նրանց մօտ. իր կողմից Ելենան խոստացաւ զրել նրան նամակներ և, եթէ կարելի կը լինէր, նշանակել տեսակցութիւն Կունցօվօի մօտ մի որ և է տեղ: Թէյին նա իջաւ հիւրասենեակը և այդտեղ գտաւ իր բոլոր տնացիներին և Շուրբինին, որ մի սուր հայեցք զցեց նրա վրայ, հէնց որ նա երեաց: Ելենան ուզում էր խօսել նրա հետ բարեկամաբար, ինչպէս անցեաներում, բայց վախեց որ Շուրբինը մի բան կը հասկանաց ինքն իրանից: Նրան թւում էր: թէ Շուրբինը իզուր չէր երկուշաբթից աւել իրան հանգիստ թողել: Շուտով եկաւ Ելեռսենեվը և յայտնեց Աննա Վասիլեվսային ողջոյն Ինսարօվի կողմից, մի և նոյն ժամանակ ներողութիւն այն պատճառով, որ նա վերադարձաւ Մոսկուա, չը յայտնելով նրան իր յարգանքները: Ինսարօվի անունը օրուայ ընթացքում առաջին անգամն էր արտասանուում Ելենայի առաջ. նա զգաց, որ կարմրեց. միենոյն ժամանակ նա հասկացաւ, որ իրան հարկաւոր է ափսոսանք յայտնել այդպիսի մի լաւ ծանօթի զնալու առիթով, բայց նա իրան չէր կարող հարկադրել կեղծիք զբանելու և շարունակում էր նստել անշարժ և անխօս, մինչդեռ Աննա Վասիլեվսան ախ էր քաշում և վշտացած էր: Ելենան

տշխատում էր Ելեռսենեվի մօտ լինել. նրանից չէր վախճանում, թէն նա զիտէր իր գաղտնիքի մի մասը. նա Ելեռսենեվի թեփ տակ ազատում էր Շուրբինից, որ շարունակ նայում էր նրան ոչ թէ հեգնանքով, այլ ուշագրութեամբ: Ելեռսենեվի վրայ էլ այդ երեկոյ իջել էր մի տարակուսանք. նա սպասում էր թէ կը տեսնէ Ելենային աւելի տիսուր: Ելենայի բախտից, Ելեռսենեվի և Շուրբինի մէջ սկսուեց վէճ արուեստի մասին. Ելենան յետ քաշուեց և կարծես քնի մէջ լսում էր նրանց ձաները: Փոքր առ փոքր, ոչ միայն նրանք, այլ և ամբողջ սենեակը, այն ամենը ինչ շրջապատում էր նրան, թուաց իբրև երազ. ամեն ինչ—և սեղանի վրայ դրած սամօվարը, և՛ Ուվար Իվանօվիչի կարձլիկ ժիլետը, և՛ Զօնայի հարթ եղունկները, և մնձ իշխան Կոնստանտին Պավլովիչի իւղաներկ պատկերը պատի վրայ. ամեն ինչ կուլ էր զնում, ամեն ինչ ծածկւում էր թեթև ծխով, ամեն ինչ դադարում էր գոյութիւն ունենալուց: Նա միայն խղճում էր ամենքին: «Ինչո՞ւ համար են ապրում», մտածում էր նա:

— Դու քննել ես ուզում, Լէնօչկա, հարցրեց նրան մայրը: Նա չը լսեց մօր հարցը:

— Սնարդար ակնարկութիւն, ասում ես դու... Սյուքերը, որ սուր կերպով արտասանեց Շուրբինը, յակարծակի գրգուեցին Ելենայի ուշագրութիւնը: — Ճնորհ արա, շարունակեց նա, — հէնց ճաշակն էլ զրա մէջ է: Արդար ակնարկութիւն է պատճառում—զա քրիստոնէաբար չէ, դէպէ անսարդարը մարդ անտարբեր է—սա յիմար բան է, իսկ կիսարդար ակնարկութիւնից նա թէ զրգում է և թէ անհամբերութիւն է զգում: Օրինակ, թէ ես ասեմ թէ Ելենա Նիկոլայեվսան սիրահարուած է մնալանից մէկի վրայ, ինչ տեսակ ակնարկութիւն կը լինի սա, հը:

— Ահ, մուսիօ Պօլ, ասաց Ելենան,— ես կը կամնայի ցոյց տալ ձեզ իմ անբաւականութիւնը, բայց ձչմարիտ չեմ կարողանում: Ես շատ յոգնած եմ:

— Ինչո՞ւ չես պառկում, ասաց Աննա Վասիլեվսան, որ Երեկոյեան ինքն էլ միշտ նիրհում էր, ուստի և հաճութեամբ ուզարկում էր քնելու միւսներին: — Բարեւիր ինձ, և զնա, Աստուած քեզ հետ, Անդրէյ Պետրօվիչը կը ներէ:

Ելենան համբուրեց իր մօրը, զլուխ տուեց ամենքին և զնաց: Շուրբինը ձանապարհ զցեց նրան մինչև գուսը: — Ելենա Նիկոլայեվսան, շնչաց նա նրան չէմքում. դուք սոի տակ էք տալիս մուսիօ Պօլն, դուք անդիմաբար ման էք զալիս նրա

վրայով, իսկ մուսիօ Պօլը օրհնում է ձեզ, և ձեր ոտները, և կօշիկները ձեր ոտների վրայ, և ձեր կօշիկների տակը:

Ելնան ուսը վեր քաշեց, ակամայ ձեռքը մեկնեց նրան —ոչ այն ձեռքը, որը համբուրել էր Ինսարօվը—և, վերադառնալով իր սենեակը, իսկոյն հանեց շորերը՝ պառկեց և քնեց: Նրա քունը խոր էր, անվրդով. այդպէս երեխաներն էլ չեն քը նում. այդպէս քնում է միայն առողջացած մանուկը, երբ մայրը նստում է նրա օրօրոցի կողքին և նայում է նրան, և լսում է նրա չնչառութիւնը:

XX

—Մի բողէ ինձ մօտ մտիր, ասաց Բերսենեվին Շուբինը, հչեց որ հրաժեշտ տուեց Անհա Վասիլիվնային—ևս մի քանի քան ունեմ քեզ ցոյց տալու:

Բերսենեվը գնաց նրա սենեակը: Նրան զարմացրեց արձանիկների, անդրիների բազմութիւնը, որոնք փաթաթուած էին թաց փալաների մէջ և շարուած էին սենեակի լոլոր անկիւններում:

—Դու, ինչպէս տնանում եմ, լուրջ կերպով ևս աշխատում, նկատեց նա Շուբինին:

—Պէտք է մի բան արած լինել, պատասխանեց նա—Մէկը չէ աջողուամ, պէտք է փորձել միւսը: Բայց ես, իբրև կօրսիկացի, աւելի վրիժառութեամբ եմ զբաղլում, քան զուտ արուեստով: Tremo, Bisanzia!

—Ես քեզ չեմ հասկանում, ասաց Բերսենեվը:

—Այ, սպասիր: Ահա, հաճեցէք նայել, սիրելի բարեկամ և բարերար, իմ վրէժը համար առաջին:

Շուբինը բաց արեց մի պատկեր, և Բերսենեվը տեսաւ Ինսարօվի շատ լաւ նման, հիանալի անդրին: Դէմքի գծերը Շուբինը ըմբռնել էր ճիշտ ամենամանը մանրամասնութիւնների մէջ անդամ և տուել էր նրանց մի փառաւոր արտայայտութիւն. անկեղծ, աղնիւ և համարձակ:

Բերսենեվը հիացաւ:

—Սա ուղղակի մի հիանալի բան է, աղաղակեց նա: Շնորհաւորում եմ քեզ: Կարելի է ցուցահանդէս ուղարկել: Ինչու դու այս փառահեղ գործը անուանում ես վրէժ:

—Այն պատճառով, որը, որ ես մտադիր եմ մատուցանել այս, ինչպէս դուք բարեհանեցիք անուանել, հոյակապ գործը Ելենայ Նիկոլայիվնային նրա անուան օրը: Հասկանում էք

գուք այս այլարանութիւնը: Մենք կոյր չենք, մենք տեսնում ենք թէ ինչ է կատարւում մնը շուրջը, բայց մենք ջենալմեններ ենք, ողորմած պարոն, և վրէժ ենք հանում ջենալմենի պէս:

—Իսկ ահա, աւելացրեց Շուբինը, բայց անելով մի ուրիշ պատկեր,—որովհետեւ արուեստագէտը, համաձայն նորագոյն գեղագէտների կարծիքին, ունի նախանձելի իրաւունք մարմնացնելու իր մէջ ամեն տեսակ կեղտառութիւններ, դարձնելով դրանց ստեղծագործութեան գոհարներ, ուսափ մենք, այս զոհարը կառուցանելիս, որ համար երկրորդն է կազմում, վրէժ ենք հանել ոչ թէ ջենալմենների պէս, այլ ուղղակի ու canaille.

Նա ճարպիկութեամբ յետ քաշեց կտաւը, և Բերսենեվը տեսաւ գանտանեան ճաշակով մի արձանիկ, որ ներկայացնում էր նոյն Ինսարօվին: Աւելի չար և սրամիտ մի բան չէր էլ կարելի հարել: Երիտասարդ բոլգարը ներկայացրած էր խոյի կերպարանքով, որ երեւի ոտների վրայ բարձրացել էր և խոնարհեցրել էր Աղջիւրները հարուած տալու համար: Բութ վրուածութիւնը, զոռոզութիւնը, յամառութիւնը, անտաշութիւնը, սահմանափակ միտքը այնպէս էլ կնքուած էին «Նրբագեղմ ոչխարների ամուսնու» գէմքի վրայ, մինչդեռ նմանութիւնը այնքան շլացուցիչ էր, անկասկած, որ Բերսենեվը չը կարսղացաւ չը քբքպալ:

—Ի՞նչ է, զուարձալի՞ է, ասաց Շուբինը.—Ճանաչեցիր հերսոնին: Նոյնպէս խորհուրդ ես տալիս ցուցահանդէս ուղարկել: Այս մէկը, եղբայր, ես ինձ կը նուիրեմ իմ անուան օրը... Զերդ մեծապատութիւն, թոյլ տուեք մի օյին հանելու:

Եւ Շուբինը երել անդամ վեր ցատկեց, խփելով իր ետեւին կրունկներով:

Բերսենեվը յատակից վերցրեց կտաւը և զցեց արձանիկի վրայ:

—Ահ գու մեծահոգի, սկսեց Շուբինը.—ով է պատմութեան մէջ առանձնապէս մեծահոգի համարւում: Բայց դա մի և նոյն է: Իսկ այժմ, շարունակեց նա, հանդիսաւոր և ախուր կերպով բաց անելով երրորդ պատկերը, որ կաւի մի բաւական մեծ կտոր էր,—զու կը տեսնես մի բան, ինչ կ'ապացուցանէ քո բարեկամի ծշմարտութիւնը և նրբատեսութիւնը: Դու կը համոզւես, որ նա, այսուամենայնիւ, իբրև իսկական գեղարուեստագէտ, զգում է և ինքն իրան ապտակելու կարիքը և օգուար: Նայիր:

Կտաւը բարձրացաւ, և Բերսենեվը տեսաւ երկու, մի-

մեանց կողքին և մօտիկ զրած, կարծես իրար կպած զլուխ-
ներ... Նա իսկոյն չը հասկացաւ թէ բանն ինչումն է, բայց
ուշադրութեամբ նայելով, ճանաչեց, որ մէկը Անուշկան էր,
միւսը՝ ինքը Շուրբինը: Բայց զրանք աւելի ծաղրանկարներ էին,
քան պատկերներ: Անոնւշկան ներկայացրած էր իրեւ գեղե-
ցիկ, չաղ աղջիկ ցածրիկ ճակատով, իւղակալած աչքերով և
ցցուած քթով: Նրա խոշոր շրթունքները անպատկառ ծիծա-
զում էին. ամբողջ դէմքը արտայայտում էր զգայնութիւն, ան-
հոգութիւն և կտրիճութիւն, ոչ առանց բարեհոգութեան: Իրան
Շուրբինը ներկայացրել էր խմած, նիհարացած մի զուարձասէր՝
ներս ընկած թշերով, նօսր մազերի անզօր կախուած հիւսերով,
անմիտ արտայայտութեամբ հանզած աչքերի մէջ, մեռելի սըր-
ուած քթով:

Բերսենեվը զզուանքով յետ քաշուեց:—Ի՞նչպէս է այս
երկուսը, եղբայր, ասաց Շուրբինը:—Չես բարեհածի արդեօք
հսարել արժանաւոր ստորագրութիւն: Առաջին երկու բաների
համար ես արդէն գտել եմ ստորագրութիւններ: Անդրիի տակ
կը լինի. «Հերոս, որ մոռադիր է ազատել իր հայրենիքը»: Ար-
ձանիկի տակ. «Զգուշացէք, երշիկագործներ»: Իսկ այս մէկի
տակ—ինչ եռ կարծում—«Գեղարուեստագէտ Պաւել Եակովլեկ
Շուրբինի ապագան»... Լաւ է:

—Բաւական է, պատասխանեց Բերսենեվը: Արժէր ժա-
մանակ կորցնել այդպիսի... Նա իսկոյն չը գտաւ յարմար
խօսք:

—Զգուելի բանի համար, ուզում ես ասել: Ոչ, եղբայր,
ներիր, եթէ մի բան կայ, որ պիտի ցուցահանդէս գնայ, դա
հէնց այս արձանիկն է:

—Իսկ որ զզուելի բան, կրկնեց Բերսենեվը:—Ի՞նչ դա-
տարկաբանութիւն: Քեզանում բոլորովին չը կան այդ տեսակ
զարգացման գրաւականներ, որոնցով մինչև այժմ, դժբախտա-
բար, այնքան առատապէս օժտուած են մեր արտիստները: Դու
ուզդակի զրպարտել ես քեզ:

—Դու ենթադրում ես, մոայլ կերպով ասաց Շուրբինը:
—Եթէ ինձանում չը կան այդ զրաւականները և եթէ զրանք
պատուաստուեն ինձ վրայ, զրա մէջ մեղաւոր կը լինի... մի
անձնաւորութիւն: Դու զիանս, աւելացրեց նա, արագիկաբար
յօնքերը կիտելով—ես արդէն փորձել եմ խմել:

—Սուտ ես ասում:

—Փորձել եմ, Աստուած է վկայ, պատասխանեց Շուրբինը

և յանկարժ ժպտաց, նրա դէմքը բացուեց,—բայց համ չունի,
եղբայր, կոկորդով չէ գնում և գլուխս յետոյ թմբուկի նման
է: Ինքը մեծ Լուչչինը—Խարլամպիյ Լուչչինը, Մոսկուայի,
իսկ ուրիշների ասելով, Վելիկօ-Ռօսսիայի առաջին ձագարը,—
յայտարարեց թէ ինձանից բան չի դուրս գայ: Ինձ, ինչպէս նա
յայտնեց, շիշ ոչինչ չէ ասում:

Բերսենեվը բարձրացրեց ձեռքը որ խփէ արձանիկին, բայց
Շուրբինը կանգնեցրեց նրան:

—Մի խփիր, եղբայր, սա հարկաւոր կը լինի իրեւ դաս,
իրեւ խրառիլակ:

Բերսենեվը ծիծազեց:

—Որ այդպէս է, ես կը ինայեմ քո խրառիլակը, ասաց
նա, և կեցցէ յաւիտենական, մաքուր արուեստը:

—Կեցցէ, կրկնեց Շուրբինը:—Նրանով լաւը լաւագոյն է,
իսկ վատը ցաւ չէ:

Բարեկամները պինդ սեղմեցին իրար ձեռքերը և բաժան-
ուեցին:

XXI

Ելենայի առաջին զզացմունքը, երբ նա զարթնեց, ուրա-
խական վախն էու: «Միթէ, միթէ», հարցնում էր նա իրան և
նրա սիրաը թուրանում էր երջանկութիւնից: Յիշողութիւնները
թափուեցին նրա վրայ... Նա ընկղուեց նրանց մէջ: Յետոյ
էլի նրա վրայ իջաւ նոյն երանաւէտ, հիացական հանդարտու-
թիւնը: Բայց առաւօտի ընթացքում Ելենային կամաց-կամաց
տիրեց անհանգստութիւնը, իսկ հետեւեալ օրերում նա ծան-
րութիւն, ծանծրոյթ էր զգում: Ճիշտ է, նա հիմա զիտէր թէ
ինչ էր ուզում, բայց այդ բանը թեթեւութիւն չէր բերում
նրան: Այն անմոռանալի տեսակցութիւնը ընդմիշտ դուրս էր
նետել նրան հին ճանապարհից, նա այլ ես կանգնած չէր այդ
ճանապարհի վրայ, նա հեռու էր, մինչդեռ չորս կողմում ամեն
ինչ կատարում էր սովորական կարգով, ամեն ինչ ընթանում
էր առաջսւայ պէս, կարծես ոչինչ չէր փոխուել, առաջուայ
կեանքը առաջուայ նման առաջ էր գնում, առաջուայ նման
յոյս ունենալով Ելենայի մասնակցութեան և աջակցութեան
վրայ: Ելենան փորձեց սկսել մի նամակ ինսարօվին, բայց այդ
չաղողուեց, խօսքերը թղթի վրայ դուրս էին գալիս մեռածի
նման ասես թէ սաի նման: Իր յիշատակարանը նա վերջա-

յրեց, վերջին տողի տակ նա քաշեց մի մեծ դիմ: Դա անցեալն էր, իսկ նա իր բոլոր մտածմունքներով, իր ամբողջ էութեամբ մտել էր ապագայի մէջ: Ծանր էր նրա համար: Նստել մօր հետ, որ ոչինչ չէ կասկածում, լսել նրան, պատասխանել նրան, խօսել նրա հետ—թւում էր Ելենային մի ինչոր յանցաւոր բան: Նա զգում էր, որ իր մէջ կայ մի ինչոր կեղծիք: Նա վրդովում էր, թէեւ կարմրելու պատճառ չունէր: մի քանի անդամ նրա հոգու մէջ գլուխ բարձրացրեց համարեա անդիմադրելի ցանկութիւն ասելու ամեն ինչ առանց թագցնելու, ինչ էլ լինէր: «Ի՞նչու,—մտածում էր նա, —Դմիտրին հէնց այն ժամանակն էլ, հէնց մատուռից չը տարաւ ինձ, ուր կամենում էր: Չասաց նա, որ ես նրա կինն եմ Աստուծու առաջ: Ինչու ես այստեղ եմ: Նա յանկարծ սկսեց խրանել ամենքից, նոյնիսկ Ուվար Խվանօվիչից, որ այժմ աւելի եւս քան երբեւիցէ տարակուսանքի մէջ էր, և խաղայնում էր մատները: Այլ եւս ոչ փաղաքշական, ոչ սիրելի, ոչ նոյն-իսկ երազ չէր թւում նրան ամեն ինչ, որ շրջապատում էր նրան: Շրջապատը կօշմարի պէս ճնշում էր նրա կուրծքը մի անշարժ, մահացու ծանրութեամբ: Նա կարծեա և յանդիմանում էր Ելենային, և անքաւական էր, և չէր էլ ուզում ճանաչել նրան... Դու էլի մերն ես, այսպէս էր կարծես ասում շրջապատը: Նոյն իսկ Ելենայի խեղճ սաները, ճնշուած թռչուններն ու կենդանիները նայում էին նրան—գոնէ նրան այդպէս էր թւում—անվստահ կերպով, թշնամաքար: Նա ամօթ էր զգում և ամաչում էր իր զգացմունքներից: «Զէ որ սա, անուամննայնիւ, իմ տունն է», մըտածում էր նա, «իմ ընտանիքը, իմ հայրենիքը...»—«Աչ, սա այլ եւս քո հայրենիքը չէ, քո ընտանիքը չէ», ասում էր նրան մի ուրիշ ձայն: Երկիւղը տիրեց նրան և նա զայրանում էր իր փոքրոգութեան վրայ: Փոքրանքը նոր միայն էր սկսում, իսկ նա արդէն կորցնում էր համբերութիւնը... Այդ էր նա խոսացել:

Շուտ չը կարողացաւ նա խելքը գլուխը հաւաքել: Բայց անցաւ մի, երկու շաբաթ... Ելենան մի քիչ հանգստացաւ և սովորեց իր նոր գրութեան: Նա գրեց երկու փոքրիկ տոմսակ ինսարօվին և ինքը տարաւ նրանց պոստը: թէ ամօթիսածութիւնից, թէ հաղարտութիւնից նա երբէք չէր հաւատայ իր աթիւնից, թէ հաղարտութիւնից նա երբէք հաւատայ իր աթիւնին: Նա արդէն սկսել էր սպասել ինսարօվին... Բայց ինչպահնին: Նա արդէն սկսել էր սպասել ինսարօվին... Այս պարօվի տեղ մի գեղեցիկ առաւօտ եկաւ Նիկոլայ Արտեմեվիչը:

XXII

Գվարդիայի պաշտօնաթող պօրուչիկ Ստախօսի տանը դեռ ոչ ոք չէր տեսել նրան այնպէս թթուած և մի և նոյն ժամանակ ինքնավստահ եւ բարձրայօն, ինչպէս այդ օրը: Նա մըտաւ հիւրասենեակը վերարկու և զլիարկ հագած, մտաւ զանգաղ, լայն քայլեր անելով և թրիկացնելով կրունկներով: մօտեցաւ հայելուն և երկար նայում էր իրան, մի հանգարտ խստութեամբ գլուխը ժաժ տալով և շրթունքները կծոտելով: Աննա Վասիլեվսան հանդիպեց նրան արտաքուստ յուզուած և ծածուկ ուրախութեամբ (նա ամուսնուն երբէք ուրիշ կերպով չէր էլ հանդիպում): Նիկոլայ Արտեմեվիչը նոյն իսկ չը վերցրեց գլխարկը, չը բարեւեց նրան և լուռ կերպով թոյլ տուեց Ելենային համբուրել իր կաչէ ձեռնոցը: Աննա Վասիլեվսան սկսեց հարցութիւրձ անել թէ ինչպէս է գնում նրա բժշկութիւնը.—Նա ոչինչ չը պատասխանեց նրան: Եկաւ Ուվար Խվանօվիչը—Նա նայեց նրան և ասաց, քանի Ուվար Խվանօվիչի հետ նա առհասարակ սառն էր վարւում և նայում էր նրան բարձրից, թէեւ ընդունում էր, որ նրա մէջ կան Ստախօսվերի իսկական արեան հետքեր: Յայտնի է, որ համարեա բոլոր ուռւա ազնուական տոհմերը համոզուած են թէ գոյութիւն ունեն բացառիկ, ցեղային առանձնայատկութիւններ, որոնք յատուկ են միայն իրանց: մեղ քիչ չէ պատահել լսել զրոյցներ «Պօգալասիլիների» քթերի եւ «Պերեպեկվակիների» վզակոթերի մասին: Զօյեան գուրս եկաւ և նստեց Նիկոլայ Արտեմեվիչի առաջ: Սա տնքաց, բազկաթոռի մէջ նստեց, սուրճ պահանջեց և միայն այդ ժամանակ վերցրեց զլիարկը: Նրա համար սուրճ քերին: Նա խմեց մի բաժակ և հերթով նայելով ամենքին արտասանեց ատամների արանքով: «Sortez, s'il vous plait», և, զիմելով կնոջը, աւելացրեց: և զիմելով կնոջը, աւելացրեց.

Ամենքը գուրս գնացին, բացի Աննա Վասիլեվսայից: Արագուխը զողաց յուզմունքից: Նիկոլայ Արտեմեվիչի վարմունքների հանդիպաւորութիւնը նրան ապշեցրեց: Նա մի ինչոր անսովոր բանի էր սպասում:

— Ի՞նչ կայ, բացականչեց նա, հէնց որ գուռը փակուեց: Նիկոլայ Արտեմեվիչը մի անտարբեր հայեացք զցեց Աննա Վասիլեվսայի վրայ:

— Առանձին ոչինչ. այդ ինչ ձեւ ունիք դուք իսկոյն ըն-

դունել մի ինչոր զոհի կերպարանք, սկսեց նա, առանց որիէ հարկաւորութեան ցած թողնելով շրթունքների անկիւնները իւրաքանչիւր խօսքի վրայ:—Ես միայն կամենում էի ձեզ վազորօք յայտնել, որ այսօր մեզ մօտ պիտի ճաշէ մի նոր հիւր:

—Ո՞վ է:

—Կուբնատօվսկի, Եգոր Անդրէնիվիչ: Դուք նրան չէք ճանաչում: Աւագ-քարտուղար Սենատում:

—Ետ այսօր մեզ մօտ կը ճաշէ:

—Եյո:

—Եւ դուք միայն նրա համար, որ առէք ինձ այդ, հրամայեցիք ամենքին դուրս գնալ:

Նիկոլայ Սրտեմնվիչը նորից մի հայեացք զցեց Աննա Վասիլեվսայի վրայ, այս անգամ արդէն հեղնական:

—Ձեղ զարմացնում է այս: Դեռ սպասեցէք:

Ետ լոեց: Աննա Վասիլեվսան էլ մի քիչ լոեց:

—Ես կը կամենայի, խօսեց Աննա Վասիլեվսան...

—Ես գիտեմ, դուք ինձ միշտ համարել էք բարոյագիտութիւնից գուրկ մարդ, սկսեց յանկարծ Նիկոլայ Սրտեմնվիչը:

—Ես, զարմացած վնթինթաց Աննա Վասիլեվսան:

—Եւ գուշէ դուք ճշմարիտ էլ էք: Ես չեմ ուզում ժընտել, որ, ճշմարիտ, ևս ձեզ երբեմն տուել եմ արդարացի առիթ անբաւականութեան (գորշ ձիաները, —անցաւ Աննա Վասիլեվսայի մտքով), —թէեւ դուք ինքներդ պիտի համաձայնուէք, որ ձեր սահմանադրութեան ձեզ յայտնի դրութեան մէջ...

—Բայց ես ձեզ բոլորովին չեմ մեղադրում, Նիկոլայ Սրտեմնվիչ:

—C'est possible. Յամենայն դէպս ես դիտաւորութիւն չունեմ ինձ արդարացնելու: Ինձ կ'արդարացնէ ժամանակը: Բայց ես պարտք եմ համարում հաւատացնել ձեզ, որ գիտեմ իմ պարտաւորութիւնները և կարող եմ հոգ տանել... ինձ հաւատացած ընտանիքի... օգուտների մասին:

—«Ի՞նչ է նշանակում այս բոլորը», մտածում էր Աննա Վասիլեվսան (նա չէր կարող իմանալ, որ նախընթաց օրը, անդիքական կլուբում, բազմոցների սենեակի անկիւնում, վիճարանութիւն սկսուեց այն մասին որ ոռուսները բաժականառեր արտասանելու ընդունակութիւն չունեն: «Մեղանում ով կարող է խօսել, տուէք մէկի անունը», բացականչեց վիճողներից մէկը: —Հէնց Ստախովը, օրինակի համար, պատասխանեց միւսը և ցոյց տուեց Նիկոլայ Սրտեմնվիչին, որ կանգնած էր այդտեղ և քիչ մնաց որ ճիչ արձակէ բաւականութիւնից):

—Օրինակի համար, շարունակեց Նիկոլայ Սրտեմնվիչը,

իմ աղջիկը, Ելենան. դուք չէք գանում թէ ժամանակ է որ նա ամուր ոտք զնէ շաւզի վրայ... մարդու զնայ, ուզում եմ ասել ես: Խելօք-խելօք խօսելը, մարդասիրութիւնը լաւ են, բայց մինչև մի յայտնի աստիճան, մինչև յայտնի տարիները: Ժամանակ է որ նա թողնէ իր մշուչները, դուրս գայ զանազան արտիստների, դպրոցականների, և ինչոր չէրնօգորչների հասարակութիւնից և գառնայ այնպէս, ինչպէս ամենքն են լինում:

—Ի՞նչպէս պէտք է ես հասկանամ ձեր խօսքերը, հարցրեց Աննա Վասիլեվսան:

—Եյ, չնորհ արէք լսելու, պատասխանեց Նիկոլայ Սրտեմնվիչը, առաջուայ պէս վայր քաշելով շրթունքները: —Կ'ասեմ ձեղ ուղղակի, առանց դէսի, ևս ծանօթացայ, ես մօտեցայ այդ երիտասարդի, պ. Կուրնատօվսկու հետ, յոյս ունենալով նրան փեսայ ունենալ: Համարձակւում եմ կարծել, թէ տեմնելով նրան, դուք ինձ չէք մեղազրի կողմնապահութեան կամ դատողութիւնների փութկոտութեան մէջ (Նիկոլայ Սրտեմնվիչը խօսում էր և ինքը զմայլում էր իր պերձախօսութեամբ): Շատ լաւ կրթութեան տէր, նա իրաւագէտ է, ձեերը գեղեցիկ, երեսուն երեք տարեկան աւագ-քարտուղար, կոլէժսկի սօվէտնիկ, և Ստանիսլավի շքանշանը վզի վրայ: Դուք, յոյս ունեմ, արդարադատ կը լինէք իմ վերաբերմամբ, որ ես չեմ պատկանում այն քեր ծես ու սունդունակի անդամների վրայ է. բայց դուք ինքներդ էիք ինձ ասում թէ Ելենա Նիկոլայեվսային դուր են գալիս գործունեայ. զրական մարդիկ: Եգոր Անդրէնիվիչը իր բաժնի մէջ առաջինն է, իբրև գործ սարքող-մարդ այժմ, միւս կողմից, իմ աղջիկը թուլութիւն ունի դէսի մնծահողի արարքները: Իմացէք, ուրեմն, որ Եգոր Անդրէնիվիչը, հէնց որ հասաւ հնարաւորութեան, դուք հասկանում էք ինձ, հնարաւորութեան առանց պակասութեան ապրելու իր ոռնիկով, իսկոյն հրաժարուեց յօդուա իր եղբայրների այն տարեկան գումարից, որ նշանակել է նրա հայրը:

—Իսկ ո՞վ է նրա հայրը, հարցրեց Աննա Վասիլեվսան:

—Նրա հայրը: Նրա հայրը նոյնպէս իր տեսակի յայտնի մարդ է, շատ բարոյական, սուրաց տօլերեց, պաշտօնաթող, կարծեմ, մայօր Բ... կոմսերի բոլոր կալուածներն է կառավարում:

—Ա՛, արտասանեց Աննա Վասիլեվսան:

—Ա՛, ինչ է, կրկնեց Նիկոլայ Սրտեմնվիչը: —Միթէ դուք էլ վարակուած էք նախապաշտամունքներով:

—Ես ոչինչ չասացի, սկսել էր Աննա Վասիլեվսան...

—Ոչ, դուք ասացիք՝ ա... ինչ էլ լինի, ես հարկաւոր համարեցի ձեզ նախազգուշացնել իմ մատածմունքների եղանակի մասին և համարձակւում եմ կարծել... համարձակւում եմ յուսալ, որ պ. կուրնատօվսկի կը լուսնուի և երա օսերտ։ Դա մի որ և է չէրնօգօրցի չէ։

—Ի հարկէ, պէտք է միայն խոհարար Վանկային կանչել, հրամայել որ մի կերակուր էլ աւելացնէ։

—Դուք հասկանում էք, որ ես այդ բանի մէջ չեմ մտնում, արտասանեց Նիկոլայ Արտեմիվիչը, վեր կացաւ, գլխարկը դրեց և շուացնելով (նա մէկից լսել էք, որ շուացնել կարելի է միայն ամարանոցում իր տանը և ժամէժամ) զնաց այդին զբօսնելու։ Շուրբինը նայեց նրան իր սենեակի պատուհանից և լուս կերպով լեզուն հանեց։

Ժամի չորսին տասը բոպէ մնացած, Ստախօվի ամարանոցին մօտեցաւ մի կառք և դեռ երիտասարդ, բարեձե արտաքինի տէր, պարզ և ճաշակով հազնուած մի մարդ դուրս եկաւ նրանից և հրամայեց որ իր մասին իմաց տան տանտէրերին։ Դա Եգօր Անդրէնվիչ կուրնատօվսկին էր։

Ահա, ի միջի այլոց, ինչ էր գրում միւս օրը Ելենան Ինսարօվին։

«Շնորհաւորիր ինձ, սիրելի Դմիտրի, ես փեսացու ունեմ։ Նա երէկ ճաշեց մեզ մօտ հայրիկս ծանօթացել է նրա հետ, կարծեմ, անգլիական կլուբում և հրաւիրել է նրան։ Ի հարկէ, նա երէկ դեռ իրբեւ փեսացու չէր եկել, Բայց բարի մայրիկը, որին հայրիկը հաղորդել է իր յօյսերը, ականջիս շնչաց՝ թէ ինչ հիւր է դա։ Նրա անունն է Եգօր Անդրէնվիչ կուրնատօվսկի։ Նա ծառայում է սենատում և աւագ-քարտուղար է։ Նախ կը նկարագրեմ նրա արտաքինը։ Նա մեծ հասակի չէ, քեզանից ցած է, լուս կազմուածք ունի։ Նրա գծերը կանոնաւոր են, նրա մազերը կարծ խուզած են, ունի մեծ բակենբարդ։ Նրա աչքերը փոքր են (ինչպէս քո աչքերը), շագանակագոյն, արագավաղ, շրթունքները տափակ են, լայն աչքերում և շրթունքների վրայ մշտական ժպիտ, մի տեսակ պաշտօնական, կարծես թէ այդ ժպիտը նրանում օրապահութիւն է անում։ Իրան նա շատ հասարակ է պահում, խօսում է պարզ, և ամեն ինչ նրանում պարզ է։ Նա ման է գալիս, ծիծաղում է, ուտում է այնպէս, որ կարծես գործ է կատարում։ «Ի՞նչպէս է ուտումնասիրել», մատածում ես դու, գուցէ այս բոպէին։ Այն։ Նրա համար եմ ուսումնասիրել, որ նկարագրեմ նրան քո առաջ և եւ ինչպէս չուսումնասիրել իր փեսացուին։ Նրա մէջ մի ինչոր երկաթէ բան կայ... և բութ, և գատարկ մի և նոյն ժա-

մանակ—և ազնիւ, ասում են որ նա, իրաւ, շատ ազնիւ է։ Դու էլ երկաթէ ես, բայց ոչ թէ այնպէս, ինչպէս այս մէկը ծաշին նա նստած էր ինձ մօտ, մեր զիմացը նստած էր Շուրբինը։ Նախ խօսք սկսուեց ինչ-որ վաճառականական ձեռնարկութիւնների մասին։ ասում են թէ նա դրանց մէջ զլուխ ունի և քիչ էր մնում որ թողնէ իր ծառայութիւնը, որպէս զի իր ձեռքն առնէ մի մեծ զործարան։ Այ լաւ կ'անէր հա։ Յետոյ Շուրբինը խօսեց թատրոնի մասին։ պարոն կուրնատօվսկին յայտնեց, և—ես պիտի խոստովանեմ—առանց կեղծ համեստութեան, թէ ինքը գեղարուեստի մէջ ոչինչ չէ հասկանում։ Սա ինձ քեզ յիշեցրեց... բայց ես մտածեցի. ոչ, ես և Դմիտրին այնուամենայնիւ ուրիշ կերպ չենք հասկանում զեղարուեստը։ Այս մէկը կարծես ուզում էր ասել, ես չեմ հասկանում զեղարուեստը, և նա իսկի հարկաւոր էլ չէ, բայց բարեկարդ պետութեան մէջ թոյլատրում է։ Պետերբուրգի և ուստի վերաբերմամբ նա, սակայն, բաւական անտարբեր է։ Նա մի անգամ մինչեւ իսկ պրօլետարի անուանեց։ Մենք, ասաց, բանուորներ ենք, ես մտածեցի. եթէ այս բանը Դմիտրին առէր, ինձ չէր գուր գայ, իսկ այս մէկը թող ասում է ասէ, թող պարծենայ։ Ինձ հետ նա շատ քաղաքավարի էր, բայց ինձ մի գլուխ թւում էր թէ ինձ հետ խօսում է մի շատ և շատ վիճող մեծաւոր։ Եթէ նա ուզում է գովել մէկին, ասում է թէ այս-ինչը ունի կանոններ—սա նրա սիրած խօսքն է։ Նա պէտք է լինի ինքնավատան, աշխատասէր, ընդունակ ինքնազոհութեան (գու տեսնում ես ես անաշառ եմ). այսինքն ընդունակ զոհելու իր օգուտները, բայց նո մի մեծ բռնապետ է։ Դժբախտութիւն կը լինի նրա ձեռքն ընկնելը։ Ճաշի վրայ խօսեցին կաշառքի մասին...»

—Ես հասկանում եմ, ասաց նա, որ շատ դէպքերում կաշառք վերցնողը մեղաւոր չէ։ Նա ուրիշ կերպ վարուել չէր կարող։ Եւ ասկայն, երբ նա բռնուում է, պէտք է նրան չարդել։ Ես աղաղակեցի։ —«Զարդել անմեղին»։

—«Ո՞ր», հարցրեց Շուրբինը։ Կուրնատօվսկին շփոթուածի նման էլ էր, զարմացածի նման էլ և ասաց։ «այդ բացատրելու կարիք չը կայ»։

«Հայրիկս, որ, կարծեմ, խորին ակնածութեամբ է վերաբերում նրան, կրկնեց թէ, ի հարկէ, կարիք չը կայ և խօսեցութիւնը, ի ցաւ իմ, վերջացաւ։ Երեկոյեան եկաւ Բերսենեվը և նրա հետ սարսափելի վէճ սկսուեց։ Ես դեռ երրէր չեմ տեսել մեր բարի Անդրէյ Պետրովիչին այնքան յուզմունքի մէջ։

Պարոն Կուրնատօվսկին բոլորովին չէր ժխտում զիտութեան, համալսարանների և այն օդուտը... և սակայն ես հասկանում էի Անդրէյ Պետրօվիչի վրդովմունքը: Կուրնատօվսկին այդ բոլորի վրայ նայում է իրեւ մի տեսակ մարմնամարդութեան վրայ: Ճաշից յետոյ Շուրինը մօտեցաւ ինձ և ասաց. ահա սա և մի ուրիշ (նու քո անունը անտասանել չէ կարողանում)՝ երկուսն էլ գործնական մարդիկ են, բայց տեսէք ինչ տարբերութիւն կայ. այնտեղ իսկական կենդանի, կեանքի արտադրած իդէալ, իսկ այստեղ նոյն իսկ պարտականութեան զգացմունք էլ չը կայ, այլ պարզապէս պաշտօնեայի ազնւութիւն և գործունեայ մարդ առանց բովանդակութեան: Շուրինը խելօք է, և ես քեզ համար միտս պահեցի նրա խօսքերը. իսկ եթէ ինձ հարցնես, ինչ նմանութիւն քո և Կուրնատօվսկու մէջ: Դու հաւատում ես, իսկ նա ոչ, որովհետեւ միայն ինքն իրան հաւատալ անկարելի է:

Նա ուշ գնաց, բայց մայրիկս կարողացաւ ինձ հաղորդել, որ ես նրան դուր եմ եկել, որ հայրիկը հիացած է... Հօ չէ ասել նա իմ մասին էլ, թէ ես կանոններ ունեմ: Իսկ ես քիչ էր մնացել պատասխանէի մայրիկին, թէ ես շատ խղճում եմ, բայց ես արդէն ունեմ ամուսին: Խնչու հայրիկը քեզ այնպէս չէ սիրում: Մայրիկի հետ գեռ կարելի էր մի կերպով...

«Օ՛հ, սիրելիս ես քո առաջ այսքան մանրամասն նկարագրեցի այդ պարոնին այն պատճառով, որ խլացնեմ իմ կարօտը: Ես չեմ ապրում առանց քեզ, ես անդադար քեզ եմ տեսնում, լսում... ես սպասում եմ քեզ, բայց ոչ թէ մեզ մօտ, ինչպէս դու ուզում էիր, — երեւակացիր, թէ որքան ծանր և անյարմար կը լինէր մեզ համար — այլ զիտես, ուր ես քեզ գրում էի — այն անտառում... Օ՛հ, սիրելիս, ինչպէս եմ սիրում քեզ»:

XXIII

Կուրնատօվսկու առաջին այցելութիւնից մի երեք շաբաթ անցած, Աննա Վասիլեվնան, ի մեծ ուրախութիւն Ելենայի, տեղափոխուեց Մոսկուա, իր մեծ փայտէ առներ, որ զանում էր Պրեչիստենկայի մօտ, տասն սիւներով, սպիտակ քնարներով և պսակներով իւրաքանչիւր պատուհանի վրայ, փոքրիկ այգով, ոհագին կամաչ բակով, ջրհորով բակում և շան բունով ջրհորի մօտ: Աննա Վասիլեվնան երբէք այդքան վաղ չէր վերադարել ամարանոցից, բայց այդ տարին աշնանային առաջին ցրտերից սկսեց աւելի սաստկանալ նրա այտոյցը (Փլիւս). Նիկոլայ Սրտեմնիվիչը, իսկ լողմից վերջացնելով բժշկութիւնը, կառջ կարօտն էր քա-

չում: մանաւանդ որ Աւգուստինա Խրիստիանովան զնացել էր հիւր իր ազգականուում մօտ, Բեգէլ քաղաքը. Մոսկուա էր եկել մի ինչ որ արտասահմանեան ընտանիք, որ ցոյց էր տալիս պլաստիքական դիրքեր, des poses plastiques, սրանց նկարագրութիւնը «Մոսկովեկիա Յեզդուստի» լրագրի մէջ՝ սաստիկ գրգռել էր Աննա Վասիլեվնայի հետաքրութիւնը: Մի խօսքով, ամարանոցում այլ ևս մնալը անյարմար դատուեց և նոյն իսկ, Նիկոլայ Արտեմեվիչի ասելով, աւելորդ մնալը չէր կարելի համաձայնեցնել իր «սախագծած մաքերի» հետ: Վերջին երկու շաբաթը շատ երկար թուացին Ելենային: Կուրնատօվսկին եկաւ երկու անգամ, կիրակի օրերը. միւս օրերում նա զբաղուած էր: Նա զալիս էր յատկապէս Ելենայի համար, բայց աւելի խօսում էր Զօյեայի հետ, որին նա շատ դուր էր եկել: «Das ist ein Mann!» մտածում էր Զօյեան ինքն իրան, նայելով նրա արևապահական դէմքին, լսելով նրա ինքնահաւան, զիջողական ձառները: Զօյեայի կարծիքով ոչ ոք չունէր այնպիսի հրաշալի ձայն, ոչ ոք չէր կարողանում այնպէս հիանալի կերպով արտասանել՝ «Ես պատիւ ունեցայ» կամ «Ես շատ բաւական եմ»: Ինսարօվը չէր եղել Ստախովների մօտ, բայց Ելենան տեսաւ նրան մի անգամ, զաղտուկ, մի փոքրիկ անտառում Մոսկուա գետի վրայ, ուր նա նշանակել էր տեսակցութիւն: Նրանք հազիւ կարողացան մի քանի խօսք ասել միմեանց: Շուրինը Մոսկուա վերադարձաւ Աննա Վասիլեվնայի հետ, Բերսենելով մի քանի օր ուշ:

Ինսարօվը նստած էր իր սենեակում և երրորդ անգամ կարդում էր այն նամակները, որոնք ուղարկուած էին Յօլգարիից եկողներով, պօստով վախում էին ուղարկել: Նամակները շատ յուղել էին Ինսարօվին: Դէպքերը Արենելում առաջնուում էին արագ կերպով, ոռւսաց զօրքերը զրաւել էին իշխանութիւնները *) և այդ բանը յուզում էր մաքերը, փոթորիկը մնանուում էր, արդէն զգացւում էր մօտիկ, անխուսափելի պատերազմի հովը: Չորս կողմում բոլորւում էր հրդեհը, և ոչ ոք չէր կարող նախատեսել թէ դէպի ուր կ'երթայ նա, ուր կանգ կ'առնէ. հին վիրաւորանքները, վաղեմի յոյսերը — ամեն ինչ շարժուեց: Ինսարօվի սիրու սաստիկ խփում էր, նրա յոյսերն էլ կատարւում էին: Բայց արգեօք վաղ չէ, արդեօք իզուր չէ, մտածում էր նա, ձեռքերը ձմլելով: Մենք դեռ պատրաստ չենք: — Բայց թող այդպէս էլ լինի: Պէտք է զնալ:

Մի ինչ-որ բան թեթև կերպով աղմկեց զոան ետեռմ,

*) Սօլդատօ-Վալախիա:

դուռը արագ կերպով բացուեց և սենեակը մտաւ Ելենան:

Ինսարօվը ամբողջովին դողաց, վազեց դէպի նրան, չքեց նրա առաջ, գրկեց նրա իրանը և իր զլուխը պինդ սեղմեց այդ իրանին:

—Ինձ չէ՞ր սպասում, խօսեց Ելենան հաղիւ շունչը քաշելով (նա արագ վազել էր սանդուղքով դէպի վեր): Սիրելիս, սիրելիս: Ուրեմն դու այստեղ ես ապրում: Ես քեզ շուտ դասյ: Քո բնակարանի տիրոչ աղջիկը ինձ առաջնորդեց: Երէկ չէ, անցեալ օրը եկանք մնաք: Ես ուզում էի գրել քեզ, բայց մտածեցի, որ աւելի լաւ է ինքս գամ: Քնզ մօտ քառորդ ժամով եմ եկել, Վեր կաց, փակիր դուռը:

Ինսարօվը վերկացաւ, աշխոյժ կերպով վակեց դուռը, վերադարձաւ Ելենայի մօտ և բռնեց նրա ձեռքերից: Նա չէր կարողանում խօսել, ուրախութիւնը նրան խեղդում էր: Ելենան Փալտալով նայում էր նրա աշքերին... դրանց մէջ այնքան երջանկութիւն կար... Ելենան ամաչեց:

—Սպասիր, ասայ նա, քնչութեամբ ձեռքերը հանելով նրա ձեռքերից,—թող դլսարկս վերցնեմ:

Նա արձակեց զիսարկի ժապաւէնսերը, դէն գցեց զլսարկը, ուսերից իջեցրեց թիկնոցը, զրստեց մազերը և նստեց փոքրիկ, ճնամաշ զիվանի վրայ. Ինսարօվը չը շարժուեց և նայում էր նրան իրբն դիւթուած:

—Նստիր, խօսեց Ելենան, չը բարձրացնելով իր հայեաչքը դէպի նրան և ցոյց տալով նրան տեղ իր մօտ:

Ինսարօվը նստեց, բայց ոչ թէ զիվանի վրայ, այլ յատակին, նրա ոտների մօտ:

—Առ, հանիր ձեռնոցներս, ասաց Ելենան մի անհաւասար ձայնով: Նա սարսափ էր զգում:

Ինսարօվը սկսեց նախ ձեռնոցի կոճակները բաց անել, յետոյ հանել մի ձեռնոցը. հանեց նրան մինչեւ կէսը և իր շըրթունքներով աղահաբար կպաւ ձեռնոցի տակից սպիտակին տուող բարակ և քնքոյչ ձեռքին:

Ելենան ցնցուեց և ուզեց հեռացնել Ինսարօվին միւս ձեռքով, բայց նա սկսեց համբուրել միւս ձեռքը, Ելենան ձեռքը քաշեց դէպի իրան, Ինսարօվը յետ զցեց զլուխը, Ելենան նայեց նրա դէմքին, ցած խոնարհուեց—և նրանց լըթունքները միացան...

Անցաւ մի վայրկեան... Ելենան դուրս պլծաւ, կանգնեց, շնչաց. «ոչ, ոչ» և արագ կերպով մօտեցաւ զրասեղանին:

—Չէ որ այստեղ ես տանտիրուհի եմ, ինձանից ծածուկ բան դու չը պէտք է ունենաս, ասաց նա, աշխատելով անհոգ

երեւալ և իր մէջքը դարձնելով դէպի Ինսարօվը—Որքան թըղթեր: Սրանք ինչ նամակներ են:

Ինսարօվը կիտեց յօնքերը:—Այդ նամակները, ասաց նա, վեր կենալով յատակից:—Դու կարող ես կարգալ նրանց:

Ելենան չուռ տուեց նամակները իր ձեռքի մէջ:—Նրանք այնքան շատ են, այնքան մանր են գրուած, իսկ ես պիտի այս րոպէին գնամ... Տէրը նրանց հետ... Հօ իմ մրցակից կնոջից չեն... Եւ նրանք ուսւերէն էլ չեն, աւելացրեց նա, շուռ տալով բարակ թերթերը:

Ինսարօվը մօտեցաւ նրան և դիպաւ նրա իրանին: Ելենան յանկարծ չուռ եկաւ դէպի նրան, ուրախ ժպտաց և յանուեց նրա ուսին:

—Այս նամակները Բոլղարիայից են, Ելենա, բարեկամներս են գրում ինձ, նրանք կանչում են ինձ:

—Այժմ, Բոլղարիա:

—Այո... այժմ: Քանի ժամանակ կայ, քանի կարելի է զնալ:

Ելենան յանկարծ իր երկու ձեռքերով շրջապատեց նրա մինքը:—Դու հօ կը վերցնես ինձ քեզ հետ:

Ինսարօվը սեղմեց նրան իր սրտին:—Օ՛, իմ սերելի աղջիկ, օ, իմ հերոսուհի, ինչպէս զու արտասամնեցիր այդ խօսքը: Բայց արդեօք ինձ համար մինդք չէ, անխելքութիւն չէ, ինձ, անտուն, միայնակ մարդուս համար, տանել քեզ ինձ հետ... և ծւր...

Ելենան ձեռքով սեղմեց նրա բերանը:—Սաս... թէ չէ ես կը բարկանամ և այլ ես երբէք չեմ գայ քեզ մօտ: Միթէ ամեն ինչ չէ վճռուած, ամսն ինչ չէ վերջացրուած մեր մէջ: Միթէ ես քո կինը չեմ: Միթէ կինը ամսունուց բաժանուում է:

—Կանափ պատերազմի չեն գնում, խօսեց Ինսարօվը մի կիսատխուր ժպիտով:

—Այս, երբ սրանք կարող են մնալ: Բայց միթէ ես կարող եմ մնալ այստեղ:

—Ելենա, դու հրեշտակ ես... Բայց մտածիր, ինձ, գուցէ, հարկաւոր լինի գուրս գալ Մոսկուայից... Երկու շաբթից յետոյ: Ես այլ ես չեմ կարող մտածել ոչ համալսարանական դասախոսութիւնների, ոչ աշխատանքներս վերջացնելու մասին:

—Ի՞նչ անենք որ այդպէս է. ընդհատեց Ելենան:—Դու պէտք է շուտով զնամ: Ուզում ես, ես հէնց այժմ, այս րոպէին, կը մնամ քեզ մօտ, քեզ հետ միշտ և տուն չեմ վերադառնայ: Ճանապարհուենք այս րոպէին, ուզում ես...

Ինսարօվը կրկնապատկած ուժով զցեց նրան իր գրկի

մէջ։—Որ այդպէս է, թող ինձ պատժէ Աստուած, բացականչեց նա, —եթէ ես վատ գործ եմ անում։ Այսօրուայ օրից մենք յափառեան միացած ենք։

—Ես մնում եմ, հարցրեց Ելենան։

—Ոչ, իմ մաքուր աղջիկ։ ոչ, իմ զանձը։ Դու այսօր կը վերադառնաս տուն, բայց պատրաստ եղիր։ Այս գործը չէ կարելի միանգամբ կատարել. պէտք է լաւ մտածել։ Այստեղ հարկաւոր են փող, անցագիր։

—Փող ես ունիմ, ընդհատեց Ելենան—ութսուն ոռութիւն։

—Ե՞ս, դա շատ չէ, նկատեց ինսարօվը, —բայց և այնպէս, պէտք կը գայ։

—Ես կարող եմ զանել, ես փոխ կ'առնեմ, ես կը խնդրեմ մայրիկից… Ոչ, մայրիկից չեմ խնդրի… Կարելի է ժամացոյց ծախսել… ես ականջի օղեր ունեմ, երկու էլ ձեռքի օղեր…

—Բանը փողը չէ, Ելենա, անցագիր, քո անցագիրը, ինչպէս անենք։

—Այս, այդ ինչպէս անենք։ Եւ անցագիրը անպատճառ հարկաւոր է։

—Անպատճառ։

Ելենան ծէծաղեց։—Ի՞նչ միտս եկաւ, յիշում եմ, ես դու փոքր էի… Մեղանից հեռացաւ աղախինը։ Նրան բռնեցին, ներեցին, և նա երկար ապրեց մեզ մօտ… Բայց և այդպէս ամենքը նրան անուանում էին փախստական Տատեանա։ Զէի կարծում ես այն ժամանակ թէ ինքս էլ, գուցէ փախստական կը լինեմ, ինչպէս նա։

—Ելենա, ինչպէս չես ամաչում։

—Ի՞նչ է, ի հարկէ, լաւ կը լինէր գնալ անցագրով։ Բայց եթէ անկարելի է…

—Այդ բոլորը մենք կը սարքենք յետոյ, յետոյ, սպասիր, ասաց ինսարօվը։—Թող միայն մի քիչ ինքս ինձ նայեմ, մտածեմ։ Մենք ամեն ինչի մասին կը խօսենք քեզ հետ, ինչպէս հարկն է։ Իսկ փող ես էլ ունեմ։

Ելենան ձեռքով յետ քաշեց մաղերը, որոնք թափուել էին նրա ճակատին։—0՝, Դիմիորի, որքան ուրախալի կը լինի մեզ համար ճանապարհ գնալ երկուսով։

—Այս, ասաց ինսարօվը. իսկ այնտեղ, ուր մենք կը գնանք…

—Ի՞նչ կայ որ… ընդհատեց Ելենան, —միթէ երկուսով մնունելը նոյնպէս ուրախալի չէ. բայց ոչ, ինչու մեռնել։ Մենք կ'ապրենք, մենք ջահէլ ենք. Քանի տարեկան ես։ Քսան և վեց։

—Քսան և վեց։

—Իսկ ես քսան տարեկան եմ։ Դեռ առջեւում շատ ժամանակ կայ։ Հա, դու ուզում էր փախչել ինձանից։ Քեզ հարկաւոր չէր ուռւական սէր, ով բոլգարացի։ Տեսնենք այժմ, թէ ինչպէս դու ինձանից կ'ազատուես։ Բայց ինչ կը լինէր մեղ երկուսիս, եթէ ես այն ժամանակ չը դայի քեզ մօտ։

—Ելենա, դու գիտես թէ ինչն էր ինձ հարկադրում հեռանալ։

—Գիտեմ. դու սիրեցիր և վախեցար։ Բայց միթէ դու չէիր զգում, որ քեզ էլ են սիրում։

—Պատուովս եմ երգւում, Ելենա, ոչ։ Ելենան արագ և անակնկալ համբուրեց նրան։—Ահա հէնց զրա համար էլ ես քեզ սիրում եմ։ Իսկ այժմ մնացիր բարեւ։

—Դու այլ եւս չես կարող մնալ, հարցրեց ինսարօվը։

—Ոչ, սիրելիս։ Կարծում ես թէ հեշտ էր մենակ զուրս գալ տանից։ Քառորդ ժամը վազուց անցել է։—Նա հազաւ թիկնոցը և զլխարկը։—Իսկ դու եկ մեզ մօտ վաղը երեկոյեան։ Ոչ, միւս օրը։ Զանձրալի կը լինի, բայց ինչ արած. գոնէ կը տեսնուենք։ Մնաս բարեւ։ Խնձ դուրս թող։—Ինսարօվը վերջին անգամ զրկեց նրան։—Ահ, տես, դու կոտրեցիր իմ շղթան։ 0՝, դու շատ ճարտար չես շարժուածքներիդ մէջ։ Բայց ոչինչ։ Աւելի լաւ։ Ես կ'երթամ կուզնեցիր կամուրջը, կը տամ շղթան շննելու։ Եթէ ինձ կը հարցնեն, կ'ասեմ կուզնեցիր կամուրջի վրայ եմ եղել։—Ելենան բռնեց դռան կոթից։

—Ի գէպ, ես մոռացայ քեզ ասել. մուսիօ կուրնասովսկին, երեւի, այս քանի օրերը ինձ առաջարկութիւն կ'անէ։ Բայց ես կ'ասեմ նրան… ահա ինչ։—Նա ձեռքի բթամատը զրեց քթի ծայրին և միւս մատները խաղացրեց օղի մէջ։—Մնաս բարեւ։ Ցտեսութիւն։ Այժմ ես ճանապարհ ճանաչում եմ… Իսկ դու ժամանակ մի կորցնիր…

Ելենան քիչ բաց արաւ դուռը, ականջ զրեց, շուռ եկաւ դէպի ինսարօվը, զլխով բարեւ արաւ և դուրս պրծաւ սենեակից։

Մօտ մի բոպէ կանգնած էր ինսարօվը փակուած դռան առջեւ և նոյնպէս ականջ էր դուռը։ Ցածրում, բակը տանող դռուը թրխաց։ Ինսարօվը մօտեցաւ բազմոցին, նստեց և ծածկեց աչքերը ձեռքերով։ Նրան երբէք այսպիսի բան չէր պատճել։ «Ի՞նչով արժանացաց ես այսպիսի սիրոյ, մտածում էր նա։—Երազ չէ սա։»

Բայց յափրուկի նուրբ հոտը, որ թողել էր Ելենան նրա աղքատ, մութ սենեակում, յիշեցնում էր օրիորդի այցելու թիւնը։ Դրա հետ միասին, թւում էր, դեռ մնացել էին օղի

մէջ և երիտասարդ ձայնի հնչիւնները, և թեթեւ երիտասարդ քայլերի աղմուկը, և երիտասարդ, կուսական մարմինի ջերմութիւնն ու թարմութիւնը:

xxiv

Ինսարօվը վճռեց ապառել դեռ աւելի գրական տեղեկութիւնների, իսկ ինքը սկսեց պատրաստուել ճանապարհուելու: Գործը շատ դժուար էր: Իսկապէս իր համար ոչինչ արգելքներ չը կային. մնում էր միայն անցազիր պահանջել, —բայց ինչ անել Ելենայի հետ: Նրա համար օրինական ճանապարհով անցագիր ձեռք բերելը անհնարին էր: Պսակուել նրա հետ ծածուկ և ապա գնալ նրա ծնողների մօտ... «Նրանք այն ժամանակ մեզ բաց կը թողնեն, մտածում էր նա: Իսկ եթէ բաց չը թողնեն: Մենք, այնուամենայնիւ, կը գնանք: Իսկ եթէ նրանք կը դանդատուեն... եթէ... Ոչ, աւելի լաւ է աշխատել մի կերպով անցագիր ձեռք բերել»:

Նա վճռեց խորհուրդ հարցնել (ի հարկէ անուններ չը տալով) իր մի ծանօթից, մի պաշտօնաթող, թէ պաշտօնից հեռացրած պրօկուրօրից, որ մի փորձուած և հին վարպետ էր ամեն տեսակ ծածուկ զործերի մէջ։ Այս յարգելի մարդը մօտիկում չէր ապրում. ինսարօվը մի ամբողջ ժամ մի վատ կառքով հազիւ հասաւ նրա բնակարանին, և ի լրումն ամենայնի, տանը չը գտաւ նրան. իսկ վերադարձին նա մինչեւ ուկորները թըրջուեց յանկարծահաս հեղեղից։ Միւս առաւօտը, ինսարօվը, չը նայած բաւական սաստիկ գլխացաւին, նորից գնաց պաշտօնաթող պրօկուրօրի մօտ։ Պաշտօնաթող պրօկուրօրը լսեց նրան ուշադրութեամբ, քթախոտ քաշելով մի տուփից, որ գարդարուած էր լիսակուրծք յաւերժահարսի պատկերով և ծուռ նայելով հիւրին իր խորամանկ, նոյնպէս քթախոտի գոյն ունեցող աչքերով, լսեց և պահանջեց ռաւելի պարզութիւն փաստական տեկեկութիւնները պատմելիս, և նկատելով, որ ինսարօվը յօժարութեամբ չէ մտնում մանրամասնութիւնների մէջ (նա զօռով էր սիրտ արել պրօկուրօրի մօտ գալու), բաւականացաւ խորհուրդ տալով որ ամենից առաջ զրահաւորուի «փարաներով» և խնդրեց գալ մի ուրիշ անդամ, «երբ ձեր մէջ», աւելի կը շատանայ վստահութիւնը և կը պակասէ անվստահութիւնը։ Իսկ անցագիրը, շարունակեց նա կարծես ինքն իրան, «մարդկային ձեռքի զործ է. զուք, օրինակ, գնում էք. ով գիտէ, Մարիա Բրեդիինա էք զուք թէ կարօինա Ձօգելմէյեր»։ Զգուաչքի զարդուեց ինսարօվի մէջ, բայց նա չնորհակալուզ շարժուեց ինսարօվի մէջ, բայց նա չնորհակալուզ

թիւն յայտնեց պրօլուրօրին և խոստացաւ այս քանի օրերը
նորից գալ:

Նոյն երեկոյնեան նա գնաց Ստախօվների մօտ: Անսա վասիլեվնան դիմաւորեց նրան քաղցրութեամբ, թեթեւ կերպով յանդիմանեց նրան, որ բոլորովին իրանց մոռացել է, և գտնելով որ նրա գոյնը թռած է՝ տեղեկացաւ թէ ինչպէս է նրա առողջութիւնը. Նիկոլայ Արտեմեվիչը մի բառ անգամ չասաց նրան, միայն նայեց նրան մի մտախոհ—անհոգ հետաքրքրութեամբ. Շուրբինը ցուրտ վարուեց նրա հետ, բայց Ելենան ջերմացրեց նրան, Նա սպասում էր ինսարօվին. Նրա համար հագել էր այն իսկ զգեստը, որ ունէր վրան մատուռում տեղի՝ ունեցած տեսակցութեան օրը. բայց Ելենան այնպէս հանգիստ ողջունեղ նրան, և այնպէս սիրալիր ու անհոգ ուրախ էր, որ, նայելով նրան, ոչ ոք չէր կարծի, թէ այդ աղջկայ ճակատագիրը արդէն վճռուած է, և թէ երջանիկ սիրոյ ծածուկ գիտակցութիւնը միայն տալիս էր կենդանութիւն նրա գծերին, թեթեւութիւն և չընազութիւն նրա շարժուածքներին: Նա թէյ էր ածում Զօյեայի տեղ, հանաքներ էր անում, շատախօսում էր. Նա գիտէր, որ իրան պիտի գիտէր Շուրբինը, որ Ինսարօվը չի կարողանայ դիմակ հագնել, չի կարողանայ անտարբեր ձեւանալ, և զինուեց վաղօրօք: Եւ Ելենան սխալուած չէր. Շուրբինը աչք չէր հեռացնում նրանից, իսկ Ինսարօվը շատ լուռ էր և ամպած ամբողջ երեսը: Ելենան այն աստիճան իրան երջանիկ էր զգում, որ ուզեց քիչ ջղրացնել նրան:

—Հը, ինչպէս է, հարցրեց նա Խնաճօվին յանկարծ.—Ճեր
ծրագիրը առաջ է գնում:

Ինսարօվը շփոթուեց:

—Ի՞նչ ծրագիր, ասաց նա:

—Մոռացիլ էք, պատասխանեց Ելենան, ծիծաղելով նրա երեսին. միայն ինսարօվը կարող էր հասկանալ այդ երջանիկ ծիծաղի նշանակութիւնը. —ձեր բօլգարական քրիսթոմատիան ուսւաների համար:

—Quelle bourde!, ատամների արանքով փնթփնթաց նիւկուայ Աբտեմնեցիք:

Զօյեան նստեց գաշնամուրի առաջ, Ելենան հազիւ նկատելի կերպով ուսը թօթուեց և Խնսարօվին աչքերով ցոյց տուեց դուռը, կարծես արձակելով նրան որ առն զնայ: Յետոյ նա ընդհատումներով երկու անդամ մատը զիպցրեց սեղանին և նայեց նրան: Խնսարօվը հասկացաւ, որ նա նշանակում է տեսակցութիւն երկու օրից յետոյ, և Ելենան արագ ժպտաց, երբ տեսաւ որ նա իրան հասկացել է, Խնսարօվը վեր կացաւ և սկը-

սեց հրաժեշա տալ. նա իրան առողջ չէր զգում: Եկաւ Կուր-նատօվսկին: Նիկոլայ Արտեմեվիչը տեղից վեր թռաւ, աջ ձեռքը բարձրացրեց գլխից վերեւ և կակուղ կերպով իջեցրեց նրան աւագ-քարտուղարի ափի վրայ: Ինսարօվը էլի մի քանի բոպէ մնաց, որ նայէ իր հակառակորդին: Ելենան ծածուկ, խորա-մանկութեամբ գլուխը ժամ առաջ, տանտէրը հարկաւոր չը համարեց նրանց ներկայացնել իրար, և ինսարօվը դուրս գնաց, համարեց նագամ հայեացք փոխանակելով Ելենայի հետ: Շուրբինը վերջին անգամ հայեացք փոխանակելով Ելենայի հետ: Շուրբինը մտածեց—և կատաղաբար վիճեց Կուրնատօվսկու հետ մի իրաւաբանական հարցի մասին, որի մէջ ինքը ոչինչ չէր հասկանում:

Ինսարօվը ամբողջ գիշերը չը քնեց և առաւօտեան իրան վատ էր զգում. սակայն նա զբաղուեց կարգի բերելով իր թըդ-թերը և նամակներ գրելով, բայց նրա գլուխը ծանր էր և մի կերպ չփոթուած: Ճաշի մօտ նա տաքութեան մէջ ընկաւ և ո-չինչ չը կարողացաւ ուտել: Տաքութիւնը արագ սաստկացաւ իրի ինագէմին, բոլոր անգամները կոտրատում էին և տանջող գլխացաւ. կար: Ինսարօվը պառկեց այն իսկ փոքրիկ բազմոցի գլխացաւ. կար: Ինսարօվը պառկեց այն իսկ փոքրիկ բազմոցի գրայ, ուր անցեալ օրերում նստած էր Ելենան. նա մտածում գրայ, «Տեղն է որ ես պատժում եմ, ինչու զնացի այն, հինա-էր. «Տեղն է որ ես պատժում եմ, ինչու զնացի այն, հինա-էր գարպետորդու մօտ», և փոքրեց քնել... Բայց տկարու-ուրց գարպետորդու մօտ», և փոքրեց քնել... Բայց տկարու-թիւնը արդէն տիրել էր նրան: Սարսափելի ոյժով սկսեցին խը-փել երակները նրա մէջ. աօթային սաստկութեամբ հրդեհուեց արիւնը, մտքերը սկսեցին պտոյա դալ թուչուների նման: Նա արիւնը, մտքերը սկսեցին պտոյա դալ թուչուների նման: Նա ընկաւ մոռացութեան մէջ: Զարդուածի նման ընկած էր նա երեսի վրայ և յանկարծ նրան տեսիներ երեւացին. մէկը նրա վրայ հանգարտ քրքչում է և շնչում: Նա զօռով բաց արա- պարտ է աչքերը, ճրագի լոյսը դանակի պէս ծակեց աչքերը... Ի՞նչ է աին պրօկուրօրը նրա առջեն է, խալաթ հագած, ինչպէս սա. հին պրօկուրօրը նրա առջեն է, խալաթ հագած, ինչպէս սա. տեսել էր նրան նախընթաց օրը... «Կարօլինա Ֆօգէլմէյեր», տեսել էր նրան նախընթաց օրը... Ինսարօվը նայում է, իսկ փնթինթում է անտառամ բերանը: Ինսարօվը նայում է, իսկ գնդինթում է անտառամ բերանը: Ինսարօվը նայում է, իսկ գնդինթում է, ուռչում է, մեծանում, նա այլ և ծերունին լայնանում է, ուռչում է, մեծանում, նա այլ և ծերունին լայնանում է—նա ծառ է... Ինսարօվը պիտի մազլցէ գիք ճիւղե-մարդ չէ—նա ծառ է... Ինսարօվը պիտի մազլցէ գիք ճիւղե-

XXV

—Զեղ մօտ եկել է մի ինչոր, ով զիտէ, փականազործ թէ ուրիշ ինչ, ասում էր միւս երեկոյեան Բերսենեվին նրա ծառան, որ աչքի էր ընկնում նրանով, որ խիստ էր վարւում իր պարոնի հետ և մտքի սկեպտիկ ուղղութիւն ունէր,—ուզում է ձեզ տեսնել:

—Կանչէք, ասաց Բեսենեվը:

Մտաւ «Փականազործը»: Բերսենեվը ճանաչեց նրան. գերձակն էր, այն բնակարանի տէրը, ուր ապրում էր Ինսա-րօվը:

—Ի՞նչ կայ, հարցուց նա:

—Ես եկայ ձեղ մօտ, սկսեց գերձակը, դանդաղ կերպով փոխելով ոսները կանգնած տեղը և ժամանակ առ ժամանակ շարժելով աջ ձեռքը, որի վերջին երեք մատներով բռնած ու-նէր հանգերձի թեղանիքը:—Մեր անկեցը, ինչ իմանամ, ով զիտէ շատ հիւանդ է:

—Ինսարօվը:

—Սյունակնեցը: Ինչ իմանամ, երէկ գեռ առաւօ-տից ոտի վրայ էր, երեկոյեան միայն խմելու ջուր ուզեց, մեր անացին ջուր տարաւ, իսկ զիշերը զառանցում էր, մենք լսում էինք, որովհետեւ բարակ միջնապատ է. իսկ այսօր առաւօտեան լեզուն կտրուել է, ընկած է անշարժ, իսկ տաքութիւնը—Ասու-ուած ցոյց չը տայ: Ես ստածեցի, ինչ իմանամ, մէկ էլ տեսայ մեռաւ, ոստիկանութեան պէտք է իմաց տալ: Որովհետեւ միակ է նա, բայց տանեցին ինձ ասում է. «Գնա այն տնկեցի մօտ, որից մեր անկեցը ամարանոց էր վարձել. զուցէ նա քեզ մի բան կ'ասէ, կամ ինքը կը զգայ:» Ահա ես էլ եկայ ձեղ մօտ, որովհետեւ մենք չենք կարող, այսինքն...

Բերսենեվը վերցրեց գլխարկը, մի ոսուրիխանոց կոխոց դերձակի ձեռքը և իսկոյն թռաւ նրա հետ ինսարօվի բնակա-րանը:

Նա տեսաւ Ինսարօվին պառկած բազմոցի վրայ ուշա-թափ, չորերը չը հանած: Նրա գէմքը սարսափելի կերպով փոխուել էի: Բերսենեվը իսկոյն հրամայեց գերձակին և նրա կնոջը հանել նրա չորերը և դնել անկողնում, իսկ ինքը վազեց քժչի մօտ և բերեց նրան: Բժիշկը միանգամբից նշանակեց արդ-րուկներ, սպանիական ճանձեր, կալօմէլ և հրամայեց արիւն թողել:

—Նա վտանգաւոր է, հարցուց Բերսենեվը:

—Այս, շատ, պատասխանեց բժիշկը: —Ամենասաստիկ բորբոքում թոքերի մէջ. նա կատարեալ զարգացման մէջ է, գուցէ անցել է ուղեղն էլ, իսկ հիւանդը երիտասարդ է: Նրա ոյժերը այժմ ուղղուած են իր դէմ: Ուշ էք իմաց տուել, սակայն մենք ամեն ինչ կ'անենք, ինչ պահանջում է գիտութիւնը:

Բժիշկը դեռ ինքն էլ երիտասարդ էր և ծառայում էր գիտութեան:

Բերսենեվը մասց գիշերելու: Դերձակն ու իր կինը բարի մարդիկ դուրս եկան և նոյն իսկ արագաշարժ, հէնց որ զըտնուեց մի մարդ, որ ասում էր նրանց թէ ինչ պէտք է անել: Եկաւ ֆէլդշերը և սկսուեցին բժշկական առաջանքները:

Առաւօտեան մօտ ինսարօվը մի քանի րոպէ զարթնեց, ճանաչեց Բերսենեվին, հարցրեց. «Ես, կարծեմ, հիւանդ եմ, նայեց իր շուրջը ծանր հիւանդի բութ և ծոյլ տարակուսանքով և էլի ընկաւ ինքնամոռայութեան մէջ: Բերսենեվը գնաց տուն, շորերը փոխեց, մի քանի զրերը վերցրեց հետը և վերագրածաւ ինսարօվի բնակարանը: Նա գնուց բնակուել նրա մօտ զէթ մի քանի ժամանակ: Նա շրջապատեց հիւանդի մահճակալը վարագոյներով, իսկ իր համար բազմոցի մօտ մի փոքրիկ տեղ պատրաստեց: Օրը ուրախ և շուտ չանցաւ: Բերսենեվը դուրս գնաց միայն ճաշելու համար: Հասաւ երեկոն: Նա վառեց ճըրագը, որ ունէր լուսամիտոփ և սկսեց կարդալ: Շուրջը ամեն ինչ հանդարտ էր: Միջնապատի միւս կողմում, բնակարանի տէրերի մօտ լսում էր կամ զսպուած շնչոց, կամ յօրանջում, կամ հառաջանք... Մէկը փոշտաց, և նրան ցած ձայնով հայհոյեցին. վարագոյների ետեւում լսում էր ծանօթ և անհաւասար չոչառութւն, որ երբեմն ընդհաւատում էր մի կարծ հառաջանքով, կամ զլուխը բարձի վրայ այս ու այն կողմ գցելով...

Օտարոտի մտքեր էին պտառում Բերսենեվի մէջ: Նա գանցւում էր մի մարդու սենեակում, որի կեանքը թելի վրայ էր կախ ընկած, մի մարդու, որին, նա այդ գիտէր, սիրում էր Ելենան... Յիշեց նա այն դիշերը, երբ Շուրինը հասաւ նրա ետեւից և յայտնեց թէ Ելենան սիրում է նրան, նրան, այսինքն Բերսենեվին: Իսկ այժմ... «Հիմա ինչ անեմ ես», հարցում էր նա ինքն իրան. «Յայտնեմ Ելենային նրա հիւանդութեան մասին: Սպասեմ արդեօք: Այս լուրը աւելի տխուր կը լինի քան այն, որը ես ինքս հաղորդեցի նրան մի ժամանակ. օտարոտի է, թէ ինչպէս ճակատագիրը միշտ ինձ դնում է նրանց մէջ տեղը իրեւ երրորդ անձ»: Նա գնուց, որ աւելի լաւ է սպասել: Նրա հայեացքը ընկաւ սեղանին, որ ծածկուած էր թղթերի կոյտերով... «Կը կատարէ նա իր ծրագիրները, մտածում էր

Բերսենեվը: —միթէ ամեն ինչ կը կորչէ: Եւ նա ափսոսում էր այդ ջահիլ, կորչող կեանքը, և նա իրան իսօվը տուեց փըրկել նրան...

Գիշերը լաւ չէր չիւանդը շատ էր զառանցում: Մի քանի անգամ վեր կացաւ Բերսենեվը իր բազմոցից, ոտների մատների վրայ մօտեցաւ անկողնին և ախրութեամբ ականչ էր դնում նրա անկապ թոթովանքին: Միայն մի անգամ ինսարովը արտասանեց մի անսովոր պարզութեամբ. «Չեմ ուզում, չեմ ուզում, դու չը պիտի...» Բերսենեվը ցնցուեց և նայեց ինսարովին: Նրա դէմքը, տանջալից և մի և նոյն ժամանակ մահացող անշարժ էր, և ձեռքերը ընկած էին թուլացած... «Չեմ ուզում», կրկնեց նա հազիւ լսելի ձայնով:

Բժիշկը եկաւ առաւօտեան, գլուխը շարժեց և նոր գեղեր զրեց: —Դեռ կրիզիսը հեռու է, ասաց նա, գլխարկը գնելով:

—Իսկ կրիզիսից յետոյ, հարցրեց Բերսենեվը:

—Կրիզիսից յետոյ: Ելքը երկու տեսակ է լինում: առ Caesare, առ nihil.

Բժիշկը գնաց: Բերսենեվը մի քանի անգամ անց ու դարձարաւ փողոցում: Նրան հարկաւոր էր մաքուր օդ: Նա վերագրածաւ և վերցրեց գիրքը: Բառմէրը նա վազուց էր վերջացրել: այժմ ուսումնաբրում էր Գրօտը:

Յանկարծ դուռը հանգարաւ ճոռաց և զգուշութեամբ ներս մտաւ բնակարանի տիրոջ աղջկայ գլուխը, որ ծածկուած էր, սովորականի պէս, թանձր աղլուխով:

—Այստեղ—ասաց նա կիսաձայնով—այն աղջիկն է, որ այն ժամանակ ինձ տասը կոպէկ...

Դերձակի աղջկայ գլուխը յանկարծ թագնուեց և նրա անդ երեաց Ելենան:

Բերսենեվը տեղից վեր թռաւ խայթուածի պէս. բայց Ելենան չը շարժուեց, չը ճշաց... Կարծես նա ամեն ինչ հասկացաւ մի ակնթարթում: Սարսափելի գունատութիւնը ծածկեց նրա դէմքը, նա մօտեցաւ վարագոյներին, նայեց նրանց ետեւը, ձեռքերով մի շարժում գործեց և քարացաւ: Մի ակնթարթ էս, և նա կ'ընկնէր ինսարօվի վրայ, բայց Բերսենեվը կանգնեցրեց նրան.—ինչ էք անում, ասաց նա դողացող փափանքով: —Դուք նրան սպասել կարող էք:

Ելենան երեաց: Բերսենեվը մօտեցրեց նրան բազմոցին և նստեցրեց:

Ելենան նայեց նրա դէմքին, յետոյ չափեց նրան մի հայեցքով, յետոյ աչքերը յառեց յատակին:

— Նա մեռնում է, հարցրեց Ելենան այնպէս ցուրտ և հանդարտ, որ Բերսենեվը վախեց:

— Ի սէր Աստուծու, Ելենա Նիկոլաեվսա, սկսեց նա, — ինչ էք այդպէս... Նա հիւանդ է, ճիշտ է, և բաւական վտանգաւոր... Բայց մենք նրան կը փրկենք. սրա համար ես երաշխաւոր եմ:

Երա ուշը գլւխն չէ, հարցրեց Ելենան նոյնպէս, ինչպէս առաջին անգամը:

— Այն, նա այժմ ինքնամոռացութեան մէջ է... Այսպէս է լինում այդ հիւանդութիւնների սկզբում, բայց դա ոչինչ նշանակութիւն չունի, ոչինչ, — հաւատացնում եմ ձեզ: Ձուր իւրմայէք:

Ելենան բարձրացրեց իր աչքերը և Բերսենեվը հասկացաւ, որ նա չէր լսում իր տուած պատասխանները:

— Եթէ նա մեռնէ, ասաց նա միշտ մի եւ նոյն ձայնով, — ես էլ կը մեռնեմ:

Ինսարօվը այդ ակնթարթում թեթև կերպով հառաչեց. Ելենան դողաց, բռնեց իր գլուխը, յետոյ սկսեց յետ անել իր գլխարկի ժապաւէնները:

— Այդ ինչ էք անում, հարցրեց նրան Բերսենեվը:

Նա չը պատասխանեց:

Ի՞նչ էք անում, կրկնեց Բերսենեվը:

— Ես միում եմ այստեղ:

— Ի՞նչպէս... Կրկար ժամանակով:

— Չը գիտեմ, գուցէ ամբողջ օրը, գիշերը, միշտ... չը գիտեմ:

— Ի սէր Աստուծու, Ելենա Նիկոլաեվսա, ուշքի եկէք: Ես, ի հարկէ, ոչ մի կերպ չէի կարող սպասել թէ կը տեսնեմ ձեզ այստեղ. բայց այնուամենայնիւ ես... Ենթադրում եմ, որ դուք կարձ ժամանակով էք մտել այստեղ: Յիշեցէք, տանը կիմանան...

— Եւ ի՞նչ:

— Զեզ կորոնեն... Զեզ կը գտնեն...

— Եւ ի՞նչ:

— Ելենա Նիկոլաեվսա... Դուք տեսնում էք... Ինսարօվը այժմ ձեզ պաշտպանել չէ կարող:

Ելենան գլուխը կախ գցեց, կարծես մտածմունքի մէջ ընկաւ, մօտեցրեց թաշկինակը շրթունքներին, և ջղածգական հեկեկանքները, ցնցող ոյժով, յանկարծ դուրս թափուեցին նրա կրծքից... Նա երեսն ի վայր ընկաւ բազմոցի վրայ, աշխատում էր խլացնել հեկեկանքները, բայց նրա ամբողջ մարմինը

բարձրանում էր և թրպրտում, ինչպէս նոր բռնուած թռչուն:

— Ելենա Նիկոլաեվսա... ի սէր Աստուծու... կրկնում էր Բերսենեվը, խոնարհուած նրա վրայ:

— Հը, ինչ է, յանկարծ լսուեց ինսարօվի ձայնը:

Ելենան ուղղուեց տեղը, իսկ Բերսենեվը, տեղն ու տեղը սառած մնաց... Քիչ սպասելով, նա մօտեցաւ անկողնին: Ինսարօվի գլուխը առաջուայ նման թոյլ ընկած էր բարձի վրայ. աչքերը վիակուած էին:

— Նա զառանցում է, շնչաց Ելենան:

— Կարծեմ, պատասխանեց Բերսենեվը, — բայց դա ոչինչ բան է. այդ էլ միշտ այդպէս է լինում, մանաւանդ թէ...

— Ե՞րբ նա տկարացաւ, ընդհատեց Ելենան:

— Երէկ չէ, անցեալ օրը: Երէկուանից ես այստեղ եմ: Վստահ եղէք ինձ վրայ, Ելենա Նիկոլաեվսա:

Ես չեմ հեռանայ նրանից: Բոլոր միջոցները գործ կը զնուեն, Եթէ հարկաւոր լինի, մենք բժշկական համախորհուրդ կը հրաւիրենք:

— Նա կը մեռնէ առանց ինձ բացականչեց Ելենան, ձեռքերը կոտրատելով:

— Ես ձեզ խօսք եմ տալիս ամեն օր յայտնել ձեզ հիւանդութեան ընթացքի մասին, և եթէ վրայ հասնէր իսկական վտանգը...

— Երգուեցէք, որ դուք իսկոյն մարդ կ'ուղարկէք իմ ետեւից երբ էլ լինի, ցերեկը, զիշերը. տոմսակ զրեցէք ուղղակի բուձ... Այժմ ինձ համար մի և նոյն է: Դուք լսում էք, խոստանում էք այդպէս անել:

— Խոստանում եմ, Աստուծու առաջ.

— Երգուեցէք:

— Երգուում եմ:

Ելենան յանկարծ բռնեց նրա ձեռքը և նա դեռ չէր կարողացել յետ քաշել ձեռքը. Ելենան իր շրթունքները սեղմեց նրա վրայ:

— Ելենա Նիկոլաեվսա... ի՞նչ էք անում, թոթովեց Բերսենեվը:

— Ոչ... ոչ... հարկաւոր չէ... արտասանեց ինսարօվը ցած, անորոշ կերպով և ծանր հառաչեց:

Ելենան մօտեցաւ վարագոյրներին, թաշկինակը սեղմեց ատամներով և երկար, երկար նայում էր հիւանդին: Անձայն արտասունքները հոսեցին նրա թշերի վրայովի:

— Ելենա Նիկոլաեվսա, ասաց նրան Բերսենեվը, — նա կարող է ուշքի գալ, ճանաչել ձեզ. Աստուծած գիտէ, լաւ կը

լինի դա: Եւ բացի դրանից ևս ժամ է ժամ սպասում եմ բժըշ-
կին...

Ելենան վերցրեց գլխարկը բազմոցից, դրեց գլխին և
կանգ առաւ: Նրա աչքերը տխուր թափառում էին սենեակի
մէջ: Թւում էր թէ նա յիշում էր...

—Ես չեմ կարող հեռանալ, արտասանեց նա վերջապէս:
Բերսենեվը սեղմեց նրա ձեռքը:—Հաւաքեցէք ձեր ոյժերը,
ասաց նա, —հանգստացէք. դուք թողնում էք նրան իմ ինսամ-
քին: Ես այսօր երեկոյեան կը գամ ձեզ մօտ:

Ելենան նայեց նրան, ասաց.—Օ՛, իմ բարի բարեկամ,
հեկեկաց և դուրս վագեց:

Բերսենեվը յենուեց դռներին: Մի վշտալի և դառն զգաց-
մունք, որ զուրկ չէր մի ինչոր օտարութիւնից,
ճնշում էր նրա սիրտը: «Իմ բարի բարեկամս», մտածեց նա, և
վեր քաշեց ուսք:

—Ո՞վ է այստեղ, լսուեց ինսարօվի ձայնը:
Բերսենեվը մօտեցաւ նրան:—Ես եմ այստեղ, Դմիտրի Նի-
կանօրօվիչ: Ի՞նչ էք ուզում: Ի՞նչպէս էք ձեզ զգում:

—Մենակ, հարցրեց հիւանդը:

—Մենազ:

—Իսկ նա:

—Ո՞վ է նա, համարեա վախկոտ հարցրեց Բերսենեվը:
Ինսարօվը լոեց:—Յափրուկը, շնչաց նա, և նրա աչքերը
նորից փակուեցան:

XXVI

Ինսարօվը ամբողջ ութ օր կեանքի և մահուան մէջ էր
գտնուում: Բժիշկը գալիս էր անդադար, հետաքրքրուելով,
դարձեալ իբրև երիտասարդ մարդ, ծանր հիւանդով: Շուրբինը
լսեց ինսարօվի վտանգաւոր զրութեան մասին և այցելեց
նրան. Երեացին ինսարօվի հայրենակիցներ—բոլգարներ.
Նրանց թւում Բերսենեվը ճանաչեց այն երկու օտարուի կեր-
պարանքները, որոնք նրա զարմանքն էին գրգուել իրանց անա-
կընկալ այցելութեամբ, ամարանոցում. ամենքը անկեղծ ցաւակ-
կընկալ այցելութեամբ, ամարանոցում. ամենքը անկեղծ ցաւակ-

պիսի անձկութեամբ էր Ելենան սպասում նրան, ինչպէս էր
նա լսում Բերսենեվին և հարց ու փորձ անում: Նա ինքը
շարունակ ձգտում էր դէպի ինսարօվը. բայց Բերսենեվը
աղաչում էր նրան չանել այդ բանը. Ինսարօվը քիչ էր մենակ
լինում: Առաջին օրը, երբ իմացաւ ինսարօվի հիւանդանալը,
ինքն էլ հազիւ չը հիւանդացաւ: Հէնց որ վերադարձաւ Ինսա-
րօվի մօտից, փակուեց իր սենեակում. բայց նրան ճաշի կանչե-
ցին, նա մտաւ սեղանատունը մի այնպիսի դէմքով, որ Անսա-
Վասիլեվսան վախեց և ուզեց անպատճառ պառկեցնել նրան
անկողնում: Ելենային սակայն աջողուեց կոտրել իրան: «Եթէ
նա մեռնէ, կրկնում էր նա, ևս էլ չեմ լինի»: Այս միտքը նրան
հանգստացրեց և ոյժ տուեց անտարբեր երեալու: Բայց և ոչ
ոք նրան շատ չէր նեղացնում: Շուրբինը աշխատում էր կատա-
ղութեամբ. Զօհան անձնատուր էր եղել մելանխոլիային և
պատրաստում էր կարդալ Վերտերը. Նիկոլայ Արտեմեվիչը շատ
անբաւական էր «Պարոցականի» յաճախ այցելութիւններով,
մանաւանդ որ նրա «Գիտաւորութիւնները» Կուրնատօվսկու վե-
րաբերմամբ չափազանց ծանր էին առաջ գնում: գործնական
աւագ քարտուղարը տարակուսանքի մէջ էր և սպասում էր.
Ելենան նոյն իսկ չնորհակալութիւն չէր յայտնում Բերսենեվին.
կան ծառայութիւններ, որոնց համար ծանր և ամօթալի է շը-
նորհակալութիւն յայտնել: Միայն մի անգամ, չորրորդ տեսակ-
ցութեան ժամանակ (ինսարօվը շատ վատ էր անցկացրել զի-
շերը, քիշկը ակնարկ էր արել համախորհուրդի մասին), միայն
այդ տևոսակցութեան միջոցին նա յիշեցրեց Բերսենեվին նրա
երդումի մասին: «Որ այդպէս է գնանք», —ասաց նա Ելենային:
Սա վեր կացաւ և ուզում էն գնալ հագնուելու: «Ոչ, ասաց
Բերսենեվը, սպասենք մինչեւ էգուց»: Իրիկնադէմին ինսարօվը
քիչ թեթեւացաւ:

Ութ օր շարունակուեց այս տանջանքը: Ելենան հանգիստ
էր երեւում, բայց ոչինչ չէր կարողանում ուտել, գիշերները
չէր քնում: Մի բութ դաւ էր նստել նրա ըոլոր անդամների
մէջ. մի ինչոր չոր, այրող ծուխ, կարծես, լցրել էր նրա զլու-
խը: «Մեր աղջիկ պարոնը ճարպի պէս հալւում է», ասում էր
նրա մասին նրա աղախինը:

Վերջապէս, իններորդ օրը, կրիվիսը անցաւ Ելենան նըս-
տած էր հիւանդանեակում Աննա Վասիլեվսայի մօտ և, ինքն էլ
չը հասկանալով թէ ինչ է անում, կարդում էր նրա համար
«ՄОСКОВСКІЯ ВѢДОМОСТИ» լրագիրը: Բերսենեվը ներս մտաւ:
Ելենան նայեց նրան (ինչպէս արագ և վախկոտ, և թափանցիկ
և յուզուած էր լինում նրա առաջին հայեացքը, որ ամեն անգամ

գցում էր Բերսենեվի վրայ) և իսկոյն իմացաւ, որ նա բարի համբաւ է բերել: Բերսենեվը ժպտում էր. նա թեթեւ կերպով գլխով նշաններ էր անում. Ելենան վեր կացաւ նրան դիմաւորելու:

—Ուշքը գլուխը եկաւ, նա աղատուած է, մի շաբթից յետոյ բոլորովին առողջ կը լինի, չնշաց Բերսենեվը:

Ելենան մեկնեց ձեռքները, կարծես թէ հեռացնելով հարուածը, և ոչինչ չասաց, միայն նրա շրթունքները դողացին և ալ գոյնը ատարածուեց նրա ամբողջ դէմքի վրայ: Բերսենեվը խօսք սկսեց Աննա Վասիլենայի հետ, իսկ Ելենան դնաց իր սենեակը, ծնկների վրայ ընկաւ և սկսեց աղօթել, չնորհակալութիւն մատուցանել Աստուծուն... Թեթև, ուրախ արտասուքներ թափուեցին նրա աչքերից: Նա յանկարծ զգաց մի ծայրայեղ յոգնածութիւն, դրեց գլուխը բարձի վրայ, չնշաց՝ ճիսնդ Անդրէյ Պետրովիչը և իսկոյն քննեց խոնաւ թերթերունքներով և թշերով: Նա վաղուց չէր քնել և լաց չէր եղել:

XXVII

Բերսենեվի խօսքերը կատարուեցին, բայց մասամբ միայն վտանգը անցաւ, որովհետև Ինսարօվի ոյժերը դանդաղ կերպով էին վերականգնում, և բժիշկը խօսում էր ամբողջ օրդանիդմի խոր և ընդհանուր ցնցման մասին: Թէ այդպէս, հիւանդը թողեց անկողինը և սկսեց ման դալ սենեակում: Բերսենեվը փոխուեց իր բնակարանը. բայց նա ամեն օր մտնում էր իր, դեռ ևս թոյլ, բարեկամի մօտ և ամեն օր, առաջուայ պէս, լուր էր տալիս Ելենային նրա առողջական դրութեան մասին: Ինսարօվը չէր համբածակւում դրել Ելենային և միայն կողմնակի կերպով, Բերսենեվի հետ ունեցած խօսակցութիւնների մէջ, ակնարկներ էր անում նրա մասին. իսկ Բերսենեվը, մի առ երես անտարբերութեամբ, պատմում էր նրան Ստախօվներին արած իր այցելութիւնների մասին, աշխատելով, սակայն, իմացնել նրան թէ Ելենան շատ վշացած էր և թէ այժմ նա հանգստացել է: Ելենան նոյնպէս չէր գրում Ինսարօվին. նա իր մտքում ուրիշ բան ունէր:

Մի անգամ Բերսենեվը նոր էր հաղորդել նրան ուրախ դէմքով, թէ բժիշկը թոյլ է տուել Ինսարօվին կօտիտ ուտել և թէ նա, երեխ, շուտով դուրս կը գայ. Ելենան մտածմունքի մէջ ընկաւ, գլուխը կախ արաւու...:

—Գուշակեցէր թէ ինչ եմ ուղում ասել ձեզ, խօսեց նա: Բերսենեվը շփոթուեց: Նա հասկացաւ Ելենային:—Երեւի,

ասաց նա, նայելով դէպի մի կողմ,—գուք կամինում էք ինձ ասել թէ ուղում էք տեսնել նրան:

Ելենան կարմրեց և հազիւ լսելի ձայնով արտասանեց.—Այս:

—Ի՞նչ կայ որ: Այդ բանը ձեզ համար, կարծում եմ, շատ հեշտ է: «Ճի, մտածեց նա, որպիսի զգուելի զգացմունք կայ իմ սրտում»:

—Դուք ուղում էք ասել, որ ես արդէն առաջ... ասաց Ելենան:—Բայց ես վախում եմ... Այժմ նա, ինչպէս գուք ասում էք, քիչ է լինում մենակ:

—Դժուար չէ օգնելը, պատասխանեց Բերսենեվը, շարունակ չը նայելով նրան:—Նախապէս իմաց տալ նրան ես, ի հարկէ, չեմ կարող. բայց ինձ տուէք տոմսակ: Ո՞վ կարող է արգելել ձեզ որ գրէք նրան, ինչպէս լաւ ծանօթի, որին համակրում էք: Այդտեղ դատապարտելի բան չը կայ: Նշանակեցէք նրան... այսինքն գրեցէք նրան թէ երբ կը վիճէք:

—Ես քաշւում եմ, չնշաց Ելենան:

—Տուէք տոմսակ, ես կը տանեմ:

—Դա հարկաւոր չէ, բայց ես ուղում էի ձեզ ինդրել... մի բարկանաք ինձ վրայ, Անդրէյ Պետրովիչ... Էգուց մի գաք նրա մօտ:

Բերսենեվը կծեց շրթունքը:

—Հա, այս, ես հասկանում եմ, շատ լաւ, շատ լաւ:—Եւ երկու, երեք խօսք աւելացնելով, նա արագ հեռացաւ:

«Աւելի լաւ, աւելի լաւ, մտածում էր նա, շտապելով տուն: Ես նոր բան չիմացայ, բայց աւելի լաւ: Ի՞նչ մի հաճոյք է կաչել օտարի բոյնի ծայրին: Ես ոչ մի բանի մէջ չեմ փոշմանում, ես արի այն, ինչ խիզն հրամայում էր, բայց այժմ բաւական է: Տէրը նրանց հետ, զուր չէր հայրս ասում ինձ. մինք եղբայր, սիրարիտներ չենք, արիստօկրատներ չենք, ճակատագրից և բնութիւնից երես առած չենք, մենք նոյն իսկ նահատակներ չենք,—մենք աշխատաւորներ ենք, աշխատաւորներ և աշխատաւորներ: Ուրեմն, հազիր կաշեայ գոգնոցդ, ով աշխատաւոր, անցիր քո բանուորական դազգահի ետեւը, քո մութ արհեստանոցում: Իսկ արեգակը թող փայլէ ուրիշների համար, Մեր խուլ կեանքն էլ ունի իր հպարտութիւնը: Իր երջանկութիւնը:»

Միւս առաւօտ Ինսարօվը քաղաքային պօստով ստացաւ մի համառօտ նամակ: «Ապասիր ինձ, գրում էր նրան Ելենան, և հրամայիր որ ոչ պին չընդունին: Ա. Գուն չի գայ:»

XXVIII

Ինսարօվը կարդաց Ելենայի նամակը և խկոյն սկսեց կարգի բերել իր սենեկանը, իսպիրեց գերձակի կնոջը գուրս տանել զեղերի սրուակները, հանեց շլաֆրոկը, հագաւ սիւրտուկը, թուլութիւնից և ուրախութիւնից նրա զլուխը պտոյտ էր գալիս և սիրտը բարախում էր: Նրա ոտները կոտրատում էին. նա նստեց բազմոցի վրայ և սկսեց նայել ժամացոյցին: Այժմ տասներկուսին քառորդ է մոռւմ, ասաց նա ինքն իրան. —տասներկուսից առաջ նա ոչ մի կերպ չէ կարող գալ. իը մտածեմ ուրիշ մի որ և է բանի մասին քառորդ ժամի ընթացքում, թէ չէ տանել չեմ կարող: Տասներկուսից առաջ նա ոչ մի կերպ չէ կարող...

Դուները յետ դնացին, և Ելենան, թեթև մետաքսեայ զգեստի մէջ, ամբողջովին գունատ և ամբողջովին թարմ, երիտասարդ, երջանիկ, ներս մտաւ և մի թոյլ ուրախական ճիշով ընկաւ ինսարօվի կրծքին:

—Դու կենդանի ես, դու իմն ես, կրկնում էր Ելենան, գրկելով և գգուելով նրա զլուխը: Ինսարօվը ամբողջովին ընդարձայել էր, նա չնշասպառ էր գառնում այդ մերձաւորութիւնից, հպումներից, այդ երջանկութիւնից:

Ելենան նստեց նրա կողքին, և սեղմաց Ինսարօվին, և սկսեց նայել նրան այն ծիծաղկոտ և փաղաքող և քնքոյշ հայեազրով, որ լոյս է տալիս միայն կանացի սիրող աշերի մէջ: Նրա դէմքը յանկարձակի տիրեց:

—Ի՞նչպէս մաշուել ես, իմ խեղճ Դմիտրի, ասաց նա, ձեռքը տանելով նրա թշի վրայ, —ինչ միրուք ունիս դու:

—Դու էլ մաշուել ես, իմ խեղճ Ելենա, պատասխանում էր ինսարօվը, իր շրթունքներով բռնելով նրա մատները:

Ելենան ուրախ-ուրախ թափահարեց իր գանգուրները:

—Ոչինչ: Տես թէ ինչպէս մենք կը լաւանանք: Փոթորիկը վրայ յարձակուեց ինչպէս այն օրը, երբ մենք հանդիպեցինք մատուռում, յարձակուեց և անցաւ: Այժմ մենք կ'ապրենք:

Ինսարօվը պատասխանում էր նրան միայն ժպիտով:

—Ահ, ինչ օրեր էին, Դմիտրի, ինչ դաժան օրեր: Ի՞նչ պէս է լինում որ մարդիկ ապրում են իրանց սիրածից յետոյն ես ամեն անգամ առաջուց գիտէի թէ ինչ կասէ Սնդրէյ Պետրօվիչը. ճիշտ եմ առում: իմ կեանքը ընկնում և բարձրանում էր քննի հետ: Ողջոյն քեզ, իմ Դմիտրի:

Ինսարօվը չը գիտէր թէ ինչ անէ նրան: Նա ուզում էր ընկնել նրա ոտները:

—Էլ ինչ եմ նկատել ես, շարունակեց նա, ձեռքով յետ տանելով ինսարօվի ճակատից մազերը (ես այս ամբողջ ժամանակը շատ նկատողութիւններ էի անում, պարապութիւնից). երբ մարդը շատ և շատ դժբախտ է, —որպիսի յիմար ուշադրութեամբ է նա հետեւում այն ամենին, ինչ տեղի է ունենում նրա շուրջը: Ես, ճշմարիտ, երբեմն ուշադրութեամբ նայում էի ճանձին, իսկ իմ հոգու մէջ այնպիսի ցուրտ և սարսափ կար: Բայց այդ բոլորը անցաւ, անցաւ, այնպէս չէ: Ամեն ինչ լուսափայլ է առջեւում, այնպէս չէ:

—Դու ինձ համար առջեւում ես, պատասխանեց ինսարօվը, —ինձ համար փայլուն է:

—Իսկ ինձ համար Յիշում ես, այն ժամանակ, երբ ես քեզ մօտ էի, ոչ վերջին անգամ... ոչ, ոչ թէ վերջին անգամ, կրկնեց նա ակամայ սարսուռ զգալով: —երբ խօսում էի քեզ հետ, ես, չը զիտեմ ինչու, յիշերի մահը. այն ժամանակ ես չէի էլ ենթադրում թէ մահը հետեւում է: մեզ Բայց դու հօայժմ առնղջ ես:

—Ես բաւական լաւ եմ, ես համարեա առողջ եմ:

—Դու առողջ ես, դու չը մեռար: 0', որքան երջանիկ եմ ես:

Կարճատե լոտթիւն տիրեց:

—Ելենա, հարցրեց ինսարօվը:

—Ի՞նչ է, սիրելիս:

—Ասա ինձ, դու մտքովդ չես անցկացրել, թէ այս հիւանդութիւնը մեզ պատժելու համար էր ուղարկուած:

Ելենան լուրջ կերպով նայեց նրան:

—Այդ միտքը գալիս էր իմ գլուխը, Դմիտրի: Բայց ես մտածում էի, ինչու համար պիտի ես պատժուած լինեմ: Ի՞նչ պարտականութիւն եմ ես զանց արել, ինչի դէմ եմ մեղանչել: Գուցէ իմ խիղճը այնպէս չէ, ինչպէս ուրիշներինը, բայց նա լուր էր. թէ գուցէ ես քեզ դէմ եմ մեղանչել: —Ես քեզ կը խանգարեմ, ես կը կանգնեցնեմ քեզ...

—Դու ինձ չես կանգնեցնի, Ելենա, մենք միասին կերթանք:

—Այս, Դմիտրի, մենք միասին կերթանք, ես կերթամ քո ետեւից... Դա իմ պարագն է: Ես քեզ սիրում եմ... ուրիշ պարագ ես չեմ ճանաչում:

—0', Ելենա, արտասանեց ինսարօվը, —ինչ անխորտակելի շղթաներ է դնում ինձ վրայ քո իւրաքանչիւր խօսքը:

— Ինչու խօսել շղթաների մասին, վրայ բերեց Ելենան:—
Մենք ազատ մարդիկ ենք: Այո, շարունակեց նա, մտախոհ նա-
յելով յատակին, իսկ մի ձեռքով առաջուայ նման շտկելով նրա
մազերը,—շատ բան ես փորձեցի վերջին ժամանակ, որի մասին
ես հասկացողութիւն չունէի երբէք: Եթէ մէկը գուշակէր իմ
մասին, թէ ես, մի բարեկիրծ աղջիկ-պարոն, միայնակ դուրս
կը գնամ տանից, զանազան արքած պատրուակներով, այն էլ
ուր, —մի երիտասարդի բնակարանը,—որպիսի վրդովմունք
պիտի զգայի: Եւ այս բոլորը կատարուեց, և ես ոչնչ վրդով-
մունք չեմ զգում: Աստուած վկայ է, աւելացրեց նա և դար-
ձաւ դէպի ինսարօվը:

Սա նայեց Ելենային պաշտելու մի այնպիսի արտայայ-
տութեամբ, որ Ելենան հանդարտ կերպով իր ձեռքը նրա մա-
զերից իջեցրեց նրա աչքերի վրայ:

—Դմիտրի, սկսեց նա նորից, —դու չը գիտես, չէ որ ես
քեզ տեսել եմ այստեղ, այդ սարսափելի անկողնում, ես տեսել
եմ քեզ մահուան ճիրաների մէջ, ուշաթափ...

—Դու ինձ տեսել ես:

—Այո:

Ինսարօվը լոեց: —Բերսենելի էլ այստեղ էր,
Ելենան գլխով արաւ:

Ինսարօվը խոնարհուեց դէպի նրան: —Օ՛հ, Ելենա, շնչաց
նա: —Ես չեմ համարձակում նայել քեզ:

— Ինչու. Անդրէյ Պետրօվիչը այնքան բարի է: Ես նրանից
չէի ամաչում: Եւ ինչու ամաչեմ: Ես պատրաստ եմ տաելու
ամբողջ աշխարհին թէ ես քոնն եմ... իսկ Անդրէյ Պետրօվիչին
ես հաւատում եմ, իբրև եղօր:

— Նա ինձ ազատեց, բացականչեց ինսարօվը: — Նա ամեն
նաազնիւ, ամենաբարի մարդն է:

— Այո... Եւ դիտես դու որ ես ամեն ինչ նրան եմ պար-
տական: Գիտես դու, որ նա առաջինը ինձ ասաց թէ դու ինձ
սիրում ես: Եւ եթէ ես կարողանայի ամեն ինչ բաց անել...
Այն, նա ամենաազնիւ մարդն է:

Ինսարօվը ուշադրութեամբ նայեց Ելենային: — Նա սիրա-
հարուած է քեզ վրայ, այնպէս չէ:

Ելենան աչքերը խոնարհեցրեց: — Նա ինձ սիրում էր,
ասաց նա կիսաձայնով:

Ինսարօվը պինդ սեղմեց նրա ձեռքը: — Օ՛, դուք, ոռու-
ներդ, — ասաց նա — ոսկի են ձեր սրտերը: Եւ նա, նա պա-
հում-պահպանում էր ինձ, նա գիշերները չեր քնում... Եւ դու,

դու իմ հրեշտակ... Ոչ յանդիմանութիւն, ոչ տատանում... և
այս բոլորը ինձ, ինձ...

— Այս, այս, ամեն ինչ քեզ, որովհետեւ քեզ սիրում են:
Ա՛հ, Դմիտրի, որքան սա օտարութիւն է: Ես, կարծեմ, քեզ ար-
դէն ասել եմ: — բայց սա մի և նոյն է, ինձ հաճելի է կրկնելը,
իսկ քեզ հաճելի կը լինի լսելը: — երբ ես քեզ տեսայ առաջին
անդամ...

— Ինչու քո աչքերում արտասուք կայ, ընդհատեց Ին-
սարօվը:

— Իմ աչքերում, արտասունք: — Նա սրբեց աչքերը թաշ-
կինակով: Օ՛, անմիտ, նա դեռ չը զիտէ որ երջանկութիւնից
էլ լաց են լինում: Հա, ես ուզում էի քեզ ասել. Երբ ես քեզ
տեսայ առաջին անդամ, քեզանում, ծշմարիտ ասած, առանձին
մի բան ես չը գտայ: Ցիշում եմ, սկզբում Շուրբինը ինձ աւելի
շատ էր դուր գալիս, թէն ես երբէք չեմ սիրել նրան, իսկ ինչ
վերաբերում է Անդրէյ Պետրօվիչին: — օ, այդտեղ կար մի
բոլէ, երբ ես մտածում էի: Նա չէ արդեօք: իսկ դա — ոչինչ.
բայց փոխարէնը... յետոյ... յետոյ... դու ջուխտ ձեռքով վերցրիր
իմ սիրտը:

— Ինայիր ինձ... խօսեց Ինսարօվը: Նա ուզեց վեր կենալ,
բայց իսկոյն ընկաւ բազմոցի վրայ:

— Ինչ եղաւ քեզ, հոգատարութեամբ հարցրեց Ելենան:

— Ոչինչ... ես գեռ քիչ թոյլ եմ... Այո երջանկութիւնը իմ

ոյժերին համապատասխան չէ...

— Որ այդպէս, հանդարտ նստիր: Մի շարժուէք, մի յու-
զուէք, աւելացրեց նա, մատը նրա վրայ թափ տալով: — Եւ
ինչու դուք հանել էք, ձեր շափրոկը: Դեռ վաղ է ձեզ համար
պձնուելը: Նստեցէք, իսկ ես ձեզ կը պատմեմ հէքիաթներ:
Լսեցէք և լոեցէք: Զեր հիւանդութիւնից յետոյ ձեզ վնաս
է երկար խօսելը:

Ելենան սկսեց խօսել Շուրբինի, կուրնատովակու մասին
այն մասին, թէ ինքը ինչ էր անում վերջին երկու շաբթուայ
ընթացքում, այն մասին, թէ լրագիրներին նայելով, պատե-
րազմը անխուսափելի է և հետեւաբար, հէնց որ Ինսարօվը
բոլորովին կ'առողջանայ, հարկաւոր կը լինի, ռոպէ չը կորցնե-
լով, գտնել ճանապարհուելու միջոցներ... Նա ասում էր այս
բոլորը, նստած Ինսարօվի կողքին, յենուելով նրա ուսին...

Ինսարօվը լսում էր նրան, լսում, կամ գունատուելով,
կամ կարմրելով... նա մի քանի անդամ ուզում էր կանգնեցնել
նրան, և յանկարծ նստած տեղը ուզուեց:

—Ելենա, ասաց նա նրան մի օտարոտի և սուր ձայնով,—
թող ինձ, հեռացիր:

—Ի՞նչ, խօսեց Ելենան զարմացած:—Դու վատ ես զգում
քեզ, աւելացրեց նա աշխոյժ կերպով:

—Ոչ...ես լաւ եմ... բայց, ինդրեմ, թող ինձ:

—Ես քեզ չեմ հասկանում: Դու ինձ վընդում ես..., Այդ
ինչ ես անում, առաջ նա յանկարծ. ինսարօվը կռացաւ դիւա-
նից համարեա մինչեւ յատակը և իր շրթունքները սեղմեց Ելե-
նայի ոտներին.—Այդ մի անիր, Դմիտրի..., Դմիտրի...
ինսարօվը բարձրացաւ:

—Ուրեմն, թող ինձ: Գիտես, Ելենա, երբ ես հիւանդա-
ցայ, իսկոյն ուշքից չը զրկուեցայ. ես զիտէի, որ կորսափ
ծայրին եմ, նոյն իսկ տաքութեան մէջ, զառանցանքի մէջ, ես
հասկանում էի, ազօտ կերպով զգում էի, որ մահը գալիս է
դէպի ինձ, ես մնաս բարեւ էի ասում կեանքին, քեզ, ամեն
ինչին, ես հրաժեշտ էի տալիս յոյսին... Եւ յանկարծ այս վերա-
ծնութիւնը, այս լոյսը խաւարից յետոյ, դու... դու... իմ կողքին,
ինձ մօտ... քո ձայնը, քո շունչը... Այս բոլորը իմ ոյժերից վնը է:
Ես զգում եմ որ սիրում եմ քեզ ջերմապէս, ես լսում եմ, որ
դու ինքդ անում ես քեզ իմը, ես ոչ մի բանի համար պա-
տասխանատու չեմ... Հեռացիր:

—Դմիտրի... շնչաց Ելենան, և իր գլուխը թագցրեց նրա
ուսին: Նա միայն այժմ հասկացաւ նրան:

—Ելենա, շարունակեց նա, —ես քեզ սիրում եմ, դու
այդ գիտես, ես իմ կեանքը պատրաստ եմ տալ քեզ համար...
ինչու եկար դու ինձ մօտ այժմ, երբ ես թոյլ եմ, երբ ես
ինձ շեմ տիրում, երբ իմ ամբողջ արիւնը այրուած է... դու
իմն ես, ասում ես դու... դու ինձ սիրում ես...

—Դմիտրի, կրկնեց Ելենան և ամբողջապէս բռնկուեց և
աւելի պինդ սեղմուեց նրան:

—Ելենա, խղճա ինձ—հեռացիր, ես զգում եմ, ես կարող
եմ մեռնել, ես չեմ տանի այս յոյզերը... ամբողջ հոգիս ձգտում է
դէպի քեզ... մտածիր մահը քիչ էր մնում որ բաժանէր մեղ...
և այժմ դու այստեղ, դու իմ գրկում... Ելենա...

Ելենան ամբողջովին դոզաց:—Ուրեմն, վերցրու ինձ,
շնչաց նա հաղիւ լսելի ձայնով...

հանի մօտ և ոտը ոտի վրայ դրած, հանդարտ ծխում էր սի-
գարը:

—Դադարեցէք, ինդրում եմ, անկիւնից անկիւն քայլե-
լուց, ասաց նա, թափ աալով մօխիբը սիդարից:—Ես շարու-
րակ սպասում եմ որ դուք կը խօսէք, հետեւում եմ ձեզ—վիզո-
ցաւեց: Բացի դրանից, ձեր քայլուածքի մէջ ինչոր լարուած,
մնօդրամատիական բան կայ:

—Զեր բանը մի գլուխ դէսից-դէնից դուրս տալն է, պա-
տասխանեց Նիկոլայ Արտեմեվիչը: Դուք չեք ուզում մտնել իմ
դրութիւնը, դուք չեք ուզում հասկանալ թէ ես սովորել եմ
այդ կնոջը, թէ ես վերջապէս կապուած եմ նրան, թէ նրա
բացակայութիւնը ինձ պիտի տանչէ: Ահա արդէն հոկտեմբերն
է, ձմեռը մօտեցել է... իօնչ է նա կարող անել Բիգայում:

—Երեւի գուլպա է գործում... իր համար. իր, ոչ թէ ձեզ
համար:

—Ծիծաղեցէք, ծիծաղեցէք. իսկ ես ձեզ կ'ասեմ, որ ես
այգպիսի կին չեմ ճանաչում: Այդ ազնւութիւնը, այդ անշահա-
սիրութիւնը...

—Ներկայացրել է նա մուրհակը դատարանին, հարցրեց
Շուրբինը:

—Այդ անշահասիրութիւնը, կրկնեց, ձայնը բարձրացնելով,
Նիկոլայ Արտեմեվիչը—զարմանալի է: Ինձ ասում են, աշխար-
հում միլիօն ուրիշ կանագը կան. իսկ ես կ'ասեմ. յոյց տուէք
ինձ այդ միլիօնը. յոյց տուէք ինձ այդ միլիօնը, ասում եմ ես.
օչ բասուն—զի՞ոն տե լուսուն! Եւ չէ զրում, ահա ինչն է
սպամնիչը:

—Դուք պերճախօս էք, ինչպէս Պիւթագորոսը, նկատեց
Շուրբինը, —բայց զիտէք ինչ ես ձեզ խորհուրդ կը տայի:

—Ի՞նչ:

—Երբ Աւգուստինա Խրիստիանովան կը վերադառնայ...
դուք հասկանում էք ինձ:

—Այս. յետո՞յ:

—Երբ դուք նրան կը տեսնէք... Դուք հետեւում էք իմ
մտքի զարգացման:

—Այս, այս:

—Փորձեցէք նրան ծեծել. ինչ դուրս կը գայ: Նիկոլայ Արտեմեվիչը երեսը շուռ տուեց վրդովուած:

—Ես էլ կարծում էի թէ մի իսկապէս խելօք խորհուրդ
կը տայ: Եւ ինչ սպասես նրանից: Արտիստ, մի մարդ, որ կա-
նոններ չունի...

—Կանոններ չունի: Բայց տհա, ասում են, ձեր սիրելին,

պարոն կուրնատօվսկին, կանոններ ունեցող մարդը, երէկ ձեզանից տարել է հարիւր ոռւրի արծաթ։ Սա արդէն քաղաքավարութիւն չէ, համաձայնուեցէք։

—Ի՞նչ անենք։ Մենք խաղում էինք փողով։ Ի հարկէ, ես կարող էի սպասել... Բայց նրան այնքան քիչ են գնահատում այս տաճը...»

—Ի՞նչ է նոր առածել, վրայ բերեց Շուրինը.—ասել է, բնչ պիտի լինի. նա իմ աներս է թէ չէ—դա դեռ թագուած է ճակատագրի սափորի մէջ. իսկ հարիւր ոռւրին լաւ է մի մարդու համար, որ կաշառքներ չէ վերցնում։

—Աներ, ի՞նչ աներ եմ ես։ Vous révez, mon cher. Ի հարկէ, ամեն մի ուրիշ աղջիկ ուրախ կը լինի այդպիսի փեսացուով։ Խնդներդ դատեցէք. ժիր մարդ, խելօք, ինքն իրան մարդ է դառել, երկու նահանգներում լուծ է քաշել...

—... եան նահանգում նահանգապետին քթից բռնած ման էր ածում, նկատեց Շուրինը։

—Շատ կարելի է։ Երեւի այդպէս էլ հարկաւոր էր։ Գործական մարդ, գործեր սարքող...»

—Լաւ թուղթ էլ է խաղում, նորից նկատեց Շուրինը։

—Հա, լաւ թուղթ էլ է խաղում։ Բայց Ելենա Նիկոլավունան... Միթէ նրան կարելի է հասկանալ Ռւզում եմ իմանալ, ուր է այն մարդը, որ յանձն առնէր ըմբռնել, թէ ինչ է նա ուզում։ Նա կամ ուրախ է, կամ տխուր, կը մաշուի յանկարծ այնպէս, որ վրան նայել չի կարելի, բայց յանկարծ կը լաւանայ, և այս բոլորը առանց որ և է յայտնի պատճառի...»

Ներս մտաւ անհրապոյր տեսքով լսքէյը, բերելով մատուցարանի վրայ մի բաժակ սուրճ, սերամանը և պաքսիմատներ։

—Հօրը դուք է գալիս փեսացուն, շարունակեց Նիկոլայ Արտեմեվիչը, պաքսիմատը ձեռքում ժաժ տալով—իսկ աղջիկը ի՞նչ գործ ունի դրա հետ։ Դա լաւ էր նախկին, նահապետական ժամանակներում, իսկ այժմ մենք այդ բոլորը փոխել ենք։ Nous avons changé tout ça։ Այժմ օրիորդը խօսում է ում հետ կամենաք, կարդում է, ինչ իրան հաճելի է. մենակ ման է գալիս Մոսկովայում առանց լաքէի, առանց աղախնու, ինչպէս Պարիզում։ և այս բոլորը ընդունուած է։ Այս քանի օրերը ես հարցնում եմ. ուր է Ելենա Նիկոլաևնան։ Ասում են, բարեհանեց գուրս գնալ, Ուրի Յայտնի չէ։ Սա ի՞նչ է—կարդ է։

—Վերցրէք ձեր բաժակը և արձակեցէք ծառային, ասաց Շուրինը։ Խնդներդ էք ասում, թէ չը պէտք է դեռ լուսածութիւնները կամ անուշացնում, բայց նա կէս-ձայնով։

Լաքէյը ճակատի տակից նայեց Շուրինին, իսկ Նիկոլայ

Արտեմեվիչը վերցրեց սուրճի բաժակը, սեր ածեց և մօտ տասը հատ պաքսիմատ քաշեց արջեւը։

—Ես ուզում էի ասել, սկսեց նա, հէնց որ լաքէյը դուրս եկաւ, թէ ես այս տան մէջ ոչինչ նշանակութիւն չունիմ։ Ահա բոլորը Որովհետեւ մեր ժամանակ ամենքը դատում են արտաքինով, մի մարդ և դատարկ է և յիմար, բայց իրան փրուած է պահում—նրան յարգում են. իսկ միւսը գուցէ տաղանդներ ունի, որոնք կարող էին... կարող էին մեծ օգուտ բերել, բայց համեստութեան պատճառով։

—Դուք պետական մարդ էք, Նիկոլինկա, հարցրեց Շուրինը շատ բարակ ձայնով։

—Բաւական է որքան մասիսարութիւն արիք, բացականչեց Նիկոլայ Արտեմեվիչը բարկացած։—Դուք ձեզ մոռանում էք։ Ահա ձեզ մի նոր ապացոյց, որ ես այս տաճը ոչինչ նշանակութիւն չունիմ, ոչինչ։

—Աննա Վասիլեվնան ձեզ նեղում է... խղճուկ, ասաց Շուրինը ձգուելով։ Է՞ն, Նիկոլայ Արտեմեվիչ, մենք մեղաւորներ ենք։ Աւելի լաւ կը լինէր որ Աննա Վասիլեվնայի համար մի որ և է ընծայ պատրաստէիք։ Այս քանի օրերը նրա ծնունդն է, իսկ դուք գիտէք թէ որքան թանգ է նրա համար ուշադրութեան ամենափոքրիկ նշանը ձեր կողմից։

—Այն, այս, շատպով պատախանեց Նիկոլայ Արտեմեվիչը. շատ չորհակալ եմ ձեզանից, որ յիշեցրէ։ Ինչպէս չէ, անպատճառ։ Այ ես ունիմ մի բան, մի մանեակ, ես նրան այս քանի օրը գնեցի Ռոդենշտրաուխից. բայց չը գիտեմ, ձշմարիտ, լաւ կը լինի։

—Դուք այդ բանը չէ որ այն միւսի, Ռեվելի բնակչուհու համար էք գնել։

—Այսինքն... ես... այս ես... մտածում էի...»

—Որ այդպէս է, անպատճառ լաւը կը լինի։

—Շուրինը վերկացաւ աթոռից։

—Ուր գնանք այսօր երեկոյեան, Պաւել Եակովլեվիչ, հօը, հարցրեց նրան Նիկոլայ Արտեմեվիչը, սիրալիր կերպով նայելով նրա աչքերին։

—Չէ որ դուք կլուր կը գնաք։

—Կլուրից յետոյ... կլուրից յետոյ։

Շուրինը նորից ձգուեց։

—Ոչ, Նիկոլայ Արտեմեվիչ, ես վաղը պէտք է աշխատեմ։ Մի ուրիշ անգամ։—Եւ նա դուրս գնաց։

Նիկոլայ Արտեմեվիչը յօնքերը կիտեց, մի երկու անգամ անց ու դարձ արտւ սենեակում, գզրոցից հանեց թաւշէ արկա-

զիկը, որի մէջ էր մանեակը և երկար անտղում էր նրան ու շփում մետաքսէ բարակ շորով, Յետոյ նա նստեց հայելու առաջ և սկսեց խնամքով սանրել իր խիտ թուլս մազերը, դէմքի վրայ մի վեհութիւն պահելով, խոնարհում էր զլուխը կամ դէպի աջ կամ դէպի ձախ, լեզուն թշին դէմ տալով և աչքը չը հեռացնելով սանրուածքից, Մէջը հազար նրա մէջքի ետևում, նա յետ նայեց և տեսաւ լաքէյին, որ սուրճ էր բերել նրա համար:

— Ի՞նչ կայ, հարցրեց նա:

— Նիկօլայ Արտեմեվիչ, արտասանեց լաքէյը ոչ առանց հանդիսաւորութեան, — դուք մեր աղան էք,

— Գիտեմ, յետոյ:

— Նիկօլայ Արտեմեվիչ, դուք ինձ վրայ մի հաճեցէք բարկամալու, միայն ես, գտնուելով ձեր ողորմածութեան մօտ ծառայութեան մէջ փոքր հասակից, ստրկական եռանդից պէտք է յայտնեմ ձեր ողորմածութեան...

— Ի՞նչ կայ, ի՞նչ:

Լաքէյը մի քիչ շփոթուեց:

— Դուք ահա հածում էք ասել, սկսեց նա, — թէ չէք հածում իմանալ թէ ուր է Ելենա Նիկօլաելինան գնալ հածում: Ես այդ իմացայ:

— Ի՞նչ ես սուտ դուրս տալիս, յիմար:

— Կամքը ձերն է, միայն ես երեք օր առաջ տեսայ թէ ի՞նչպէս նա մի տուն մտնել հածեց:

— Ուր, ի՞նչ, ի՞նչպիսի տան:

— ...եան փողոցում՝ Գօվարսկայեա փողոցի մօտ: Այստեղից հեռու չէ: Ես հարցրի դռնապանին, թէ ովքեր են կենում այդտեղ:

Նիկօլայ Արտեմեվիչը ոտները յատակին խփեց:

— Լոիր, անգործ: Ի՞նչպէս ես համարձակւում... Ելենա Նիկօլաելինան, իր բարութիւնից, այցելում է աղքատներին, իսկ դու... Դուրս կորիր յիմար:

Վախեցած լաքէյը ուզում էր վազել դէպի դոները:

— Կաց, բացականչեց Նիկօլայ Արտեմեվիչը: Ի՞նչ ասաց քեզ դռնապանը:

— Ոչ... ի՞նչ չասաց: Ասում է ուս... ուսանող:

— Լոիր, անգործ: Լոիր, լիրը, եթէ դու երազումդ էլ մէկին այդ մասին բերանիցդ մի խօսք կը թոցնես...

— Ի՞նչ էք հրամայում...

— Լոիր, եթէ դու ծպուտ էլ հանես... եթէ մէկը... եթէ ես իմանամ... Դու իմ ձեռքից հողի տակ էլ տեղ չես գտնի: Լսում ես: Կորիր:

Լաքէյը անհետացաւ:

— Տէր Աստուած իմ, այս ի՞նչ է նշանակում, մտածեց Նիկօլայ Արտեմեվիչը, մենակ մնալով, ի՞նչ ասաց ինձ այս էշի գլուխը, հը: Պէտք է իմանալ թէ այդ ի՞նչ տուն է և ով է այստեղ ապրում: Ինքս կը գնամ: Ահա բանը ի՞նչին հասաւ վերջապէս... Un laquais! Quelle humiliation!

Եւ բարձր կրկնելով՝ սու լազար! Նիկօլայ Արտեմեվիչը փակեց մանեակը գզրոցի մէջ և գնաց Աննա Վասիլեվնայի մօտ: Վերջինիս նա գտաւ անկողնում, կապած թշով: Բայց նրա տանձնաքների տեսքը միայն գրգռեց Նիկօլայ Արտեմեվիչին և սաշտ շուտ հասցրեց Աննա Վասիլեվնային արտասունքների:

XXX

Մինչ այս մինչ այն Արեւելքում պատրաստուող փոթորիկը վրայ հասաւ, թիւրիան պատերազմ յայտարարեց Ռուսաստանին. իշխանութիւններից ոռւսաց զօրքերը հեռացնելու համար նշանակուած ժամանակը անցել էր. արդէն հեռու չէր Սինօպի յաղթութեան օրը: Ի՞նչարօվի ստացած վերջին նամակները, անդադար կանչում էին նրան հայրենիք: Նրա առողջութիւնը դեռ բոլորովին կարգի չէր ընկել, նա հազում էր, զգում էր թուլութիւն, տեսդի թեթեւ նշաններ, բայց համարեա չէր նստում տանը: Նրա հոգին բորբոքուեց, նա այլ ևս չէր մտածում հիւանդութեան մասին: Անդադար գէս ու գէն էր գնում, Մօսկուայում ծածուկ տեսնուում էր զանազան մարդկանց հետ, ամբողջ գիշերները զրում էր, անհետանում էր ամբողջ օրերով. Բնակարանի տիրոջը նա յայտնեց, թէ շուտով գնում է և վաղօրագ նրան ընծայեց իր աղքատիկ կահ կարասիքը: Ելենան էլ իր կողմից պատրաստում էր ճանապարհորդութեան: Մի երեկոյ եղանակը վատ էր, նա նստած էր իր սենեակում և թաշկինակներ կարելով, ակամայ վհատութեամբ ականչ էր դնում քամու հեծեծանքներին: Նրա աղախինը ներս մտաւ և ասաց նրան թէ հայրիկը մայրիկի ննջարանումն է և կանչում է նըրան... Ըմայրիկը լաց է լինում, շնչաց աղախինը Ելենայի յետեւից, դուրս դնալու ժամանակ, — իսկ հայրիկը բարկանում է»...

Ելենան թեթեւ կերպով ուսերը վեր քաշեց և մտաւ Աննա Վասիլեվնայի ննջարանը: Նիկօլայ Արտեմեվիչի բարեհոգի ամուսինը կիսով չափ պառկած էր բազկաթոսի մէջ և հոտուում էր օդեկոլոնով թրջած թաշկինակը, ինքը Նիկօլայ Արտեմեվիչը կանգնած էր բուխարու մօտ, բոլոր կոճակները կոճ-

կած, բարձր, պինդ փողպատ կապած և պինդ օպլայած օձիք ունէր, իր կերպարանքով աղօտ կերպով յիշեցնելով մի պարլամենտական հռետորի, Ձեռքի հռետորական շարժմամբ նա ցոյց տուեց իր աղջկան աթոռը և երբ աղջիկը, չը հասկանալով նրա շարժումը, հարցական հայեացը գցեց նրա վրայ, նա արժանաւորութեամբ, բայց զլուխը յետ չը դարձնելով, ասաց. «ինդրում եւ ան սստել (Եփկօլայ Արտեմեվիչը իր կնոջը միշտ ասում էր դուք, իսկ աղջկան—արտակարդ դէպքերում)».

Երենան Նստեղ

Անսա Վասիլեվնան լալագին ձայնով կանչեց։ Նիկոլայ Արտեմովիչը աջ ձեռքը դրեց սիւրտիւկի ծոցում։

—Ես ձեզ կանչեցի, Ելենա Նիկոլաեվնա, սկսեց նա եր-
կարատեւ լռութիւնից յետոյ,—այն պատճառով, որ բացատրենք
մի բան կամ, առելի լաւ ասած, որ ձեղանից բացատրութիւն-
ներ պահանջենք։ Ես ձեղանից անբաւական եմ, բայց ոչ սրա-
նով ես շատ քիչ բան եմ ասում։ Ճեր վարքը ինձ վշտադնում է,
ինձ վիրաւորում է — ինձ և ձեր մօրը... ձեր հօրը, որին դուք
տեսնում եք այստեղ։

Նիկոլայ Արտեմեևիչը գործ էր դնում իր ձայնի միայն բաս նօտաները, Ելենան լուռ նայեց նրան, յետոյ Աննա Վասիլիվնային, և գունատուեց:

—Կար մի ժամանակ, նորից սկսեց Նիկօլայ Արտեմիվիչը,
—երբ աղջիկները թոյլ չէին տալիս իրանց բարձրից նայել իւ-
րանց ծնողների վրայ, —երբ ծնողական իշխանութիւնը հար-
կադրում էր անհնաղանդներին գողար՝ Այդ ժամանակը անցաւ,
դժբախտաբար. գոնէ այսպէս են կարծում շատերը. բայց հա-
ւատացէք, դեռ ևս գոյութիւն ունեն օրէնքներ, որոնք թոյլ
չեն տալիս. . թոյլ չեն տալիս... մի խօսքով, դեռ ևս գոյութիւն
ունեն օրէնքներ. Խնդրում եմ ձեզ ուշադրութիւն դարձնել այս
բանի վրայ. օրէնքները գոյութիւն ունեն:

—Բայց, հայրիկ, սկսեց Ելենան..

inculques, որ մենք ներշնչեցինք ձեզ: Մենք իրաւունք ունեինք կարծելու, որ ոչինչ նոր «զաղափարներ» չեն դիպչի այդ, այսպէս ասած, նուիրական սրբութեան: Եւ ինչ: Զեմ խօսում այլ ես այն թեթեւամութեան մասին, որ յատուկ էձեր սեռին, ձեր հասակին... բայց ով կարող էր սպասել, որ դուք մինչեւ այն աստիճան կը մոռանաք ձեզ...

—Հայրիկ, ասաց Ելենան, —ես գիտեմ թէ ինչ էք ուզում ասել...

—Ոչ, դու չը գիտես թէ ինչ եմ ուզում ասել, բացական-
չնց Նիկոլայ Արտեմինիվիշը, յանկարծակի դաւաճանելով թէ պար-
լամենտական վեհութեան, թէ ճառի կարեւորութեան և թէ բաս
նօտաներին.—դու չը գիտես, յանդուդն աղջիկ:

—ի սէր Աստուծու, Nicolas, թոթովեց Աննա Վասիլեվ-նան,—vous me faites mourir.

—Մի ասեք ինձ այդ, զե յե vous fais mourir, Անսա
վասիլեմսա: Դուք երեւակայել էլ չեք կարող, թէ ինչ կը լսեք
իսկոյն: Պատրաստուեցէք աւելի վատին, նախազգուշացնում եմ
ձեզ:

Աննա Վասիլիեվնան տեղն ու տեղը սպառաւ

—Ոչ, շարունակեց Նիկոլայ Արտեմեվիչը, դառնալով Ելենային.—դու չը դիտես, ինչ եմ ես ուզում ասել:

—Ես մեղաւոր եմ ձեր առջև, սկսեց Ելենան...

—Հա, վերջապէս...

—Ես մնդաւոր եմ ձեր առջև, շարունակեց Ելինան, —այն պատճառով, որ վաղուց չեմ խոստվանել...

— Դուք գիտես, ընդհատեց Նրան Եկկոլայ Վասիլեվիչը! —
որ ես կարող եմ քեզ ոչնչացնել մի խօսքով։

Ելենան բարձրացրեց աչքերը, միաս սայսց

—Այն, տիրուհի, մի խօսքով: Խոչը առ այսինք (առ բաշ-
չեց ձեռքերը կրծքի վրայ: Թոյլ տուէք ձեզ հարցնել, յայտնի է
ձեզ մի տուն ...եան փողոցում, Պօվարսկայեա փողոցի մօտ:
Դուք այցելել եք այդ տունը (նա խփեց ոտով յատակին): Պա-
տասխանիր, անպիտան աղջիկ, և չը մտածես էլ խորամանկու-
թիւն անել: Մարդիկ, մարդիկ, լաքէյները, տիրուհի, oles vilis
laquais տեսե: Են ձեզ, ինչպէս եք մտնում այնտեղ, ձեր...

Ելենան ամբողջովին ըսրբագութ, և սրա աչքութ ու յլ-
տակեցին:

—Ես խորամանկութիւն բանցարու տուրք է ու պատասխանեց նա, —այս, ես այցելում եմ այդ տունը:
—Շատ գեղեցիկ: Լսում էք, լսում էք, Աննա Վասիլեվնա:
Եւ դուք, անշուշտ, զիտէք թէ ովք է այնտեղ ապրում:

— Այն, գիտեմ. իմ ամուսինը:
Նիկօլայ Արտեմեվիչը պլենց աշքերը.

— Քո...

— Իմ ամուսինը, կրկնեց Ելենան: — Ես ամուսնացել եմ
Դմիտրի Նիկանօսովիչ Խնամբօվի հետ:

— Դու... ամուսնացել ես... հազիւ կարողացաւ խօսել
Աննա Վասիլեվսան:

— Այն, մայրիկ... ներեցէք ինձ: Երկու շաբաթ առաջ մենք
ծածուկ պասկուցինք:

Աննա Վասիլեվսան ընկաւ բազկաթոսի մէջ. Նիկօլայ Ար-
տեմեվիչը երկու քայլ յետ գնաց:

— Ամուսնացած, Այդ չփլաղի, այդ չերնոգօրացու հետ:
Տոհմային ազնուական Նիկօլայ Ստախովի աղջիկը ամուսնացել
է մի թափառականի, մի անտոնմիկի հետ: Առանց ծնողական
օրհնութեան: Եւ դու կարծում ես թէ ես այդ բանը այդպէս էլ
կը թողնեմ, թէ ես չեմ գանգատուի, թէ ես թոյլ կը տամ քեզ...
թէ դու... թէ... Քեզ վանք կուղարկնմ, իսկ նրան տաժանակիր
աշխատանքների, կալանաւորների վաշտերը: Աննա Վասիլեվսան,
բարեհաճեցէք այս բոպէին ասել նրան, որ դուք նրան զրկում
էք ժառանգութիւնից:

— Նիկօլայ Արտեմեվիչ, ի սէր Աստուծու, հեծեծաց Աննա
Վասիլեվսան:

— Եւ երբ, ինչպէս կատարուեց այդ: Ո՞վ պսակեց ձեզ, ուր,
ինչպէս: Աստուծած իմ: Այժմ ինչ կասեն բոլոր ծանօթները, ամ-
բողջ աշխարհը: Եւ դու, անամօթ կեղծող, կարողացար այդ-
պիսի արարմունքից յետոյ ապրել ծնողական յարկի տակ: Դու
չը վախեցար... երկնային պատուհասից:

— Հայրիկ, ասաց Ելենան (սա դողում էր ամբողջովին,
ոտից մինչև զլուխ, բայց նրա ձայն ամուր էր), — դուք ազատ
էք անելու ինձ հետ, ինչ կամենում էք, բայց իզուր էր ինձ
մեղադրում անամօթութեան և կեղծելու համար: Ես չէի ու-
զում... վշտացնել ձեզ վազօրօք, բայց ես ակամայ այս քանի
որերը ինքս կասէի ձեզ ամեն ինչ, որովհետև մենք եկող շաբաթ
գնում ենք:

— Գնում էք: Ո՞ւր:

— Ամուսնուս հայրենիքը, Բոլգարիա:

— Թիւրքերի մօտ, բացականչեց Աննա Վասիլեվսան և ու-
շաթափուեց:

Ելենան վազեց իր մօր մօտ:

— Հեռու, զոռաց Նիկօլայ Արտեմեվիչը և բոնեց աղջկայ
ձեռքը. հեռու, անարժան...

Բայց այդ ակնթարթում ննջարանի դուռը բացուեց և երե-
աց մի գունատ դէմք, փայլող աչքերով դա Շուբինն էր:

— Նիկօլայ Վասիլեվիչ, կանչեց նա որքան ոյժ ունէր
ձայնի մէջ, — Աւզուատինա Խրիստիանօվնան եկել է և ձեզ կան-
չում է:

Նիկօլայ Արտեմեվիչը կատաղութեամբ յետ նայեց, բռնց-
քը թափ տուեց Շուբինի վրայ, մի բոպէ կանգ առաւ և արա-
գութեամբ դուրս եկաւ սենեակից:

Ելենան ընկաւ մօր ոտները և գրկեց նրա ծնկները:

Ուվար Իվանօվիչը պառկած էր իր անկողնում: Օձիք չու-
նեցող շապիկը, որի վրայ երեւում էր խոշոր կոճակը, բռնել էր
նրա լիքը վիզը և լայն, ազատ ծալքերով փռուած էր նրա հա-
մարեա կանացի կրծքի վրայ, բաց պահելով մեծ կիպարիսեայ
խաչը և պատկերը: Թեթեւ վերմակը ծածկում էր նրա լայնար-
ձակ անդամները: Ճրագը աղօտ լոյս էր տալիս գիշերային փոք-
րիկ սեղանի վրայ, կվասով լի մեծ բաժակի մօտ, անկողնի
վրայ, նստած էր տիրադէմ Շուբինը:

— Այն, մտախոհութեամբ ասում էր Շուբինը, — Ելենան
ամուսնացած է և պատրաստում է գնալ: Զեր հօրեղբօր որդին
աղմուկ և գոռգոռոց հանեց ամբողջ տան մէջ. վիակունց ննջա-
րանում որպէս թէ գաղտնապահութեան համար, մինչեւ ոչ մի-
այն չափեներն ու աղախինները, նոյն իսկ կառապաններն էլ
կարող էին լսել ամեն ինչ: Նա այժմ էլ փրփրած, կրակ է կըտ-
րած, քիչ էր մնում ինձ հետ կռուի. մի գլուխ իր հայրական
անէծքն է թափում. բայց բանը այդ չէ: Աննա Վասիլեվսան
ասլանուած է, բայց նրան աւելի շատ աղջկայ գնալն է հոգե-
հան անում, քան ամուսնանալը:

Ուվար Իվանօվիչը խաղացրեց մատները:

— Մայր! է, խօսեց նա. — Ե... իբր:

— Զեր հօրեղբօր որդին, շարունակեց Շուբինը, — սպառ-
նում է միտրօվիտին էլ, ընդհանուր նահանգապետին էլ,
մինխստին էլ գանգատներ տալ, իսկ բանը կը վերջանայ նրա-
նով, որ Ելենան կը գնայ: Ում համար ախորժեկի է ոչնչացնել
իր հարազատ աղջկան: Աքաղաղի պէս կը բարկանայ, յետոյ
պոչը կախ կ'անէ:

— Իրաւունք... չունեն, նկատեց Ուվար Իվանօվիչը, խմելով
մեծ բաժակից:

— Այդպէս է, այդպէս է: Բայց Մոսկուայում դատապար-
առութիւնների, ասէկուների, բամբասանքների ինչ ահա-
գին քանակութիւն կը բարձրանայ: Ելենան չը վախեց

նրանցից... Եւ սա նրանցից բարձր է։ Գնում է նա—և ուր,
սարսափելի է մտածել անդամ։ Ի՞նչ հեռու, ինչ խուլ տեղ։ Ի՞նչ
է սպասում նրանց այնտեղ։ Ետ տեսնում եմ նրանց, կարծես
նա զիշերը, բուքի մէջ, երեսուն աստիճան սառնամանիքին,
գնում է իջևանից, բաժանում է հայրենիքից, ընտանիքից։ իսկ
ետ նրան հասկանում եմ։ Ո՞ւմ է նա այստեղ թողնում։ Ո՞ւմ է
անել կուրնատում։ Բերսենելուրին, մէկ էլ ինձ։ և
սրանք գեռ լաւերն են։ Ի՞նչ կայ այստեղ, որ կարելի լինէր
ափսոսակ Մի բան է վատը, ասում են, թէ նրա ամուսինը—
սատանան տանէ, լեզուս պտոյտ չէ գալիս այդ բանը արտա-
սանելու,—ասում են, ինսարօվը արիւն է թքում. սա վատ է։
Ետ նրանց տեսայ այս քանի օրը. գէմքը այնպէս է, որ նրանից
իսկոյն կարելի է վերյնև հրուտոսի արձանը։ Դուք գիտէք ով
էր իրուտոսը, Ուվար իվանօվիչ։

—Ի՞նչ իմանաս, մարդ էր։

—Ճիշտ, «մարդ էր նա»։ Այն, հրաշալի գէմք, բայց տկար,
շատ տկար։

—Պէտք է պատերազմէ... մի և նոյն է, խօսեց Ուվար
իվանօվիչը։

—Մի և նոյն է, ճիշտ է. դուք այսօր բոլորովին ճիշտ էք
արտայայտում։ բայց ապրելը մի և նոյն չէ։ Զէ որ Ելենան
կուզէ ապրել նրա հետ։

—Զահիլութեան բան է, պատասխանեց Ուվար իվանօ-
վիչ։

—Այն, ջահիլ փառաւոր, համարձակ բան է։ Մահ, կեանք,
կոիւ, անկում, յաղթանակ, սէր, ազատութիւն, հայրենիք... Լաւ
է, լաւ է։ Աստուած տայ ամեն մէկին։ Դա այն չէ, ինչ մինչեւ
կոկորդը ճահիճի մէջ նստել և աշխատել այնպէս ցոյց տալ թէ
քեզ համար մի և նոյն է, մինչդեռ իսկապէս մի և նոյն չէ։ իսկ
այնտեղ—լարերը ձգուած են, հնչիր ամբողջ աշխարհի առաջ
կամ կտրուիր։

Շուրբինը գլուխը գցեց կրծքի վրայ։

—Այն, շարունակեց նա երկար լուսութիւնից յետոյ, —Ին-
սարօվը արժանի է Ելենային։ Սակայն ինչ անհեթեթ բան։ Ոչ
արժանի չէ Ելենային։ Ինսարօվ... Ինսարօվ... Ի՞նչ հարկա-
ռը արժանի չէ Ելենային։ Ինսարօվ... Ինսարօվ... Ի՞նչ հարկա-
ռը է կեղծ հեղութիւնը։ Դնենք թէ նա կտրիճ է, իր գլուխը
պահել կ'իմանայ, թէս մինչև այժմ անում էր այն, ինչ և մենք
մեղաւորներու։ բայց միթէ մենք այնքան էլ կատարեալ անպէտ-
մեղաւորներու։ բայց միթէ մենք այնքան էլ կատարեալ անպէտ-

գուցէ, Պաւել Շուրբինի անունը մի ժամանակ փառաւոր անուն
կը լինի։ Ահա ձեր սեղանի վրայ ընկած է պղնձէ զրօշ։ Ով գի-
տէ, գուցէ, երբ և իցէ, մի հարիւր տարուց յետոյ, այդ պղնձը
գործ կ'ածուի Պաւել Շուրբինի արձանի համար, որ կը դնէ շը-
նորհապարտ սերունդը ի պատիւ նրա։

Ուվար իվանօվիչը յենուեց արմունկի վրայ և աչքերը յա-
ռեց տաքացած գեղարուեստագէտի վրայ։

—Հեռու ժամանակի երգ է, խօսեց նա վերջապէս, մատ-
ները սովորականի պէս խաղացնելով.—լիօսքը ուրիշների մա-
սին է, իսկ դու... իքը... քո մասին։

—Օ՛, մեծ փիլիսոփայ ուռսաց երկրի, բացականչեց Շու-
րբինը։ —Չեր իւրաքանչիւր խօսքը—զուտ ոսկի է, և ոչ թէ ինձ,
այլ ձեզ պէտք է արձան դնել և այդ բանը ես ինքս կ'անեմ։
Այ ինչպէս այժմ պառկած էք, այդ զիրքի մէջ.—զիրք, որի
մէջ չը զիտես ինչ կայ աւելի՝ ծուլութիւն թէ ոյժ—այդպէս էլ
ես կը ծուլեմ ձեզ։ Արդարացի յանդիմանութեամբ դուք խոցե-
ցիք իմ եսամոլութիւնը և իմ ինքնասիրութիւնը։ Այս, այս,
պէտք չէ խօսել իր մասին։ պէտք չէ յոխորտալ։ Դեռ մեզ մօտ
ոչ ոք չը կայ, դեռ մարդիկ չը կան, ուր էլ նայես։ Ամեն ինչ—
կամ մանր մունր բաներ են, կրծողներ, փոքրիկ Համէտներ,
իրանց ատողներ, կամ մթութիւն և ստորերկրեայ խլութիւն,
կամ թէ խօսողներ, դատարկաբաններ և թմբուկի կօպալներ։
Բայց ահա ինչպիսիներն էլ են լինում։ մինչեւ խայտառակ նըր-
րութիւնը իրանք իրանց ուսումնասիրել են, անդադար իրանց
իւրաքանչիւր զգացմունքի զարկերակն են շօշափում և իրանք
իրանց զեկուցում են տալիս։ ահա ինչ եմ ես զգում, ահա ինչ
եմ ես մտածում։ Օգտակար, գործնական պարապմունք։ Ոչ,
եթէ մեղանում կարգին մարդիկ լինէին, չէր հեռանայ մեղա-
նից այդ աղջիկը, այդ զգայուն հոգին, չէր դուրս պրծնի, ինչ-
պէս ձուկը, որ ջուրն է մոնում Այս ինչ է, Ուվար իվանօվիչ։
Երբ կը գայ մեր ժամանակը։ Ե՞րբ կը լինեն մեղանում
մարդիկ։

—Ժամանակ տուր, պատասխանեց Ուվար իվանօվիչը։ —Կը
լինեն։

—Կը լինեն։ Հնդ, սեւահողի ոյժ։ դու ասացիր կը լինեն։
Նայեցիք, ես կը զրեմ ձեր խօսքը։ Բայց ինչու եք ճրագը հանգ-
ցընում։

—Քնել եմ ուզում, մնաս բարով։

XXXI

Շուրբինը ճիշտ ասաց: Ելենայի ամուսնութեան անակնկալ լուրը քիչ էր մնում սպանէ Աննա Վասիլեվնային: Նա պառկեց անկողնում: Նիկոլայ Արտեմեվիչը պահանջեց նրանից, որ թոյլ չը տայ աղջկան սրեւալ իր աշքին, նա կարծես ուրախացել էր որ առիթ կայ ցոյց տալ նրան տան տիրոջ կատարեալ նշանակութեան մէջ, ընտանիքի գլխի ամբողջ ոյժի մէջ. նա անընդհատ աղմկում է և որոտում էր ծառաների վրայ, մի զլուխ ասելով. «Ես ձեզ կ'ապացուցանեմ, ով եմ ես, ես ձեզ իմանալ կը տամ—սպասեցէք»: Քանի նա նստած էր տանը, Աննա Վասիլեվնան չէր տեսնում Ելենային և բաւականում էր Զօյեայի ներկայութեամբ, որ շատ եռանգով ծառայում էր նրան, բայց ինքն իրան մտածում էր, «Diesen Insaroff vorziehen—and wem?»: Բայց հէնց որ Նիկոլայ Արտեմեվիչը տանից հեռանում էր (իսկ սա բաւական յաճախ էր պատահում. Աւգուստինա Խրիստիանովնան ճիշտ որ վերադարձել էր), Ելենան զալիս էր իր մօր մօտ—և սա, երկար, լուռ, արտասուզներ թափելով նայում էր նրան: Այս համը յանդիմանութիւնը ամենից խոր էր թափանցում Ելենայի սրտի մէջ. զգում չէր նա զգում այդ ժամանակ, այլ խոր, անվերջ խղճահարութիւն, որ նման էր զղջման...»

—Մայրիկ, սիրելի մայրիկ, կրկնում էր նա, համբուրելով
նրա ձեռքը.—Ինչ անէի, ես մեղաւոր չեմ, ես սիրեցի նրան,
ես ուրիշ կերպ վարուել չէի. կարող: Մեղադրեցէք ճակատագի-
րը. նա ինձ կապեց մի մարդու հետ, որ դուք չէ գալիս հայ-
րիկին, որ տանում է ինձ ձեղանից:

—Օ՞հ, ընդհատում էր նրան Աննա Վասիլեվնան.—մի յիշ շեցնիր ինձ այդ բանը: Հէսց որ միտս եմ բերում, որ դու ուզում ես գնալ, սիրոս թուլանում է:

— Սիրելի մայրիկ, պատասխանում էր Ելենան, — մսիթա-
րուեցէք գոնէ Նրանով, որ կարող էր աւելի վատը լինել. և
կարող էի մեռնել:

—Եւ ես հէնց այժմ էլ յոյս չունեմ թէ էլի կը տեսնեմ քեզ։ Կամ դու կեսնքդ կը վերջացնես այնտեղ, մի որ և է շրժական խրճիթի մէջ (Աննա Վասիլեվսյին Բօլգարիան ներկայանում էր Սիբիրի տունդրաների նման մի բան), կամ թէ ես չեմ տանի բաժանումը...

—Մի ասէք այդ, բարի մայրիկ, մինք դեռ կը տեսնուհիք,

Աստուած կարող է: Իսկ Բօլգարիայում նոյնպիսի քաղաքներ են, ինչպէս այստեղ:

—ի՞նչ քաղաք, ինչ բան: Այստեղ այժմ պատերազմ է. այստեղ այժմ, ես կարծում եմ, ուր որ գնաս, թնդանօթներ են արձակում: Դու շուտ պիտի գնաս:

— Ծուտ... եթէ միայն հայրիկը... Նա ուզում է գանգատուել, նա սպառնում է բաժանել մեզ:

Աննա Վասիլեվնան աչքերը դէպի երկինքը բարձրացրեց:

— ոչ, կենօչկա, նա չի գանգատուի: Ես ինքսոչ մի կերպ
համաձայն չէի լինի այս հարսանիքին, կը մեռնէի, բայց չէի
համաձայնի. բայց հօ եղածը եղել է պրծել, իսկ ես չեմ թոյլ
տայ խայտառակել իմ աղջկան:

Այսպէս անցաւ մի քանի օր՝ վերջապէս Աննա Վասիլեանին սիրա տուաւ, և մի երեկոյ փակուեց իր ամուսնու հետ միասին ծածուկ ննջարանում։ Տան մէջ ամեն ինչ լրեց, անշարժացաւ... Սկզբում ոչինչ չէր լսում. յետոյ որոտաց Նիկոլայ Արտեմեվիչի ձայնը, յետոյ մէծ սկսուեց, բարձրացան աղաղակներ, թւում էր նոյն իսկ թէ հեծեծանքներ էլ են լսում... Արդէն Շուրբինը աղախինների և Զօյեայի հետ պատրաստում էր նորից օգնութեան համել. բայց աղմուկը ննջարանում սկսեց փոքր առ փոքր թուլանալ, փոխուեց խօսակցութեան և լոեց։ Միայն երբեմն լսում էին թոյլ հեկեկանքներ—դրանք էլ վերջացան։ Զընդացին բանալինները, լսուեց բացուող պահարանի ճռուցը... Դուռը բացուեց և երեւաց Նիկոլայ Արտեմեվիչը։ Դաժան հայեացք դգաց բոլոր պատահողների վրայ և գնաց կլուր. իսկ Աննա Վասիլեան կանչեց իր մօտ Ելենային, պինդ գրկեց նրան և դառն արտասունքներ թափելով ասաց.

—Ամեն ինչ դրսողած է, հայրդ պատմութիւն չի սարքի,
և ալժմ ոչինչ չէ խանգարում քեզ գնալ... ձգել մեզ:

—Թոյլ կը տաք Դիմիտրիին գալ չնորհակալութիւն յայտնել ձեզ, հարցյրեց Ելենան իր մօրը, երբ նա մի քիչ հանգստացաւ:

—Սպասիր, հոգիս, չեմ կարող ես այժմ տեսնել մեզ բա-
ժանադին։ Ճանապարհուելուց առաջ կը տեսնենք։

Ճանապարհութելուց առաջ, տիրութեամբ կրկնեց Ելենան:

Նամակ՝ Արտեմեվիչը համաձայնեց «պատմութիւն չը սար-

Աննա Վասիլեվսան չասաց իր աղջկան թէ ինչ

նամակայութիւնը։ Նա չառաց, որ խոս-

տառաւ վճարել նրա բոլոր պարտփերը և ձեռքից ձեռք տուեց

նայաւ գույք ու գույք արծաթի արծաթի բացի դրանից, նա վճռապէս յայտնան հազար ըստըլի արծաթի բացի դրանից, նա վճռապէս յայտ-

Նեց Աննա Վասիլեվնային թէ չէ ուզում պատահել Խնարօվին, որին շարունակում էր անուանել չերնօգօրացի, իսկ գնալով կլուբ, առանց որ և է հարկաւորութեան խօսեց Ելենայի հարսանիքի մասին—իր խաչընկերի հետ, որ ինժէներական պաշտօնաթող գեներալ էր: «Դուք լսել եք, խօսեց նա մի կեղծ անփութութեամբ—իմ ազգին, շափազանց շատ զիտականութիւնից, ամուսնացել է մի ինչ-որ ուսանողի հետ»: Գեներալը նայեց նրան ակնոցների միջով, «Հըմ» արեց և հարցրեց նրան ինչ է նա խաղում:

XXXII

Իսկ ճանապարհուելու օրը մօտենում էր Նոյեմբերը արդէն վերջանում էր, անցնում էին նշանակուած ժամանակները։ Խնսարօվը վաղուց վերջացրել էր իր բոլոր պատրաստութիւնները և այրում էր Մօսկուայից շուտով գուրսու զանկութեամբ։ Բժիշկն էլ շտապեցնում էր նրան. «Ճեզ հարկաւոր է տաք կիմա, ասում էր նա նրան, այստեղ դուք չեք լաւանայ»։ Անհամբերութիւնը նեղում էր և Ելենային. նրան վախեցնում էր Խնսարօվի գունատութիւնը, նիհարութիւնը Ելենան յաճախ մի ակամայ վախով էր նայում նրա փոխուած գծերին։ Ծնողների տան մէջ նրա դրութիւնը անտանելի էր դառնում։ Մայրը աղօթում էր նրա վրայ, ինչպէս մեռածի վրայ, իսկ հայրը վարում էր նրա հետ արհամարհական—սառն եղանակով, անջատման մօտիկութիւնը հօրն էլ ծածուկ տանջում էր, բայց նա իր պարտքն է համարում, վիրաւորուած հօր պարտք, ծածկել իր զգացմունքները, իր թուլութիւնը։ Աննա Վասիլեվսան ցանկացաւ վերջապէս տեսնուել Խնսարօվի հետ։ Վերջինիս տարան րա մօտ կամցուկ, յետեի սանդուղքով։ Երբ նա մտաւ սենեակը, Աննա Վասիլեվսան երկար չը կարողացաւ խօսել նրա հետ, չը կարողացաւ նոյն իսկ սիրտ անել նայել նրան։ Խնսարօվը նստեց նրա բազկաթոռի մօտ և մի հանդարտ յարգանքով սպասում էր նրա առաջին խօսքին։ Ելենան նստած էր այդտեղ և իր ձեռքի մէջ բռնած ունէր մօր ձեռքը։ Աննա Վասիլեվսան վերջապէս բարձրացրեց աչքերը, ասաց. «Աստուած լինի ձեր դատաւորը, Դմիտրի Նիկանօրօվիչ»... և կանդ առաւ. յանդիմանութիւնները սառան նրա շրթունքների վրայ։ Բայց դուք հիւնդ էր, բացականչեց նա. —Ելենա, նա հիւնդ է։

—Ես տկար էի, Աննա Վասիլեվնա, պատասխանեց Իննա-
րովը, —և այժմ էլ դեռ բոլորովին չեմ լաւացել, բայց յոյ-
ունիմ, որ հայրենի օգը ինձ վերջնականապէս կը կազդուրէ.

—Այս... Բօլգարիան, թոթովեց Աննա Վասիլեվսան և
մտածեց. «Աստուած իմ, բօլգարացի, մեռնող, ձայնը կարծես
տակառից է դուքս գալիս, աչքերը խոր ընկած, կմախք, նրա
սիւրափիւկը կարծես ուրիշի ուսերից է վերցրած, դեղին է ինչ-
պէս իրիցուկ. —և Ելենան նրա կինն է, նրան սիրում է... հօ
սա մի երազ է... Բայց նա իսկոյն զսպեց իրան: —Դմիտրի
Նիկանորօվիչ, առաց նա, —դուք անպատճառ, անպատճառ պի-
տի գնաք:

—Անպատճառ, Աննա Վասիլեվնա:

Անսա Վասիլեվսան նայեց նրան:

—Օհ, Դմիտրի Նիկանօրօվիչ, Աստուած չանէ որ դուք
քաշէք այս, ինչ ես եմ այժմ քաշում... Բայց դուք խռոտանում
էք ինձ պահպանել Ելենային, սիրել նրան... պակասութիւն
դուք չէք տեսնի, քանի որ ես կենդանի եմ:

Արտասովները խլացրին նրա ձայնը Նա բաց արաւ իր գիրկը, և Ելենան ու Խնսարօվը ընկան նրա գիրկը:

Ճակատագրական օրը հասաւ վերջապէս։ Որոշուած էր,
որ Ելենան հրաժեշտ տայ իր ծնողներին տանը, իսկ ճանապարհ ընկնէ Խնսարօվի բնակարանից։ Պէտք է ճանապարհուէին ժամի տամներկուախն Քառորդ ժամ առաջ եկաւ Բերսենեվը Նա կարծում էր թէ կը պատահէ Խնսարօվի մօտ նրա հայրենակից-ներին, որոնք կը կամինան նրա ճանապարհ դնել. բայց նրանք բոլորը առաջ էին գնացել. գնացել էին նոյնպէս և ընթերցողին յայտնի երկու խորհրդաւոր անձնաւորթիւնները (Նրանք էին վկաները Խնսարօվի պասակադրութեանը)։ Դերձակը գլուխ տուեց գրաբի աղային։ Նա, երեխ, վշտից, բայց գուցէ և ուրախութիւնից որ կահ կարասիքը իրան է մնում, սաստիկ խմել էր. կինը նրան չուտ հեռացրեց տարաւ։ Սենեակում ամեն ինչ արդէն հաւաքած էր. թոկով կապած պայուսակը ընկած էր յատակի վրայ; Բերսենեվը մտածմունքի մէջ ընկաւ. շատ յիշողութիւններ անցան նրա հոգու մէջ։

Ժամի տասներկուսը վազուց էր խփել և կառապանը արդէն բերել էր ձիաները, իսկ ճնորապահները՝ զեռ չէին երեւում: Վերջապէս լսուեցան սանդուղքի վրայ շտապ քայլեր և Ելենան ներս մտաւ Խնարօվի և Շուքինի հետո Ելենայի աշքերը կարմիր էին. նա թողել էր իր մօրը ուշաթափութեան մէջ. հրաժեշտը շատ ծանր էր եղել: Ելենան շարթից աւել էր ինչ չէր տեսել Բերսենեվին, վերջին ժամանակները Բերսենեվը Քիչ էր գնում Ստախօվների մօտ: Ելենան չէր սպասում թէ կը հանդիպէ նրան, բացականչեց. «Դուք, ճնորհակալութիւն» և փա-

թաթուեց նրա վզին. ինսարօվը նոյնպէս գրկեց նրան: Նեղող լուռթիւն տիրեց: Ի՞նչ կարող էին ասել այս երեք մարդիկ, ինչ էին զգում այս երեք սրտերը: Շուրբնը հասկացաւ որ անհրաժեշտ է մի կենդանի ձայնով, խօսքով վերջ դնել այդ ճնշող դրութեան:

—Ելի հաւաքուել է մեր երրորդութիւնը, խօսեց նա, — վերջին անգամ: Հաւաքանքունք ճակատագրի հրամաններին, բարի խօսքով յիշատակենք անցեալը և Աստուծով նոր կեանք սկսենք: «Աստուծով, դէպի հեռու ճանապարհ», երգեց նա և կանգ առաւ: Յանկարծ նա զգաց խղճահարութիւն, անյարմարութիւն: Մեղք է երգել այնտեղ, ուր պառկած է մեռելը. իսկ այդ ակնթարթում, այս սենեակի մէջ, մեռնում էր այն անցեալը, որի մասին նա յիշեց, անցեալը այն մարդկանց, որոնք հաւաքուել էին այնտեղ: Ասենք մեռնում էր նոր կեանքի վերածնութեան համար..., բայց էլի մեռնում էր:

—Դէհ, Ելենա, սկսեց Բերսենեվը, դիմելով կնոջը, —կարծեմ ամեն ինչ վերջացաւ: Ամեն ինչ վճարուած է, պնդացրած է: Պէտք է միայն այս պայուսակը տանել:

Նա կանչեց բնակարանի տիրոջը, որ ներս մտաւ իր կնոջ և աղջկայ հետ: Նա թեթեւ կերպով օրօրուելով լսեց ինսարօվի հրամանը, պայուսակը իր ուսերին դրեց և արագ վազեց սանդուղքով դէպի ցած, թրիկացնելով իր կօշիկներով:

—Այժմ, ուստական սովորութեամբ, պէտք է նստել, նկատեց ինսարօվը:

Ամենքը նստեցին, Բերսենեվը տեղաւորուեց էին բազմոցի վրայ. Ելենան նստեց նրա կողքին, դերձակի կինը և աղջիկը կանգնեցին շէմքի մօտ: Ամենքը լուցին. ամենքը լարուած ժըպտում էին, և ոչ ոք չը գիտէր թէ ինչու է ժպտում. ամեն մէկը ուզում էր հրաժեշտի մի բան ասել, և ամեն մէկը (բացի, ի հարկէ, դերձակի կնոջից և նրա աղջկանից. սրանք միայն պէտք էին իրանց աշքերը) զգում էր, որ այսպիսի ըսպէսերին կարելի է միայն լպիր բառեր արտասանել, որ իւրաքանչիւր խելօք կամ պարզապէս սրտագին խօսք կը լինէր մի անտեղի, համարեա, կեղծ բան, ինսարօվը առաջինը վեր կացաւ և սկսեց հանել երեսին... «Մնաս բարով, մեր սենեակ», բացականչեց նա:

Լուսեցին համբոյրներ, բաժանման հնչուն, բայց ցուրտ համբոյրներ, ողջերթի կիսատ ցանկութիւններ, գրելու խոստումներ, վերջին, կիսով չափ ճնշուած մնաս բարովի խօսքեր...

Ելենան ամբողջովին արտասունըների մէջ, արդէն նստել էր սայլակում: Ինսարօվը խնամքով ծածկում էր նրա ստները

գորգով. Շուրբնը, Բերսենեվը, բնակարանի տէրը, նրա կինը, աղջիկը իր անխուսափելի թաշկինակը գլխին, գոնապահը, օտար մի արհեստաւոր, որ հագած էր զօլաւոր խալաթ—ամենքը կանգնած էին պատշգամբի մօտ, երբ յանկարծ բակը ներս թըռաւ մի հարուստ սահնակ, որին լծած էր մի ամենի վազուն ձի, և սահնակից, թափ տալով ձիւնը վերարկուի օձիքից, ոած թռաւ նիկոլայ Արտեմեվիչը:

—Հասայ, փառք Աստուծու, բայցականչեց նա, և վազեց սայլերի մօտ: —Ահա քեզ, Ելենա, մեր վերջին ծնողական օրնութիւնը, ասաց նա հանելով սիւրտիւկի գրպանից մի փոքրիկ եկեղեցական պատկեր, որ կարուած էր թաւիշեայ քսակի մէջ, կախեց նրա վզից Ելենան հեկեկաց և սկսեց համբուրել նրա ձեռքերը, իսկ կառապանը այդ միջոցին հանեց սահնակի նրա ձեռքերը, իսկ կառապանը այդ միջոցին հանեց սահնակի առջեւից կէս չի շամպանեան և երեք բաժակ:

—Դէհ, ասաց նիկոլայ Արտեմեվիչը, իսկ նրա արտասունքները կաթկաթում էին վերարկուի կուղը մորթուց կաշում օձիքի վրայ—պէտք է ճանապարհ դնել... և ցանկալ... Նա սկսեց շամպանը ածել. նրա ձեռքերը գողում էին, փրփուրը բարձրանում էր բաժակների շրթունքներից և ընկուում էր ձիւնի վրայ: Նա վերցրեց մի բաժակ, իսկ միւս երկուսը տուեց Ելենային և ինսարօվին, որ արդէն կարողացել էր տեղաւորուել նրա կողքին: Աստուծու տայ ձեզ... սկսեց նիկոլայ Արտեմեվիչը և չը կարողացաւ վերջացնել ու խմեց գիսին, նրանք սոյնպէս խմեցին: —Այժմ պէտք էր որ դուք, պարունար, աւելացրեց նա, զիմելով Շուրբինին և Բերսենեվին: —բայց այդ վազը սայլի կողքից: Տես, գրիր մեզ, ասում էր նա վիշ վազեց սայլի կողքից: —Տես, գրիր մեզ, ասում էր նա վիշ վազեց ձայնով: Ելենան բարձրացրեց զլուխը, ասաց ընդհատուող ձայնով: Հայրիկ, Անդրէյ Պետրովիչ, Պավել Եակովիեմնացէք բարով, հայրիկ, Անդրէյ Պետրովիչ, Պավել Եակովիեմնացէք ամենքդ, բարով մնայ Ռուսաստան: և յետիչ, բարով մնացէք ամենքդ, բարով մնայ Ռուսաստան: Կառապանը մտրակը շարժեց, շուացրեց, սայլակը ճըռուով ձիւնի վրայ, դոներից դէպի աջ ծոռեց—և մնյայտացաւ:

XXXIII

Ապրիլեան պայծառ օր էր: Լայն ծովախորշով, որ բաժանում է Վենեցիան ծովային աւաղի այն շերտից, որ անուանում է Լիսո, սահում էր սրակուրծք զօնդովը, հանդարտ օրորուելով ամեն անզամ երբ նաւազարը ընկուում էր երկար

թիու վրայ: Գօնդոլի ցածրիկ կտուրի տակ, կաշէ փափուկ բարձերի վրայ, նստած էին Ելենան և Ինսարօվը:

Ելենայի դէմքի գծերը շատ չէին փոխուել. Մոսկուայից ճանապարհուելու օրից, բայց նրանց արտայայտութիւնը ուրիշ էր դառել. այդ արտայայտութիւնը աւելի խելամիտ և խիստ էր, իսկ աչքերը աւելի համարձակ էին նայում: Նրա ամբողջ մարմինը ծաղկել էր և մազերը, կարծես, աւելի փարթամ և խիտ ընկած էին... ակատի և թարմ թշերի երկարութեամբ: Միայն շրթունքների մէջ, երբ նա չէր ժպտում, հաղիւ նկատելի ծալքով յայտնուում էր մի ծածուկ, մշտական հողսի ներկայութիւնը: Ինսարօվի դէմքի արտայայտութիւնը, ընդհակառակին, մնացել էր նոյնը, բայց նրա գծերը անողութ կերպով փոխուել էին: Նա նիհարացել էր, ծերացել, գունատուել, մէջքից կուցել. նա համարեա անդադար հազում էր կարծ, չոր հազով, և նրա խոր ընկած աչքերը մի օտարութ փայլ էին տալիս: Ռուսաստանից այստեղ գալիս, Ինսարօվը համարեա երկու ամիս հիւանդ պառկեց Վիեննայում, և միայն մարտի վերջին կող հետ եկաւ Վենեցիա. Նա այդտեղից յոյս ունէր Զարայի վրայով անցնել Սերբիա, Բոլգարիա. միւս ճանապարհները նրա համար փակուած էին: Պատերամզը արդէն եռում էր Դունայ գետի վրայ. Անդիհան և Ֆրանսիան յայտարարել էին Ռուսաստանին պատերազմ, բոլոր սլաւոնական երկիրները յուղում էին և պատրաստում ապստամբութեան:

Գօնդոլը մօտեցաւ կիդօի ներքին ծայրին: Ելենան և Ինսարօվը գնացին նեղ աւազոտ ճանապարհով, որի երկու կողմով տնկուած էին փոքրիկ հիւանդու ծառեր (նրանց տնկում են ամեն տարի և նրանք մեռնում են՝ ամեն տարի), դէպի կիդօի արտաքին ծայրը, դէպի ծովը:

Նրանք գնացին ափով: Ադրիական ծովը թաւալում էր նըրանց առաջ իր պղտոր-կապոյտ ալիքները. Նրանք փրփրում էին, ֆշշում, առաջ էին վազում, և յետ ու յետ գնալով, թողնուում էին աւազի վրայ փոքրիկ խխունջներ և ծովային խոտերի կտորներ:

— Ի՞նչ վհատեցուցիչ տեղ, նկատեց Ելենան: Ես վախում եմ որ այստեղ քեզ համար չափազանց ցուրտ լինի. բայց ես համանում եմ թէ ինչու դու ուզեցիր այստեղ գալ:

— Ցնորտ, պատասխանեց մի արագ, բայց դառն հեգնութեամբ Ինսարօվը: Լաւ զինուոր կը լինեմ ես, եթէ վախենամ ցրտից: Իսկ այստեղ եկայ ես... կ'ասեմ թէ ինչու նայում եմ այս ծովին, և ինձ թւում է թէ այստեղից մօտիկ եմ իմ հայ-

բենիքին: Նա այստեղ է, աւելացրեց նա, ձեռքը մեկնելով դէպի արեւելք: Ահա քամին էլ այն կողմից է գալիս:

— Այդ քամին արդեօք չի բերի այն նաւը, որին դու սպասում ես.—ասաց Ելենան.—ահա սպիտակին է տալիս առագաստը, նա չէ արդեօք:

Ինսարօվը նայեց ծովային հեռաւորութեան, որ ցոյց էր տալիս Ելենան:

Ռէնդիչը խոստացաւ մինչև մի շաբաթը ամեն ինչ սարքել մեզ համար, նկատեց նա: Նրա վրայ, կարծեմ, կարելի է վըստահ լինել... կան ես, Ելենա, աւելացրեց նա մի յանկարծակի ոգեւորութեամբ,—ասում են որ գալմատացի խեղճ ձկնորսները նուիրեցին իրանց կապարները—գիտես, ինչ են դրանք, այն ծանրոցքը, որոնցից ուռկանները ջրի տակն են գնում—գնդակներ ձուլելու համար: Փող նրանք չունին, ապրում են միմիայն մի գույն իրանց վերջին ձկնորսութեամբ. բայց ուրախութեամբ տուին իրանց վերջին ունեցածը, և այժմ սոված են: Ի՞նչ ծովովուրդ է:

— Ասցերաստ! Կանչեց նրանց յետեւում մի գոռոզ ձայն: Լսուեց ձիու սմբակների խուլ տոփիւնը, և աւստրիական մի օֆիցեր, կարձիկ մոխրագոյն տիւնիկ հաղած և կանաչ գլխարկ գրած, սլացաւ նրանց մօտով... Նրանք հաղիւ կարողացան մի կողմ քաշուել:

Ինսարօվը մոայլ կերպով նայեց նրա յետեւից:

— Նա մեղաւոր չէ, ասաց Ելենան,—դու գիտես, նրանք մի ուրիշ տեղ չունեն, որ ձիանները արշաւելու սովորեցնեն:

— Նա մեղաւոր չէ, պատասխանեց Ինսարօվը,—բայց իմ արիւնը շարքեց, իր աղաղակով, իր բեղերով, իր գլխարկով, իր ամբողջ արտաքինով: Վերագառնանք:

— Վերագառնանք, Դմիտրի: Բացի զրանից, այստեղ իսկ որ փչում է: Դու Մօսկուայի հիւանդութիւնից յետոյ քեզ չը ապահանեցիր և դրա համար տուժեցիր Վիեննայում: Այժմ պէտք է զգոյշ լինել:

Ինսարօվը լոեց, բայց նախկին դառն հեգնութիւնը սահեց նրա շրթունքների վրայով:

— Ուզում ես, չարունակեց Ելենան,—զրօննենք Canal Grande-ի վրայ: Այն ժամանակից, ինչ մենք այստեղ ենք, գեռ լաւ չենք տեսել Վենեցիան: Իսկ երեկոյեան զնանք թատրոն. Ես օթեակի երկու տոմսակ ունեմ, ասում են թէ նոր օպերա ես տալիս: Ուզում ես, այսօրը մենք միմեանց տանք, մոռական շրթունքների վաղաքականութիւնը, պատերազմը, ամեն ինչ, իմանանք նանք քաղաքականութիւնը, պատերազմը, չնչում ենք, մտածում միայն մի բան. որ մենք ապրում ենք, չնչում ենք, մտածում միայն միասին, որ մենք միացած ենք ընդ միշտ... Ուզում ես:

— Դու այդ ուզում ես, Ելենա, պատասխանեց Խնսարօվը։
Նշանակում է, որ ես էլ եմ ուզում...»

— Ես այդ գիտէի, նկատեց Ելենան ժպտալով։ Գնանք,
գնանք։

Նրանք մերաղաբձան գօնդով մօտ, նստեցին և հրամայեցին տասել իրանց, չը շտապելով Canal Grande-ի վրայով։

Ով չէ տեսել Վենեցիան ապրիլին, նրան հազիւ թէ ծանօթ լինի այդ կախարդական քաղաքի ամբողջ անասելի չքնաղութիւնը։ Գարնան հեղութիւնը և քնքշութիւնը այնպէս են սազ գալիս Վենեցիային, ինչպէս ամառուայ պայծառ արեւը փառահեղ Գենուային, ինչպէս աշնան ոսկին ու ծիրանին մեծ ծիրանի Հոռմին։ Գարնան նման, Վենեցիայի գեղեցկութիւնն էլ և՛ յուղում է և՛ արտադրում է ցանկութիւններ։ Նա ճնշում և գրգռում է անփորձ սիրտը, ինչպէս մօտիկ, առեղծուածային, բայց խորհրդաւոր երջանկութեան խոստումը։ Ամեն ինչ նրա մէջ պայծառ է, հասկանալի, և ամեն ինչ պօզուած է մի ինչոր սիրահարուած խաղաղութեան բարակ մուխով։ ամեն ինչ նրա մէջ լուս է, և ամեն ինչ ժպտուն է։ ամեն ինչ նրա մէջ կանացական է, սկսած նոյն իսկ անուանից։ իդուր չեն նրան տուել գեղեցիկ անունը։ Պալատների, եկեղեցիների ահագին զանգուածները կանգնած են թեթև և հրաշալի, ինչպէս ներդաշնակ քունը երիտասարդ աստուծու։ կայ մի ինչ-որ հերիթային, մի ինչ-որ գերող օտարոտի բան ջրանցքների համր ալիքի կանաչ գորշ փայլի և մետաքսեայ փալփոցի մէջ, գօնդուների անձայն վազոցքի մէջ, քաղաքային կոպիտ ձայների, կոպիտ թրիթրկոցի, ճայթիւնների և աղմուկի բացակայութեան մէջ։ «Վենեցիան մեռնում է, Վենեցիան դատարկուել է», ասում են ձեզ նրա բնակիչները, բայց գուցէ հէնց վերջին չքնաղութիւնը, գեղեցկութեան ծաղկման և յաղթանակի մէջ տեղի ունեցող թառամումի չքնաղութիւնը պակասում էր նրան։ Ավ նրան չէ տեսել, նա նրան չէ ճանաչում։ ոչ Կանալետաին, ոչ Գվարդի (չը խօսելով այլ եւս նորագոյն պատկերահանների մասին) ոյժ չունեն հազորդելու օդի այդ արծաթային քնքշութիւնը, այդ թռչող և մօտիկ հեռաւորութիւնը, այդ հիացնող ներդաշնակութիւնը ամենազողաբիկ գծագրութիւնների և հալուող զոյների։ Կեանք անցկացրած, կեանքից ջարդուած մարդը Վենեցիան այցելելու բան չունի։ Վենեցիան այդպիսի համար դառն կը լինի, ինչպէս նախակին օրերի չը կատարուած իղձերի յիշողութիւն։ բայց քաղցր կը լինի Վենեցիան նրա համար, ում մէջ գեռ եռում են ոյժերը, ով իրան բարեբաստիկ է զգում։ թող այդպիսին բերէ իր երջանկութիւնը Վենետիկի հմայուած

երկնքի տակ, և որքան էլ այդ երջանկութիւնը լուսածածանչ լինի, Վենեցիան էլի կ'ոսկեզօծէ նրան իր անթառամ փայլով։

Գօնդոլը, որի մէջ նստած էին Խնսարօվը և Ելենան, հանգարտիկ անցաւ Riva dei Jechiavoni գօֆերի պալատի, Պիացետայի մօտով, և մտաւ Մեծ Ջրանցքը։ Երկու կողմից շարան ընկան մարմարեայ պալատները, սրանք, կարծես, հանգարտ լողում էին մօտով, հազիւ թոյլ տալով հայեացքին գրկել և հասկանալ իրանց բոլոր գեղեցկութիւնները։ Ելենան զգում էր իրան խորապէս երջանիկ։ Նրա երկնքի կապաւտակութեան մէջ մի մութ ամպիկ կար, այն էլ հեռանում էր, ինսարօվը այդ օրը անհամեմատ լաւ էր զգում իրան։ Նրանք հասան Շիալտօի գիք կամարին և յետ զարձան։ Ելենան վախենում էր որ եկեղեցիների ցրտութիւնը ինսարօվի համար վատ կը լինի. բայց նա յիշեց delle Belle Arti ակադեմիան և հրամայեց գօնդոլավարին գնալ այնտեղ։ Նրանք շուտով պտտեցին այդ փոքրիկ մուգէի բոլոր դահլիճները։ Զը մինելով ոչ գիացողներ, ոչ սիրողներ, նրանք այժմ կանգ չեն առնում իւրաքանչիւր պատկերի առաջ, չեն բանադատում իրանց. մի ինչ-որ փայլուն ուրախութիւն անակնկալ կերպով եկաւ նրանց զրայ։ Երանց յանկարծ ամեն ինչ թուաց զուարձալի (երեխաններին լաւ յայտնի է այս զգացմունքը)։ Ի մեծ ապշութիւն երեք այցելու անդիմիցիների, Ելենան արտասուելու չափ քրքչում էր Տինտորետոյի սուրբ Մարկոսի վրայ, որ ցատկում է երկնքից ինչպէս գորտը ջրի մէջ, կեղեքուող սարուկին ազատելու համար։ Իր կողմից ինսարօվը հրճուանք զգաց, տեսնելով կանաչ քղամիտ հազած այն եռանգուտ մարդու մէջքն ու սրունքները, որ կանգնած է Տիցիանի Համբարձում պատկերի առաջին պղանում և բարձրացնում է ձեռքերը Աստուածամօրից յետոյ։ բայց ինքը Աստուածամայրը — մի գեղեցիկ, ուժեղ կին, որ հանդարտ և վեհ կերպով սլանում է դէպի Հօր Աստուծու գիրկը — ապշեցրեց թէ ինսարօվին և թէ Ելենային. գուր եկաւ նրանց նոյնպէս և ծերուն Զիմա դա-կօնկելեանօի խիստ և սուրբ պատկերը։ Դուրս գալով ակադեմիայից, նրանք մի անգամ էլ նայեցին իրանց յետեւից եկող անգլիացիներին, որոնք նապաստակի երկար ատամներ և կախ ընկած բակենբարդեր ունէին — և ծիծաղեցին։ անսան իրանց գօնդոլավարին իր պոչատ բաճկոնով և կարձիկ վարդիկով — և ծիծաղեցին։ տեսան մանրավաճառ կնոջը, որ սպիտակ մազերի մի կապոց ունէր զլխի գաղաթի ծայրին — և աւելի թունդ ծիծաղեցին։ վերջապէս միմեանց գէմքի նայեցին և ծիծաղից թուլացան, իսկ հէնց որ նստեցին գօնդոլի մէջ — պինդ և պինդ սեղմեցին իրար ձեռքերը։

Նրանք գնացին հիւրանոցը, վաղեցին իրանց սենեակը և հրամայեցին որ ճաշ բերեն իրանց համար: Ուրախութիւնը չէր թողնում նրանց և ճաշի վրայ: Նրանք միմնանց մեծարում էին, խմում էին Մոսկուայի բարեկամների կենացը, ծափահարում էին ծառային համեղ ձկան համար, և շարունակ պահանջում էին նրանից կենդանի բրուտում ու առաջնում, իսկ նրանց սենեակից դուրս դալրս շարժում էր գլուխը և մի անգամ նոյն իսկ հառաչելով շնչաց: Պուրետի! (խեղճնը): Ճաշից յետոյ նրանք գնացին թատրոն:

Թատրոնում տալիս էին Վերդիի՝ արդարն ասուած, բաւական ցած, բայց եւրոպական բոլոր բնմերում ընդունուած և մեզ, ոուսներիս, լաւ յայտնի «Տրավիատա» օպերան: Սեղնը վենեցիայում անցել էր, և բոլոր երգիչները միջակութեան մակերսոյթից չէին բարձրանում: ամեն մէկը բղաւում էր, որքան ոյժ ունէր: Վիօլետայի գերը կատարում էր մի արտիստուհի, որ համարում չունէր, բայց չնորհքից զուրկ չէր: Դա մի երիտասարդ, ոչ շատ գեղեցիկ, սեաչեայ աղջիկ էր ոչ բոլորովին հաւասար և արդէն ջարդուած ձայնով: Նա հագնուած էր միամտութեան չափ խայտարդէտ և վատ: կարմիր ցանցը ծածկում էր նրա մազերը, գոյնը գնացած, կապոյտ ատլասից կարած հագուստը ճնշում էր նրա կուրծքը, շինդական հաստ ձեռնոցները համնում էին սուր արմունկներին: և ինչպէս կարող էր նա, որ և է բերգամացի հովուի մի աղջիկը, իմանալ թէ ինչպէս են հագնուում Պարիզի կամելիաները: Բեմի վրայ պահուել էլ չէր իմանում նա: բայց նրա խաղի մէջ շատ կար ճըշմարտութիւն և անարուեստ պարզութիւն, և երգում էր նա արտայայտութեան և րիթմի այն առանձին կրթութութեամբ, որ աջողում է միայն իտալացիներին: Ելենան և Ինսարօվը նստած էին երկունով մութ օթեակում, բոլորովին մօտ բեմին: ոգու ուրախ արամադրութիւնը, որ իջել էր նրանց վրայ ձեռք Արև ակադեմիայում, դեռ չէր անցել երբ հրապուրող կնոջ ցանցերն ընկած դժբախտ պատանու հայրը երեաց բեմի վրայ իր Փրակով և սպիտակ, ցցուած կեղծ մազերով, արձակեց վիատեցուցիչ բառացին տեկմօլօն, նրանք երկունով քիչ էր մնում փրտկացնէին: Բայց Վիօլետայի խաղը աղդեց նրանց վրայ:

— Այս խեղճ աղջկան համարեա բոլորովին չեն ծափահարում, ասաց Ելենան, — իսկ ես հազար անգամ նախագատիւ եմ համարում նրան մի որինիցէ ինքնավատան, երկրորդական հըռչակի տէր գերասանուհուց, որ կը կոտրատուէր և կը գալարուէր,

ամբողջ ժամանակ է փփէկտի յետեից վազելով: Այս մէկը կարծեա հանպներ անելու արամադրութիւն չունի: տես, նա չէ նկատում թէ հաօպրակութիւն կայ:

Ինսարօվը օթեակի ծայրին ընկաւ և ուշագրութեամբ նայեղ վիօլետտային:

— Այս, արտասանեց նա, — նա հանպք չէ անում: մահուան հոտ է գալիս:

Ելենան լռեց:

Սկսուեց երրորդ գործողութիւնը: Վարագոյրը բարձրացաւ... Ելենան ցնցուեց տեսնելով այդ անկողինը, այդ կախ գցած վարագոյրները, գեղերով լի սրուակները, կիսով չափ հանդած լամպան... Նա յիշեց մօտիկ անցեալը... Շիսկ ապագան, իսկ ներկան», այս հարցերը անցան նրա գլխով: Կարծես դիտմամբ, դերասանուհու կեղծ հազին իրեն պատասխան օթեակում լսուեց ինսարօվի խուր, չը կեղծուած հազը... Ելենան գաղտուկ նայեղ նրան և իսկոյն տուեց իր գծերին անշփոթ և հանդիստ արտայայտութիւն: Ինսարօվը նրան հասկացաւ, և ինքն էլ սկսեց ժպտալ և շատ ցած ձայնով մասնակցել երգեցողութեան:

Բայց նա շուտով լռեց: Վիօլետտայի խաղը գնալով լաւ, ազատ էր դառնում: Նա դէն դցեց ամեն ինչ, որ կողմնակի էր, անհարկաւոր էր և զտաւ իրան: հագուազիւտ, բարձրագոյն բախտ գեղարուեստագէտի համար: Նա յանկարծ անցաւ այն գծից, որը որոշել անկարելի է, բայց որի յետում ապրում է գեղեցկութիւնը: Հասարակութիւնը ցնցուեց, զարմացաւ: Զարդուած ձայնով տգեղ աղջիկը նրան սկսում էր իր ճեռքի մէջ առնել, տիրել նրան: Բայց և երգչուհու ձայնն էլ ջարդուածի պէս չէր հնչում, այլ տաքացաւ և պնդացաւ: Երեաց ՇԱԼՓՐԵԴՈՆ, Վիօլետտայի ուրախական աղաղակը քիչ էր մնում բարձրացնէ այն փոթորիկը, որի անունն է ֆանտիզմ: որի առջն ոչինչ են մեր հիւսիսային ոռնոցները: Մի ակնթարթ ևս — և հասարակութիւնը դարձեալ լուց, անշարժացաւ: Սկսուեց դուէտը, օպերայի ամենալաւ կտորը, որի մէջ կօմպօզիտօրին աջողուել է արտայատել անխելքաբար վատնած երիտասարդութեան բոլոր ափսոսանքները, կատաղի և անկարող սիրոյ վերջին կոփուը: Ոգեւորուած ընդհանուր համակրութեան չունչով, գեղարուեստագէտի ուրախութեան արտասունքները և իսկական տանջանքը աշքերին, երգչուհին անձնատուր եղաւ իրան բարձրացնող ալիքին, նրա դէմքը կերպարանափոխուեց, և յանկարծակի մօտեցող մահուան անաւոր ուրուականի առաջ աղաշանքի մի այնպիսի, մինչև երկինք համող ուժգնութեամբ նրա

բերանից դուրս թափուեցան „Lascia mi vivere... morir ti giovanе“ (տուր ինձ ապրել... մեռնել այսպէս ջահի), որ ամբողջ թատրոնը դղրդաց կատաղի ծափահարութիւններից և ոգեռքական աղաղակներից:

Ելենան ամբողջովին ցրտացաւ: Նա սկսեց հանդարտ որոշել իր ձեռքով ինսարօվի ձեռքը, գտաւ նրան և պինդ սեղմեց: Ինսարօվը պատահանեց նրա սեղմումին. բայց ոչ Ելենան նայեց ինսարօվին, ոչ ինսարօվը Ելենային: Այս սեղմումը նման չէր այն սեղմումին, որով նրանք, մի քանի ժամ առաջ, միմեանց ողջունում էին գօնդոլում:

Նրանք նաւարկեցին գեպի իրանց հիւանդանոցը դարձեալ Canal Grande-ի վրայով: Գիշերը արդէն վրայ էր հասկը, լուսաւոր, փափուկ գիշերը: Նոյն պալատները շարէ շար եկան նրանց առջեւը, բայց այժմ ուրիշ տեսակ էին թւում: Նրանցից այնպիսինները, որոնց լուսաւորում էր լուսինը, ոսկեգոյն սպիտակութիւն էին տալիս և այդպիսի սպիտակութեան մէջ կարծես կորչում էին մանրամասնութիւնները և պատուհանների ու պատշամբների գծագրութիւնները, դրանք աւելի պարզ երեւում էին այն շինութիւնների վրայ, որոնք ծածկուած էին հաւասար ստուերի թեթև մթութեամբ: Գօնդոլները իրանց փոքրիկ կարմրը կրակներով, կարծես, էլ աւելի անլուկի և արագ էին վազում: Խորհրդաւոր կերպով փայլում էին նրանց պողուատէ ցոռուկները, խորհրդաւոր կերպով բարձրանում և ցած էին ընկնում թիերը վրդովուած ջրի արծաթէ ծփանքների վրայ: Այստեղ, այստեղ, կարծ և ոչ բարձր ձայնով բացականչում էին գօնդոլավարները (նրանք այժմ երբէք չեն երգում): Ուրիշ ձայներ համարեա չէին լսուում: Հիւրանոցը, ուր ապրում էին ինսարօվը և Ելենան, գտնուում էր Riva dei Schiavoni-ի վրայ: Հը հասնելով նրան, նրանք դուրս եկան գօնդոլից և մի քանի անգամ պատեցին սուրբ Մարկոսի հրապարակի շուրջը, կամարների տակ, ուր մանրիկ սրճարանների առաջ խմբւում էր շատ պարապ ժողովուրդ: Ման գալ սիրած էակի հետ օտար քաղաքում, օտարների մէջ, մի առանձին ախորժելի բան է: ամեն ինչ թւում է գեղեցիկ և նշանաւոր, ամենքին ցանկանում ես բարիք, խաղաղութիւն և նոյն այն երջանկութիւնը, որով լըցւած ես ինքը: Բայց Ելենան այլ ևս չէր կարողանում անհոգութեամբ անձնատուր լինել իր երջանկութեան զգացմունքին: Նրա սիրածը, որ ցնցուել էր օրուայ տպաւորութիւններից, չէր կարողանում հանգստանալ, իսկ ինսարօվը, անցնելով գօնդերի պարապի մօտով, լուս կերպով ցոյց տուեց աւստրիական թընպալատի մօտով, լուս կերպով ցոյց տուեց աւստրիական թընպալատի մօտով, որոնք նայում էին ստորին կամարների դասանները, որոնք նայում էին ստորին կամարների

տակից, և զլիսարկը քաշեց յօնքերի վրայ: Միևնույն ժամանակ նա իրան զգում էր յոգնած, —և վերջին անգամ նայելով ո: Մարկոսի եկեղեցուն, նրա զմբէթներին, ուր լուսնի ճառագայթների տակ կապատկոյն կապարի վրայ վառուում էին ֆօսֆօրական լոյսի բծերը, նրանք դանդաղ կերպով տուն վերադարձան:

Նրանց սենեկակի պատուհանները նայում էին այն լայն ծովային անցքին, որ տարածւում է Riva dei Schiavoni-ից մինչև Զիոնգիկա: Համարեա նրանց հիւրանոցի դիմաց բարձրանում էր ո: Գէորգի սրածայր աշտարակը, աջ կողմում, բարձր, օղի մէջ, փայլում էր Դօգանի ոսկէ գունդը —և պըճը նուած, իբրև հարս կանգնած էր գեղեցկագոյնը եկեղեցիներից, Գալլագին Reotentore-ը, ձախ կողմում սեին էին տախս նաւերի կայմերը, շոգնաւերի ծինելոյզները: այս և այն կողմերում կախուած էր, ինչպէս մեծ թիւ կիսով չափ ծալուած առագաստը և դրօշակները հազիւ էին չարժւում: Ինսարօվը նստեց պատուհանի առաջ, բայց Ելենան թոյլչը տուեց նրան երկար զուարձանալ տեսարանով: յանկարծ Ինսարօվի մէջ երևաց տաքութիւն, նրան գրկեց մի տեսակ լափող թուլութիւն: Ելենան պառկեցրեց նրան անկողնում և սպասելով մինչև որ նա քնեց, հանդարտ կերպով վերադարձաւ պատուհանի մօտ: Օ՛, ինչպէս հանդարտ և փաղաքշական էր գիշերը, որպիսի աղունակային հեղութեամբ էր չնչում կապտագոյն օդը, ինչպէս ամեն մի տանջանք, ամեն մի վիշտ պիտի լոէր և քնէր այս պարզ երկնքի տակ, այս սուրբ, անմեղ ճառագայթների տակ: Ո՛, Աստուած, մտածում էր Ելենան, ինչու է մահը, ինչու անջատում, հիւանդութիւն և արտասունքներ: կամ ինչու է այս գեղեցկութիւնը, յոյսի այս քաղցր զգացմունքը, ինչու է հաստատուն ապաստանի, անփոփոխ պաշտպանութեան, անմահ հովանաւորութեան այս հանգստացնող գիտակցութիւնը: Էլ ինչ է նշանակում այս ժամանակ, օրհնող երկինքը, այս երջանիկ, հանգստացող երկիրը: միթէ այս բոլորը միայն մեր մէջ է: իսկ մեզանից գուրս յաւիտենական ցուրտ և լուսութիւն է: Միթէ մենք մենակ ենք... մենակ... իսկ այստեղ, ամեն կողմում, այդ բոլոր անհասանելի անդունդների և բարութիւնների մէջ —ամեն ինչ, ամեն ինչ խորթ է մեղ: Եթէ այդպէս է, էլ ինչացու է աղօթքի այդ ծարաւը և ուրախութիւնը („Morir si giovane“, հնչեց նրա հոգու մէջ)... Միթէ չէ կարելի աղանձ, հեռացնել, փրկել... Ո՛վ Աստուած, միթէ չէ կարելի հաւատալ հրաշքին: Ելենան զլուխը դրեց սեղմած ձեռքերի վրայ: «Բաւական է» չնչաց նա: «Միթէ արդէն բաւական է: Ես երջանիկ էի, ոչ միայն բօպէներ,

ոչ ժաման, ոչ ամբողջ օրեր, — ամբողջ շաբաթներ միմնանց յետեից, Բայց ինչ իրաւունքով։ Նա սկսեց սարսափել իր երջանկութիւնից։ Իսկ եթէ նա չէ կարելի, մտածեց նա, եթէ այս բանը ձրի չէ տրւում, Չէ որ դա երկինք էր... Իսկ մնաք մարդիկ ենք, խեղճ, մեղաւոր մարդիկ... Morir di giovane... Օ՛, մութ ուրուական, հեռացիր։ Միայն ինձ չէ հարկաւոր նրա կեանքը։

«Բայց եթէ սա պատիժ է, մտածեց նա նորից, եթէ մնաք պարտաւոր ենք այժմ լիապէս վճար հատուցանել մեր մնղքի համար, իմ խիզճը լուծ էր, նա այժմ լուռ է, բայց միթէ դա անմեղութեան ապացոյց է։ Օ՛հ, Աստուած, միթէ մնաք այդքան յանցաւոր ենք։ Միթէ Դու, որ ստեղծել ես այս գիշերը, այս երկինքը, կը կամենաս պատժել մեզ այն պատճառով, որ մնաք սիրում էինք։ Իսկ եթէ այդպէս է. եթէ նա մեղաւոր է, եթէ ես մեղաւոր եմ, — աւելացրեց նա մի ակամայ ուժգնութեամբ, — տուր նրան, ով Աստուած, տուր մեզ երկուսի մեռնել գոնէ ազնիւ, փառաւոր մահով — այնտեղ, նրա հալրենի դաշտերում, և ոչ թէ այստեղ, ոչ այս խուլ սենեակում։

«Իսկ մնակ, խեղճ մօր վիշտը հարցրեց նա իրան և շփոթուեց, և պատասխաններ չը դժաւ իր հարցի դէմ։ Ելենան չը գիտէր, որ իւրաքանչիւր մարդու բախտաւորութիւնը հիմնուած է ուրիշի դժբախտութեան վրայ, որ նոյն իսկ նրա օգուար և յարմարութիւնը պահանջում են, ինչպէս արձանը՝ պատուանդան, ուրիշների վնասը և անյարմարութիւնները։

«Ինդիչ», քնի մէջ թոթովեց ինսարօվը։

Ելենան ոտների մատների վրայ մօտերաւ նրան, խոնարհուեց նրա վրայ և սրբեց քրտինքը նրա գէմքից։ Ինսարօվը բարձի վրայ մի քիչ գէս ու գէն ընկաւ և հանդարտուեց։ Իսկ նա նորից մօտերաւ պատուհանին և նորից մտածութիւնները վերցրին նրան և ակսեց ինքն իրան խրատել և հաւատացնել թէ վախելու պատճառ չը կայ։ Նա մինչև իսկ ամաչեց իր թուլութիւնից։ «Միթէ վասնդ կայ, միթէ նա այժմ լաւ չէ, շնչաց նա։ Չէ որ եթէ մնաք այսօր թատրուում չը լինէնք, այս մտքերը իմ գլուխը չէին գայ։ Այդ ալիսթարթուում նա ջրից բարձր մի սպիտակ որոր տեսաւ, նրան, երեխ, վախեցրել էր ձինորսը և նա թռչուեմ էր լուռ, անհաւասար թռիչչ քով կարծես տնդղելով։ թէ ուր կարելի է ցած իջնել։ «Ահա եթէ նա թռչէ այս կողմը, մտածեց Ելենան, — դա կը լինի լաւ նշան».. Որորը տեղն ու տեղը պատուաներ արաւ, թեները դարսեց և նետահարի նման, մի խոզալի ձայն արձակելով ընկաւ մի ինչոր հեռու տեղ, մութ նաւի յետև, Ելենան ցնցուեց, բայց

յետոյ ամաչեց, որ ցնցուեց, և նա, շորերը չը հանելով, պառկեց անկողնում ինսարօվի մօտ, որ չնչում էր ծանր և յաճախ։

XXXIV

Ինսարօվը ուշ զարթնեց մի խուլ ցաւով գլխի մէջ, ամբողջ մարմին, ինչպէս նա էր ասում, անձոռնի թուլութեան զգացունքով։ Սակայն նա վեր կացաւ։

— Ինդիչը չեկաւ, այս եղաւ նրա առաջին հարցը,

— Դեռ ոչ, պատասխանեց Ելենան և տուեց նրան Օsservatore Triestino լրագրի վերջին համարը, ուր շատ էր խօսւում պատերազմի մասին, սլաւօնական երկիրների, իշխանութիւնների մասին։ Ինսարօվը սկսեց կարգալ, իսկ Ելենան նրա համար սուրձ էր պատրաստում։ Մէկը բաղխեց գուոր։

«Ինդիչը», մտածեցին երկուսը, բայց ծեծողը ասաց ոռւսերէն. «Կարելի է մտնել»։ Ելենան և ինսարօվը զարմացած իրար նայեցին և, չը սպասելով նրանց պատասխանին, սենեակը մտաւ մի շատ լաւ հագնուած մարդ, փաքրիկ, սուր դէմքով և աշխոյժ մանր աչքերով, նա ամբողջովին փայլում էր, կարծեաթէ նոր է ասրել ահազին փողեր կամ լսել է ամենաախորժելի մի նորութիւն։

Ինսարօվը աթոռից բարձրացաւ։

— Դուք ինձ չէք ճանաչի, ասաց անձանօթը, արձակ-համարձակ մօտենալով նրան և սիրալիր ողջոյն տալով Ելենային։

— Լուպօներօվ, յիշում էք, մնեք Մօսկուայում հանդիպեցինք իրար Ե...-ի մօտ։

— Այս Ե...-ի մօտ, արտասանեց ինսարօվը։

— Ինչպէս չէ, ինչպէս չէ։ Խնդրում եմ ձեզ ներկայացնել ինձ ձեր ամուսնուն։ Տիկին, ես միշտ խորապէս յարգում էի Դմիտրի Վասիլեվիչին... (աս ուղղեց) Նիկանօր Վասիլեվիչին և շատ երջանիկ եմ, որ վերջապէս պատիւ ունիմ ձեզ հետ ծանօթանալու, Երևակայեցէք, շարունակեց նա, դիմելով ինսարօվին, — ես միայն երեկ երեկոյեան իմացայ, որ դուք այստեղ էք։ Ես նոյնպէս այս հիւրանոցում եմ ապրում։ Ի՞նչ քաղաք է աս, այս վենեցիան — բանաստեղծութիւն, և ուրիշ ոչինչ։ Մի բան միայն սարսափելի է։ անիծած աւստրիացիները իւրաքանչիւր քայլում — ախ։ այս աւստրիացիները։ Ի գէպ, լսել էք, Դունայի վրայ զժռական պատերազմ է անդիւ ունեցել, Յիլիստրիան վերցրած է, Սերբիան արդէն իրան անկախ է հրատարակել Դուք իբրի հայրենասեր, հրճուանքի մէջ պիտի լինէք այնպէս չէ։ Իմ մէջ էլ սլաւօնական արիւնը

եռում ու եռում: Բայց ես խորհուրդ եմ տալիս ձեզ զգոյշ լինել, ես համոզուած եմ, որ ձեզ հետեւում են: Լրտեսութիւնը այստեղ սարսափելի է: Երէկ մօտենում է ինձ մի ինչոր կառկածելի մարդ հարցնում է՝ ոռու եմ ես արդեօք: Ես նրան ասացի թէ Դանիացի եմ... Բայց դուք պէտք է որ տկար լինէք, ամենասիրելի Նիկանօր Վասիլեվիչ: Դուք պէտք է բժշկուէք. տիկին, դուք պէտք է բժշկէք ձեր ամուսուն: Ես երէկ, խելագարի պէս, վազում էի պալատները և եկեղեցիները—դուք հօ եղել եք գօճերի պալատում: Ի՞նչ հարստութիւն ամեն տեղ: Մանաւանդ այդ մեծ դահլիճը և Մարինո ֆալիերօի տեղը. այնպէս էլ կանգնած է, decapitati pro criminibus. Ես եղայ և հոչակաւոր բանուրի մէջ, ահա ուր իմ հոգին վրդովուեց—ես, գուցէ դուք միշում էք—միշտ սիրում էի զբաղուել սօցիալական հարցերով և արխտուրատիայի դէմ էի—ահա ուր կը տանէի ես արխտուրատիայի պաշտպաններին,—այդ բանտերը. ճիշտ է ասել Բայրօնը. «T Stood in venice on the bridge of sighs». սակայն նա էլ արխտուրատ էր: Ես միշտ առաջադիմութեան կողմն էի երխտասարդ սերունդը ամբողջովին առաջադիմութեան կողմն է: Իսկ ինչպէս են անգլօ—Քրանսիացիները: Տեսնենք, շատ բան կանեն նրանք, բուստրապան և Գոլմերստոնը: Գիտէք դուք, Գոլմերստոնը առաջին մինխոտը է դարձել: Ոչ, ինչ էլ ասէք, ոռուսական բոռնցը հանագ չէ: Սարսափելի խարերայ է այդ բուստրապան: Ուզում էք, ես ձեզ կը տամ les Châtiments de Victor Hugo—զարմանալի է: L'avenir le gendarme de Dieu—մի քիչ համարձակ է ասուած, բայց ոյժ, ոյժ: Լաւ է նոյնպէս ասել իշխան Վեազեմուին, «Եւրոպան կրկնում է Բաշ-Կադիկար, աչք չը վերցնելով Սինօպից»: Ես սիրում եմ բանաստեղծութիւնը: Ինձ մօտ կայ նոյնպէս և Գրատօնի վերջին գրչոյկը, ինձ մօտ ամեն բան կայ: Զը գիտեմ ինչպէս դուք, բայց ես շատ ուրախ եմ որ պատերազմ կայ, միայն թէ չը պահանջէին տուն վերաբանալ, ես այստեղից պատրաստում եմ Ֆլորինցիա, Հռոմ գնալ. Ֆրանսիա գնալ չէ կարելի, ուստի մտածում եմ Սպանիա գնալ—կանացը այնտեղ, ասում են, զարմանալի են, բայց աղքատութիւն է, և միշտաներ շատ կան: Կը գնայի և կալիքօրնիա, մեզ ոռուսներին հարար ամեն ինչ մեծ բան չէ, բայց ես մի խմբագրի խօսք եմ տուել ուսումնասիրել մանրամասնաբար վաճառականութեան հարցը Միջերկրական ծովում: Դուք կասէք թէ անհետաքրքրական տուարկայ է, մասնագիտական է, բայց մեզ հարկաւոր են, հարկաւոր են մասնագիտաներ, բաւական է որքան փիլիսոփայութիւններ արինք, այժմ հարկաւոր է գործնականը, գործնականը... Բայց դուք շատ տկար էք, Նիկա-

նօր Վասիլևիչ, ես ձեզ գուցէ, յոգնեցնում եմ, բայց մինոյն է, ես քիչ էլ կը նստեմ...

Եւ երկար այսպէս չըթշրթում էր Լուպօեարօվը, և հեռանալով, խոսացաւ էլի գալ:

Անսպասելի այցելութիւնից տանջուած՝ Ինսարօվը պառկեց բազմոցի վրայ:—Ահա, դառնութեամբ ասաց նա, նայելով Ելենային,—ահա ձեր երիտասարդ սերունդը: Մի ուրիշը աւելի վեհ է պահում իրան, ինքն իրան ցոյց է տալիս, բայց հոգով նոյն կաշաղակին է, ինչպէս այս պարոնը:

Ելենան չը պատասխանեց իր ամուսնուն: այդ վայրկեանին նրան աւելի շատ անհանգստացնում էր Ինսարօվի թուլութիւնը, քան Ռուսաստանի ամբողջ երիտասարդ սերունդի դրութիւնը... Նա նստեց նրա մօտ, վերցրեց ձեռագործը: Ինսարօվը փակեց աչքերը և ընկած էր անշարժ, ամբողջապէս գունատ և ցուրտ: Ելենան նայեց նրա խիստ գծագրուած կիսագէմքին, նրա ձգուած ձեռքերին և յանկարծակի երկիւղը ճմլեց նրա սիրտը: —Դմիտրի... սկսեց նա:

Ինսարօվը վեր թռաւ:—Ի՞նչ է. Բենդիչը եկաւ:

—Դեռ ոչ... Բայց ինչ ես կարծում—դու տաքութիւնում, դու ճիշտ որ, առողջ չես, չուզարկենք արդեօք բժշկի յատերից:

—Քեզ վախացրել է այդ շատախօսը: Հարկաւոր չէ: Քիչ կը հանգստանամ և ամեն ինչ կանցնէ: Ճաշից յետոյ մենք էլի կը գնանք... Մի որ և է աեղ:

Անցաւ երկու ժամ... Ինսարօվը դեռ պառկած էր բազմոցի վրայ, բայց քնել չէր կարողանում, թէս աչքերը չէր բաց անում: Ելենան նրա մօտից չէր հեռանում: Նա վայր գցեց ձեռագործը ճնկների վրայ և չէր շարժւում:

—Ի՞նչո՞ւ չես քնում, հարցրեց նա վերջապէս:

—Այ մի քիչ սպասիր,—Ինսարօվը վերցրեց Ելենայի ձեռքը և դրեց իր զիսի տակ:—Այ այսպէս... Լաւ է: Զարթեցրու ինձ իսկոյն, հէնց որ կը գայ Բենդիչը: Եթէ նա կասէ թէ նաւը պատրաստ է, մնաք նոյն ժամին կը ճանապարհուենք... Պէտք է իրերը պնդացնել:

—Պնդացնելը երկար չի քաշի, պատասխանեց Ելենան:

—Ի՞նչ էր այդ մարդը դուրս տալիս պատերազմի, Սերբիայի մասին, խօսեց քիչ յետոյ, Ինսարօվը:—Երեխ իրանից էր հնարում: Բայց պէտք է զնալ, ժամանակ կորյունել չէ կարելի: Պատրաստ եղիր:

—Նա քնեց և սենեակում ամեն ինչ հանդարտուեց:

Ելենան գլուխը թեքեց դէպի բազկաթոռի մէջքը և երկար

Նայում էր պատուհանին: Եղանակը փշացաւ, քամի վեր կացաւ, Մեծ սպիտակ ամպերը արագ անցնում էին երկնքի վրայով, բարակ կայմը օրօրում էր հեռանում, կարմիր խաչ ունեցող երկար դրոշակը անդադար ծածանում էր, ցած ընկնում և էլի ծածանում: Հին ժամացույցի ճօճանակը թխթխկում էր ծանր, մի ինչոր տիուր ֆշուցով: Ելենան փակեց աչքերը: Ամբողջ զիշերը նա վատ էր ժնեւ, բիշքեց նա քնի մէջ մտաւ:

Օտարոտի երազ տեսաւ նա: Նրան թուաց, թէ նաւակով լողում է Յարիցինօի լճակի վրայ ինչոր անձանօթ մարդկանց հետ: Նրանք լուս են, նստած են անշարժ, ոչ ոք չէ թիվավարում: Նաւակը ինքն ու ինքն է շարժում: Ելենան սարսափ չէ զգում, այլ ձանձրոյթ, նա կը կամենար իմանալ, ինչ մարդիկ են դրանք և ինչու ինքը դրանց հետ է: — Նա նայում է, իսկ լճակը լայնանում է, ափերը կորչում են, — այլ ես լճակ չէ դա, այլ անհանգիստ ծով, ահագին, բաց-կապոյտ, լոիկ ալիքները փառահեղ կերպով օրօրում են նաւակը. ինչոր որոտացող, ահագին բան բարձրանում է յատակից. անյայտ ուղեկիցները յանկարծ տեղներից զեր են թռչում, կանչում են, շարժում են իրանց ձեռքերը... Ելենան ձանաշում է նրանց դէմքը. նրա հայրն էլ նրանց մէջ է: Բայց մի ինչ որ սպիտակ փոթորիկ յարձակում է ալիքների վրայ. ամեն ինչ պտոյտ եկաւ, խառնուեց...

Ելենան նայում է իր չորս կողմը, առաջուայ պէս ամեն ինչ սպիտակ է նրա շուրջը: Բայց սա ձիւն է, ձիւն, անվերջ ձիւն: Եւ Ելենան այլ ես նաւակում չէ, նա սալլակում զնում է, ինչպէս զնում էր Մոսկուալից: Նա մնանակ չէ. նրա կողքին նստած է մի փոքրիկ արարած, որ փաթաթուած է հնամաշ սալօպի մէջ: Ելենան նայում է նրան, դա կատեան է, նրա խնդը բարեկամուհին: Ելենան սարսափ է զգում: Միթէ կատեան չէ մեռել մտածում է նա:

— Կատեա, այս ուր ենք գնում քեզ հետ:

Կատեան չէ պատասխանում և փաթաթուում է իր սալօպի մէջ. նա դրտից փայտանում է: Ցուրտ է և Ելենայի համար. նա նայում է ճանապարհ երկարութեամբ, քաղաք է երեւում հեռուում, ձիւնային փոշու միջով: Բարձր սպիտակ աշտարակներ արծաթեայ գլուխներով... Կատեա, Կատեա, սա Մօսկուան է: Ոչ, մտածում է Ելենան, սա Սօլովկիի վանքն է, այնտեղ շատ, շատ մանր ու անձուկ խուցեր կան, ինչպէս մեղուանոցի մէջ, այնտեղ հեղծուկ է, նեղուածք է, — այնտեղ փակուած է Դմիտրին: Ես պէտք է նրան ազատեմ... Յանկարծ ալեսր, բերանաբաց անդունդ է փռւում նրա առաջ: Սալլակը ընկնում է, կա-

տեան ծիծաղում է: Ելենա, Ելենա, լուսում է մի ձայն անդունդից:

«Ելենա, հնչեց պարզ կերպով նրա ականջների մէջ: Նա արագ բարձրացրեց գլուխը, յետ նայեց և ընդարմացաւ, ինսարովը, սպիտակի, իբրև ձիւն, նրա երազի ձիւնը, բարձրացաւ մինչև բազմոցի կէսը, և նայում էր Ելենային իր մեծ, փալուն, սարսափելի աչքերով: Նրա մազերը ցրուել էին ճակատի վրայ, շրթունքները բացուել էին օտարոտի կերպով Արասափը, խառնուած մի տեսակ կարօտագին գութի հետ, արտայայտուել էր նրա յանկարծակի փոխուած գէմքի վրայ:»

— Ելենա, արտասահնեց նա: — Կա մեռնում եմ:

Ելենան ճշալով ծունկ չոքեց և սեղմուեց նրա կրծքին: — Ամեն ինչ վերջացած է, կրկնեց ինսարօվը: — Կա մեռնում եմ... Մնաս բարով, իմ խղճալի: Մնաս բարով. իմ հայրնիք...»

Եւ նա երեսն ի վայր ընկաւ բազմոցի վրայ: Ելենան սենեակից գուրս վազեց, սկսեց օգնութիւն կանչել, ծառան վազեց բժշկի յետից: Ելենան ընկաւ ինսարօվի վրայ:

Այդ ակնթարթում դրան շէմքում երևաց մի լայնաթիւ կունք, արևառ թէմքով մարդ որ հագած ունէր հաստ վերարկու և ցածրիկ գլխարկի: Նա կանգ առաւ, տարակուսանքի մէջ էր:

— Ռենդիչ բացականչեց Ելենան — դուք էք: Նայեցէք, ի սէք Աստուծու, նա վատ է, ինչ եղաւ նրան: Աստուծու, մոտ էր Աստուծու, նա վատ է, ինչ եղաւ նրան: Աստուծու, մոտ էր Երէկ տանից գուրս եկաւ, այս ըսպէին խօսում էր ինձ հետո:

Ռենդիչ ոչինչ չասաց և միայն ճանապարհ տուեց: Նրա մօտով աշխոյժով քայլեց մի փոքրիկ մարդ, որ կեղծ մազեր և մօտով ունէր. դա բիշկն էր, որ ապրում էր նոյն հիւրանոցում: Նա մօտեցաւ ինսարօվին:

— Սինիօրա, ասաց նա մի քանի վայրկեանից յետոյ, պարունակում է — il Signorefore stiere e բռն օտարերկացին վախճանուել է: — morto — անսկրիզմից, որ միացած էր թոքերի խանչարման հետ: Միացած էր անսկրիզմից, որ միացած էր թոքերի խանչարման հետ:

XXXV

Միւս օրը, նոյն այդ սենեակում, պատուհանի մօտ կանդ նած էր Ռենդիչը. նրա առջն, շալի մէջ փաթաթուած, նստել էր Ելենան: Հարեան սենեակում գագաղի մէջ պառկած էր ինչ Ելենայի կէմքը թէ վախճացած էր, թէ անկենդան, ճասարօվը: Ելենայի գէմքը թէ վախճացած էր, թէ վախճացած էր, թէ անկենդան,

կատի վրայ, յօնքերի մէջ տեղում, երևացել էին երկու կնճիռներ. դրանք լարուած արտայայտութիւն էին տալիս նրա անշարժ աչքերին: Պատուհանում ընկած է Սննա Վասիլեմայի բայցուած նամակը: Նա կանչում էր իր աղջկան Մուկուա, գոնէ մի ամիս ժամանակով, գանգատուում էր իր մենակութեան վրայ, Նիկոլայ Արտեմևսից վրայ, բարեւում էր ինսարօվին, տեղեկութիւն էր ուզում նրա առողջութեան մասին և խնդրում էր նրան բաց թողնել կողչը:

Թենդիչը դալմատացի էր, ծովագնաց, որի հետ ինսարովք ծանօթացել էր առաջին անգամ՝ հայրենիք ճանապարհորդելիս և որին նա որոնեց ու գտաւ Վենեցիայում: Դա մի դաժան, կոպիտ, համարձակ մարդ էր, նուիրուած սլաւօնական գործին: Նա ատում էր թիւրքերին, ինչպէս և աւստրիացիներին:

—Քանի ժամանակ դուք պիտի մնաք Վենեցիայում, հարցըրեց նրան Ելենան իտալերէն: Նրա ձայնն էլ անկենդան էր, ինչպէս և դէմքը:

—Մի օր, որպէս զի բեռը վերցնեմ և կասկած չը յարուցանեմ, իսկ յետոյ ուզիղ դէպի Զարա: Ուրախ լուր չեմ տանի ևս մեր երկացիներին: Նրան վազուց էին սպասում, նրա վրայ յոյս ունէին:

—Նրա վրայ յոյս ունէին, մեքենաբար կրկնեց Ելենան:
—Ե՞րբ էք նրան թաղում, հարցըրեց Թենդիչը:
Ելենան իսկոյն չը պատասխանեց: —Էգուց:
—Էգուց, ես կը մնամ. ուզում եմ մի բուռն հող գցել նրա գերեզմանի մէջ: Պէտք է ձեզ էլ օգնել, Բայց լաւ կը լինէր որ նա պառկէր ոլաւօնական հողի մէջ:

Ելենան նայեց Թենդիչին:
—Նաւապետ, ասաց նա, —վերցրէք ինձ նրա հետ և տարէք մեզ ծովի միւս կողմը, հեռու այստեղից: Կարելի՞ է:
Թենդիչը մտածեց: —Կարելի է, բայց գլխացաւանք շատ կայ: Պէտք կը լինի այստեղի անիծուած իշխանութեան հետ գործ ունենալ: Բայց ասենք թէ մենք այդ բոլորը սարքեցինք, թաղեցինք նրան այնտեղ. ինչպէս ձեզ յետ բերեմ:

—Ձեզ հարկաւոր չի ինի ինձ յետ բերել:
—Ի՞նչպէս: Ո՞ւր կը մնաք դուք:
—Ես ինձ համար տեղ կը գտնեմ. միայն վերցրէք մեզ, վերցրէք ինձ:

Թենդիչը քորեց իր վիզը: —Ի՞նչպէս ուզում էք, բայց այդ բոլորը շատ գլխացաւանք է: Գնամ, փորձեմ. իսկ դուք սպասեցիր ինձ այստեղ երկու ժամից յետոյ:

Նա գնաց: Ելենան անցաւ հարևան սենեակը, թիկն տուեց պատին և երկար կանգնած էր, քարացածի նման: Յետոյ նա ծունկ չոքեց, բայց աղօթել չէր կարողանում: Նրա հոգու մէջ յանդիմանութիւններ չը կային. Նա չէր յանդգնում հարցնել Աստուծուն, ինչու չը խնայեց, ինչու պատժեց մեղքից էլ աւել, եթէ կար մեղք: Մեզանից ամեն մէկը մեղաւոր է հէնց նրանով, որ ապրում է, և չը կայ այսպիսի մի մեծ մտածող չը կայ մարդկութեան մի այսպիսի բարերար, որ իր տուած օգուտի ոյժով կարողանար յոյս ունենալ, թէ ապրելու իրաւունք ունի... Բայց Ելենան աղօթել չէր կարողանում, նա քարացել էր:

Եղին զիշերը մի լայն նաւակ հեռացաւ այն հիւրանոցից, ուր ապրում էին ինսարօվները: Նաւակում նստած էր Ելենան Թենդիչի հետ և դրուած էր մի երկար արկզ, որ ծածկուած էր սև մահուղով: Մօտ մի ժամ նաւեցին նրանք և մօտեցան վերջապէս մի փոքրիկ երկպայմանի նաւին, որ խարիսխ էր գըցել նաւահանգստի մուտքի մօտ: Ելենան և Թենդիչը նաւը բարձրացան, նաւակները բերին արկզը: Կէս զիշերից բարձրացաւ փոթորիկ, բայց վաղ առաւօտեան նաւը արդէն հեռացել կիզօից: Օրուայ ընթացքում փոթորիկը սարսափելի ոյժի հասաւ և փորձուած ծովագնայները «կիզօի» գրամենեակներում շարժում էին իրանց գլուխները և լաւ բան չէին սպասում: Ազրիական ծովը Վենեցիայի, Տրիեստի և գալմատական ափի մէջ չափազանց վտանգաւոր է:

Ելենայի Վենեցիայից ճանապարհուելուց մօտ երեք շաբաթ յետոյ Սննա Վասիլեմայի Մոսկուայում ստացաւ հետևեալ նամակը.

«Իմ սիրելի ծնողներ, ես շնորհչու հրաժեշտ եմ տալիս ձեզ: Դուք այլ ևս չէք տեսնի ինձ: Երէկ վախճանուեց Դմիտրին: Ամեն ինչ վերջացաւ ինձ համար: Այսօր ես նրա մարմնի հետ ճանապարհուում եմ Զարա: Կը թաղեմ նրան, իսկ յետոյ ինչ կը լինի ինձ հետ, չը գիտեմ: Յայց այլ ես մի ուրիշ հայրենից ինչ կը լինի ինձ հետ, բացի Դուի հայրենիքից: Այնտեղ պատնիք չը կայ ինձ համար, բացի Դուի մահից յետոյ ես հաւատարիմ կը մնամ նրա միշտակին, նրա ամբողջ կեանքի գործին: Ես սովորել եմ բոլգարական և սերբիական լեզուները: Երկի, ես այս բոլորը չեմ տանի, —աւելի լաւ: Ես անդուները: Երկի, ես այս բոլորը չեմ տանի, —աւելի լաւ: Ես հասել եմ անդունդի ծայրին և պիտի ընկնեմ: Զուր չէր ճականացիր միացրել մեզ, ով գիտէ, դուցէ ես սպանեցի նրան.

այժմ նրա հերթն է ինձ իր յետից քաշելու։ Ես երջանկութիւն էի որոնում—և կը գտնեմ երեխ մահ։ Երեխ այսպէս էր հարկաւոր, երեխ մնդք կար... Բայց մահը ամեն ինչ ծածկում է և հաշտեցնում,—այնպէս չէ։ Ներեցէք ինձ, որ ձեզ վիշտ եմ պատճառել. իմ կամքով չարի ես այդ բանը։ Իսկ վերադառնալ Ռուսաստան—ինչու։ Ի՞նչ անե՞ Ռուսաստանում։

«Անդունեցէք իմ վերջին համբոյրները և օրհնութիւնները և մի դատապարտէք ինձ»։

Ե.

Այն ժամանակից անցել է արդէն մօտ հինգ տարի, և ուրիշ մի լուր այլ ևս չէ եկել Ելենայի մասին։ Անպտուղ մնացին բոլոր նամակները, հարց ու փորձերը. իզուր ինքը, Նիկոլայ Սրտեմելիչը, հաշտութիւն կնքելուց յետոյ, գնաց Վենեցիա, Զարա. Վենեցիայում նա իմացաւ այն, ինչ արդէն յայտնի է ընթերցողին, իսկ Զարայում ոչ ոք չը կարողացաւ դրական տեղեկութիւններ տալ Ինդիչի և այն նաւի մասին, որ նա էր վարձել։ Մութ լուրեր էին պտտում, որպէս թէ մի քանի տարի առաջ ծովը, սաստիկ փոթորիկից յետոյ, ափ նետեց մի դագաղ, որի մէջ զտան մի տղամարդի դիմակ... Ուրիշ, աւելի արժանահաւատ տեղեկութիւններին նայելով, այդ դագաղը ծովը չէր դուրս նետել, այլ բերել և ափի մօտ թաղել էր մի օտարերկացի տիկին, որ եկել էր Վենեցիայից, մի քանիմները աւելացնում էին, թէ այդ տիկնոջը յետոյ տեսել են Հերցիգօվի նաւում այն զօրքի հետ, որ հաւաքում էր այն ժամանակ, նկարագրում էին նոյն իսկ նրա հագուստը, որ սե էր ոտքից մինչև գլուխ։ Ինչ էլ լինէր, Ելենայի հետքը կորաւ ընդմիշտ և անդառնալի կերպով, և ոչ ոք չը գիտէ, դեռ կենդանի է նա, թագնուած է մի տեղ, թէ արդէն վերջացել է կեանքի փոքրիկ խաղը, վերջացել է այդ կեանքի թեթև խմորումը և հասել է մահուան հերթը։ Պատահում է, որ մարդը, զարթնելով, մի ակամայ երկիւղով հարցնում է իրան, միթէ ես արդէն երեսուն... քառասուն... յիսուն տարեկան եմ։ Ի՞նչպէս էր որ կեանքը, այսպէս շուտ անցաւ։ Ի՞նչպէս էր որ մահը այդքան մօտ եկաւ։ Մահը մի ձկնորսի նման է, որ գցել է ձուկը իր ցանցի մէջ և մի առժամանակ պտհում է նրան ջրի մէջ. ձուկը դեռ լողում է, բայց ցանցը նրա վրայ է և ձկնորսը դուրս կը քաշէ նրան, երբ կը կամենայ։

Ի՞նչ եղան մեր պատմութեան միւս անձինքը։

Աննա վասիլեվսան դեռ կենդանի է։ Իրան դիպած հարուածից յետոյ նա շատ պառաւել է, գանգատուում է քիչ, բայց աւելի շատ զիտում է։ Նիկոլայ Արտեմեվիչը նոյնպէս ծերացել է և սպիտակել, և բաժանուել է Սւեդուստինա Խրիստիանօվնայից... Նա այժմ հայհոյում է ամեն օտարերկրեայ բան։ Նրա տնտեսուհին, երեսուն տարեկան մի գեղեցիկ կին, ուռւներից, մետաքսեայ շորեր է հագնում և կրում է ոսկէ մատանիներ ու ականջի օղեր Կուրնատօվսկին, իբրև տեմպերամենտի տէր և իբրև եռանդուս սեաներ մարդ, որ սիրում է սիրունատես շիկաներ կանանց, ամուսնացել է Զօնայի հետ։ Այ բոլորովին հապատակուել է նրան և նոյն իսկ դադարել է գերմաներէն մտածելուց։ Բերսենեվը գտնւում է Հեյդերգում։ Նա այցելեց Բերլինը, Պարիզը, և զուր ժամանակ չէ անցնում։ Նրանից մի օրինաւոր պրօֆէսօր դուրս կը գայ։ Գիտնական հասարակութիւնը ուշադրութիւն դարձրեց նրա երկու յօդուածների վրայ։ Հին-գերմանական իրաւունքի մի քանի առանձնայակութիւնների մասին դատաստանական պատիճների գործում, և—Քաղաքային սկզբունքի նշանակութեան մասին հաղաքակրութեան հարցի մէջ։ Ափսոս միայն, որ երկու յօդուածներն էլ գրուած են փոքր ինչ ծանր լեզուով և խճողուած են օտար բառերով։ Շուրինը Հռոմում է։ Նա ամբողջապէս նուիրուել է իր արուեստին և համարւում է մէկը ամենանշանաւոր և շատ բան խոսացող երիտասարդ քանդակագործներից։ Խիստ քննող տուրիստները գտնում են, որ նա բաւականաչափ չէ ուսումնասիրել հներին, որ նա ռոճ չունի և համարում են նրան քրանսիական գլուցին հետեւող։ Անգլիացիներից և ամերիկացիներից նա անթիւ պատուէրներ ունի։ Վերջին ժամանակ շատ աղմուկ հանեց նրա մի վակիսանուհին, ուռւն հօրօշիկին, մի յայտնի հարուստ, ուղղում էր գնել նրանց 1000 սկուտիով, բայց աւելի լաւ համարեց 3000 տալ մի ուրիշ քանդակագործի, որ քրանսիացի էր րուր sang այն խմբական արձանի համար, որ ներկայացնում էր «Երիտասարդ գեղջկուհին», որ մեռնում է սէրից գարնան Ոգու կրծքին։ Շուրինը մի մի անգամ նամակ է գրում Ուվար իվանօվիչին, որ միայն բոլորովին չէ փոխուել ոչ մի բանի մէջ։ «Եթիշում էր, զրում էր Շուրինը մի քանի ժամանակ առաջ, թէ ինչ ասացիք ինձ այն գիշերը, երբ յայտնի դարձաւ խեղճ Ելենայի ամուսնութիւնը, երբ ես նստած էի ձեր մահճակալի վրայ և խօսում էի ձեզ հետ։ Յիշում էր, ես հարցնում էի ձեզ այն ժամանակ, կը լինեն մարդիկ մեղանում, և դուք պատասխանեցիք».

«կը լինենք: Օ՛, սեահողի ոյժ: Եւ ահա այժմ ես այստեղից, իմ «գեղեցիկ հեռաւորութիւնից, հարցնում եմ ձեզ նորից.—Կը, ինչ է, Ուվար իվանօվիչ, կը լինենք:

Ուզար իվանօվիչը խաղացրեց մատները և դէպի հեռուն
ուղղեց իր խորհրդաւոր հայեացքը...



4 6 1 2

13587
13589

891.71
U-78